Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22
Q.-34
1866

A. H.

P. Morgan

A. Haverth

BIBLIOTHÈQUE NUBAR
N°
COTE IV. 261.
U.G.A.B

Ч-мерсеч-мгзел-

ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ՆԱԽՆԵԱՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ Տ. ԳԷՈՐԳԱՅ Գ.

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

—

Ի Պատրիարքութեան Ս. Երուսաղեմի

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ

Եւ

Ի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ

Տ. Տ. ՊՕՂՈՍԻ

22
Գ-34

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՆԱԽՆԵԱՑ

ՀԱՏԸՆՏԻՐ

ՔԱՂՈՒԱԾՔ

Աւետարանական, Գործոց, Եպիսկոպայ, Տուփքիրայ, Յուղրայ, Երեք Մակաբայեցւոց եւ Իմաստութեան գրքերէն:

Ա. Մ. Վ. Գ.

ՀԱՏՈՐ Ա.

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

—

1866

~~Н326~~

136-Ա2

3600-51

ՅԱՌԱՋԱԲԱՆ

—

Ազգի մը մտաւոր եւ բարոյական վիճակն անոր լեզուէն կը ճանչցուի: Պատմութենէ կը սորվինք, փորձով ալ հաստատուած է թէ գրեթէ ամեն ազգի լեզուին ոսկեդարը՝ միանգամայն ազգին յառաջադիմութեան ամենէն բարձր կէտն հասած ժամանակն է, եւ թէ՝ ազգին անկմանը հետ՝ լեզուն ալ կը սկսի անկանիլ:

Գրագիտութիւն ունեցող հին լեզուաց տեղեակ եղողներուն վրկայութիւնն ասիկա կը հաստատէ. այս մասին Յունարէնի եւ Լատինարէնի, ինչպէս նաեւ մեր հին լեզուին համար, տարակոյս չկայ. այս լեզուներուն պատմութիւնը յիշեալ ազգերուն պատմութեանը հետ բաղդատելով՝ կը զտնենք որ ազգային բարոյական նաեւ քաղաքական զարգացումն ու անկումը՝ լեզուին նոյն վիճակներուն հետ միեւնոյն քայլով յառաջ գացած են։ Նոր պատմութիւնն ալ արդի լեզուաց համար նոյն վկայութիւնը կու տայ. եւ այս օրուան օրս կը տեսնենք որ

բարոյապէս եւ քաղաքական ամենէն յառաջադէմ ազգաց լեզուներն՝ ամենէն աւելի ծաղկեալներն են։ Եթէ աս իրողութիւնը ճշմարիտ է, կը հետեւի որ կամ ազգի մը լեզուն անոր մը տաւոր վիճակէն կախում ունի, եւ կամ մտաւոր վիճակը՝ լեզուէն։

Ըստ մեզ երկուքն ալ ճշմարիտ են. անգամ մը լեզուն ազգային յառաջադիմութենէն ազդուելէ ետքը՝ անհնար է որ ինքզինքն ալ անոր վրայ ազդեցութիւն չընէ։

Հոս աւասիկ մեզի լուրջ դիտողութեան կէտ մը. եթէ մեր լեզուին այսօրուան վիճակը երեկուընէ աւելի յառաջացած կը

տեսնենք, ուրախ ըլլալու ենք, քանզի ասիկա մեր յառաջադիմելուն յայտնի ապացոյց է. եւ դարձեալ ջանալու ենք որ մեր լեզուն օր քան զօր զարգանայ, գիտնալով որ մեր մտաւոր զարգացումը մեր լեզուին յառաջադիմութենէն նոր զօրութիւն կամ մղում պիտի ընդունի: Աս իրողութեան պատճառը մտքին հոգեբանական օրինացը մէկ արդիւնքն է. բայց հոս ասոր վրայ խօսիլ մեր նպատակէն դուրս է։

Կը մնայ քննել թէ մեր արդի լեզուին վրայ վերոյիշեալ դիտողութիւնը կը տեսնուի արդեօք. եւ թէ՝ մեր լեզուին զարգացման

ը համար մեզի ինչ ընել հարկ է: Առաջնոյն համար յայտնի է թէ մեր արդի լեզուն արդէն չափով մը յառաջադիմութեան երես բռնած է, եւ ասոր պատճառը Եւրոպական լեզուաց հրմտութեանը մէկ հետեւանքը կրնայ ըսուիլ: Աս կէտն ալ երկայն դիտողութեան արժանի է. մեր դիտաւորութիւնն ալ այս անգամ ասիկա դիտողութեան առնուլ չէ: Մեր դիտողութեանն ուղղակի առարկայ եղող կէտը՝ երկրորդ խնդիրն է. այսինքն թէ՝ մեր լեզուին զարգացմանը համար մեզի ինչ ընել հարկ է: Այս մասին ալ դիտողութեան առնելու շատ

մը կէտերէն մէկը միայն կ'ուզենք յիշել որ մեր առաջիկայ գործին հետ ի մօտոյ յարաբերութիւն ունի: Ամեն գրագէտ կրնայ ըզգալ որ մեր լեզուին զարգացմանը նպաստ եղող շատ պատճառներէն մէկն ալ մեր հին լեզուին հմտութիւնն է: Եթէ Եւրոպական լեզուաց հմտութիւնը մեր գաղափարներուն եւ մտածութիւններուն ճշդուելուն եւ մաքրուելուն միջնորդաբար կ'ազդէ, (քանզի այս մասին անմիջական ազդեցութիւն ընող տարրը, որ համարէն գիտութեանց ուսումն է, ընդհանրապէս մեր դասիարակութեանը մէջ շատ

անկատար է,) գրաբար լեզուն այն գաղափարներուն եւ մտածութիւններուն բացատրութեանը բաւական հարուստ նիւթ մը մատակարարելու միակ աղբիւրն է: Եթէ մեր հին լեզուէն մեր ձեռքը գտնուածին չափ ալ գրաւոր մը նացորդ մը ժառանգած չըլլայինք, կարող պիտի ըլլայինք արդեօք թէ հին եւ թէ նոր լեզուով մեզի նոր գրագիտութեան այնպիսի ընդարձակ ասպարէզ մը բանալ, ինչպէս որ հիմա բացած ենք: Բայց եւ այնպէս յայտնի է թէ մեր նախնի լեզուին բոլոր աղբիւրները շատ քիչերուն կատարելապէս ծանօթ եւ ընտանի

են: Մեր նախնեաց ամենէն ընտիր մատենագրութեան հազիւ քառներորդ մասը գրագիտական նպատակաւ կը գործածուի:

Մեր նախնի լեզուին ուսմանը նկատմամբ եղած այս զանցառութիւնը՝ մեր լեզուին ծանր յառաջ երթալուն խոչ եղող արգելքներէն մէկն է:

Արդարեւ լեզուին խնդիրը՝ նեմարանի մը դիտողութեանը յանձնուելու չափ կարեւորութիւն ունի. բայց քանի որ այսպիսի հեղինակութիւն ունեցող մարմնոյ մը գլխաւոր գործը՝ հայկական լեզուն երեւան հանելով ներքուս կենդանացնել պիտի ըլ-

լայ՝, չենք կարծեր թէ մասնաւորաց աս նպատակով բրած ջանքերը՝ գործնական արդիւնք մը չունենան. այսպիսի ջանքերով հասարակաց ուշադրութեան աս նիւթիս դառնալուն տարակոյս չունինք, եւ այս նամբով մեր կարօտութիւնն աս մասին թերեւս աւելի աղէկ նանչցուի, ու վերջապէս վերը յիշուած միջոցին ձեռնարկելու գանք:

Այս եւ ասոնց նման խորհրդածութիւններէ յորդորուելով՝ մեր նախնեաց մատենագրութենէն այս քաղուածն բրինք: Մեր քաղուածն Աւետարաններուն, Գործոց, Յուրդայ, Եսթերայ,

Տոլբիքայ եւ երից Մակաբայեց
ւոց պատմութիւններէն առնուած
է. եւ, ինչպէս կը տեսնուի, ա-
մենէն պարզէն սկսելով՝ ամե-
նէն ճոխ եւ զարդարուն համա-
սեռ, այսինքն՝ միեւնոյն բերա-
կանական կարգն ունեցող շա-
րադրութեան օրինակները կ'ընտ-
ծայեցնէ: Հայերէնին ուսմանը
նորընդել պատանիներու պիտ-
յիցը ծառայեցնելու նպատակաւ
եղած դասական գործի մը մէջ՝
պարզ ծանօթութիւններ աւելցը-
նել հարկ էր: Մենք այս հարկը
չափով մը հանեցնելու համար՝
բնագրին մէջ համառօտ բառա-
կան մեկնութիւններ աւելցու-

ցինք: Եթէ լեզուին վերաբերեալ
ամէն պիտանի դիտողութիւն ը-
րած ըլլայինք, էջերուն գոնէ
կէսը ծանօթութեամբ լեցնել
հարկ պիտի ըլլար, եւ այն ատեն
գիրքին ծաւալն ու գինն՝ այժ-
մուն կրկինը կ'ըլլար. պարա-
գայ մը՝ որմէ, գոնծը թէ տարա-
ծութեան եւ թէ գնոյն կողմանէ
չծանրացնելու համար, զգուշա-
ցանք, խորհելով թէ մեր ըրած
ակնարկութիւններն՝ ուշադիր
ընթերցողաց, իրենց դիտողու-
թիւնն աւելի ընդարձակելու,
առիթ կրնան ըլլալ:

Այս առաջին հատորին ընդու-
նելութեամբը եթէ քաջալերու-

ինք, նիւթերու աւելի զանազանութիւն պարու նակող ուրիշ մէկ կամ աւելի հատոր ալ հրատարակելու պատրաստ եմք:

Ա. Մ. Վ. Գ.

ՀԱՏԸՆՏԻՐ
ՔԱՂՈՒԱԾՔ
Ի ՆԱԽՆԵԱՑ

Ի ԾՆԱՆԵԼՆ Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի՝ ահա մոգք յարևելից եկին յԵրուսաղէմ և ասեն. Ուր՞ է որ ծնաւ արքայն Հրէից.* զի տեսաք զաստղն նորա յարևելս և եկաք երկիր պագանել նմա: Իբրև լուաւ արքայ Հերովդէս, խռովեցաւ: Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս և զդպիրս ժողովրդեանն՝ հարցանէր ի նոցանէ թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոսն: Եւ նոքա ասեն ցնա. ի Բեթղեհէմ Հրէաստանի: Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն և ստուգեաց ի նոցանէ զժամանակ աստեղն երևելոյ: Եւ արձակեալ զնոսա ի Բեթղեհէմ՝ ասէ.

* Արքայն Հրէից որ ծնաւ. Տես Գերակ. էջ 144. 5°.

Գնացէք, ստուգեցէք վասն մանկանն. և յորժամ գտանիցէք, ազդ արասջիք ինձ զի և ես եկեալ երկիր պագից նմա: Եւ նոքա իբրև լուան ի Թագաւորէն, գնացին. և ահա աստղն զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա մինչև եկեալ եկաց ի վերայ ուր էր մանուկն: Իբրև տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ. և իբրև մտին ի տուն, տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարբն իւրով. և անկեալ երկիր պագանէին նմա, և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս (նուէր) ոսկի և կնդրուկ և զմուռս. և հրաման (երկնաւոր պատգամ) առեալ ի տեսլեան չդառնալ անդրէն առ Հերովդէս՝ ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց: Եւ իբրև գնացին նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն երևէր ի տեսլեան Յովսեփու և ասէր. Արի, առ ըզ մանուկդ և զմայր իւր և փախիր յԵգիպտոս և անդ լինիջիր՝ ցորժամ ասացից քեզ. քանզի ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ: Եւ նա յարուցեալ առ զմանուկն և զմայր նորա գիշերի և գնաց յԵգիպտոս, և անդ էր մինչև ցվախճան Հե-

րովդի: Յայնժամ իբրև ետես Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեաց կոտորեաց զամենայն մանկունսն որ էին ի Բեթղեհէմ և յամենայն սահմանս նորա յերկեմենից և ի խոնարհ (երկու տարուբնէ վար) ըստ ժամանակին զոր ստուգեաց ի մոգուցն: Եւ ի վախճանելն Հերովդի՝ ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երևէր Յովսեփայ յԵգիպտոս և ասէր. Արի առ զմանուկդ և զմայր իւր և գնա յերկիրն Իսրայելի, զի մեռան որ խնդրէին զանձն մանկանդ: Եւ նա յարուցեալ առ զմանուկն և զմայր նորա և եկն յերկիրն Իսրայելի: Եւ իբրև լուաւ եթէ Արքեղայոս Թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. և հրաման առեալ ի տեսլեան՝ գնաց ի կողմանս Գալիլեացւոց: **Մատթ. Գլ. Բ.**

Այր ոմն տանուտէր եւ ընդ առաւօտս ի վարձու ունել մշակս (երկրագործ) յայգի իւր. և արկ վարձս (գինը կտրեց) մշակացն աւուրն դահեկան * և առաք-

* Տես Բերականութ. թիւ 239.

եաց զնոսա յայգի իւր: Եւ ելեալ զերրորդ ժամուն՝ * ետես այլս զի կային դատարկ ի հրապարակս. ասէ և ցնոսա. Երթայք և դուք յայգի իմ, և որ ինչ արժան իցէ՝ տացէ ձեզ: Գնացին և նոքա: Դարձեալ ելեալ զվեց ժամուն և զիններ ժամուն՝ արար նոյնպէս ; Եւ զմետասաներորդ ժամուն ելեալ եգիտ այլս զի կային դատարկ, ասէ և ցնոսա .Ընդէր կայք ամ զօրս ցերեկ** դատարկ: Ասեն ցնա Զի ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու: Ասէ ցնոսա. Երթայք և դուք յայգին, և որ ինչ արժան է՝ առնուցուք: Եւ իբրև երեկոյ եղև, ասէ տէր այգւոյն ցգաւառապետ (տանը գործակալը) իւր. Կոչեա զմշակսն և տուր նոցա վարձս սկսեալ ի յետնոցն մինչև ցառաջինսն: Իբրև եկին որք զմետասաներորդ ժամուն, առին մեկն մի (մէյմէկ) դահեկան: Եկեալ և առաջինքն համարէին թէ աւելի առնուցուն. և առին մէն մի դահեկան և նոքա : Իբրև առին, տրտնջէին զտանուտեարէն և ասէին թէ Դոքա յետ-

* Տես Բերականութ. էջ 96, Գ.
** Տես Բերականութ. թիւ 125.

տինքդ մի ժամ գործեցին, և հաւասարակորդս (հաւասար) մեզ արարեր զդոսա որ զծանրութիւն աւուրն բարձաք (կրեցինք) և զտօթ : Նա պատասխանի ետ միում ի նոցանէ և ասէ. Ընկեր, չզրկեմ զքեզ. ոչ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս . առ զքոյդ և երթ. կամիմ յետնոցս տալ որպէս և քեզ . եթէ չիցէ ինձ իշխանութիւն յիմս առնել զինչ և կամիմ: **Մատթ. Գլ. Ի.**

Թագաւոր ոմն արար հարսանիս որդւոյ իւրում. և առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս, և ոչ կամեցան գալ: Դարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ. Ասացէք հրաւիրելոցն. Ահա ասիկ զճաշ իմ պատրաստեցի. զուարակքք իմ և պարարակք գեներալ են, և ամենայն ինչ պատրաստ է. եկայք ի հարսանիս. և նոքա յուլացեալ գնացին՝ ոմն յագարակ իւր և ոմն ի վաճառ իւր. և այլք կալան զծառայս իւր, Ծշնամանեցին և սպանին: Իսկ Թագաւորն իբրև լուաւ, բարկացաւ . և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանողսն զայնոսիկ և զքաղաքն նոցա այրեաց : Ցայնժամ ասէ ցծառայս իւր. Հարսանիքս պատրաստ են,

և հրաւիրեալքն չէին արժանի. արդ ելբ-
Թայք յանցս ճանապարհաց, և զորս միան-
գամ գտանիցէք՝ կոչեցէք ի հարսանիս : Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս՝ ժողո-
վեցին զամենեսեան զորս և գտին, զչարս
և զբարիս. և լցան հարսանիքն բազմա-
կանօք (հրաւիրեալ): Եւ մտեալ Թագա-
ւորն հայել զբազմականօքն՝ ետես անդ
այր մի որ ոչ էր զգեցեալ հանդերձ հար-
սանեաց : Եւ ասէ ցնա. Ընկեր, զիարդ
մտեր այսր զի ոչ ունէիր հանդերձ հար-
սանեաց. և նա պապանձեցաւ : Յայնժամ
ասէ Թագաւորն ցսպասաւորսն. Կապեցէք
զոտս և զձեռս, և հանէք զդա ի
խաւարն արտաքին: **Մատթ. Գլ. ԻԲ.**

Եկն յայնկոյս ծովուն Գերգեսացւոց. և
ընդ ելանելն նորա ի նաւէ անտի, պա-
տահեաց նմա այր մի ի գերեզմանացն
զոր ունէր (կը բռնէր) այս (դեւ) պիղծ
որոյ և բնակութիւն իւր իսկ ի գերեզ-
մանս էր. և ոչ շղթայիւք ոք ևս կարէր
կապել զնա՝ վասն բազում անգամ ոտնա-
կապօք և շղթայիւք կապելոյ, և խզելոյ
ի նմանէ զշղթայսն և զոտնակապսն խոր-
տակելոյ. և ոչ ոք կարէր պարտել զնա.

քանզի հանապազ զցայգ և զցերեկ ի
գերեզմանս և ի լերինս աղաղակէր և կո-
ծէր (կը ծեծէր) զանձն իւր քարամբք :
Իբրև ետես զՅիսուս ի հեռաստանէ, ընթ-
ացաւ և երկիր եզաց նմա : Աղաղա-
կեաց ի ձայն մեծ և ասէ. Զի կայ իմ և
քոյ, Յիսուս, որդի Աստուծոյ բարձրելոյ.
երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած. մի
տանջեր զիս: Քանզի ասէր ցնա. Ել այսր
պիղծ ի մարդոյ այսի. և հարցանէր ցնա
Թէ Զի՞նչ անուն է քո. և ասէ ցնա. Լէ-
գէոն անուն է իմ, քանզի բազումք եմք:
Եւ աղաչէին զնա յոյժ զի մի առաքեսցէ
զնոսա արտաքս բան զաշխարհն: Եւ անդ
էր առ լերամբն* երամակ մի խոզաց արօ-
տական (արածող) մեծ. աղաչեցին զնա
ամենայն դիւքն և ասեն. Առաքեա զմեզ
ի խոզսն զի մտցուք ի նոսա: Եւ հրամայ-
եաց նոցա. և իբրև ելին այսքն պիղծք,
մտին ի խոզեանսն (խոզեր), և դիմեաց
երամակն ի դարէ (ուչուրում) անտի ի
ծովակն (լիճ). էին իբրև երկու հազարք
և հեղձնուին ի ծովուն: Եւ խոզարածքն

* Առ գործիականով. Տես Բեր. էջ 99. 2°:

փախեան և պատմեցին ի քաղաքին և յագարակս, և ելին տեսանել զինչ իցէ որ գործեցաւն *: Գան առ Յիսուս և տեսանեն զդիւահարն զի նստէր զգեցեալ և զգաստացեալ որ ունէր զլեգէոնն, և զահի հարան: Եւ պատմեցին որոց տեսեալն էր՝ թէ զինչ եղև այսահարին և զինչ վասն խոզիցն: Եւ սկսան աղաչել զնա գնալ ի սահմանաց նոցա. և իբրև եմուտ նա ի նաւն, աղաչէր զնա դիւահարն զի ընդ նմա իցէ. և Յիսուս ոչ ետ թոյլ, այլ ասէ ցնա. Երթ ի տուն քո առ ընտանիս քո և պատմեա նոցա որ ինչ միանգամ Տէր արար քեզ: **Մարկ. Գլ. Ե.**

Ասէ Յիսուս ցաշակերտս իւր. Եկայք դուք առանձինն յանապատ տեղի և հանգիջիք սակաւ մի. զի էին բազումք որ երթային և գային, և հաց անգամ չժամանէին (չէին հասնիր) ուտել: Եւ գնացին նաւու յանապատ տեղի առանձինն. և տեսին զնոսա զի երթային, և զգացին (իմացան) բազումք և հետի յամենայն

* Որ գործեցաւն. եղածը. Տես Փերականութ. թիւ 165:

քաղաքաց խուռն (բազմութեամբ) ընթանային անդր և մերձենային առ նոսա: Եւ ելեալ ետես ամբոխ բազում և գթացաւ ի նոսա, զի էին իբրև ոչխարք որոց ոչ իցէ հովիւ և սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ: Իբրև բազում ժամ եղև, մատուցեալ աշակերտքն ասէին. տեղիս անապատ է. միանչ դեռ առուր կայ (Քանի որ ցորեկ է), արձակեա զժողովուրդսդ զի երթեալ շուրջ յագարակս և ի գիւղս՝ գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն. զի սատ ուտել ինչ ոչ ունին: Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. Դուք տուք նոցա ուտել. ասեն ցնա. Երթիցուք գնեսցուք երկերիւր դահեկանի հաց, և տացուք դոցա ուտել: Ասէ ցնոսա. Քանի նկանակ ունիք երթայք տեսէք. իբրև գիտացին, ասեն ցնա. Հինգ, և երկուս ձկունս: Եւ հրամայեաց նոցա բազմել երախանս երախանս (խումբ խումբ) իվերայ դալար (կանանչ, բազմ) խոտոյ: Եւ բազմեցան դասք դասք ուր հարիւր և ուր յիսուն: Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց. մանրեաց զնկանակսն և ետ ցաշակերտսն

զի արկցեն նոցա, և զերկուս ձկունսն բաշխեաց ամենեցուն։ Կերան և յագեցան, և բարձին զնշխարսն (կտորուանսն) երկոտասան սակառի լի, և ի ձկանց անտի։ Եւ էին որ կերանն իբրև արք հինգ հազար։ **Մարկ. Գլ. Զ.**

Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, և անկաւ ի ձեռս աւազակաց որք մերկացուցին զնա և վէրս ի վերայ եդին, Թողին կիսամահ և գնացին։ Դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհն։ և տեսեալ զնա գոծց արար (անցաւ). Նոյնպէս և գեղացի մի եկեալ ընդ նոյն տեղի՝ եռեալ և գանց արար։ Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն առ նովաւ, և տեսեալ զնա գթացաւ, և մատուցեալ պատեաց զվէրս նորա արկեալ ի վերայ ձէթ և գինի, և եդեալ ի վերայ գրաստու (բեռ կրող անասուն) իւրոյ ած զնա ի պանդոկի մի և դարմանեաց զնա։ Ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս ասէ. Դարման տար զմա, և զոր ինչ ծախեսցես (ծախսս բնել) ի դա՝ ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ։

Եւ եղև ի գնալն նոցա և ինքն եմուտ ի գիւղ մի, և կին ոմն անուն Մարթա ընկալաւ զնա ի տան իւրում, և նորա էր քոյր մի որում անուն էր Մարիամ, որ և եկն նստաւ առ ոտսն Տեառն և լսէր զբանս նորա, և Մարթա զբաղեալ էր ի բազում սպասու (ծառայութիւն)։ Եկն եկաց առ նոսա և ասէ. Տէր, ոչ ինչ է փոյթ քեզ (հոգդ չէ) զի քոյրդ իմ միայն թողեալ զիս ի սպասու, արդ ասա դմա զի օգնեսցէ ինձ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Մարթա, Մարթա, դու հոգաս և զբազում իւիք զբաղեալ ես, բայց ասա սակաւ ինչ պիտոյ է։

Դուկ. Գլ. Ժ.

Ան միջ էին երկու որդիք, ասէ կրտսերն ի նոցանէ ցնայրն. Հայր, տուր ինձ բաժին որ անկանի յընչից. և նա բաժանեաց նոցա զկեանսն (ինչս)։ Յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհն հեռի և անդ վատ-

---

* *Հնդ* նախադրութիւնը հայցականով. Տես Բերականութ. էջ 100. Գ.

նեաց (մխթեց) զինչս իւր զի կեայր անառակութեամբ։ Եւ իբրև սպառեաց (հատցուց) զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ և սկսաւ ինքն չքաւորել. և գնացեալ յարեցաւ (Ռովր մեաւ) ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագարակ իւր արածել խոզս, և ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին և ոչ ոք տայր նմա։ Եւ եկեալ ի միտս իւր ասէ. Քանի վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացալիցք, և ես սատ սովամահ կորնչիմ. յարուցեալ գնացից առ հայր իմ և ասացից ցնա. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո. և ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո. արա զիս իբրև զմի ի վարձկանաց քոց։ Եւ յարուցեալ եկն առ հայր իւր. և մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն և գթացաւ. յարեաւ և ընթացաւ ընդ առաջ. ամենաւ զպարանոցաւ (վիզը փաթթուիլ) նորա և համբուրեաց զնա։ Եւ ասէ ցնա որդին. Հայր, մեղայ յերկինս և առաջի քո. և ոչ ևս եմ արժանի կոչել որդի քո։ Ասէ հայրն ցծառայս իւր. Վաղվաղակի հանէք զպատմուճանն առա-

ջին և ագուցէք (հագցուցեք) նմա. և տուք զմատանին ի ձեռս նորա, և կօշիկս յոտս նորա. և ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք և ուրախ լիցուք. զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ. և սկսան ուրախ լինել։ Եւ էր երէց որդի նորա յագարակի. և մինչդեռ գայր և մերձ եղև ի տունն, լուաւ զձայն երգոց և զպարուց. և կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցն՝ հարցանէր նէ զինչ իցէ այն։ Եւ նա ասէ ցնա. Զի եղբայր քո եկեալ է. և եզեն հայր քո զեզն պարարակ զի ողջամբ (ողջ առողջ) ընկալաւ զնա։ Բարկացաւ և ոչ կամէր մտանել. և հայրն ելեալ արտաքս սպասէր զնա։ Պատասխանեալ նա և ասէ ցհայրն. Այս քանի ամք են զի ծառայեմ քեզ, և երբէք զպատուիրանաւ քով ոչ անցի (պատուէրէն, խօսքէն դուրս ելնել) ուրմի երբէք ոչ ետար ինձ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ։ Բերժամ եկն որդիդ քո այդ որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ։ Եւ նա ասէ ցնա. Որդեակ, դու հանապազ ընդ իս ես. և ամենայն որ ինչ իմ է՝ քո է.

այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ:

Ղուկ. Գլ. ԺԵ.

Այր ոմն էր մեծատուն, և ազանէր բեհեզս (մեսամսեղէն) և ծիրանիս և ուրախ լինէր հանապազ առատապէս: Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս անկեալ դնէր (գեսինը ինկած, պառկած ըլլալ) առ դրան նորա վիրաւորեալ. և ցանկայր յագել ի փշրանացն որ անկանէին ի սեղանոյ մեծատանն. այլ և շունք ևս գային և լեզուին զվէրս նորա: Եւ եղև մեռանել աղքատին, և տանել զնա հրեշտակաց ի գոգն Աբրահամու. մեռաւ և մեծատունն և թաղեցաւ, և ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ ի տանջանսն էր, ետես զԱբրահամ ի հեռաստանէ և զՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ: Եւ նա աղաղակեաց և ասէ, Հայր Աբրահամ, ողորմեաց ինձ և առաքեա զՂազարոս զի թացցէ զծագ (ծայր) մատին իւրոյ ի ջուր և զովացուսցէ զլեզու իմ. զի պապակիմ ի տապոյ (տաք) աստի: Եւ ասէ ցնա Աբրահամ. Որդեակ, յիշեա զի ընկալար դու անդէն զբարիս քո ի

կեանսն քում, և Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ սա աստ միխիթարի և դու այդր պապակիս. և ի վերայ այսր ամենայնի՝ վիհ (խորունկ ծակ, անդունդ) մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ. եթէ կամիցին աստի առ ձեզ անցանել, ոչ կարեն, և ոչ այտի ոք առ մեզ անցանել: Եւ նա ասէ. Արդ աղաչեմ զքեզ, հայր, զի արձակեսցես զդա ի տուն հօր իմոյ. են իմ անդ եղբարք հինգ, որպէս զի տացէ նոցա վկայութիւն զի մի և նոքա գայցեն այս տեղի տանջանաց:

Ղուկ. Գլ. ԺԶ.

Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով. և ահա այր մի անուն կոչեցեալ Զաքէոս, և նա էր մաքսապետ, և ինքն մեծատուն և խնդրէր տեսանել եթէ ո՞վ իցէ Յիսուս, և ոչ կարէր ի բազմութենէն զի կարճ էր հասակաւ (պոյ): Եւ ընթացեալ յառաջ (առաջք, առջեւի կողմը) ել ի ժանտաթզենին, զի տեսանիցէ զնա. քանզի ընդ այն (անկէ) իսկ անցանելոց էր: Իբրև եկն ի տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս և ասէ ցնա. Զաքէ, փութա էջ այսր, զի այսօր ի տան քում արժան է ինձ

ազատել (իջնել, օթեւան ընել): Փութացաւ և էջ, և ընկալաւ զնա ուրախութեամբ: Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին թէ Առ առն մեղաւորի եմուտ լուծանել (ազատել, օթեւան ընել): Եկն եկաց Զաքէոս և ասէ ցՏէր. Տէր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց. և եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին:

Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ. և կոչեալ զծառայս իւր ետ նոցա տասն մնաս և ասէ ցնոսա. Ցարգեցէք (բանեցնել. շահեցնել) զայդ մինչև եկից: Եւ քաղաքացիքն նորա ատէին զնա. առաքեցին հրեշտակս զկնի նորա և ասեն թէ Ոչ կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր: Եւ եղև դառնալ նմա առեալ զթագաւորութիւնն. և կոչեաց զծառայսն որոց տուեալ էր զարծաթն, (ստակ) զի գիտասցէ թէ ո՞ զինչ շահեցաւ: Եկն առաջինն և ասէ. Տէր, մնասն քո տասն մնաս արար (շահեցաւ). և նա ասէ ցնա. Ազնիւ ծառայ և բարի, զի ի փոքուդ հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերայ տասն քա-

ղաքի: Եկն երկրորդն և ասէ. Մնասն քո արար հինգ մնաս: Ասէ և ցնա թագաւորն. Եւ դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց: Եկն և միւսն և ասէ. Տէր, ահա մնասն քո զոր ունէի ծրարեալ ի վարշամակի. երկնչէի ի քէն զի այր ստամբակ (խիստ. զալրամ) ես. բառնաս զոր ոչ եդիր, և հնձես զոր ոչ սերմանեցեր: Եւ նա ասէ ցնա. Ի բերանոյ բուսմէ դատեցայց ըզքեզ, ծառայ անհաւատ (անհաւատարիմ). գիտէիր թէ ես այր մի ստամբակ եմ. բառնամ զոր ոչ եդի, և հնձեմ ուր ոչ սերմանեցի. և ընդէր ոչ ետուր զարծաթն իմ ի սեղանաւորս. և եկեալ ես տոկոսեօք պահանջէի: Եւ ասէ ցպատաւորսն. Առէք ի դմանէ զմնասն, և տարայք տուք այնմ որ ունիցի զտասն մնասն: Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ որ ոչն կամէին զիս թագաւորել ի վերայ նոցա՝ առէք այսր և սպանէք առաջի իմ:

Իբրև մերձեցաւ ի Բեթանիա մօտ ի լեառն որ կոչի Զիթենեաց, առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց և ասէ. Երթայք դուք ի գիւղն որ հանդէպ մեր կայ, յոր իբրև մտանէք, գտանիցէք յա-

36 - 15 - 00

ամենակ կապեալ յորում որք ի մարդկանէ երբէք ոչ նստաւ. լուծէք զնա և ածէք. և եթէ որ հարցանիցէ զձեզ թէ ընդէր լուծանէք, այսպէս ասասջիք զնա թէ Տեառն իւրում պիտոյ է: Իբրև չորան որ առաքեցանն (ղրկուողները) գտին որպէս ասացն (ըսածին պէս*) ցնոսա. կայր յաւանակն: Եւ մինչդեռ լուծանէին զյաւանակն, ասեն տէրերքն նորա ցնոսա. Զի՞ լուծանէք զյաւանակդ. և նոքա ասեն. Տեառն իւրում պիտոյ է: Եւ ածին զնա առ Յիսուս, և արկին (վռան ծածկել) զնոսաւ հանդերձս և հեծուցին զՅիսուս: Եւ մինչդեռ երթայր, զհանդերձս իւրեանց տարածանէին զճանապարհաւն. և իբրև այն ինչ մերձ եղև ի զառ ի վայր լերինն Ձիթենեաց, սկսաւ ամենայն բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ օրհնել զԱստուած վասն ամենայն եղելոց զօրութեանցն զոր տեսին:

Ղուկ. Գլ. ԺԹ.

Այր մի տնկեաց այգի և ած (բոլորտիքը ցանկ. պատ եւայլն) շուրջ զնովաւ ցանգ, և զուր հնձան փորեաց և շինեաց աշտա-

* Տես Փեր. քի 165 եւ 167. Բ.

բակ, և ետ զնա ցմշակս և գնաց ի տար (հեռաւոր) աշխարհ: Եւ առաքեաց առ մշակսն ի ժամանակի ծառայ մի, զի ի մշակաց անտի առցէ ի պտղոյ այգւոյն. և նոցա կալեալ զաւն հարին (ծեծել) զնա և արձակեցին ունայն: Դարձեալ առաքեաց առ նոսա այլ ծառայ, և զնա կառուսինատեցին (գլխուն զարնել, թէփեղեմէ) և արձակեցին անարգեալ. և դարձեալ այլ առաքեաց, և զնա սպանին. և զբազում այլս՝ զոմանս հարկանէին և զոմանս սպանանէին: Ապա որդի մի էր իւր սիրելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ և ասէ. Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ: Իսկ մշակքն իբրև տեսին զնա թէ գայ, ասեն ցմիմեանս. Սա է ժառանգն. եկայք սպանցուք զսա և մեր լիցի ժառանգութիւնն. և կալեալ զնա սպանին և հանին արտաքոյ այգւոյն:

Մարկ. Գլ. ԺԲ.

Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին աւուր ի գիւղ մի որ հեռի էր յԵրուսաղեմէ հարիւր և վաթսուն ասպարիսաւ, (երկայնութեան չափ, որ 125 երկրաչափական քայլ է) և էր անուն նորա Էմ-

մուռս. և նոքա խօսէին ընդ միմեանս
վասն ամենայն անցիցն անցելոց (դէպք,
պատահար): Եւ եղև ընդ խօսելն նո-
ցա և ընդ վիճել, և ինքն իսկ Յիսուս մեր-
ձեցաւ և երթայր ընդ նոսա. և նոցա աչք
կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա: Եւ
ասէ ցնոսա. Զի՞նչ են բանքդ վասն որոյ
վիճիքդ ընդ միմեանս մինչդեռ գնայքդ,
և տրտմեալ էք: Պատասխանի ետ մի ոմն
ի նոցանէ և ասէ ցնա. Դո՞ւ միայն կաս
յԵրուսաղէմ որ ոչ գիտացեր զինչ գործե-
ցաւ ի նմա յաւուրսս յայսոսիկ: Եւ նա ասէ
ցնոսա. Զի՞նչ: Եւ նոքա ասեն. զՅիսուսէ
Նազովրեցւոյ որ եղև այր մարգարէ, հզօր
արդեամբք (գործով) և բանիւք առաջի
Աստուծոյ և ամենայն ժողովրդեանն. որ-
պէս մատնեցին զնա քահանայապետքն և
իշխանք մեր ի դատաստան մահու և հա-
նին զնա ի խաչ: Մեք ակնունէաք թէ նա
է որ փրկելոցն իցէ զԻսրայէլ. այլ և հան
դերձ այսու ամենայնիւ՝ այս երրորդ օր
է յորմէ հետէ այն գործեցաւ: Այլև կա-
նայք ոմանք ի մէնջ զարմացուցին զմեզ.
որք կանխեալ (առտուն կանուխ ելնել:)
ընդ առաւօտս չոքան ի գերեզմանն և ոչ

գտին զմարմին նորա. եկին և ասեն թէ
և տեսիլ ևս հրեշտակաց տեսին որք ասէ-
ին զնմանէ թէ կենդանի է: Եւ գնացին
ոմանք ի մէնջ ի գերեզմանն և գտին
նոյնպէս որպէս և կանայքն ասացին.
բայց զնա ոչ տեսին: Եւ նա ասէ ցնոսա.
Ով անմիտք և հեղգասիրտք ի հաւատալ
ամենայնի զոր խօսեցան մարգարէքն.
ո՞չ զնոյնս պարտ էր չարչարել Քրիս-
տոսի և մտանել ի փառս իւր. և սկսեալ ի
Մովսիսէ և յամենայն մարգարէից՝ մեկ-
նէր (բացատրել) նոցա որ ինչ յամենայն
գիրս գրեալ է զնմանէ: Իբրև մերձեցան
ի գեղն յոր երթային, և նա պատճառէր
(կեղծել. անանկ երեւցնել) հեռագոյն
ևս ուրեք երթալ. և բռնադատեցին զնա
և ասեն. Առ մեզ ագիր, զի ընդ երեկս
է, և տարաժամեալ (իրիկուն) է օրս. և
եմուտ ագանել անդ ընդ նոսա: Եւ եղև
ի բազմելն (սեղան նստիլ) նորա ընդ նո-
սա, առեալ զհացն օրհնեաց, եբեկ և ետ
նոցա: Եւ նոցա բացան աչք և ծանեան
զնա. և նա եղև ի նոցանէ անտեսանելի: Եւ
ասեն ցմիմեանս. Ո՞չ իսկ և սիրտք մեր ճրմ-
լէին (ցաւիլ, գալարիլ) ի մեզ մինչ խօ-

սէրն ընդ մեզ զճանապարհայն, և որպէս բանայր մեզ զգիրս: Եւ յարուցեալ նոյն ժամայն (անվիջապէս) դարձան յԵրուսաղէմ, և գտին ժողովեալ զմետասանսն և զորս ընդ նոսայն էին, և պատմէին զայն որ զճանապարհայնն, և Թէ զիարդ ետ ծանօԹս (ինքզինք ճանչցնել) նոցա ի բեկանել հացին:

Մինչդեռ նոքա խօսէին, ինքն իսկ Յիսուս եկաց ի մէջ նոցա և ասէ ցնոսա. ԽաղաղուԹիւն ընդ ձեզ. Ես եմ, մի երկնչիք: Եւ զահի հարեալ երկնչէին, և համարէին ոգի ինչ տեսանել: Եւ ասէ ցնոսա. Զի խռովեալ էք, և ընդէր խորհուրդք ելանեն ի սիրտս ձեր. տեսէք զձեռս իմ և զոտս. զի ոգի՝ մարմին և ոսկերս ոչ ունի որպէս զիս տեսանէք զի ունիմ. և զայս ասացեալ եցոյց նոցա զձեռսն և զոտս: Եւ մինչդեռ տակաւին չհաւատային ի խնդուԹենէն և զարմացեալ էին, ասէ ցնոսա. Ունիք ինչ կերակուր աստ. և նոքա ետուն նմա ձկան խորովելոյ մասն և խորիսխ (խորիսխ մեղու, պղակունց մեղրով, իւղով եւ ալիւրով շինուած, խմոր մեղրով խառն) մե-

պու: Եւ առ եկեր առաջի նոցա, և զմնացորդսն ետ նոցա: Դուկ. ԺԴ. ԻԴ.

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանա Գալիլեացւոց. և անդ էր մայրն Յիսուսի: Կոչեցաւ և Յիսուս և աշակերտքն նորա ի հարսանիսն. և ի պակասել գինւոյն ասէ մայրն ցՅիսուս. Գինի ոչ ունին: Եւ ասէ ցնա Յիսուս. Զի կայ իմ եւ քո(ինէ ինչ կուզես) կին դու, չէ է հասեալ ժամանակ իմ: Ասէ մայր նորա ցսպասաւորսն. Որ զինչ ասիցէ ձեզ՝ արարջիք: Անդ էին Թակոյկք կՀեայք (մարմար քարէ քիւզի) վեց. տանէին (առնել ամանի մը) մի մի ինոցանէ մարս երկուս կամերիս: Ասէ ցնոսա Յիսուս. Լցէք զԹակոյկսդ ջրով, և լցին զնոսա մինչև ի վեր, և ասէ ցնոսա. Արդ առէք և բերէք տաճարապետիս (սեղանապետ). և նոքա բերին: Եւ իբրև ճաշակեաց տաճարապետն զջուրն գինի եղեալ, և ոչ գիտէր ուստի իցէ, բայց սպասաւորքն գիտէին որք արկին զջուրն. խօսի ընդ փեսային տաճարապետն և ասէ. Ամենայն ոք զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ (հրամցնել). և յորժամ արբենան, յայնժամ զյոռին.

դու պահեցեր զանոյշ գինիդ մինչև ցայժմ:

Եւ էր մերձ զատիկն Հրէից, և ել Յիսուս յԵրուսաղէմ. և եգիտ ի տաճարին զի վաճառէին զարջառս (մեծ եղջերաւոր անասուն, կով, եզ եւայլն) և զոչխարս և զաղաւնիս, և զլումափոխսն (ստակ փոխող) որ նստէին: Եւ արար խարազան (խամչի) չուանեայ և եհան զամենեսին ի տաճարէն՝ զոչխարսն և զարջառս. և զպղինձս հատավաճառացն ցրուեաց և զսեղանսն կործանեաց: Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ ասա՛ի. և մի առնէք զտուն հօր իմոյ առուն վաճառի: **Յովհ. Գ. Ա.**

Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա: Գայ նա ի քաղաք մի Սամարացւոց որում անուն էր Սիւքար, մերձ ի գիւղն զոր ետ Յակոբ որդւոյ իւրում Յովսեփայ: Եւ անդ էր աղբիւր մի Յակոբայ. և Յիսուս վաստակեալ (յոգնիլ) ի ճանապարհէն նստէր ի վերայ աղբերն. և էր ժամ իբրև վեցերորդ: Գայ կին մի ի Սամարիայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. Տուր ինձ ըմպել: Զի աշակերտքն նորա երթեալ էին ի քաղաք անդր զի կերակուրս գնեսցեն:

Ասէ ցնա կինն Սամարացի. Դու որ Հրեայդ ես՝ զիարդ յինէն ըմպել խնդրես, ի կնոջէ Սամարացւոյ. զի ոչ երբէք խառնակին (խառնուիլ. հաղորդութիւն ընել). Հրեայք ընդ Սամարացիս: Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Եթէ գիտէիր դու զպարգևսն Աստուծոյ և ո՞վ է որ ասէդ ցքեզ թէ Տուր ինձ ըմպել, դու արդեաք խնդրէիր ի նմանէ, և տայր քեզ ջուր կենդանի: Ասէ ցնա կինն. Տէր, դու քանզի և դոյլ (խոփաւ) իսկ ոչ ունիս և ջրհորս խոր է, իսկ արդ ուստի՞ ունիցիս զջուրն կենդանի. միթէ դու մեծ ինչ ոք իցես քան զհայրն մեր Յակովբ որ զայս ջրհոր ետ մեզ, և ինքն ասաի արբ և որդիք նորա և խաշինք (ոչխար եղջերաւոր անասուն, ոչխար, այծ) նորա: Պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ. Ամենայն որ ըմպէ ի ջրոյդ յայդմանէ՝ միւսանգամ ծարաւէ. բայց որ ըմպէ ի ջրոյն զոր ես տացս նմա՝ մի ծարաւեսցէ յաւիտեան: Ասէ ցնա կինն. Տէր, տուր ինձ զջուրն զայն զի մի ծարաւեցից, և մի եկից այսր հանել ջուր: Ասէ ցնա Յիսուս. Երթ կոչեա զայր քո և եկ այսր: Պատասխանի ետ նմա կինն

և ասէ. Զիք իմ այր: Ասէ ցնա Յիսուս. Բարւոք ասացեր Թէ Զիք իմ այր, զի հինգ այր փոխեալ է քո. և զոր այժմ ունիս՝ չէ քո այր. զայդ արդար ասացեր: Ասէ ցնա կինն. Տէր, Թուի ինձ Թէ մարգարէ իցես դու: Գիտեմք զի մեսիայ գայ անուանեալն Քրիստոս. յորժամ եկեսցէ նա, պատմեսցէ մեզ զամենայն: Ասէ ցնա Յիսուս. Ես եմ որ խօսիմս ընդ քեզ: Եւ յայն բան եկին աշակերտքն նորա, և զարմանային զի ընդ կնոջն խօսէր. բայց ոչ ոք ասաց ի նոցանէ Թէ Զինչ խնդրես կամ զինչ խօսիս ընդ դմա: Եթող կինն զսափորն իւր և չոքաւ ի քաղաքն և ասէ ցմարդիկն. Եկայք տեսէք զայր մի որ ասաց ինձ զամենայն որ ինչ իմ գործեալ է. միթէ նա իցէ Քրիստոսն· Ելին ի քաղաքէն և գային առ նա: Եւ մինչչև եկեալ էին նոքա, աղաչէին զնա աշակերտքն և ասէին. Ռաբբի, հաց կեր: Նա ասէ ցնոսա. Ես կերակուր ունիմ ուտել զոր դուքն ոչ գիտէք: Ասէին աշակերտքն ընդ միմեանս. Միթէ եբեր ինչ ոք դմա ուտել: Ասէ ցնոսա Յիսուս. Իմ կերակուր այն է զի արարից զկամս այնորիկ որ առա-

քեացն զիս. ոչ դուք ասէք Թէ այլ ևս չորք ամիսք են, և հունձք (հնձելու ատեն) գան. ահաւասիկ ես ասեմ ձեզ. ամբարձէք զաչս ձեր, և տեսէք զարտորայսն (արտեր) զի սպիտակացեալ են և ի հունձս հասեալ (հասունցած): Իբրև եկին առ նա Սամարացիքն, աղաչէին զնա լինել առ նոսա. և եղև անդ աւուրս երկուս. և բազումք հաւատացին ի նա, և ասէին Թէ Ոչ այսուհետև վասն քոյ խօսիցդ հաւատամք. զի մեզէն (անձամբ) իսկ լուաք ի դմանէ: **Յովհ. Գլ. Դ.**

Եւ յԵրուսաղէմ ի Պրոբատիկէ աւազանին, որ կոչէր հինգ սրահ, անկեալ գային, որ կոչէր հինգ սրահ, անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց. կուդնէր բաց, կաղաց, գօսացելոց (մէկ անդամը չորցած, nr չի բռներ) որ ակն ունէին ջրոցն յուզելոյ (խառնել ջուրը եւայլն): Եւ հրեշտակ Տեառն իջանէր ըստ ժամանակի յաւուրսն և յուզէր զջուրսն. և որ նախ ի շարժումն ջուրցն իջանէր՝ բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութեան: Եւ անդ էր այր մի որոյ երեսուն և ութ ամ էր ի հիւանդութեան իւրում. զնա իբրև ետես Յիսուս զի անկեալ դնէր՝ և

գիտաց եթէ բազում ժամանակք են այ-
նուհետև, ասէ ցնա. Կամիս ողջ (առողջ)
լինել: Պատասխանի ետ նմա հիւանդն.
Տէր, ոչ զոք ունիմ թէ յորժամ ջուրքն
յուզիցին՝ արկցէ (նետել մէջը) զիս յա-
ւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ ոք
քան զիս յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա
Յիսուս. Արի, առ զմահիճս (գահաւո-
ռակ որուն վրայ անկողինը կտարածուի)
քո և գնա: Եւ ողջացաւ այրն, և յարեաւ
առ զմահիճս իւր և շրջէր (պտըտիլ. գնալ՝
քալել). և էր շաբաթ յաւուրն յայնմիկ:
Ասեն Հրեայքն ցբժշկեալն. Շաբաթ է. և
ոչ է արժան քեզ առնուլ զմահիճս քո:
Պատասխանի ետ նոցա և ասէ. Որ քբ-
ժշկեացն զիս (զիս բժշկողը) նա ասաց
ցիս. Առ զմահիճս քո և գնա: Հարցին ցնա
և ասեն. Ով է այրն որ ասաց ցքեզ, Առ
զմահիճս քո և շրջեաց: Եւ բժշկեալն ոչ
գիտէր թէ ով իցէ. քանզի Յիսուս խոյս
ետ (կամացուկ մը քաշուիլ, երթալ) վասն
ամբոխին ի տեղւոջէ անտի: Յետ այսորիկ
գտանէ զնա Յիսուս ի տաճարին և ասէ
ցնա. Ահաւադիկ ողջացար, մի ևս մեղան-
չեր զի մի չար ևս ինչ լինիցի քեզ: Գնաց

այրն և պատմեաց Հրէիցն եթէ Յիսուս էր
որ բժշկեացն զիս: Եւ վասն այնորիկ հա-
լածէին զՅիսուս Հրեայքն, զի զայն
առնէր ի շաբաթու: **Յովհ. Գլ. Ե.**

Եւ մինչդեռ անցանէր, ետես այր մի
կոյր ի ծնէ. և հարցին ցնա աշակերտքն
նորա և ասեն. Ռաբբի, ո՞յր վնաս է,
(յանցանքը որին է) սորա թէ հօր և մօր
իւրոյ, զի կոյր ծնցի: Պատասխանի ետ
Յիսուս. Ոչ դորա վնաս է և ոչ հօր և մօր
իւրոյ. այլ զի յայտնի լիցին գործքն Ա-
ստուծոյ ի դմա: Զայս իբրև ասաց, եթուք
ի գետին, և արար կաւ ի թքոյն, և ծե-
փեաց զկաւն ի վերայ աչաց կուրին, և
ասէ ցնա. Երթ, լուա յաւազանին Սելով-
մայ որ թարգմանի առաքեալ: Զոգաւ,
լուացաւ, եկն և տեսանէր: Իսկ դրացիքն
որոց տեսեալն էր զնա յառաջագոյն թէ
մուրացիկ (մուրացկան) էր, ասէին. Ոչ՞
սա էր որ նստէրն և մուրանայր. կէսքն
ասէին. Նա է. այլքն ասէին. Ոչ, այլ
նման է նմա. և ինքն ասէր թէ ես եմ.
Ասեն ցնա. Իսկ զիարդ բացան աչք քո.
Նա ետ պատասխանի. Այր մի որում Յի-
սուսն ասեն՝ կաւ արար և ծեփեաց զաչս

իմ և ասէ ցիս. Երթ ի Սելոամ և լուա: Զոգայ լուացայ և տեսանեմ: Ասեն ցնա. Ուր՞ է նա. ասէ ցնոսա. Ոչ գիտեմ: Ածին առ Փարիսեցիսն զնա որ երբեմն կոյրն էր. և էր շաբաթ յորժամ զկաւն արար Յիսուս, և եբաց զաչս կուրին: Դարձեալ հարցանէին ցնա Փարիսեցիքն թէ Զիարդ տեսանես. և նա ասէ ցնոսա. Կաւ եդ ի վերայ աչաց իմոց և լուացայ և տեսանեմ: Ասեն ոմանք ի Փարիսեցւոցն. Ոչ է այրն այն յԱստուծոյ. զի զշաբաթս ոչ պահէ (բռնել հրամայուած տօնի or մը) կէսքն (ոմանք) ասէին. Իսկ զիարդ կարէ մարդ մեղաւոր այդպիսի նշանս (հրաշք) առնել. և էին հերձուածք (բաժանում) իմէջ նոցա: Ասեն դարձեալ ցկոյրն. Դու զի ասես վասն նորա զի եբաց զաչս քո. և նա ասէ թէ Մարգարէ է: Եւ ոչ հաւատային Հրեայքն զնմանէ թէ կոյր էր և բացաւ. մինչև կոչեցին զծնողս բացելոյն հարցին ցնոսա և ասեն. Սա է որդին ձեր զորմէ դուքն ասէիք եթէ կոյր ծնաւ. արդ զիարդ տեսանէ: Պատասխանի ետուն նոցա ծնողքն նորա և ասեն. Գիտեմք զի սա է որդին մեր և զի կոյր ծնաւ. բայց

զիարդ այժմդ տեսանէ ոչ գիտեմք. կամ թէ ո՞ եբաց զաչս զորա՝ մեք ոչ գիտեմք. ցդա իսկ հարցէք. ինքնին ի չափ հասեալ (չափահաս) է, ինքն իսկ խօսեսցի վասն իւր (խօսիլ վասն իւր. ինքը զինքը պաշտպանել): Զայս ասացին ծնողքն նորա զի երկնչէին ի Հրէից, քանզի ուխտ եդեալ (ուխտ ընել) էր Հրէից, եթէ որ խոստովանեսցի (դաւանել ճանչնալ) զնա Քրիստոս, ի բաց կացցէ ի ժողովրդենէն, վասն այնորիկ ասացին ծնողքն նորա թէ ինքնին ի չափ հասեալ է, ցնա իսկ հարցէք: Դարձեալ կրկին անգամ կոչեցին զայրն որ կոյրն էր, և ասեն ցնա. Տուր փառս Աստուծոյ. մեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է: Եւ նա ասէ. Թէ մեղաւոր իցէ՝ ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ զի կոյր էի և արդ տեսանեմ: Դարձեալ ասեն ցնա. Զինչ արար քեզ. զիարդ եբաց զաչս քո: Պատասխանի ետ նոցա. Այժմ ասացի ձեզ և ոչ լուարուք. զի կամիք միւսանգամ լսել. միթէ և դուք կամիք աշակերտել նմա: Նոքա հայհոյէին զնա և ասէին. Դու լիջիր նորա աշակերտ. մեք Մովսիսի աշակերտք եմք. մեք գիտեմք զի ընդ Մով-

սիսի խօսեցաւ Աստուած. զսա ոչ գիտեմք ուստի իցէ: Պատասխանի ետ այրն և ասէ ցնոսա. Այդ իսկ են սքանչելիք (զարմանալու բան) զի դուք ոչ գիտէք ուստի իցէ, և զիմ աչս եբաց· Գիտեմք զի Աստուած մեղաւորաց ոչ լսէ (աղաչանքը ընդունիլ). բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ և զկամս նորա առնիցէ, նմա լսէ, ի յաւիտենից (յաւիտեանք, հին դարեր) ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր ծնելոյ: Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն այն՝ ոչ կարէր առնել ինչ: Պատասխանի ետուն և ասեն ցնա. Ի մեղս իսկ ծնեալ ես ամենեին, և դու վարդապետ (սովրեցընող) լինիս մեր. և հանին զնա արտաքս:

Յովհ. Գլ. Թ.

Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիա ի գեղջէ Մարեմայ և Մարթայի քեռնորա: Այս այն Մարիամ էր որ օծ զՏէրն իւղով և ջնջեաց (սրբել) զոտս նորա հերով (մազ) իւրով. որոյ եղբայրն Ղազարոս հիւանդ էր: Առաքեցին առնա քորքն նորա և ասեն. Տէր, ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւանդացեալ է: Իբրեւ լուաւ Յիսուս, ասէ. Այն հիւանդութիւն չէ ի մահ

(մեռնելու, մահացու): Եւ սիրէր Յիսուս զՄարթա և զքոյր նորա զՄարիամ և զՂազար: Իբրև լուաւ թէ հիւանդացեալ է, զտեղի կալաւ (կեցաւ) անդէն ուր էրն՝ աւուրս երկուս: Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք միւսանգամ ի Հրէաստան: Ասեն ցնա աշակերտքն. Ռաբբի, այժմ ևս խնդրէին զքեզ Հրէայքն քարկոծ առնել, և դարձեալ երթաս անդրէն (հոն): Պատասխանի ետ Յիսուս. Ոչ՞ երկոտասան ժամ է աւուր. եթէ ոք գնայ ի տուընջեան, ոչ գայթակղի (իյնալ), զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ. ապա թէ ոք գնայ գիշերի, գայթակղի. զի լոյս ոչ գոյ ընդ նմա: Զայս իբրև ասաց, յետ այսորիկ ասէ ցնոսա. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց. այլ երթամ զի զարթուցից զնա: Ասեն ցնա աշակերտքն. Տէր, եթէ ննջեաց, ապա ապրի (ազատիլ): Այլ Յիսուս վասն մահուն նորա ասէր. նոցա այսպէս թուեցաւ թէ վասն ննջելոյ քնոյն ասէ: Յայնժամ ասէ ցնոսա յայտնապէս. Ղազարոս մեռաւ. և ես ուրախ եմ զի չէի անդ. բայց արդ եկայք երթիցուք առ նա. Ասէ Թովմաս, անուանեալն

երկուորեակ (էֆիզ), ցաշակերտակիցսն. Ծն (հայտէ), եկայք և մեք զի ընդ նմա մեռցուք. Եկն Յիսուս, եգիտ զնա չորեքօրեայ ի գերեզմանի: Եւ էր Բեթանիա մերձ յԵրուսաղէմ իբրև ասպարիսօք հնգետասան: Բազումք ի Հրէից անտի եկեալ էին առ Մարթա և Մարիամ զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն. Մարթա իբրև լուաւ թէ Յիսուս գայ, ընդ առաջ գնաց նորա. բայց Մարիամ նստէր անդէն ի տան: Ասէ Մարթա ցՅիսուս. Տէր, եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր մեռեալ: Ասէ ցնա Յիսուս. Յարիցէ (Յարութիւն առնել) եղբայրն քո. ասէ ցնա Մարթա. Գիտեմ զի յարիցէ ի յարութեան յաւուրն յետնում: Զայս իբրև ասաց, գնաց և կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռելեայն (գաղտ) և ասէ. Վարդապետ եկեալ է և կոչէ զքեզ: Նա իբրև լուաւ, յարեաւ վաղվաղակի և եկն առ նա: Զեւ ևս էր եկեալ Յիսուս ի գեղն. այլ էր անդէն ի տեղւոջն ուր ընդ առաջ եղեալ (դիմաւորեց) նմա Մարթա: Իսկ Հրէայքն որ էին ընդ նմա ի տան անդ և մխիթարէին զնա՝ իբրև տեսին զՄարիամ թէ յարեաւ

վաղվաղակի և գնաց, գնացին և նոքա զհետ նորա. համարէին թէ ի գերեզմանն երթայ զի լացցէ անդ: Իսկ Մարիամ իբրև եկն ուր էրն Յիսուս և ետես զնա, անկաւ առ ոտս նորա և ասէ. Տէր, եթէ աստ էիր դիպեալ (դիպուածով տեղ մը գտնուիլ), ոչ էր մեռեալ եղբայրն իմ: Յիսուս իբրև ետես զնա զի լայր և որ ընդ նմա էին Հրէայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբրև զայրացեալ (բարկանալ) և ասէ. Ուր՞ եդիք զնա: Ասեն ցնա. Եկ և տես, և արտասուեաց (արցունք թաթել) Յիսուս. Ասէին Հրէայքն. Տեսէք որչափ սիրէր զնա, կէսքն ի նոցանէ ասէին. Ոչ՞ կարէր սա որ եբաց զաչս կուրին՝ առնել զի և սա մի մեռցի: Յիսուս դարձեալ զայրացեալ ի միտս իւր՝ գայ ի գերեզմանն. և էր այր մի, և վէմ մի եդեալ ի վերայ նորա: Եւ ասէ Յիսուս. Ի բաց արարէք զվէմդ. ասէ ցնա Մարթա, քոյր մեռելոյն. Տէր, արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է: Եւ իբրև ի վեր առին զվէմն, Յիսուս ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ. Ղազարէ, արի եկ արտաքս. և ել մեռեալն ոտիւք կապելովք և ձեռօքն երիթ-

գսակնդօք (երկայն ու նեղ կտաւով պատած) և երեսօքն վարշամակապատօք. և ասէ ցնոսա Յիսուս. Լուծէք զդա և Թողէք երթալ: Բազումք ի Հրէից որ եկեալ էին առ Մարեմանս՝ իբրև տեսին զոր արարն, հաւատացին ի նա:

Յովհ. Գլ. ԺԱ.

Եւ Յիսուս ել աշակերտօքն հանդերձ յայնկոյս Յորոյն Կեդրոնի ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր: Գիտէր և Յուդա որ զնա մատնելոց էր՝ ըզ տեղին, զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յիսուսի աշակերտօքն հանդերձ: Եւ Յուդայի առեալ ընդ իւր զգունդն և ի քահանայապետից սպասաւորս՝ գայ անդր ջահիւք և լապտերօք և զինուք: Իսկ Յիսուս իբրև ետես զայն ամենայն եկեալ ի վերայ նորա, ել և ասէ ցնոսա. Զո՞ խնդրէք: Պատասխանի ետուն նմա. զՅիսուս Նազովրեցի. ասէ ցնոսա Յիսուս. Ես եմ. կայր ընդ նոսա և Յուդա որ մատնէրն զնա: Իբրև ասաց Թէ ես եմ, յետս յետս չոքան և զարկան զգետնի (գետինը զարնուիլ): Դարձեալ եհարց զնոսա. Զո՞ խնդրէք. և նոքա ասեն. զՅիսուս Նազով-

րեցի: Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ասացի ձեզ Թէ ես եմ. արդ եԹէ զիս խնդրէք, Թոյլ տուք դոցա երթալ: Իսկ Սիմոն Պետրոս, քանզի ունէր սուր, ձըգեաց զնա և եհար զքահանայապետին ծառայ. և ի բաց առ զունկն նորա զաջոյ. և էր անուն ծառային Մաղքոս: Ասէ Յիսուս ցՊետրոս. Արկ զսուրդ անդրէն ի պատեանս իւր: Իսկ զունդն և հազարապետն և սպասաւորք Հրէից կալան զՅիսուս և կապեցին. և ածին զնա նախ առ Աննա որ էր աներ Կայիափայի որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ: Այս այն Կայիափայ էր որ խրատն ետ Հրէից եԹէ լաւ է առն միում մեռանիլ ի վերայ ժողովրդեանն: Եւ երթային զհետ Յիսուսի Սիմոն Պետրոս և միւս աշակերտն: Եւ աշակերտն այն, քանզի ծանօԹ էր քահանայապետին, եմուտ ընդ Յիսուսի ի գաւիԹ քահանայապետին. և Պետրոս կայր առ դրանն արտաքոյ: Ել միւս աշակերտն որ էր ծանօԹ քահանայապետին, և ասաց ցդռնապանն և եմոյծ ի ներքս զՊետրոս: Ասէ աղջիկն որ դռնապանն էր՝ ցՊետրոս. ՄիԹէ և դու յաշակերտաց

առնն այնորիկ իցես. և նա ասէ. Ոչ եմ: Կային անդ ծառայքն և սպասաւորքն խարոյկ արկեալ (կրակ վառել), քանզի ցուրտ էր. և ջերմուին (տաքնալ). Կայր ընդ նոսա և Պետրոս և ջերմոյր: Եւ քահանայապետն եհարց զՅիսուս վասն աշակերտացն և վասն վարդապետութեան նորա: Պատասխանի ետ նմա Յիսուս. Ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի. ես յամենայն ժամ ուսուցի ի ժողովրդեանն և ի տաճարի անդ ուր ամենայն Հրէայք ժողովեալ էին, և ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ. զի հարցանես զիս. հարց զայնոսիկ որ լուանն՝ թէ զինչ խօսեցայ ընդ նոսա. ահաւասիկ նոքա գիտեն զինչ ասացի ես: Իբրև նա զայն ասաց, մի ոմն ի սպասաւորացն որ անդ կայր՝ ած (զարնել) ապտակ Յիսուսի և ասէ. Այդպէս պատասխանի տաս քահանայապետիդ: Եւ Յիսուս ասէ ցնա. եթէ չար ինչ խօսեցայ, վկայեա վասն չարին. իսկ եթէ բարի, ընդէր հարկանես զիս: Եւ առաքեաց ըզնա Աննա կապեալ առ Կայիափա քահանայապետ:

Եւ Սիմոն Պետրոս կայր անդ և ջերմոյր.

ասեն ցնա. Միթէ և դու յաշակերտաց անտի նորա իցես. նա ուրացաւ և ասէ թէ Չեմ: Եւ ասէ մի ոմն ի ծառայից քահանայապետին, ազգական այնորիկ զորոյ զունկն եհար Պետրոս. Ոչ՞ ես իսկ տեսի զքեզ ի պարտիզի անդ ընդ նմա: Դարձեալ ուրացաւ Պետրոս, և վաղվաղակի հաւ խօսեցաւ:

Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կայիափայ յապարանս (տուն. պալաս) դատաւորին, և էր այգուց (առտու). և նոքա ոչ մտին յապարանսն. եկ առ նոսա Պիղատոս արտաքս և ասէ. Զինչ չարախօսութիւն մատուցանիք (ամբաստանութիւն ընել) զառնէն զայնմանէ: Պատասխանի ետուն և ասեն ցնա. Եթէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ: Ասէ ցնոսա Պիղատոս. Առէք զնա դուք և ըստ ձերոյ օրինացն դատեցարուք: Ասեն ցնա Հրէայքն. Մեզ ոչ է արժան սպանանել զոք: Եմուտ միւսանգամ յապարանս Պիղատոս, կոչեաց զՅիսուս և ասէ ցնա. Դու ես Թագաւորն Հրէից: Պատասխանի ետ Յիսուս. Ի քէն ասես զայդ, եթէ այլք ասացին քեզ զինէն: Պատասխանի ետ

Պիղատոս. Մի՞թէ ես Հրէայ իցեմ. ազգե՞ք
քո և քահանայապետք մատնեցին զքեզ
ինձ. զի՞նչ գործ գործեալ է քո: Պատաս-
խանի ետ Յիսուս. Իմ արքայութիւն չէ
յայսմ աշխարհէ. եթէ յաշխարհէ աստի
էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ
մարտնչէին արդեաք զի մի մատնեցայց
Հրէից. բայդ արդ թագաւորութիւնն իմ
չէ աստի: Ասէ ցնա Պիղատոս. Ապա թէ
այդպէս իցէ, թագաւոր ոմն ես դու: Պա-
տասխանի ետ Յիսուս. Դու ասես թէ թա-
գաւոր իցեմ. բայց ես յայս իսկ ծնեալ
եմ և ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի
վկայեցից ճշմարտութեանն: Ասէ ցնա
Պիղատոս. Զի՞նչ է ճշմարտութիւն. զայս
իբրև ասաց, դարձեալ ել առ Հրէայսն և
ասէ ցնոսա. Ես և ոչ մի ինչ պատճառս
գտանեմ ինձ. բայց է ձեր սովորութիւն
զի զմի ոք արձակեցից (ազաս բողուլ)
ձեզ ի զատկիս. արդ կամիք զի արձա-
կեցից ձեզ զթագաւորն Հրէից: Աղաղա-
կեցին ամենեքեան և ասէին. Մի զդա՛
այլ զԲարաբբա. և էր Բարաբբայն այն
աւազակ: Յայնժամ առ Պիղատոս զՅի-
սուս և զան եհար. և զինուորացն արա-

բեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա,
և զգեցուցին նմա հանդերձ ծիրանի, և
գային առ նա և ասէին, Ողջ եր, արքայ
Հրէից. և հանէին նմա ապտակս (ապտակ
զարնել): Եկ դարձեալ Պիղատոս արտա-
քըս և ասէ ցնոսա. Ահա ածեմ զնա ար-
տաքս առ ձեզ, զի գիտասջիք թէ ես վը-
նաս ինչ ի նմա ոչ գտանեմ: Եկ Յիսուս
արտաքս, և ունէր պսակ ի փշոց և հան-
դերձ ծիրանի. Եւ ասէ ցնոսա Պիղատոս.
Ահա այրդ ցձեզ: Իբրև տեսին զնա քա-
հանայապետքն և սպասաւորք, զաղաղակ
բարձին (պօռալ) և ասեն. Ի խաչ հան,
ի խաչ հան զդա. ասէ ցնոսա Պիղատոս.
Առէք զդա ի ձեզ, և ձեզէն հանէք ի խաչ.
զի ես ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ: Պա-
տասխանի ետուն նմա Հրէայքն. Մեք
օրէնս ունիմք. և ըստ օրինաց մերոց
պարտի մեռանել, զի զանձն իւր որդի
Աստուծոյ արար: Իբրև լուաւ զբանս
զայս Պիղատոս, առաւել ևս երկեաւ. ե-
մուտ դարձեալ անդրէն յապարանսն և
ասէ ցՅիսուս. Ուստի ես դու. և Յիսուս
ոչ ետ նմա պատասխանի: Ասէ ցնա Պի-
ղատոս. Ընդ իս ոչ խօսիս. ո՞չ գիտես եթէ

իշխանութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ, և իշխանութիւն ունիմ արձակել զքեզ։ Պատասխանի ետ Յիսուս. Ոչ ունէիր դու իշխանութիւն ի վերայ իմ և ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ի վերուստ, վասն այնորիկ որ մատնեացն զիս քեզ, նորա մեծ մեղք են։ Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր արձակել զնա. և Հրէայքն աղաղակէին և ասէին. եթէ զդա արձակես, չես բարեկամ կայսեր. ամենայն ոք որ թագաւոր կոչէ զանձն իւր. հակառակ է կայսեր։ Իսկ Պիղատոս իբրև լուաւ զբանս զայդոսիկ, ած զՅիսուս արտաքս, և նստաւ ի վերայ բեմին (բեմ, բարձր տեղ ատենաբանելու համար) ի տեղւոջն որ կոչէր քարայատակ։ Էր ուրբաթն զատկի, և էր ժամ իբրև վեցերորդ. և ասէ ցՀրէայսն. Ահա թագաւորդ ձեր ցձեզ. և նորա աղաղակէին. Բարձ ի մէնջ, բարձ ի մէնջ, և հան զդա ի խաչ։ Ասէ ցնոսա Պիղատոս. Ես զթագաւորդ ձեր ի խաչ հանիցեմ. պատասխանի ետուն քահանայապետքն. Չիք մեր թագաւոր բաց ի կայսերէ։ Յայն ժամ ետ զնա ի ձեռս նոցա զի ի խաչ էլանիցէ։

Եւ նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչատիայտն, և ելանէր ի տեղին որ անուանեալ էր գագաթան և կոչէր եբրայեցերէն Գողգոթա. ուր և ի խաչն իսկ հանին զնա. և ընդ նմա երկուս ևս այլս աստի և անտի, և ի միջի զՅիսուս։ Գրեաց և տախտակ մի Պիղատոս և եդ ի վերայ խաչին. և էր գրեալ. «Յիսուս Նազովրեցի, թագաւոր Հրէից։» Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր տեղին ուր խաչեցաւն Յիսուս. և էր գրեալ եբրայեցերէն, դաղմատերէն և յունարէն։ Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից. Մի գրեր թագաւոր Հրէից, այլ թէ՝ Նա ասաց, թագաւոր եմ Հրէից։ Պատասխանի ետ Պիղատոս. Զոր ինչ գրեցի՝ գրեցի։ Իսկ զինուորքն իբրև հանին ի խաչ զՅիսուս, առին զհանդերձս նորա և արարին չորս մասունս. իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ զպատմուճանն, քանզի էր առանց կարանի (կարաև կարուածք) ի վերուստ փոր (վէջը պարապ) անկեալ (անկանեմ, ѕоգումագ) ամենևին, ասեն ցմիմեանս. Մի պատա-

ռեսցուք զայդ, այլ արկցուք վիճակս ի վերայ դորա ում և ելցէ: Զինուորքն զայս ինչ գործեցին: Յետ այսորիկ իբրև գիտաց Յիսուս եթէ ահա ամենայն ինչ կատարեալ է, ասէ. ծարաւի եմ: Եւ անդ կայր ման ինչ լի քացախով. և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղւոյ՝ շուրջ եղեալ զմշտկաւ (մշտիկ, ջուր սրսկելու գործիք) զսպայի մատուցին (դպցնել) իբերան նորա: Իբրև առ (ճաշակել) Յիսուս զքացախն հանդերձ լեղւովն ասէ. Ամենայն ինչ կատարեալ է. և խոնարհեցուցեալ զգլուխն աւանդեաց զոգին: Իսկ Հրէայքն— քանզի ուրբաթ էր, զի մի անդէն ի խաչին ազանիցին (բաց տեղը մնալ գիշերը) մարմինքն մինչև ցշաբաթն, զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ — աղաչեցին զՊիղատոս զի խորտակեսցեն՝ զբարձս նոցա և բարձցին: Եկին զինուորքն և զառաջնոյն խորտակեցին զբարձս (ոտքերէն միսչեւ գիսը). նոյնպէս և զմիւսոյն որ ընդ նմա ի խաչն ելեալ էր: Բայց իբրև եկին առ Յիսուս և տեսին զի այն ինչ (դեռ նոր) մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նո-

բա. այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց (ծակել մարմինը) զկողս նորա, և ել վաղվաղակի արիւն և ջուր:

Յովհ. ԺԹ. ԺԸ. ԺԹ.

Եւ ի միաշաբաթուոջն Մարիամ մագդաղենացի գայ առաւօտուն ընդ աշխալուսն (լուսնալուն պէս) ի գերեզման անդր. և տեսանէ զվէմն բարձեալ ի դրաց գերեզմանին: Ապա ընթանայ և գայ առ Սիմոն Պետրոս և առ միւս աշակերտն զոր սիրէրն Յիսուս, և ասէ ցնոսա. Բարձին զՏէր ի գերեզմանէ անտի, և ոչ գիտեմ ուր եդին զնա: Ել Պետրոս և միւս աշակերտն և գային ի գերեզմանն. Ընթանային երկոքեան ի միասին. և միւս աշակերտն յառաջեաց (առաջ անցնիլ) ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս և եկն նախ ի գերեզմանն. և խոնարհեալ (ծռիլ) տեսանէ զի կային անդ կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ: Եկն և Սիմոն Պետրոս որ գնայրն զկնի նորա, և եմուտ ի գերեզմանն. և տեսանէ զկտաւան զի կային անդ. և վարշամակն որ էր ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ կտաւան կայր, այլ ուրոյն (զատ) ծալեալ ի մի կողմն: Յայնժամ

եմուտ և միւս աշակերտն որ եկեալն էր յառաջագոյն ի գերեզմանն: Զոքան դարձեալ առ միմեանս աշակերտքն. բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին և լայր. և մինչդեռ լայր, խոնարհեցաւ ի գերեզմանն և տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս (ներմակներ հագած) զի նըստէին, մի՝ ի սնարից (գլխուն դիէն) և մի յանոտից (ոտքին դիէն) ուր կայր մարմինն Յիսուսի: և նոքա ասեն ցնա. Կին դու, զի լաս. ասէ ցնոսա. Զի բարձին զտէրն իմ ի գերեզմանէ աստի, և ոչ գիտեմ ուր եդին զնա: Զայս իբրև ասաց. դարձաւ ի թիկունս կոյս (ետին դարձաւ) և տեսանէ զՅիսուս զի զի կայր. և ոչ գիտէր թէ Յիսուս իցէ: Ասէ ցնա Յիսուս. Կին դու, զի լաս. զո՞ խնդրես: Նմա այսպէս թուեցաւ թէ պարտիզպանն իցէ. ասէ ցնա. Տէր, եթէ դու բարձեր (վերցնել տանիլ) զնա, ասա ինձ ուր եդիր զնա: Ասէ ցնա Յիսուս. Մարիամ. և նա դարձաւ և ասէ ցնա եբրայեցերէն. Բաբունի. որ թարգմանի Վարդապետ: Ասէ ցնա Յիսուս. Մի մերձանար (դպչիլ) յիս, զի չե՛ւ ես ելեալ եմ առ հայր իմ:

Գայ Մարիամ մագդաղենացի և պատմէ աշակերտացն եթէ ետես նա զՏէր, և զայս ինչ ասաց ցնա: **Յովհ. Գլ. Ի.**

Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց առ ծովեզերքն Տիբերիայ, և յայտնեաց այսպէս: Էին ի միասին Սիմոն Պետրոս և Թովմաս, անուանեալն երկուորեակ, և Նաթանիէլ և որդիքն Զեբեդեա և այլք յաշակերտաց անտի երկու: Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս. Երթամ ձուկն որսալ. ասեն ցնա. Գամք և մեք ընդ քեզ: Գնացին և մտին ի նաւ, և յայնմ գիշերի կալան և ոչինչ: Իբրև այգ եղև, կայր Յիսուս յեզր ծովուն. բայց ոչ ծանեան աշակերտքն թէ Յիսուս իցէ: Ասէ ցնոսա Յիսուս. Մանկունք, միթէ ունիք ինչ ուտելոյ. պատասխանի ետուն և ասեն ցնա. Ոչ: Ասէ ցնոսա. Արկէք յաջակողմն նաւին զուռկանդ և գտանիցէք: Արկին, և ոչ կարէին ձգել (քաշել) ի բազմութենէ անտի ձկանցն: Ասէ աշակերտն այն՝ զոր սիրէրն Յիսուս՝ ցՊետրոս. Տէր է այն: Սիմոն Պետրոս իբրև լուաւ թէ Տէր է յարկաւ զիւրև սփածանելին (քեշտիմալ,

խաւլու), քանզի մերկ էր, և ընկեց զինքն ի ծովն: Եւ այլ աշակերտքն նաւաւն իսկ գային, քանզի չէին հեռի ի ցամաքէն, այլ իբրև երկերիւր կանգնաւ. քարշէին զզործին հանդերձ ձկամբն: Իբրև ելին ի ցամաք, տեսանեն կրակետղ (կրակ վառած տեղ) կայծականց, և ձուկն մի ի վերայ և հաց: Ասէ ցնոսա Յիսուս, Բերէք ի ձկանց այսր զոր դուքդ կալաք այժմիկ: Եմուտ Սիմոն Պետրոս և ձգէր զզործին ի ցամաք լի մեծամեծ ձկամբք հարիւր յիսուն և երիւք. և այնչափ ինչ կայր և ոչ պատառեցաւ գործին: Ասէ ցնոսա Յիսուս, եկայք ճաշեցէք. և ոչ ոք յաշակերտացն իշխէր (համարձակիլ) հարցանել Թէ Դու ո՞վ ես, զի գիտէին Թէ Տէրն է. գայ Յիսուս և առնու զհացն և տայ նոցա. նոյնպէս և զձուկնն:

Յովհ. Գլ. Ի. ԻԱ.

Պետրոս և Յովհաննէս ելանէին ի տաճար անդր յիններորդ ժամու աղօթիցն. և էր այր մի կաղ յորովայնէ մօր իւրոյ զոր բարձեալ դնէին հանապազ առ դրան տաճարին որ կոչէր գեղեցիկ՝ խնդրել ողորմութիւն յայնցանէ որ մտանէին ի տաճարն: Որոյ տեսեալ զՊետրոս և զՅովհաննէս զի մտանէին ի տաճարն՝ աղաչէր ողորմութիւն առնուլ. Հայեցաւ ինքն Պետրոս Յովհաննու հանդերձ և ասէ. Հայեաց ի մեզ. նա դարձաւ ի նոսա և ակն ունէր առնուլ ինչ ի նոցանէ. և ասէ Պետրոս. Արծաթ և ոսկի ոչ ունիմ. բայց զոր ունիմ՝ զայս տաց քեզ. յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ արի և գնա: Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նորա յարոյց զնա. և անդէն հաստատեցան բարձք նորա և սրունք (ոտքներէն վիճչեւ ծրնկուրները). ի վեր վազեաց (ցատկել) և սկսաւ գնալ, և եմուտ ընդ նոսա ի տաճարն. գնայր և վազվազէր (ցատկռտել) և օրհնէր զԱստուած: Եւ տես ամենայն ժողովուրդն զնա զի գնայր, և գիտէին զի սա էր որ նստէր վասն ողորմութեան առ գեղեցիկ դրան տաճարին, և լցան զարմանալեաք (զարմանքով) ի վերայ նշանին որ եղև: Եւ մինչ նա ունէր զՊետրոս և զՅովհաննէս, ընթացաւ ամենայն ժողովուրդն առ նոսա ի սրահն որ կոչէր Սողոմոնի՝ զարմացեալք: Իբրև տես Պետրոս, պատասխանի ետ ժողովրդեանն. Արք

Իսրայելացիք, զի զարմացեալ էք ի վերայ այսորիկ, կամ ընդ մեզ զի էք պշուցեալ (աչքը տնկած նայիլ) իբրու թէ անձին զօրութեամբ ինչ կամ քաջութեամբ (բարեպաշտութեամբ) արարեալ իցէ զընալդ դմա: Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն, հասին ի վերայ նոցա քահանայապետքն և իշխանք տաճարին և Սադուկեցիքն՝ զայրագնեալք վասն ուսուցանելոյ նոցա զժողովուրդն և պատմելոյ Յիսուսիւ զյարութիւն մեռելոց: Մինչդին ի նոսա զձեռս (բռնեցին) իւրեանց, և եդին զնոսա ի բանտի մինչև ի վաղիւն, զի էր ընդ երեկս (իրիկուան դէմ): Եւ եղև ի վաղիւ անդր ժողովել նոցա զիշխանսն և զերիցունս և զդպիրսն յԵրուսաղէմ, և զԱննա քահանայապետ և զԿայիափա և զՅովհաննէս և զԱղէքսանդրոս և որ միանգամ էին յազգէ քահանայութեանն: Եւ կացուցեալ զնոսա ի մէջ (մէջ տեղը orpան) հարցանէին. Որով զօրութեամբ կամ որով անուամբ արարէք դուք զայս: Յայնժամ Պետրոս ասէ ցնոսա. Իշխանք ժողովրդեան և երիցունք Իսրայելի, եթէ արժան ինչ իցէ դատել զմեզ

այսօր վասն երախտեաց առն միոյ տկարի: Հայեցեալ ի համարձակութիւնն Պետրոսի և Յովհաննու, և ի վերայ հասեալ թէ արք տգէտք և առանց դպրութեան (ուսմունք) են՝ զարմանային. զի ճանաչէին զնոսա թէ ընդ Յիսուսի էին. և զայրն և տեսանէին զբժշկեալն զի կայր ընդ նոսա. և ոչ ինչ կարէին տալ պատասխանի: Եւ հրամայեալ նոցա արտաքս քան զատեանն ելանել՝ խորհեցան ընդ միմեանս և ասեն. Զինչ արասցուք արանցս այսոցիկ. զի երևելի նշան եղև ի ձեռն նոցա. ամենայն իսկ բնակչաց Երուսաղէմի յայտ է և ոչ կարեմք ուրանալ: Այլ զի մի առաւել ճարակեսցի (տարածուիլ կամաց կամաց) ի ժողովուրդն. սպառնասցուք նոցա մի ևս խօսիլ յանունն յայն մի ումեք ի մարդկանէ: Եւ կոչեցեալ զնոսա պատուիրեցին ամենևին մի խօսիլ և մի ուսուցանել յանուն Յիսուսի: Իսկ Պետրոս և Յովհաննէս պատասխանի ետուն և ասեն ցնա. Եթէ արժան իցէ առաջի Աստուծոյ ձեզ լսել առաւել քան Աստուծոյ, ընտրեցէք. այլ մեք ոչ կարեմք զոր տեսաքն և լուաք չխօսիլ: Նոքա սպառ-

նացեալ արձակեցին զնոսա, և ոչ ինչ զըտեալ թէ որպէս պատուհասեսցեն (պաս-ժել) զնոսա վասն ժողովրդեանն. զի ամենեքեան փառաւոր առնէին զԱստուած վասն իրացն եղելոց. զի ամաց էր այրն առաւել քան զքառասուն յորոյ վերայ եղև նշանս այս բժշկութեան: Եւ անտի արձակեալ եկին առ իւրեանցն (իրենցներըն), և պատմեցին որչափ ինչ ասացեն ցնոսա քահանայապետքն և երիցունքն: Եւ բազմութեան հաւատացելոցն էր սիրտ և անձն մի. և ոչ ոք ի նոցանէ ասէր զընչից իւրոց թէ ուր իցէ. այլ էր նոցա ամենայն ինչ հասարակաց: Ոչ ոք կարօտ էր ի նոսա. զի որ միանգամ տեարքն էին գեղից կամ ապարանից՝ վաճառէին և բերէին զգինս վաճառելոցն. դնէին առ ոտս առաքելոցն, և բաշխէին իւրաքանչիւր որպէս ումեք պիտոյ ինչ լինէր:

Գործ. Գլ. Գ. Դ.

Այր ոմն Անանիա անուն, հանդերձ կընաւ իւրով Սափիրաւ, վաճառեաց ագարակ, և խորեաց (գաղտնի մէջէն առնել) ի գնոց անտի գիտելով և կնոջն. և եբեր մասն ինչ, եդ առ ոտս առաքելոցն: Ասէ

Պետրոս. Անանիա, ընդէր ելից սատանայ զսիրտ քո ստել քեզ Հոգւոյն սրբոյ և խորել ի գնոց գեղջն. ոչ ապաքէն մինչ կայրն՝ քո էր, և ի վաճառելն ընդ քո իշխանութեամբ էր. զի՞ է զի եդեր ի սրտի քում զիրս զայս. ոչ ատեցեր մարդկան այլ Աստուծոյ: Եւ լուեալ Անանիա զբանս զայսոսիկ՝ անկաւ եւ եհան զոգի (հոգին փչել). և եղև ահ մեծ ի վերայ ամենեցուն որ լուանն զայն: Յոտն կացին երիտասարդքն և ամփոփեցին (վէջը առնել, փաթթել) զնա և տարան Թաղեցին: Եւ եղև իբրև ժամք երեք անցին. և կին նորա ոչ գիտէր զինչ եղեալն էր. եմուտ ի ներքս: Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ. Ասա դու ինձ թէ այնչափ գնոց ըզ գեղն վաճառեցէք. և նա ասէ. Այո, այնչափ: Եւ ասէ ցնա Պետրոս. Զի՞ է զի միաբանեցայք դուք փորձել զՀոգին տեառն. ահա ոտքն որ Թաղեցին զայր քո ի դրան՝ հանցեն և զքեզ. և անկաւ անդէն առ ոտս նորա և եհան զոգի: Մտին երիտասարդքն, գտին զնա մեռեալ և հանին Թաղեցին առ առն իւրում:

Եւ ի ձեռն առաքելոց լինէին նշանք

մինչև ի հրապարակն հանել զհիւանդս
և դնել պատգարակօք (թեմկերէ) և մահ-
ճօք իւրեանց, զի ընդ անցանելն Պետրո-
սի գոնէ հովանի նորա հասցէ ումեք ի
նոցանէ: Յարուցեալ քահանայապետն և
ամենեքին որ ընդ նմա և աղանդ Սադու-
կեցւոց՝ լցան նախանձու. և արկին զձեռս
յառաքեալսն և եդին զնոսա հրապարա-
կաւ ի բանտի: Ապա հրեշտակ տեառն
գիշերի եբաց զդուրս բանտին, և հանեալ
զնոսա ասէ. գնացէք կացէք ի տաճարին
և խօսեցարուք ընդ ժողովրդեանն զամե-
նայն պատգամս (խօսք) կենացս այսոցիկ:
Եւ իբրև լուան. մտին ընդ առաւօտն ի
տաճարն և ուսուցանէին: Եկն քահանա-
յապետն և որ ընդ նմա, կոչեցին միաբան
զատեանն և զամենայն ծերակոյտ որդւոց-
ցն Իսրայելի, և առաքեցին ի բանտն
ածել զնոսա: Իբրև եկին սպասաւորքն,
ոչ գտին զնոսա ի բանտին. դարձեալ
անդրէն պատմեցին և ասեն թէ Զբանտն
գտաք բակեալ ամենայն զգուշութեամբ,
և զպահապանսն զի կային առ դրանն.
բացաք, և ի ներքս զոք ոչ ևս գտաք:
Իբրև լուան զբանս զայս իշխանք տաճա-

րին և քահանայապետքն, հիսանային վա-
սրն նոցա թէ զինչ արդեօք լինիցի այն:
Եւ եկն ումն, պատմեաց նոցա թէ Ահա
արքն զորս եդիք ի բանտի՝ կան ի տա-
ճարին և ուսուցանեն զժողովուրդն: Յայն-
ժամ երթեալ իշխանն սպասաւորօքն հան-
դերձ ած զնոսա ոչ բռնութեամբ. քանզի
երկնչէին ի ժողովրդենէն զի մի քարկո-
ծեսցին: Եւ ածեալ զնոսա՝ կացուցին յա-
տենի. եհարց զնոսա քահանայապետն և
ասէ. Ոչ՞ պատուիրեցաք ձեզ մի ուսու-
նել յանունն յայն. և արդ ահաւասիկ լը-
ցէք յԵրուսաղէմ ուսմամբ ձերով, և կամիք
ածել ի վերայ մեր զարիւն զառնն զայնո-
րիկ: Պատասխանի ետ Պետրոս և այլ
առաքեալքն և ասեն. Հնազանդիլ պարտ
է Աստուծոյ առաւել քան մարդկան: Եւ
նոքա իբրև լուան, առատանային (կաս-
ղիկ, բարկանալ) և խորհէին սպանանել
զնոսա:

Յարուցեալ ումն ի մէջ ատենին Փարի-
սեցի, որում անուն էր Գամաղիէլ, օրէ-
նըսուսոյց, պատուական ամենայն ժողո-
վրդեանն, հրամայեաց սակաւիկ մի զար-
սն արտաքս տանել: Եւ ասէ զնոսա՝

Այրք Իսրայելացիք, հայեցարուք ի ձեզ վասն արանցս այսոցիկ զինչ արժան իցէ գործել: Յառաջ քան զաւուրս զայսոսիկ յարեաւ Թևդաս առել զանձնէ Թէ իցէ ոմն. յոր անկան (մէկուն յարիլ) արք Թըւով իբրև չորեք հարիւր. որ սպանաւ, և ամենեքեան որ միաբան էին ընդ նմա՝ քակտեցան (ցրուիլ) և եղեն յոչինչ: Յետ նորա յարեաւ Յուդա Գալիլեացի յաւուրս աշխարհագրին, և ապստամբեցոյց ժողովուրդ բազում զկնի իւր. և նա կորեաւ, և ամենեքեան որ նմայն հաւանեալ էին՝ ցրուեցան: Եւ զարդիս ասեմ ձեզ. ի բաց կացէք յարանցդ յայդցանէ և Թոյլ տուք դոցա. զի Թէ ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործդ, քակտեսցի. ապա Թէ յԱստուծոյ է, ոչ կարէք քակտել ըզդոսա. գուցէ և աստուածամարտք գտանիցիք: Հաւանեցան նմա, և կոչեցեալ զառաքեալսն՝ զան հարին և արձակեցին զնոսա: Եւ նոքա գնացին, և զամենայն օր ի տաճարին և առ տնին (տանը մէջ) ոչ դադարէին ուսուցանել և աւետարանել:

Գործ. Գլ. Ե.

Ստեփաննոս, այր լի շնորհօք և զօրութեամբ, առնէր նշանս մեծամեծս ի ժողովրդեանն. յարեան ոմանք ի ժողովրդենէն վիճել ընդ Ստեփաննոսի. և ոչ կարէին զդէմ ունել (դէմ դնել) իմաստութեանն որով խօսէր: Յայնժամ հրապուրեցին (գէշ բանի համոզել) արս ոմանս ասել Թէ լուաք զդորա խօսիլ բանս հայհոյութեան ի Մովսէս և յԱստուած. և խռովեցին զժողովուրդն և զերիցունս և զդպիրսն. և հասեալ ի վերայ՝ յափշտակեցին զնա և ածին յատեան. և կացուցին վկայս սուտս որ ասէին. Այրս այս ոչ դադարէ խօսիլ բանս հայհոյութեան զտեղւոյն սրբոյ և զօրինացն: Եւ լուեալ զայս յատենի անդ զայրանային և կրճտէին զատամունս ի վերայ նորա. աղաղակեալ ի ձայն մեծ՝ դիմեցին (վրան վազել) առ հասարակ ի վերայ նորա. և հանեալ արտաքոյ քաղաքին քարկոծէին. և վկայքն դնէին զձորձս իւրեանց առ ոտս երիտասարդի միոջ որ կոչէր Սաւուղ: Եւ քարկոծ առնէին զՍտեփաննոս. և նա եղ ծունր. աղաղակեաց ի ձայն բարձր. Տէր, մի համարիր դոցա զայս մեղս. և զայս

իբրև ասաց, ննջեաց (մեռնիլ). և Սաւ-
ղոս էր կամակից սպանման նորա: Եւ
բարձին զՍտեփաննոս արք երկիւղածք
և արարին կոծ (ողբ) մեծ ի վերայ նորա:

Բայց Սաւղոս վնասակար էր եկեղե-
ցւոյն. ի տունս տունս մտանէր. քարշէր
զարս և զկանայս, մատնէր ի բանտ. և
տակաւին լցեալ սպառնալեօք՝ մատու-
ցեալ առ քահանայապետն խնդրեաց ի
նմանէ Թուղթս ի Դամասկոս առ ժողո-
վուրդսն, որպէս թէ զոր գտցէ զայնր
ճանապարհի, արս կամ կանայս, կա-
պեալս ածցէ յԵրուսաղէմ: Եւ ընդ եր-
թալ նորա եղև մերձենալ ի Դամասկոս.
յանկարծակի շուրջ զնովաւ փայլատա-
կեաց (փայլիլ) լոյս յերկնից, և ան-
կեալ յերկիր՝ լուաւ բարբառ որ ասէր
ցնա. Սաւուղ, Սաւուղ, զի հալածես
զիս, և ասէ Սաւուղ. Ով ես, Տէր, և
նա ասէ. Ես եմ Յիսուս զոր դուն հալա-
ծես, խիստ է քեզ ընդդէմ խթանի (պիզ)
աբացել (կիր զարնել): Եւ զարհուրեալ
և անշշունչ (անձայն) լեալ ասաց. Տէր,
զիս զինչ կամիս առնել. և ասէ ցնա
Տէր. Յոտն կաց և մուտ ի քաղաքդ, և

պատմեսցի քեզ զինչ պարտ իցէ առնել.
իսկ արքն որ ընդ նմայն երթային՝ կա-
յին անշշունչ. զձայնն միայն լսէին,
բայց տեսանէին և ոչինչ: Յարեաւ Սաւ-
ղոս յերկրէ անտի, և աչօք բացօք ոչ
զոք տեսանէր. զձեռանէ առեալ նորա
մուծին ի Դամասկոս. և էր անդ աւուրս
երիս, և ոչ եկեր և ոչ արբ: Եւ էր ոմն
աշակերտ ի Դամասկոս, Անանիա անուն.
ասէ ցնա Տէր ի տեսլեան. Անանիա. և
նա ասէ. Ահաւասիկ եմ, Տէր: Եւ ասէ
ցնա Տէր. Յոտն կաց և գնա ընդ փողոցն
որ կոչի ուղիղ. և խնդրեսցես յապա-
րանն Յուդայ Սաւղոս անուն զՏարսո-
նացի զի կայ դեռ յաղօթս: Եւ Սաւղոս
ետես ի տեսլեան այր մի Անանիա անուն
մտեալ և եդեալ ի վերայ նորա ձեռն
որպէս զի տեսցէ: Պատասխանի ետ
Անանիա. Տէր, լուայ ի բազմաց վասն
առնն այնորիկ որչափ արար չարիս սըր-
բոց քոց յԵրուսաղէմ, և աստ ունի իշ-
խանութիւն ի քահանայապետից կապել
զամենեսեան որ կարդան (կանչել) զա-
նուն քո: Ասէ ցնա Տէր. Երթ դու, զի
անօթ ընտրութեան է ինձ նա: Եւ գնաց

Անանիա և եմուտ յապարանսն, և եղեալ
ի վերայ նորա ձոռս ասէ. Սաւուղ, եղ-
բայր, ի վեր հայեաց, Տէր առաքեաց
զիս, Յիսուս որ երևեցաւն քեզ ի ճա-
նապարհին յորում գայիրն, որպէս զի
տեսցես: Եւ վաղվաղակի անկան յաչաց
նորա իբրև կեղևանք. ետես և յարեաւ
մկրտեցաւ, և առեալ կերակուր զօրա-
ցաւ. և եղև ի Դամասկոս ընդ աշա-
կերտսն աւուրս ինչ: Զարմացեալ էին
ամենեքեան որ լսէինն, և ասէին. Ոչ՞
սա էր որ աւար հարկանէր յԵրուսա-
ղէմ զայնոսիկ որ կարդային զանուն Յի-
սուսի, և այսր ևս ի ի (անոր համար)
եկեալ է զի կապեալս զսոսա տարցի
առ քահանայապետսն: Իբրև կատարէին
աւուրք բազումք, խորհեցան Հրեայքն
սպանանել զնա: Յայտնեցաւ Սաւղոսի
նենգութիւն նոցա, քանզի պահէին ըզ
դրունսն ի տուէ և ի գիշերի որպէս զի
սպանցեն զնա: Եւ առեալ զնա աշա-
կերտացն ի գիշերի՝ ընդ պարիսպն կա-
խեալ իջուցին վանդակաւ (սեփեռ, ֆիւ-
ֆէ): Իբրև եկն Սաւղոս յԵրուսաղէմ,
ընդելանէր (փորձ փորձել) յարիլ յա-

շակերտսն. և ամենեքեան երկնչէին ի
նմանէ. չհաւատային թէ իցէ աշակերտ:

Գործ. Գլ. Զ — Թ.

Եւ եղև ի շրջիլն Պետրոսի առ ամե-
նեքումբք՝ իջանել նմա և առ սուրբսն
որ բնակեալ էին ի Լիւդիա: Եւ եգիտ
անդ այր մի որում անուն էր Ենեա. ու-
թամեան դնէր (պառկիլ) ի մահիճս ան-
դամալոյծ: Եւ ասէ ցնա Պետրոս. Ենեա,
բժշկէ զքեզ Տէր Յիսուս Քրիստոս. արի
և քեզէն թոթափեա (մէջէն ելլել) զան-
կողինս քո. և վաղվաղակի յարեաւ: Եւ
ի Յոպպէ էր կին ոմն աշակերտեալ անուն
Տաբիթա, որ թարգմանեալ կոչի այծե-
մնիկ. սա էր լի գործովք բարեօք և ողոր-
մութեամբք զոր առնէր: Եւ եղև յա-
ւուրսն յայնոսիկ հիւանդանալ նմա և
մեռանիլ. լուացին զնա և եդին ի դստի-
կոնի (տան յարկը, խաթ) անդ: Եւ մերձ
էր Լիդիա ի Յոպպէ. աշակերտացն
լուեալ եթէ Պետրոս անդ է, առաքեցին
երկուս արս առ նա աղաչել զի մի դան-
դաղեսցի գալ առ նոսա. և յարուցեալ
Պետրոս եկն ընդ նոսա. զոր, իբրև եկն,
հանին ի վերնատունն. և կացին շուրջ

զնովաւ այրիքն ամենայն . լային և ցուցանէին զձորձս և զհանդերձս որչափ առնէր նոցա այծեմիկն : Եւ հանեալ արտաքս զամենեսեան Պետրոսի՝ եդ ծունր, եկաց յաղօթս, և դարձաւ ի մարմինն և ասէ . Տաբիթա, արի կաց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի . և նա եբաց զաչս իւր . և տեսեալ զՊետրոս՝ նստաւ կանգուն (կայնած, ելիսակ): Զեռն ետ (ձեռէն բռնել) նմա Պետրոս և յարոյց զնա. կոչեաց զորբսն և զայրիս . առաջի կացոյց զնա կենդանի :

Գործ. Գլ. Թ.

Այր մի էր ի Կեսարիա, անուն Կուռնելիոս, հարիւրապետ, ի գնդէ որ կոչէր Իտալացի . բարեպաշտօն և երկիւղած յԱստուծոյ ամենայն տամբ իւրով : Ետես ի տեսլեան յայտնապէս զիններորդ ժամու աւուրն զհրեշտակ Աստուծոյ զի մտանէր առ նա և ասէր ցնա . Կուռնելիէ . և նա հայեցեալ ընդ նա զարհուրեցաւ (սասիկ վախնալ) և ասէ . Զի՞ է, Տէր . և ասէ ցնա . Ցղեա արս ի Յոպպէ և կոչեա զՍիմոն զոմն որ կոչի Պետրոս . նա մտեալ է առ Սիմոնի ումեմն

խաղախորդի (մորթ մաֆրոդ). որոյ է տունն մերձ ի ծով : Եւ կոչեաց Կուռնելիոս երկուս ի ծառայից իւրոց և զինուոր մի բարեպաշտօն ի ս կասաւորացն իւրոց, և առաքեաց զնոսա ի Յոպպէ : Եւ ի վաղիւ անդր ի ճանապարհ անկանել (նամբայ ելլել) նոցա և մօտ ի քաղաքն լինել՝ ել Պետրոս ի տանիսն կալ յաղօթս զվեցերորդ ժամուն : Քաղցեաւ և կամէր ճաշակել . և ի պատրաստիլն նոցա՝ եղև ի վերայ նոցա զարմացումն . և տեսանէր զերկինս բացեալ, և զչորեցունց տանոց (ssուն, պոչ, ծայր) կապեալ անօթ ինչ իբրև զկտաւոյ մեծի յորում էին ամենայն չորքոտանիք և սողունք (փորին վրայ քալող անասուն) երկրի և թռչունք երկնից : Եւ եղև ձայն առ նա . Արի, Պետրոս . զեն և կեր : Եւ Պետրոս ասէ . Քաւ լիցի (Աստուած չընէ). Տէր . զի ոչ երբեք կերայ խառնակ ինչ և անսուրբ (ըստ օրինաց պիղծ): Ձայն եղև կրկին անգամ առ նա . Զոր Աստուած սրբեաց՝ դու մի պղծեր : Այս եղև երիցս և վերացաւ անօթն յերկինս : Եւ մինչդեռ զարմացեալ էր ընդ միտս Պետրոս թէ

զինչ իցէ տեսիլն զոր ետես, ահա արքն առաքեալք ի Կուռնելեայ հարցին զապարանիցն Սիմովնի, կացին առ դրանն, կոչեցին և հարցանէին եթէ Սիմոն որ կոչին Պետրոս՝ աստ մտեալ իցէ։ Եւ մինչդեռ Պետրոս զմտաւ ածէր վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա. Ահաւասիկ արք ոմանք խնդրեն զքեզ. այլ արի էջ և երթ ընդ նոսա առանց իրիք խղճելոյ (վարանիլ խղճիւ)։ Իբրև էջ Պետրոս առ նոսա ասէ. Ահաւասիկ ես եմ զոր խնդրէքն, զինչ իրք են վասն որոյ եկիքդ։ Եւ նոքա ասեն. Կուռնելիոս հարիւրապետ, այր արդար և երկիւղած յԱստուծոյ, վկայեալ յամենայն ազգէն Հրէից, հրաման առ ի հրեշտակէ սրբոյ կոչել զքեզ ի տուն իւր և լսել բանս ի քէն։ Կոչեաց Պետրոս զնոսա ի ներքս և առ իւր ազգոյց (գիշերը տունը ընդունիլ). և ի վաղիւ անդր յարուցեալ գնաց ընդ նոսա։ Եւ ի վաղիւ անդր մտին ի Կեսարիա. և Կուռնելիոս մնայր նոցա՝ կոչեցեալ զազգատոհմն իւր և զկարեւոր բարեկամսն (մտերիմ բարեկամ)։ Եւ եղև ի մտանելն Պետրոսի, ընդ առաջ

եղև նմա Կուռնելիոս. անկեալ առ ոտսն երկիր պագաներ նմա. և Պետրոս կանգնեաց զնա և ասէ. Ցոտն կաց. և ես ինքն մարդ եմ. և խօսելով ընդ նմա եմուտ ի ներքս. և գտանէր անդ ժողովեալ բազումս։ Եւ ասէ ցնոսա. Դուք ինքնին գիտէք, որպէս անմարթ (անհնար) է առն Հրէի հպել կամ մերձենալ (դպչիլ) առ այլազգի. և ինձ Աստուած եցոյց մի զոք խառնակ կամ անսուրբ ասել ի մարդկանէ։ Վասն այսրիկ և առանց ընդ բանս ինչ ածելոյ (առանց ընդդիմութեան) եկի կոչեցեալ. բայց արդ հարցանեմ. յինչ պիտս (ինչ բանի համար) կոչեցէք զիս։ Կուռնելիոս ասէ. Ես յղեցի առ քեզ. և դու բարւոք արարեր զի եկիր. արդ ամենեքին մեք առաջի Աստուծոյ կամք լսել զամենայն զոր հրամայեալ է քեզ ի Տեառնէ։

Գործ. Գլ. Ժ.

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ ձեռն (ձեռ՛ զարկաւ) չարչարել զոմանս յեկեղեցւոյն. և սպան զՅակովբոս զեղբայրն Յովհաննու սրով։ Եւ տես եթէ հաճոյ է Հրէից, յաւել ևս

ունել զՊետրոս. և էին աւուրքն բաղարջակերաց: Իբրև կալաւ զնա, եղ* ի բանտի և մատնեաց չորից չորրորդաց զինուորաց պահել զնա. և կամէր յետ զատկին ածել զնա ժողովրդեանն: Եւ Պետրոս ի պահեստի էր (պահուած) ի բանտին, և աղօթք ստէպ (շարունակ) լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ Աստուած: Իբրև կամեցաւ զնա ածել (ապանցնել տալ) Հերովդէս, ի գիշերին յայնմիկ էր Պետրոս ի քուն ի մէջ երկուց զինուորաց կապեալ կրկին շղթայիւք. և պահապանքն առաջի դրանն պահէին զբանտն: Եւ ահա հրեշտակ Տեառն եկն եկաց ի վերայ, և լոյս ծագեաց ի տանն. և խթեաց (մշտեց) ըզ կողն Պետրոսի, յարոյց զնա և ասէ. Արի վաղվաղակի. և անկան շղթայքն ի ձեռաց նորա: Եւ ասէ հրեշտակն ցնա. Ած (կապէ) զգօտի քո, և արկ (հագիր) զհողաթափս յոտս քո. և արար այնպէս. և ասէ ցնա. Արկ զձորձս քո և եկ զկնի

* Դնել բայը ներգոյական հոլով խնդիր կ'առնէ, ոչ նախդրիւ տրական:

իմ: Եւ ելեալ երթայր զհետ և ոչ գիտէր թէ ճշմարիտ իցէ որ ինչ եղեւն ի հրեշտակէն. զի համարէր երազ տեսանել: Եւ իբրև անցին նոքա ըստ մի պահ (զինուորի պահապան) և ըստ երկուս, եկին մինչև ի դուռնն երկաթի որ հանէր ի քաղաքն, և ինքնին բացաւ նոցա. և մտեալ անցին ընդ փողոց մի. և վաղվաղակի ի բաց եկաց ի նմանէ հրեշտակն. Եւ Պետրոս իբրև ի միտս եղեւ (խելքը վրան գալ), ասէ. Արդ գիտեմ ճշմարիտ եթէ առաքեաց Տէր զհրեշտակ իւր և փրկեաց զիս ի ձեռաց Հերովդի և յամենայն ակնկալութենէ ժողովրդեանն Հրէից: Եւ լեալ ի միտս՝ եկն ի տուն Մարեամու մօր Յովհաննու որ կոչեցաւն Մարկոս. ուր էին բազումք ժողովեալ և աղօթս առնէին: Եւ ի բաղխել զդուրս տանն՝ մատեաւ աղախին մի, ունկն դնէր, որում անուն էր Հռովդէ: Եւ ծանուցեալ զձայնն Պետրոսի՝ ի խնդալոյն ոչ եբաց զդուռնն. ի ներքս ընթացեալ պատմեաց թէ Պետրոս առ դրանն կայ: Նոքա ասեն ցնա. Մոլիս (ցնորիլ). և նա ևս պնդէր թէ այսպէս է. և նոքա ասէին թէ հրեշ-

տակ նորա իցէ: Եւ Պետրոս ստէպ բաղ-
խէր. իբրև բացին, տեսին զնա և զար-
մացան. և նա ձեռամբ ցուցանէր նոցա
լռել. և պատմեաց որպէս Տէր եհան
զնա ի բանտէն. և ասէ. Պատմեցէք Յա-
կովբայ և եղբարց զայս. և ել գնաց
յայլ տեղի: Եւ իբրև այգ (առտու) եղև,
էր խռովութիւն մեծ ի մէջ զինուորացն
զի (ինչ) արդեաք Պետրոսն եղև: Իսկ
Հերովդէս իբրև խնդրեաց զնա և ոչ
եգիտ, հարցեալ զպահապանսն՝ հրա-
մայեաց սպանանել. և իջեալ ի Հրէաս-
տանէ ի Կեսարիա՝ և անդ լինէր: Եւ
էր Հերովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս
և ընդ Սիդոնեացիս. և նոքա առ հա-
սարակ եկին առ նա. և ի բանի արա-
ռեալ (իր կողմը վասկիլ) զԲղաստոս
սենեկապետն արքայի՝ խնդրէին զխա-
ղաղութիւն վասն կերակրելոյ երկրին
նոցա յարքունուստ (տէրութենէն): Յա-
ւուր միում յերևելւոջ Հերովդէս զգե-
ցեալ էր զհանդերձ Թագաւորութեան և
նստէր յատենի, և խօսէր ընդ նոսա
հրապարակաւ. և ամբոխն աղաղակէր
Թէ Աստուծոյ բարբառ է և ոչ մարդոյ.

և անդէն եհար զնա հրեշտակ տեառն,
և եղեալ որդնալից սատակեցաւ:

Գործ. Գլ. ԺԲ.

Եւ էին յԱնտիոք Բառնաբաս և Շմա-
ւոն կոչեցեալն Նիւգէր, և Ղուկիոս Կիւ-
բենացի և Մանայեն դայեկորդի Հերովդի
և Սաւղոս: Բառնաբաս և Սաւղոս իջին
ի Սելևկիա, և անտի նաւեցին ի Կիպ-
րոս. և հասեալ ի Սաղամինա՝ պատ-
մէին զբանն, ունէին և զՅովհաննէս
պաշտօնեայ (ապտասաւոր): Շրջեալ ընդ
ամենայն կղզին մինչև ի Պափոս՝ գտին
անդ զայր ոմն մոգ, սուտ մարգարէ,
Հրեայ, որ էր ընդ փոխանակի Բդեշխին
(Բդեշխին երկրորդը, փոխանորդը) Սեր-
գեայ Պաւղոսի առն իմաստնոյ: Նորա
աղաչեալ զԲառնաբաս և զՍաւղոս՝ խընդ-
րէր լսել զբանն Աստուծոյ. ընդդէմ
եկաց նոցա Եղիմաս մոգ. խնդրէր շրջել
(դարձնել) զփոխանակ Բդեշխին ի հա-
ւատոց: Իսկ Սաւղոս որ և Պաւղոսն՝
հայեցաւ ի նա և ասէ. Ով՞ լի ամենայն
նենգութեամբ և խորամանկութեամբ,
որդի սատանայի, Թշնամի ամենայն ար-
դարութեան. ոչ լսես ի Թիւրելոյ զճա-

նապարհս Տեառն զուղիղս. և արդ եղի-
ցիս կոյր չտեսանել զարև մինչև ի ժա-
մանակ մի. և անդէն անկաւ ի վերայ
նորա մէգ և խաւար, և շրջեալ խնդրէր
առաջնորդս: Եւ ամբարձեալ ի Պափեայ
պաւղոսեանց՝ եկին ի Պերգէ Պամփիւ-
ղեայ. Յովհաննէս մեկնեալ ի նոցանէ
դարձաւ՝ յԵրուսաղէմ. և նոքա գնացեալ
ի Պերգեայ եկին յԱնտիոք Պիսիդեայ.
և մտեալ ի ժողովուրդն յաւուր շաբա-
թուց նստան: Բայց Հրեայքն գրգռեցին
զպաշտօնեայ կանայս զգաստս. և ըզ
գլխաւորս քաղաքին, և յարուցեալ հա-
լածանս ի վերայ Պաւղոսի և Բառնաբայ՝
հանին զնոսա ի սահմանաց իւրեանց.
և նոցա թօթափեալ զփոշին յոտից ի վե-
րայ նոցա՝ եկին յԻկոնիոն: Բայց ան-
հաւան Հրեայքն յարուցին և չարացու-
ցին զանձինս հեթանոսացն ի վերայ եղ-
բարց: Եւ եղեն հերձուածք (երկպառա-
կութիւն) ի բազմութեան քաղաքին.
ոմանք էին ի Հրեայսն (Հրէից կողմն
էին) և ոմանք յառաքեալսն: Իբրև եղև
դիմել հեթանոսացն և Հրէից իշխանաքն
իւրեանց ի թշնամանել և ի քարկոծել

զնոսա, ազդ եղեալ նոցա փախեան ի
քաղաքս Լիկայոնացւոց ի Լիւստրա և
ի Դերբէ և շուրջ զգաւառսն:

Այր մի Լիւստրացի տկար յոտից նըս-
տէր, կաղ յորովայնէ մօր իւրոյ. որոյ
երբեք չէր գնացեալ (քալել): Սա լուաւ
զիսօսան Պաւղոսի. որոյ հայեցեալ ի նա
ասէ մեծաձայն. Քեզ ասեմ, յոտն կաց
ի վերայ ոտից քոց ուղիղ. և վազվազէր
գնայր. և ժողովրդոցն տեսեալ զոր արարն
Պաւղոս՝ բարձին զձայնս իւրեանց լիկա-
յոնարէն և ասեն. Աստուածք նմանեալք
մարդկան իջին առ մեզ: Եւ կոչէին զԲառ-
նաբաս Դիոս և զՊաւղոս՝ Հերմէս, քանզի
նա էր առաջնորդ բանին: Իսկ քուրմն
Դիայ՝ որ կայր առաջի քաղաքին՝ ցուլս և
պսակս հասուցեալ ի դուռնն՝ հանդերձ
բազմութեամբքն կամէր զոհել: Եւ լուեալ
առաքելոցն Բառնաբայ և Պաւղոսի՝ պա-
տառեալ զհանդերձս իւրեանց արտաքս
վազեցին յամբոխէն. աղաղակէին և ա-
սէին. Արբ, զինչ գործէք զայդ. մեք ձեզ
նմանողք կարեօք (կրիւք) մարդիկ եմք. և
հազիւ լռեցուցանէին զժողովուրդսն ի չզո-
հելոյ նոցա: **Դարձ. Դլ. ԺԴ-ԺԴ.**

Եւ շրջեցան ընդ Փռիւգիա և ընդ կողմանս Գաղատացւոց. և եկեալ առ Միւսեաւ՝ Թևակոխէին (ջանալ. եսեւ էրլալ) երթալ ի Բիւթանիա: Եւ անցեալ ըստ Միւսիա իջին ի Տրովադա. և տեսիլ երեւեցաւ ի գիշերի Պաւղոսի. այր ոմն Մակեդոնացի կայր աղաչէր զնա և ասէր. Անցեալ ի Մակեդոնիա՝ օգնեսցես մեզ: Եւ իբրև զտեսիլն ետես, վաղվաղակի խնդրեցաք ելանել ի Մակեդոնիա, տեղեկացեալք թէ հրաւիրեաց զմեզ Տէր աւետարանել նոցա: Եւ ելեալ ի Տրովադայ՝ դէպ ուղիղ (ճիւճիսակ) գնացաք ի Սամոդրակէ. և ի վաղիւ անդր ի նոր քաղաքն, և անտի ի Փիլիպպուս. և անդ ի քաղաքին դադարեալ մեր աւուրս ինչ՝ յաւուրն շաբաթու ելաք արտաքոյ քաղաքին առ գետափնն՝ ուր համարէր աղօթս մատուցանել. և նըստեալ խօսէաք ընդ ժողովեալ կանայսն: Եւ կին ոմն անուն Լիդիա ծիրանավաճառ (ծիրանի ծախող) ի Թիւատիր քաղաքէ, երկիւղած յԱստուծոյ (Աստուծմէ վախցող), լուաւ խօսիցն Պաւղոսի. աղաչէր և ասէր. Եթէ համարիցիք զիս

հաւատացեալ Տեառն, մտեալ ի տուն իմ ազերուք. և բռնադատեաց (ստիպեց) տարաւ զմեզ: Եւ եղև մինչ երթայաք մեք յաղօթս, պատահեաց մեզ աղախին ոմն զոր ունէր այս հարցուկ (գուշակութիւն ընող) որ շահս բազումս տայր տերանց իւրոց մոլելովն (ցնորելով գուշակութիւն ընել): Նա զհետ եղեալ Պաւղոսի և մեր՝ աղաղակէր և ասէր. արքս այս ծառայք Աստուծոյ բարձրելոյ են. և զայս առնէր ի բազում աւուրս: Զայրացեալ Պաւղոս դարձաւ և ասէ ցայսն. Պատուիրեմ քեզ, ել ի դմանէ. և ել ի նմին ժամու: Իբրև տեսին տեարքն նորա եթէ հատաւ (կտրիլ, լմընցնալ) յոյս շահի նոցա, առեալ զՊաւղոս և զՇիղա՝ ձգեցին (քաշել) ի հրապարակ առ իշխանսն. և ածեալ զնոսա առ զօրագլուխսն ասէին. Արքս այս խռովեցուցանեն զքաղաքս մեր. ինքեանք Հրեայք են, և պատմեն մեզ օրէնս զոր չէ արժան մեզ ընդունել և ոչ առնել զի Հռովմայեցիք եմք: Եւ կուտեցաւ ամբոխն ի վերայ նոցա. և զօրագլուխքն պատառեցին զհանդերձս

իւրեանց. հրամայեցին գան հարկանել. և բազում վէրս եդեալ (վիրաւորել) ի վերայ նոցա՝ արկին ի բանտ. պատուիրեցին բանտապետին զգուշութեամբ պահել զնոսա. որոյ առեալ զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա ի ներքին բանտն. և զոտս նոցա պնդեաց (սեղմել) ի կոնեղս: Եւ ի մէջ գիշերոյն Պաւղոս և Շիղա կային յաղօթս և օրհնէին զԱստուած. և ունկն դնէին նոցա կալանաւորքն (կապուածներ): Եւ եղև յանկարծակի շարժումն մեծ մինչև շարժել հիմանց բանտին. և բացան անդրէն դրունքն ամենայն, և ամենեցուն կապանք լուծան: Իբրև զարթեաւ բանտապետն և ետես բացեալ զդուրս բանտին, ձգեաց զսուսեր և կամէր երթալ զիւրովին (ինքը զինքը ապանել). կարծէր փախուցեալ զկապեալսն: Եւ գոչեաց ի ձայն մեծ Պաւղոս և ասէ. Մի ինչ գործեր ընդ անձն քո չար, քանզի ամենեքին աստ եմք: Խնդրեաց լոյս և դիմեաց ի ներքս. և զահի հարեալ անկաւ առաջի Պաւղոսի և Շիղայի: Եւ առեալ զնոսա ի նմին ժամու գիշերուոյն՝ լուաց ի վիրաց անտի,

և ածեալ զնոսա ի տուն իւր՝ եդ առաջի նոցա սեղան: Իբրև այգ եղև, առաքեցին զօրագլուխքն զնուիրակսն (հասաս, խաւազ) և ասեն. Արձակեա զարսդ զայդոսիկ: Եւ պատմեաց բանտապետն Պաւղոսի եթէ առաքեցին զօրագլուխքն զի արձակիցիք. արդ ելէք և երթայք խաղաղութեամբ: Իսկ Պաւղոս ասէ ցնոսա. գան հարեալ զմեզ հրապարակաւ. արս անմեղս հռովմայեցիս՝ արկին ի բանտ. և արդ լռելեանն հանեն զմեզ. ոչ այդպէս. այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ: Եւ պատմեցին զօրագլխացն նուիրակքն ըզբանսն. զահի հարան (սասթիկ վախցան) իբրև լուան թէ հռովմայեցիք են. և եկեալ աղաչեցին զնոսա: Եւ իբրև հանին, աղաչէին գնալ ի քաղաքէն:

Գործ. Գլ. ԺԶ.

Եւ շրջեալ ընդ Ամփիպոլիս և ընդ Ապողոնիա՝ եկին ի Թեսաղոնիկէ. և նախանձեցան Հրեայքն, և առեալ արս ոմանս գռեհիկս (usnրին ասթինանի) անօրէնս՝ ամբոխս արարեալ (ժողովուրդը ոտ հանել) խռովեցին զքաղաքն. և կուտեալ (բազմութեամբ ժողովել) յապարանսն

Յաստվեի՝ խնդրեցին զնոսա ածել ի հրապարակ. և իբր ոչ գտին զնոսա, քարշէին զՅաստվն և զոմանս եղբարս առ քաղաքապետսն՝ բողոք բարձեալ (պռռալ) թէ որք զաշխարհս խռովեցին՝ սոքա և այսր հասին. զորս ընկալեալ է Յաստվեի. և սոքա ամենեքեան հակառակ հրամանացն կայսեր գործեն. Թագաւոր զոմն ասեն զՅիսուս: Եւ խռովեցուցին զժողովուրդսն և զքաղաքապետսն որ լսէին զայս: Եւ քաղաքապետքն առեալ երաշխաւորութիւն առ ի Յաստվեայ և յայլոցն՝ արձակեցին զնոսա: Բայց եղբարք վաղվաղակի գիշերայն յուղարկեցին (համբայ դնել) զՊաւղոս և զՇիղա ի Բերիա. որք իբրև հասին անդր, ի ժողովուրդն Հրէից գնացին զի սոքա էին ազնուականագոյնք (լաւագոյն) քան որ ի Թեսաղոնիկքն էին: Բայց իբրև գիտացին՝ որ ի Թեսաղոնիկէ Հրէայքն էին՝ եթէ և ի Բերիա պատմեցաւ ի Պաւղոսէ բանն, եկին և անդր շարժել և խռովեցուցանել զժողովուրդսն: Յայնժամ վաղվաղակի զՊաւղոս առաքեցին եղբարք գնալ մինչև ի ծովեզրն. և մնացին Շիղա և Տիմոթէոս անդէն. և որք տանէինն

զՊաւղոս՝ ածին զնա մինչև յԱթէնս. և առեալ պատուէր ի նմանէ առ Շիղա և Տիմոթէոս զի վաղվաղակի եկեսցեն առնա:

Եւ յԱթէնս ի մնալ նոցա Պաւղոսի՝ զայրանայր (տաքնալ, բորբոքիլ) հոգի նորա զի տեսանէր ի կռապաշտութեան զքաղաքն. և խօսէր ի հրապարակսն զամենայն օր՝ որոց և պատահէին: Ոմանք յԵպիկուրեանցն և ի Ստոյիկեանց փիլիսոփայից հակառակէին ընդ նմա. և ոմանք ասէին. Զինչ կամիցի սերմանաքաղս (շատխօս) այս խօսել. իսկ այլք՝ թէ օտարոտի (օտար) իմն դից թուի պատմիչ լինելոյ. քանզի զՅիսուս աւետարանէր: Եւ առեալ ածին զնա յԱրիսպագոսն. զի Աթենացիք ամենեքին և եկքն (դրսեցի) օտարք ոչ յայլ ինչ պարապէին (եսեւէ ըլլալ) բայց ասել ինչ կամ լսել նորագոյնս: Եկաց Պաւղոս ի մէջ Արիսպագին և ասէ. Արք Աթենացիք, ըստ ամենայնի իբրեւ պաշտօնասէրս (բարեպաշտ) տեսանեմ զձեզ. քանզի շրջեալ և տեսեալ զպաշտամունս ձեր՝ գտի բագին (կռոց սեղան) մի յորում գրեալ էր. «Անծանօթի Աստուծոյ». զոր դուքն յանծանօթս (առանց

գիտնալու) պաշտէք՝ ես զնոյն պատմեմ ձեզ: Նա արար (ստեղծել) ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան. հաստատեաց կարգեալ ժամանակս և սահմանադրութիւնս (սահման) բնակութեան նոցա խնդրել զԱստուած. զի թերևս զննիցեն (շօշափել) զնա և գտանիցեն. նա և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ի մէնջ. զի նովաւ կեամք և շարժիմք և եմք. որպէս և ոմանք ի ձերոց ճարտարաց (բանաստեղծ) ասացին թէ Նորա և ազգ իսկ եմք: Եւ արդ՝ որովհետև ազգք եմք Աստուծոյ, ոչ պարտիմք համարել ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի որ ի ճարտարութենէ և ի մտաց մարդոյ քանդակեալ իցէ՝ զաստուածականն (աստուածութիւն) լինել նմանող: Իրրև լուան, ոմանք ծաղր առնէին. կէսքն ասէին. Լուիցուք ի քէն վասն այդորիկ միւսանգամ: **Գործ. Գլ. ԺԷ.**

Յետ այսորիկ մեկնեալ Պաւղոսի յԱթենացւոց անտի՝ եկն ի Կորնթոս. և եգիտ Հրեայ զոմն Ակիւղաս յաշգէ պոնտացի, այն ինչ (դեռ նոր) եկեալ յԻտալիա. և զՊրիսկիլղա կին նորա [վասն հրամանին Կղոդեայ որոշել զամենայն Հրեայս ի Հռոմ-

մայ, և յարեցաւ ի նոսա. և վասն զի համարուեստ էր, եղև առ նոսա և գործէր. քանզի էին խորանակարք արուեստիւ: Եւ գնացեալ անտի եմուտ ի տուն ուրումն որում անուն էր Տիտոս Յուստոս պաշտօնեայ Աստուծոյ. որոյ ապարանքն էին մերձ ի ժողովեղն (ժողովարան, եկեղեցի): Եւ նստաւ անդ տարի մի և ամիս վեց ուսուցանել նոցա զբանն:

Առ Գաղիոնեաւ փոխանակաւ բդեշխին Աքայեցւոց՝ յարեան միաբան Հրեայք ի վերայ Պաւղոսի և ածին զնա յատեան, և ասէին թէ արտաքոյ օրինաց պատրէ սա զմարդիկ պաշտել զԱստուած. և իբրև մերձ էր Պաւղոս բանալ զբերան իւր, ասէ Գաղիոն ցՀրեայսն. Եթէ էր ինչ անիրաւութիւն կամ խարդախութիւն (չար հնարք, գործ) չարեաց, ով Հրեայք, իղէպ էր ինձ անսալ ձեզ. ապա եթէ խնդիրք ինչ են վասն բանի և անուանց և օրինաց ձերոց, տեսէք ձեզէն. քանզի դատաւոր այդպիսի իրաց չկամիմ լինել: Եւ մերժեաց զնոսա յատենէ անտի: Եւ առեալ ամենեցուն Յունացն զՍոսթենէս ժողովրդապետն՝ հարկանէին առաջի ատենին.

և ոչինչ զայնմանէ Գաղիոնի փոյթ լինէր:
Բայց Պաւղոսի տակաւին մնացեալ աւուրս
բազումս՝ յեղբարցն հրաժարեալ նաւէր
յԱսորիս, և ընդ նմա Պրիսկիղա և Ակիւղա,
փոքրել (մազեր կտրել) զգլուխ քանզի
ուխտագիր էր: Եւ աղաչեցին զնա բա-
զում ժամանակս լինել անդ. և ոչ առ
յանձն. այլ հրաժարեաց ի նոցանէ:

Հրէայ ոմն Ապեղէս անուն աղեքսան-
դրացի յազգէ, այր ճարտարաբան, եկն
ենաս յԵփեսոս. զօրաւոր էր գրովք: Սա
էր տեղեակ ճանապարհին Տեառն և եռայր
հոգւով. սկսաւ համարձակիլ ի ժողովուրդ-
դեանն: Եւ լուեալ ի նմանէ Ակիւղայ և
Պրիսկիղայ՝ առին զնա առ իւրեանս, և
ճշմարտագոյնս պատմեցին նմա զճանա-
պարհն Աստուծոյ: Իբրև կամեցաւ նա
գնալ յԱքայիա, յօժարեալ եղբարք՝ գրե-
ցին առ աշակերտսն ընդունել զնա. որ
իբրև եհաս անդր. բազում նպաստ լինէր
(օգնական ըլլալ) հաւատացելոցն. քանզի
պնդագոյնս (սաստիկ) զՀրէայսն յանդի-
մանէր հրապարակաւ:

Գործ. Գլ. ԺԸ.

Եւ եղև մինչդեռ Ապողոսն ի Կորնթոս

էր, Պաւղոսի շրջեալ զվերին կողմամբքն՝
իջանէր յԵփեսոս: Հանապազօր խօսէր
ի դիւանին Տիւրանեայ ուրումն. և այս
լինէր զերկեամ մի (երկու տարի): Եւ
զօրութիւնս ոչ սակաւս առնէր Աստուած
ի ձեռն Պաւղոսի. մինչ զի և ի հիւանդս
տանել ի քրտանէ նորա դաշկինակս կամ
վարշամակս, և մերժել ի նոցանէ ախ-
տիցն, և այսոց չարաց ելանել: Յանդգն-
նեցան ոմանք և ի շրջող Հրէիցն որ երդ-
մնեցուցիչքն (դեւ հանող Աստուծոյ ա-
նունովը) էին՝ անուանել ի վերայ այնո-
ցիկ որ ունէին այսս չարս՝ զանունն Յի-
սուսի և ասէին. Երդմնեցուցանեմ զձեզ
ի Յիսուս զոր Պաւղոսն քարոզէ: Էին ու-
րումն Սկևեայ քահանայապետի եօթն
որդիք որ զայս առնէին: Պատասխանի
ետ այսն չար և ասէ ցնոսա. զՅիսուս
գիտեմ և զՊաւղոս ճանաչեմ. բայց դուք
ով էք. և վազեաց (ցատկել) այրն յո-
րում էր այսն չար՝ ըմբռնեալ զերկոսեան
յաղթահարեաց (մէկուն դէմ զօրանալ)
զնոսա մինչև մերկս և վիրաւորս փախ-
չել ի տանէ անտի. Եւ անկաւ երկիւղ
յամենեսեան. և բազումք ի կախարդա-

սարացն (զարմանալի բաներ ընող) բերէին զգիրսն, այրէին առաջի ամենեցուն. և համարեցան զգինոնոցա և զտաճնէին արծաթոյ բիւրս հինգ:

Դեմետրիոս ոմն անուն, արծաթագործ, գործէր մեհեանս արծաթիս Արտեմեայ դից. և տայր ճարտարացն լինել ոչ սակաւ շահ. որ ժողովեաց իսկ զձեռագէտս (արհեստաւոր) արուեստին և ասէ. Արք, դուք ձեզէն իսկ գիտէք զի յայսմ գործոյ է շահ մեզ, և տեսանէք և լսէք եթէ ոչ միայն զԵփեսացւոց՝ այլ գրեթէ զամենայն իսկ Ասիացւոց Պաւղոս այս հաւանեցուցեալ շրջեաց բազում ժողովս ասել թէ Ոչ են աստուածք ձեռագործք (ձեռքով շինուած): Եւ ոչ միայն այս ճգնէ (վտանգի մէջ դնել) զմեր կողմնս գալ ի յանդիմանութիւն (խայտառակութիւն), այլ և զմեծին աստուծոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ համարել. նաև քակելոց (քայքայիլ) ևս իցէ մեծութիւն նորա զոր ամենայն Ասիա և տիեզերք պաշտեն: Զայս իբրև լուան, լի եղեն բարկութեամբ. աղաղակէին և ասէին. Մեծ է Արտեմիս Եփեսացւոց: Եւ լցաւ

քաղաքն խռովութեամբ. դիմեցին առ հասարակ ի Թէատրոնն, յափշտակեցին զԳայիոս և զԱրիստարքոս Մակեդոնացի, զուղեկիցսն Պաւղոսի: Բայց Պաւղոս իբրև կամեցաւ մտանել յամբոխն, ոչ թողին զնա աշակերտքն: Ոմանք և յասիապետացն (Ասիոյ կողմը իշխան) որ էին նորա բարեկամք՝ յղէին առ նա և աղաչէին մի տալ զանձն (մտնել) ի Թէատրոնն: Այլք այլ իմն (ուրիշ կերպ) աղաղակէին. զի էր ժողովն նոցա խռովեալ. և բազումք ի նոցանէ ոչ գիտէին թէ վասն որ ժողովեալ իցեն: Եւ յամբոխէն բազմութենէ յառաջ կալան զԱղեքսանդրոս. և իբրև ածին զնա Հրէայքն յառաջ, Աղեքսանդրոս շարժեաց զձեռն և կամէր պատասխանի առնել ամբոխին: Իբրև գիտացին եթէ այրն Հրէայ է, միաբերան (միաձայն) եղեալ ամենեցունց՝ իբրև ժամս երկուս աղաղակէին եթէ Մեծ է Արտեմիս Եփեսացւոց: Լռեցոյց դրոշմագետն զամբոխն և ասէ. Արք Եփեսացիք, իսկ ո՞ է իմարդկանէ որ ոչ գիտէ զԵփեսացւոց քաղաս մեհենազարդ (կուռքերով զարդարուած) մեծին Ար-

տեմեայ դիցն: Եւ զի այդ այդպէս է անշուշտ, ձեզ պարտ է հանդարտիլ, և մի ինչ յանդգնութեամբ գործել: Ածէք զարդ զայդոսիկ այսր ոչ մեհենակապուտս և ոչ հայհոյիչս աստուծոյ մերոյ: Զի եթէ Դեմետրիոս և որք ընդ նմա ճարտարք՝ ունիցին ինչ ընդ ումեք բանս, յատեան երթիցեն, և դատաւորք դոն, և ամբաստան լիցին զմիմեանց: Ապա եթէ վասն այլ իրիք խնդիր իցէ, յօրինաւոր ժողովն վճարեսցեն: Քանզի և մեզ վիշտ վտանգի է ընդ կռուոյս այսր աւուր՝ առանց իրիք յանցանաց լինելոյ, զորմէ ոչ կարասցուք պատասխանի տալ: Եւ զայս ասացեալ արձակեաց զժողովն:

Գլուխ. Գլ. ԺԹ.

Յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց Պաւղոս զաշակերտսն, ողջոյն ետ և ել գնաց ի Մակեդոնիա: Եւ նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց ի Փիլիպպեայ և եկաք ի Տրովադա. անդ դադարեցաք աւուրս եւթն: Եւ յաւուրն շաբաթուց մինչդեռ ժողովեալ էաք բեկանել (կsnr ընել) զհացն, Պաւղոս խօսէր ընդ նոսա զի գնալոց էր ի վաղիւ անդր. և

երկայնեաց զբանն մինչև ի մէջ գիշերոյն: Էին լապտերք բազումք ի վերնատանն ուր էաքն ժողովեալ. և նստէր ոմն երիտասարդ անուն Եւտիքոս ի վերայ պատուհանին, նիրհէր (քնանալ) ի քուն Թանձրութեան. ի խօսելն Պաւղոսի յաճախ՝ ընկղմեալ ի քնոյ (խորունկ քուն ընկնալ) անտի անկաւ յերրորդ դատիկոնէն ի վայր և բարձաւ մեռեալ: Իջեալ Պաւղոսի անկանէր զնովաւ. առնոյր զնա ընդ գիրկս և ասէր. Մի խռովիք, քանզի հոգի սորա ի սմին է. և ել եբեկ զհացն և ճաշակեաց (ուտել). և բազում ևս խօսեցաւ մինչև յառաւօտ, և ապա ել գնաց: Եւ ածին զպատանին կենդանի և միխիթարեցան ոչ սակաւ: Եւ մեք մտեալ ի նաւն ամբարձաք յԱսոն. անտի ակն ունէաք միւսանգամ առնուլ զՊաւղոս. զի այնպէս պատուիրեալ էր, մինչ ինքն զցամաքաւն (ցամաքէն) երթալոց էր: Եւ իբրև դիպեցաւ մեզ ի յԱսոն, առեալ զնա եկաք ի Մետիլինէ. և անտի նաւեալ՝ ի վաղիւ անդր հասաք հանդէպ Քիոյ. և ի միւս օրն հասաք ի Սամոս, և ի վաղիւ անդր (հետեւեալ օրը) եկաք

ի Մելիտոն. զի ի մտի եղեալ էր Պաւ-
ղոսի նաւել առ Եփեսեաւ, որպէս զի
մի լիցի նմա ժամանակ ինչ յամել յԱ-
սիա. քանզի փութայր, եթէ հնար ինչ
իցէ նմա, զօրն Պենտեկոստէից երթալ
յԵրուսաղէմ:

Եւ ի Մելիտեայ յղեալ յԵփեսոս կո-
չեաց զերիցունս եկեղեցւոյն. և իբրև
եկին առ նա, ասէ ցնոսա. Դուք ձեզէն
գիտէք, յօրէ յառաջնմէ յորմէ եկի յԱ-
սիա՝ որպէս ընդ ձեզ զամենայն ժամա-
նակսն եղէ (վարուեցայ). որպէս ոչինչ
զանգիտեցի (վախնալով եւ կենալ) յօգ-
տակարացն չպատմել ձեզ և ուսուցա-
նել զձեզ հրապարակաւ և առանին:
Եւ արդ աւասիկ ես երթամ յԵրուսաղէմ.
և որ ինչ անդ ընդ իս անցանելոց (պա-
տահիլ) իցէ՝ չգիտեմ. այլ գիտեմ թէ
ոչ ևս տեսանելոց էք զերեսս իմ դուք
ամենեքեան. վասն որոյ վկայութիւն
դնեմ (վկայել) ձեզ յաւուր յայսմիկ
զի սուրբ եմ յարենէ ամենեցուն. քանզի
ոչ խորշեցայ (եւ կենալ) ի չպատմելոյ
ձեզ զամենայն կամսն Աստուծոյ: Այլ
ի ձէնջ յարիցեն արք որք խօսիցին թիւրս

ձգել (խաբել) զաշակերտսն զկնի իւր-
եանց. վասն այսորիկ արթուն կացէք,
և յիշեցէք զի զերկեամ մի զցայգ և զցե-
րեկ ոչ դադարեցի խրատել զմի մի ի-
բաքանչիւր: Արծաթոյ կամ ոսկւոյ կամ
հանդերձից ոչ ուրուք ի ձէնջ ցանկացայ.
դուք ինքնին գիտէք զի զպէտսն իմ և
որոց ընդիսն էին՝ պաշտէին (ընել, կա-
տարել) ձեռքս այս: Զայս իբրև ասաց,
բազում լալիւն եղև ամենեցուն. և ան-
կնալ զպարանոցսն Պաւղոսի համբու-
րէին զնա. մորմոքէին (սիրտ ցաւիլ)
մանաւանդ ի վերայ բանին զոր ասէր
թէ Ոչ ևս տեսանելոց են զերեսս նորա.
և յուղարկեցին զնա ի նաւ անդր:

Գործ. Գլ. Ի.

Իբրև եղև ելանել մեզ և մեկնիլ ի նո-
ցանէ, հանդէպ գնացեալ (շիտակ եր-
թալով) եկաք ի Կով. և ի վաղիւ անդր
ի Հռոդոն և անտի ի Պատարա. և գտեալ
նաւ մի զի երթայր ի Փիւնիկէ՝ և ելեալ
ի նա գնացաք: Եւ յայտ եղեալ Կիպ-
րեայ՝ թողաք զնա ի ձախակողմն, նա-
ւեցաք յԱսորիս և իջաք ի Տիւրոս. քան-
զի անդ էր նաւն թափելոց (պարպել)

զքնոինն: Եւ գտեալ զաշակերտսն՝ կացաք անդ աւուրս եւթն. և իբրև եղև մեզ կատարել զաւուրսն, ելեալ գնացաք՝ յուղարկեալ զմեզ ամենեցուն մինչև արտաքոյ քաղաքին. և եղեալ ծունր առ ծովեզերին՝ կացաք յաղօթս, և հրաժարեցաք ի միմեանց և ելաք ի նաւն, և նոքա դարձան յիւրեանց տեղիս: Եւ մեք զնաւն առ խեթեալ (մղել, վարել) ի Տիւրոսէ՝ հասաք ի Պտղեմայիդա. և ողջոյն տուեալ եղբարց՝ եղաք (մնացինք) օր մի առ նոսա. և ի վաղիւ անդր ելեալ անտի եկաք ի Կեսարիա. և մտեալ յապարանսն Փիլիպպոսի աւետարանչի որ էր յեւթանց անտի՝ ագաք առ նմա: Աղաչէաք մեք և որ ի տեղւոջն էին (հոն եղողները) զՊաւղոս չելանել նմա յԵրուսաղէմ. յայնժամ պատասխանի ետ Պաւղոս. Զինչ գործէք, զի լայքդ և ճմլեցուցանէք (կսկիծ տալ) զսիրտ իմ. բանզի ես ոչ միայն կապելոյ այլև մեռանելոյ յԵրուսաղէմ պատրաստ եմ: Եւ ի չանսալն նորա՝ լռեցաք:

Յետ աւուրցն այնոցիկ՝ հանդերձեալ (պատրաստելով) ելանէաք յԵրուսա-

ղէմ: Եկին ընդ մեզ և յաշակերտաց անտի Կեսարացւոց, և տանէին զմեզ առ որում վանեալ ուրեքոց (մէկուն տունը իջնել) էաք, Մնասոնի ումեմն Կիպրացւոյ, առաջին աշակերտի: Եւ ի մտանել մեզ յԵրուսաղէմ՝ խնդութեամբ ընկալան զմեզ եղբարք և ասեն զՊաւղոս. Իրազեկ եղեն (տեղեկանալ) վասն քո Հրէայք եթէ ապստամբութիւն ուսուցանես ի Մովսիսէ՝ որոց ի Հեթանոսս ամենայն Հրէայք են. ասես՝ մի ըստ կրօնիցն (ծէս) գնալ. արդ զինչ լինիցի. ապաքէն լսեն թէ եկեալ ես: Արդ զայս որս զոր ասեմք քեզ. են ի մեզ արք չորք ուխտաղիրք. զնոսա առեալ սրբեացիս ընդ նոսա. և ծախեա ինչ ի նոսա զի գերծցեն (սափրիլ) զգլուխս. և գիտասցեն ամենեքին թէ զորոց իրազեկն եղեն զքէն՝ ոչինչ է: Իբրև մերձ էին եւթն աւուրքն ի կատարել, տեսեալ զնա ի տաճարին ասիացւոց Հրէիցն՝ գեղուին (կուտել) զնովաւ զամենայն զամբոխն, և արկեալ ի նա ձեռս՝ (բռնել) աղաղակէին. Արք Իսրայելացիք, օգնեցէք. այս այր է որ հակառակ ժողովրդեանն և օրինաց և տե-

զոյս այսորիկ ամենեցուն ամենայն ուրեք ուսուցանէ, մինչև հեթանոսս ևս եմոյծ ի տաճարն. քանզի էր յառաջագոյն տեսեալ զՏրոփիմոս զԵփեսացի ի քաղաքին ընդ նմա. զոր կարծէին եթէ ի տաճար անդր եմոյծ Պաւղոս: Շարժեցաւ քաղաքն ամենայն, և կուտեցաւ ժողովուրդն. և առեալ զՊաւղոս ձգէին արտաքոյ տաճարին, և վաղվաղակի փակեցան դրունքն, և խնդրէին զնա սպաննանել: Եհաս զրոյց (լուր) ի հազարապետ գնդին եթէ խռովեալ է ամենայն Երուսաղէմ. որոյ անդէն առեալ զօրականս և հարիւրապետս՝ դիմեաց ի վերայ նոցա. և նոցա տեսեալ զհազարապետն և զզօրականսն՝ դադարեցին ի հարկանելոյ զՊաւղոս: Յայնժամ մատուցեալ հազարապետն կալաւ զնա և հրամայեաց կապել կրկին շղթայիւք և հարցանէր թէ ո իցէ և զինչ իցէ արարեալ: Այլք այլ ինն աղաղակէին զնմանէ յամբոխին. իբրև ոչ կարաց գիտել զատոյգն վասն ամբոխին, հրամայեաց ածել զնա ի բանակն. և իբրև եհաս յաստիճանսն (սանդուխ), դէպ եղև բառնալ բերել զնա ի զօրականացն վասն բռնութեան ամբոխին. քանզի զհետ երթայր բազմութիւն ժողովրդեանն և ասէին. բարձ զդա: Մինչդեռ մտանելոց էր Պաւղոս ի բանակն, ասէ ցհազարապետն. Եթէ արժան իցէ ինձ խօսել ընդ քեզ. և նա ասէ. Ցունարէն գիտես. մի արդեօք դու իցես Եգիպտացին որ յառաջ քան զայս աւուրս ապստամբեցուցեր և հաներ յանապատ չորս հազարս, արս սիկարեանս (գինեալ ապանելու համար): Եւ ասէ Պաւղոս. Ես եմ՝ այր Հրէայ ի Տարսոնէ Կիլիկեցւոց. ոչ անանշան (անուն երեւելի չէ) քաղաքի քաղաքացի. աղաչեմ զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժողովուրդդ. և ի հրամայելն նորա՝ Պաւղոս կացեալ ի վերայ աստիճանացն՝ շարժեաց զձեռն ժողովրդեանն. Իբրև բազում լռութիւն լինէր, սկսաւ բարբառել Հեբրայեցւոց բարբառովն, և ասէ. Արք եղբարք և հարք, լուարուք ինձ այժմ առ ձեզ պատասխանատուութեանս (ինքզինք արդարացնելը): Իբրև լուան եթէ Հեբրայեցւոց լեզուաւն բարբառեցաւ նոցա, առաւել ևս դադարեցին

ի լռութիւն. և ասէ. Ես եմ այր Հրէայ ծնեալ ի Տարսոնէ Կիլիկեցւոց, սնեալ ի քաղաքիս յայսմիկ առ ոտս Գամաղիէլի, խրատեալ ըստ ճշմարտութեան հայրենի օրինաց. նախանձայոյզ (նախանձաւոր) էի Աստուծոյ որպէս ամենեքին դուք այսօր: Եւ եղև ինձ ի գնալն և ի մերձենալ ի Դամասկոս՝ զմիջաւուրքն (կէս օրուան դէմ) յանկարծակի յերկնից փայլատակեալ (մէկէն փայլիլ) լոյս զինև. և անկայ յերկիր, և լուայ բարբառ, բայց որ ընդ իսն էին՝ զլոյսն տեսանէին, այլ զձայնն ոչ լսէին որ խօսէր ընդ իս: Իբրև ոչ տեսանէի ի փառաց լուսոյն այնորիկ, զձեռանէ ձգեալ ի նոցանէ որ ընդ իսն էին՝ մտի ի Դամասկոս: Անանիա ոմն այր երկիւղած, վկայեալ յամենայն բնակչաց որ ի Դամասկու Հրէայքն էին՝ եկն եկաց առ իս և ասէ. Աստուած հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց զքեզ զի եղիցիս վկայ նորա առ ամենայն մարդիկ որոց տեսիցես և շուրջ (տեսածներուդ եւ լսածներուդ): Եւ ունկն դնէին նմա մինչև ցայս բան. ապա բարձին զձայնս (պոռացին) իւր-

եանց և ասեն. Բարձ յերկրէ զայդպիսիդ զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ. և յաղաղակելն նոցա և ընկենուլ զհանդերձս և զփոշին ցանել յօդսն՝ հրամայեաց հազարապետն մուծանել զնա ի բանակն. ասէր՝ գանիւ հարցանել զնա զի գիտասցէ վասն որոյ յանցման այնպէս աղաղակէին զնմանէ: Եւ իբրև պրկեցին (կապել) զնա փոկովք (խայիշ) ասէ Պաւղոս ցհարիւրապետն որ ի վերայ կայր. Եթէ զայր Հռովմայեցի և անպարտ (անմեղ) պարտ իցէ ձեզ գան հարկանել: Իբրև լուաւ հարիւրապետն, մատուցեալ առ հազարապետն պատմեաց և ասէ. Զինչ կամիս առնել բանզի այրս այս Հռովմայեցի է: Եւ մատուցեալ հազարապետն ասէ ցնա. Ասա դու ցիս, Հռովմայեցի ես. և նա ասէ. Այո. պատասխանի ետ հազարապետն. Ես բազում գլխոց զգինուորութիւնս զայս ստացայ. ասէ Պաւղոս. Ես ծնեալ իսկ ի դմին եմ: Եւ վաղվաղակի ի բաց կացին ի նմանէ որ հարկանելոցն էին զնա. և հազարապետն իսկ երկեաւ, իբրև գիտաց եթէ Հռովմայեցի է. և զի կապեալն ևս էր

զնա: Եւ ի վաղիւ անդր կամէր գիտել զճշմարիտն Թէ զինչ չարախօսութիւն իցէ Հրէիցն. արձակեաց զնա և հրամայեաց կոչել զքահանայապետսն և զամենայն ատեանն. և իջուցեալ զՊաւղոս կացոյց ի մէջ նոցա:

Գլուխ Գլ. ԻԳ.

Հայեցեալ Պաւղոսի յատեանն ասէ. Արք եղբարք, ես ամենայն ուղիղ մտօք գնացեալ եմ առաջի Աստուծոյ մինչև ցայսօր: Եւ քահանայապետն Անանիա հրամայեաց ապատուորացն հարկանել ըզբերան նորա. յայնժամ Պաւղոս ասէ ցնա. Հարկանելոց է զքեզ Աստուած, ո՛րմ բըռեալ. և դու նստիս դատել զիս ըստ օրինաց, և առանց օրինաց հրամայես զիս հարկանել: Ո՛ր շուրջն կայինն (բոլորտիքը կայնողները) ասեն. Զքահանայապետ Աստուծոյ հայհոյես. և ասէ Պաւղոս. Ոչ գիտէի, եղբարք, եթէ իցէ քահանայապետ: Իբրև գիտաց Պաւղոս եթէ մի կողմն (կուսակցութիւն) Սադուկեցւոց է և միւսն Փարիսեցւոց, աղաղակէր ի մէջ ատենին. Արք եղբարք, ես Փարիսեցի եմ, որդի Փարիսեցւոյ. վասն յուսոյ. և յարութեան

մեռելոց ես աւասիկ դատիմ: Եւ զայս իբրև ասաց, եղեն հերձուածք Փարիսեցւոցն և Սադուկեցւոց. և պատառեցաւ (երկպառակիլ) բազմութիւնն, և եղև աղաղակ մեծ. յորմէ կացին ոմանք ի դըպրաց անտի ի կողմանէ Փարիսեցւոց, հակառակէին և ասէին. Ոչինչ չարութիւն գտանեմք յառնս յայսմիկ: Եւ ի բազմանալ ամփոխին՝ երկուցեալ հազարապետն Թէ գուցէ ճեղքիցի (կսnr կսnr ըլլալ) Պաւղոս ի նոցանէ՝ հրամայեաց զօրականին (զինուորներ) իջանել յափշտակել զնա ի միջոյ նոցա և ածել ի բանակն:

Իբրև այգ եղև, արարեալ ժողով Հրէիցն նզովեցին զանձինս (երդում ընել) ոչ ուտել և ոչ ըմպել մինչև սպանցեն զՊաւղոս. և էին աւելի քան զքառասուն որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ էր: Մատեան առ քահանայապետսն և երիցունս և ասեն. Նզովիւք նզովեցաք զանձինս ոչինչ ճաշակել մինչև սպանցուք զՊաւղոս. Բայց դուք զգացուցէք (իմացնել հազարապետին հանդերձ ատենիւ (ատեանին մարդիկը) զի իջուցէ զնա առ ձեզ, որպէս Թէ կամիցիք ճշմարտագոյնս

ինչ գիտել զնմանէ. և մեք յառաջ քան զմտիլ նորա պատրաստ եմք ի սպանանել զնա: Եւ լուեալ բեռորդւոյն Պաւղոսի զդաւաճանութիւնն՝ եկն եմուտ ի բանակ անդր, պատմեաց Պաւղոսի: Եւ կոչեցեալ Պաւղոսի առ իւր զմի ի հարիւրապետաց անտի՝ ասէ. Զպատանիս զայս տար առ հազարապետն, զի ունի ինչ պատմել նմա: Եւ նորա առեալ զնա տարաւ առ հազարապետն և ասէ. Կապեալն Պաւղոս կոչեաց զիս և աղաչեաց զպատանիս զայս ածել առ քեզ. ունի ինչ խօսել ընդ քեզ: Առեալ զձեռանէ նորա հազարապետին՝ գնաց մեկուսի (մէկդի). հարցանէր Թէ Զինչ ունիս խօսել ընդ իս, և նա ասէ. Հրէայք միաբանեցին աղաչել զքեզ, զի ի վաղիւ ըզ Պաւղոս իջուցես յատեան, իբրև Թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս հարցանել վասն նորա. արդ՝ զու մի անսայցես (մտիկ բնել) նոցա. քանզի դարան գործեալ (գաղտնի պահուրտիլ վնասելու համար) է նմա ի նոցանէ արանց աւելի քան զքառասուն, որ նզովեցին զանձինս ոչ ուտել և ոչ ըմպել մինչև սպան-

ցեն զնա. արդ՝ պատրաստ են, և սպասեն բում հրամանի: Ապա հազարապետն արձակեաց զպատանին՝ պատուէր տուեալ մի ումեք ասել Թէ Զայս զգացուցեր ինձ: Եւ կոչեաց երկուս ի հարիւրապետացն և ասէ. Պատրաստեցէք զօրականս երկերիւր, որպէս զի երթիցեն ի Կեսարիա. և հեծեալս եօթանասուն և տիզաւորս երկերիւր, և գրաստ (ելիւար, կրող անասուն) պատրաստական՝ որպէս զի իջուցեալ զՊաւղոս ապրեցուցեն առ Փելիքս դատաւոր: Գրեաց Թուղթ որ ունէր օրինակ զայս: «Կղաւդիոս Լիւսիաս առ քաջ (կարող) դատաւորդ Փելիքսի՝ ողջոյն: Զայրս զայս կալեալ ի Հրէից և մերձ ի սպանանել ի նոցանէ՝ հասեալ ի վերայ զօրականաւ ապրեցուցի (ազատել), իմացեալ Թէ Հռովմայեցի է: Կամեցայ գիտել զվնասն (յանցանք) վասն որոյ ամբաստանէին զդմանէ, իջուցի զդա յատեան դոցա, զոր գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց. և ոչինչ արժանի մահու կամ կապանաց (բանտարկութիւն) ունէր վնաս: Իբրև ազդ եղև նենգութեան յայրդ լինե-

լոյ ի նոցանէ, յղեցի առ քեզ՝ հրաման տուեալ և չարախօսացն (ամբաստանող) խօսել զդմանէ առաջի քո. ողջ լեր:»
Եւ զօրականացն ըստ հրամանի նորա առեալ զՊաւղոս՝ ածին գիշերայն (գիշերատեն) յԱնտիպատրիս, և ի վաղիւ անդր արձակեալ զհեծեալս ընդ նմա երթալ՝ դարձան ի բանակն: Նոքա մտին ի Կեսարիա. և տուեալ ցդատաւորն զթուղթն՝ առաջի կացուցին նորա զՊաւղոս: Իբրև ընթերցաւ, եհարց թէ յորմէ նահանգէ (երկիր մը nr տէրութեան մը մասն է) իցէ. և ստուգեալ եթէ ի Կիլիկեայ է՝ Լուայց քեզ, ասէ, յորժամ և չարախօսքն քո եկեսցեն. և հրամայեաց յապարանս Հերովդի պահել զնա:

Յետ հինգ աւուր էջ քահանայապետն Անանիա հանդերձ ծերովքոմամբք և ճարտարախօսաւ Տերտուղեաւ ոմամբ. որք և զգացուցին դատաւորին վասն Պաւղոսի: Եւ ի կոչելն զնա՝ սկսաւ Տերտիւղոսն ամբաստան լինել և ասել. «Բազում խաղաղութիւն գտեալ է ի քէն և իրաց ուղղութիւն ազգիս այսորիկ քով խնամով. ամենայնիւ և ամենայն ուրեք

շնորհակալ եմք, քաջդ Փելիքս, ամենայն գոհութեամբ (շնորհակալութիւն): Բայց զի մի աւելի ևս աշխատ արարիցս զքեզ, աղաչեմ լսել մեզ կարճ ի կարճոյ (համառօտիւ) քոյին հեզութեամբդ: Քանզի դտաք զայրս զայս ապականիչ և խռովիչ ամենայն Հրէից որք են ընդ տիեզերս՝, և առաջնորդ Նազովրացւոց հերձուածոյն. որ և զտաճարն իսկ կամեցաւ պղծել. զոր և կալաք և ըստ մերոց օրինաց դատել (դատը տեսնել) կամեցաք: Եկեալ Լիւսիաս հազարապետ մեծաւ բռնութեամբ ի ձեռաց մերոց եհան (առաւ). հրամայեաց և չարախօսացն նորա գալ առ քեզ. դու իսկ բաւական (կարող) լինիցիս, վերստին դատեալ, ամենայնի հաստատ լինել (հասկնալ) զորոց մեքս ամբաստանեմք զդմանէ»: Միաբանեցին և Հրեայքն, ասեն. Այդ այդպէս է: Պատասխանի ետ Պաւղոս յակնարկել նմա դատաւորին խօսել. «Ի բազում ամաց լինել քեզ դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ. յօժարութեամբ վասն իմոց իրաց պատասխանի առնեմ (ինքզինքը արդարացնել): Քանզի կարող ես գիտել զի

ոչինչ աւելի է իմ քան զաւուրս երկոտասան յորմէ հետէ ելի յԵրուսաղէմ. և ոչ ի տաճարի անդ գտին զիս ընդ ումեք խօսեցեալ, և կամ ժողովս արարեալ բազմաց, ոչ ի ժողովուրդս և ոչ ի քաղաքի, և ոչ յանդիման առնել (ապացուցանել) կարեն քեզ վասն որոյ այժմդ չարախօսեն զինէն »: Եւ յապաղեաց (ուրիշ օրուան ձգել) զնոսա Փելիքս, զի ստուգագոյնս գիտէր վասն ճանապարհին. ասէ. Յորժամ Լիւսիաս հազարապետ իջցէ այսր, տեղեկացայց վասն ձեր: Հրամայեաց հարիւրապետին պահել զնա, և ունել յընդարձակի (խստութիւն չընել), և մի զոք յիւրոց անտի արգելուլ ի պաշտելոյ (ծառայութիւն ընել) զնա: Յետ աւուրց ինչ եկն Փելիքս հանդերձ Դրուսեղաւ կնաւ իւրով որ էր Հրեայ. կոչեաց զՊաւղոս, և ի խօսել նորա վասն արդարութեան և ժուժկալութեան (բարեխառնութեան առաքինութիւն) և հանդերձեալ դատաստանին՝ զահի հարեալ Փելիքս ետ պատասխանի. Դու առ այժմ (հիմակու հիմա) երթ. և յորժամ ժամ ղիցի (պա-

տեհութիւն ըլլայ), կոչեցից զքեզ: Միանգամայն և ակն ունիր (կը յուսար) թէ տացի ինչ նմա ի Պաւղոսէ. վասն որոյ ստէպ կոչեցեալ զնա՝ խօսէր ընդ նմա: Եւ ի կատարել երկուց ամաց՝ եկն փոխանակ Փելիքսի Փեստոս Պորկիոս. իբրև կամեցաւ շնորհս առնել (աչքը մտնել) Հրէից՝ Փելիքս, եթող զՊաւղոս կապեալ:

Փեստոս իբրև եհաս յիշխանութիւնն, յետ երից աւուրց ել յԵրուսաղէմ ի Կեսարեայ. և զգացուցին նմա քահանայապետքն և գլխաւորք Հրէից զՊաւղոսէ, և աղաչէին խնդրել շնորհս ի նմանէ զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ՝ դարան գործեալ սպանանել զնա ի ճանապարհի: Իսկ Փեստոս արար պատասխանի պահել զնա ի Կեսարիա. թէ ինքն իսկ ընդ հուպ (քիչ ատենէն) անդր երթալոց է: Եւ որ ի ձէնջ կարողք իցեն, ասէ, ընդ իս իջցեն. և եթէ իցէ ինչ յառնն վնաս (յանցանք), ամբաստան լիցին զնմանէ: Եւ լեալ անդ աւուրս ոչ աւելի քան զութ կամ զտասն՝ եկն էջ ի Կեսարիա. և ի վաղիւ անդր նստեալ

յատենի, հրամայեաց ածել զՊաւղոս: Եւ իբրև եկն, կացին շուջ զնովաւ որ յԵրուսաղեմէ իջեալ էին Հրեայք (¹). բազում և ծանր վնասս դնէին (կ'ամբաստանէին) զոր ոչ կարէին ցուցանել. քանզի առնէր պատասխանի Պաւղոս եթէ ոչ յօրէնս Հրէից և ոչ ի տաճարն և ոչ ի կայսր վնասակար (յանցաւոր) եմ: Բայց Փեստոս կամեցեալ Հրէից շնորհս առնել՝ պատասխանի ետ Պաւղոսի և ասէ. Կամիս յԵրուսաղէմ ելանել և անդ վասն դոցին իրաց դատել առաջի իմ: Եւ ասէ Պաւղոս. Յատենի կայսեր հասեալ կամ ուր պարտ է ինձ դատել, Հրէից չեմ ինչ վնասակար, որպէս և դու իսկ քաջ գիտես: Ապա թէ վնասակար իցեմ և արժանի մահու ինչ գործեցի, ոչ զանգիտեմ ի մեռանելոյ. իսկ եթէ ոչինչ իցէ զորոց սոքա ամբաստան լինին զինէն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել (ձեռէն տալ). ի կայսր բողոքեմ: Յայնժամ Փեստոս խօսեցեալ ընդ խորհրդակցին՝ արար պատասխանի. Ի կայսր բողոքեցեր, առ կայսր երթիջիր:

(¹) Տես Գերակ. Թիւ 166 Ն°:

Իբրև անցին աւուրք ինչ, Ագրիպպաս արքայ և Բերենիկէ եկին ի Կեսարիա յողջոյն (բարեմաղթութեան) Փեստոսի. և իբրև աւուրս բազումս հանէին (անցնել) անդր, Փեստոս զեկոյց (իմացնել) արքայի զՊաւղոսէ և ասէ. Այր մի է աստ մնացեալ կապեալ ի Փելիքսէ. վասն որոյ, իբրև չոքայ յԵրուսաղէմ, զգացուցին ինձ քահանայապետքն և գլխաւորք Հրէից. խնդրէին յինէն առնել նմա պատուհաս. որոց ետու պատասխանի եթէ չէ օրէն Հռովմայեցւոց շնորհել ումեք զոք, մինչ չև ամբաստանեալն յանդիման ունիցի զդատախազսն (ամբաստանող) և տեղի պատասխանւոյ առնուցու (ինքզինքը արդարացնելու արտօնութիւն ունենայ) վասն ամբաստանութեանն: Եւ իբրև եկին այսր, ոչինչ յապաղեցի, այլ ի վաղիւ նստեալ յատենի՝ հրամայեցի ածել զայրն: Վասն որոյ մատուցեալ ամբաստանքն և ոչ մի ինչ վնաս չարութեան ի մէջ բերէին (ցուցնել) զորոց ես կարծէի. բայց խնդիրս ինչ վասն իւրեանց պաշտաման ունէին ընդ նմա, և վասն Յիսուսի ուրումն մեռելոյ զորմէ ասէր

Պաւղոս թէ կենդանի է: Իբրև յանհնարութեան (հար մը չկրցայ զտնել) վասն այնպիսի իրաց քննութեան, ասեմ թէ կամիցի երթալ յԵրուսաղէմ և անդ դատել վասն նոցին իրաց: Բայց ի Պաւղոսի բողոքելն զի պահիցի ի քաջի արանցն (կայսեր) յանդիմանութիւն՝ հրամայեցի պահել զնա մինչև տաց տանել առ կայսր: Ագրիպպաս ցՓեստոս ասէ. Կամիմ և ես լսել առն. և նա ասէ. Վաղիւ լուիցես: Եւ ի վաղիւ անդր իբրև եկն Ագրիպպաս և Բերինիկէ բազում երևելի ապաստուք (փառաւորութիւն) և մտին յատեանն հանդերձ հազարապետօքն և արամբք պատուականօք (պատուաւոր) քաղաքին, և հրամայեալ Փեստոսի՝ ածին զՊաւղոս: Եւ ասէ Փեստոս. Արքայ Ագրիպպա և ամենայն արք որք ընդ մեզ էք. տեսանէք զսա. վասն որոյ ամենայն ժողովք Հրէից ամբաստան եղեն ինձ յԵրուսաղէմ և ասա. աղաղակէին թէ ոչ է պարտ դմա կեալ: Բայց ես ի վերայ հասի (տեղեկացայ) թէ ոչինչ է դորա արժանի մահու գործեալ. և դորա ինքնին բողոք կալեալ առ քաջ արանցն՝ խորհեցայ յղել. վասն որոյ

ստուգութեամբ ինչ գրել տեառն իմում ոչ ունիմ. վասն այնորիկ ածի զդա առաջի ձեր և մանաւանդ առաջի քո, արքայ Ագրիպպա, որպէս զի վերատին քննեալ մարթացիս ինչ գրել, քանզի անպատեհ իմն թուի ինձ տալ տանել կապեալ մի, և ոչինչ վնաս զնմանէ նշանակել (իմացնել):

Եւ Ագրիպպաս ասէ ցՊաւղոս. Հրամայեալ է քեզ վասն քո խօսել: Յայնժամ Պաւղոսի ձգեալ զձեռն առնէր պատասխանի. «Վասն ամենայն ամբաստանութեան Հրէից զինէն, արքայ Ագրիպպա, համարիմ զանձն երանելի, զի քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի: Մանաւանդ զի գիտակ ես իսկ ամենայն կրօնից և խնդրոց Հրէից. վասն որոյ ապաչեմ երկայնմտութեամբ (հեռոդամտութիւն) լսել ինձ: Քանզի զկենաց իմոց որ ի մանկութենէ՝ տեղեակ են ամենայն Հրեայք. յառաջագոյն գիտեն ի վաղուց հետէ (ծատնից), եթէ կամիցին վկայել, զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մերոց կեցեալ եմ Փարիսեցի: Եւ իսկ ինքնին պատշաճ համարէի զբազում ինչ հակառակ անուանն Յիսուսի Նազովրեցւոյ

գործել. զբազումս ես բանտարգել առնէի, և զապանելոցն նոցա բերէի համար (քիւ). բազում անգամ պատժեալ զնոսա բռնադատէի հայհոյել. առաւել ևս մոլեալ (կատաղեալ) ի վերայ նոցա՝ հալածէի մինչև յարտաքին քաղաքս: Գնացեալ ի Դամասկոս իշխանութեամբ և հրամանօք քահանայապետիցն՝ զմիջաւուրքն (կէս օրուան տեսիլը) ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից առաւել քան զլուսաւորութիւն արեգական ծագեալ (երեւեալ) զինև լոյս, և զնոքօք որ ընդ իսն երթային. և յամենեցուն մեր անկանել յերկիր՝ լուայ ձայն որ ասէր ցիս Հեբրայեցւոց բարբառովն. Սաւուղ, Սաւուղ, զի հալածես զիս. խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել (կիլ զարնել): Ուստի, արքայ Ագրիպպա, ոչ եղէ անհաւան (անհնազանդ) երկնաւոր տեսլեանն:» Նորա զայս պատասխանի տուեալ՝ Փեստոս ի ձայն մեծ ասէ. Մոլիս (խելքդ կորսնցուցած ես), Պաւղէ. բազում դպրութիւնք (ուսմունք) զքեզ ի մոլութիւն (խենդութիւն) դարձուցանեն: Իսկ Պաւղոս ասէ. Ոչ մոլիմ, քաջդ Փեստոս, այլ զցածու-

թեան (խելացութիւն) և զճշմարտութեան բանս բարբառիմ: Գիտակ իսկ է այսորիկ արքայ ընդ որում և համարձակեալդ խօսիմ. քանզի ծածկել ի քէն իմիք ի սոցանէ չառնուում յանձն (չեմ ուզեր). զի ոչ եթէ յանկեան ուրեք գործեալ իցէ այս: Հաւատանս, արքայ Ագրիպպա, մարգարէից. գիտեմ զի հաւատաս: Եւ ասէ Ագրիպպաս ցՊաւղոս. Փոքու իմն (քիչ մնաց որ) հաւանեցուցանես զիս լինել քրիստոնեայ: Յոտն եկաց արքայն և դատաւորն և Բերինիկէ և որ ընդ նոսայն նստէին. և իբրև գնային, խօսէին ընդ միմեանս և ասէին թէ Ոչինչ արժանի մահու կամ կապանաց գործէ այրս այս: Իսկ Ագրիպպաս ցՓեստոս ասէ. Արձակել մարթ էր զայրս զայս, եթէ ոչ էր բողոքեալ ի կայսր:

Իբրև հրամայեցաւ մեզ նաւել յԻտալիա, տային զՊաւղոս և զայլս ոմանս կապեալս ցհարիւրապետ մի որում անուն էր Յուղիոս, սեբաստեան գնդին: Եւ ելեալ ի նաւ մի անդրամինտացի որ երթալոց էր ի կողմանս Ասիացւոց՝ գնացաք. էր ընդ մեզ և Արիստարքոս մակե-

դոն Թեսաղոնիկեցի: Եւ ի վաղիւ անդր իջաք ի Սիդոն. և մարդասիրութիւն ցուցեալ Յուղեայ առ Պաւղոս՝ հրամայեաց առ բարեկման երթալ և դարման գտանել: Եւ անտի ելեալ խոնարհագոյն նաւեցաք ի Կիպրոս վասն հողմոյն ընդդէմ լինելոյ: Յայնժամ ընդ մէջ (երկու բանի մէջ տեղէն) ծովուն Կիլիկեայ և Պամփիլեայ նաւեալ՝ իջաք ի Սմիռայ Լիկիացւոց. և անդ գտեալ հարիւրապետին նաւ մի աղեքսանդրացի որ երթայր յԻտալիա՝ եմոյծ զմեզ անդր: Եւ ի բազում աւուրս ծանրանաւեալք՝ հազիւ (դժուարաւ) հասաք առ Կնիդաւ. և ի չթողացուցանել մեզ հողմոյն՝ նաւեցաք խոնարհագոյն (դէպ ի վար) ի Կրետէ առ Սաղմոնեաւ: Հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք ի տեղի ինչ որ կոչէր գեղեցիկ նաւահանգիստ, յոր հուպ (մօտ) էր քաղաքն Ղասեայ: Եւ իբրև բազում ժամանակք անցանէին՝ և սիրալ ևս լինէր նաւելոյն՝ և վասն այն ինչ ևս պահոցն (ծոմի ժամանակ) անցանելոյ, տայր խրատ Պաւղոս և ասէ ցնոսա. Արք, տեսանեմ զի թշնամանօք (նեղութիւն) և բազում վնասու ոչ միայն բեռինդ և նաւ-

ւիդ այլ և անձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս: Իսկ հարիւրապետն նաւապետին և նաւավարին առաւել անսայր քան բանիցն Պաւղոսի: Իբրև դժպատեհ (անյարմար) իմն թուէր նաւահանգիստն առ ի ձմերել (ձմեռն անցնել), բազումք խորհեցան (որոշում ընել) գնալ անտի. թերևս կարասցեն հասանել ի Փիւնիկէ ձմերել ի նաւահանգստին Կրետացւոց որ հայէր ընդ հարաւակողմն: Եւ ի շնչել հարաւոյն համարեցան ուր դիմեալն էին (իրենց միտքը դրած տեղը) հասանել. և արկեալ՝ (նամբայ ելլել) մօտ անցանէին զԿրետաւ: Եւ ոչ յետ բազում ժամուց անկաւ զնովաւ (բռնուեցան) հողմ ուռուցիկ որ կոչի եւրակիկլոն. ընդ յափըշտակել նաւին և ի չհանդուրժել (չդիմանալ) ընդդէմ հողմոյն՝ թոյլ տուեալ երթայաք և գայաք: Ի կղզի ինչ դիմեալ որ կոչէր Կղաւդեայ՝ հազիւ կարացաք ըմբռնել զմակոյկն. զոր առաւել յօգնականութիւն՝ կապէին ընդ նաւն, երկուցեալ թէ գուցէ ի յորձանուտն անկանիցին. իջուցեալ զառագաստն՝ այնպէս երթային և գային: Եւ ի սաստկագոյն վշտանալոյն

մերոյ՝ ի վաղիւ անդր զկարասին ընկեցիկ առնեին (նեսել) և յերիր աւուր (երրորդ օրը) ընդ իւրեանց (իրենց ձեռքովը) ձեռն զգործիս նաւին ընկեցին: Իբրև ոչ արև և ոչ աստեղք երևէին ի բազում աւուրս՝ և ձմեռն ոչ սակաւ կայր ի վերայ (վրայ հասած էր), ապա բառնայր ամենայն յոյս փրկութեան մերոյ: Եւ զի բազում աւուրս նօթի էին, յայնժամ Պաւղոս կացեալ ի մէջ նոցա ասէ. Պարտ էր ձեզ, ով արք, անսալ ինձ և ոչ ելանել ի Կրետեայ և շահել զվիշտս զայս և զվնաս. և արդ խրատեմ զձեզ քաջալերել. զի վնաս անձին և ոչ միում ի ձենջ լինիցի բաց ի նաւէդ. բայց ի կղզի ինչ հասանիղ մեզ անկանել (պիտի իյնանք):

Իբրև չորեքտասաներորդ գիշեր լինէր, մինչդեռ ծփէաք (տարուբերուիլ) ի Հանդրին (Ադրիական) անդունդս, ի մէջ գիշերին կարծէին նաւաբարքն եթէ հասեալ իցեն յաշխարհ ուրեք. և ընկեցեալ զգունդսն (գնտակ) գտին գիրկս (խուլաճ) քսան. և սակաւ ինչ դադարեալ՝ դարձեալ ընկեցին և գտին գիրկս հնգետասան։ Զահի հարեալ թէ գուցէ ի խիստ

(քարուս) ինչ տեղիս անկանիցին՝ յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս (նաւի երկաթ) չորս. ըղձանային այգուն լինելոյ: Բայց նաւավարքն խնդրէին փախչել ի նաւէ անտի՝ իջուցեալ զկուրն (նաւակ) ի ծով անդր պատճառանօք որպէս թէ առաջոյ կողմանէ խարիսխ ձգելոց իցեն: Ասէ Պաւղոս ցհարիւրապետն և ցզօրականսն. Եթէ ոչ դոքա մնան ի նաւիս, դուք ապրել ոչ կարէք. յանժամ զօրականքն հատին զլարս (չուան) կրին և ի բաց ընկեցին: Եւ մինչդեռ այգն կամէր լինել, աղաչէր Պաւղոս զամենեսեան առնուլ կերակուր. ասէ. Այս չորեքտասաներորդ օր է որում ակն ունիք նօթիս կատարել, և չէ ինչ ճաշակեալ. վասնորոյ աղաչեմ զձեզ ճաշակել կերակուր, զի այն իսկ վասն ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք ի ձէնջ մազ մի ի գլխոյ կորիցէ: Եւ քաջալերեցան ամենեքին, և առին կերակուր: Եւ էաք ամենայն հոգիք ի նաւին երկերիւր եւթանասուն և վեց: Իբրև յագեցան կերակրոփն, թեթևացուցին զնաւն՝ թափեալ (պարպել) զցորեանն ի ծովն: Եւ

իբրև այգ եղև, զերկիրն ոչ ճանաչէին. բայց զգոգ (ծոց) մի նշմարէին թէ ասին ծովուն իցէ, յոր խորհէին, թէ հնար ինչ իցէ, զերծուցանել զնաւն: Եւ ըզ խարիսխան հատեալ ընկեցին ի ծովն, թողացուցին (թող տուին) զխառնելիս (կապ) թևոցն (ղեկ), և ի բաց առին (բացին) զառագաստն, և ետուն հողմոյն յափն կոյս (դէպ ծովեզերքը) ծովուն: Անկեալ ի տեղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն, և առաջին կողմն նաւին խրեալ անշարժ մնայր, և յետին կողմն քակէր ի բռնութենէն: Եւ զօրականացն խորհուրդ արարեալ զի զկապեալսն սպանցեն և մի ոք լուղիցէ և փախիցէ, հարիւրապետն, քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊաւղոս, արգել զնոսա ի խորհրդոյն. հրամայեաց զի որ կարողն իցեն լուղել՝ անկանիցին նախ և ի ցամաք ելանիցեն. և զայլսն ապրեցուսցեն՝ զորս ի տախտակս և զորս յայլ ինչ կահ (գործիք) ի նաւէ անտի. և այսպէս եղև ամենեցուն փրծանել (ազատիլ) յերկիր:

Եւ ապրեալք՝ յանյժամ գիտացաք թէ Մելիտինէ էր անուն կղզւոյն. բայց

բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ. քանզի լուցին խարոյկ և ընկալան զամենեսին զմեզ վասն անձրևին որ ստիպէր և վասն ցրտոյն: Եւ ի ժողովել Պաւղոսի խռիւ ինչ բազում և դնել ի վերայ խարուկին՝ իժ մի ի ջերմութենէն ելեալ կալաւ զձեռանէ նորա: Իբրև տեսին բարբարոսքն կախեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. Ուրեմն սպանող է այրս այս, որ թէպէտև ապրեցաւ ի ծովէն, իրաւունքն չետուն կեալ: Եւ նորա թօթափեալ զգազանն ի հուրն՝ եղև նմա չար և ոչինչ. և նոքա ակն ունէին նմա այտնելոյ կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ. իբրև շատ (բաւական) ակն կալեալ՝ և տեսանէին թէ ոչինչ ինչաս եղև նմա, դարձեալ դարձուցեալ զբանն՝ ասէին թէ աստուած ոմն է: Եւ շուրջ զտեղեաւն զայնուիկ էին գեղք գլխաւորի կղզւոյն որում անուն էր Պոպղիոս, որ առ զմեզ յերաշխի (տիրութիւն ընել) զերիս աւուրս և սիրով ընկալաւ: Եւ եղև հօրն Պոպղեայ ի ջերմն և յախտ թանչից (արիւն երթալը) հիւանդանալ

գնել (պառկիլ). առ որ մտեալ Պաւղոս և կացեալ յաղօթս՝ եդ զձեռն և բժշկեաց զնա: Եւ իբրև այս եղև, այլ հիւանդք որ էին ի կղզւոջն՝ գային և բժշկէին. որք և բազում պատուովք պատուեցին զմեզ. և իբրև գնացաք, ետուն որ ինչ պէտք էին: Եւ յետ երից ամաց ելաք ի նաւ մի ալեքսանդրացի որ ձմերեալ էր ի կղզւոջն. և իջեալ ի Սիրակուսա՝ եղաք աւուրս երիս. ուստի գնացեալ հասաք ի Հռեգիոն. և յետ աւուր միոյ ի շնչել հարաւոյն՝ երեկօրեայք եկաք ի Պատիոդոս, ուր և գտաք եղբարս. ապաչեցեալք ի նոցանէ լինել աւուրս եւթն՝ և ապա ելաք ի Հռովմ: Եւ անտի լուեալ եղբարց զմէնջ ելին ընդ առաջ մեր. զոր տեսեալ Պաւղոսի՝ գոհացաւ զԱստուծոյ և քաջալերեցաւ: Եւ իբրև մտաք ի Հռովմ, հրամայեցաւ Պաւղոսի լինել առանձինն հանդերձ զինուորաւն, պահապանաւ իւրով: Եւ եղև յետ երից աւուրց կոչել նմա զՀրէից գլխաւորս. և իբրև եկին. ասէ ցնոսա. Ես, արք եղբարք, ոչ ինչ հակառակ գործեալ ժողովրդեանն կամ կրօնից հայրենեաց,

կապեալ յԵրուսաղէմէ՝ մատնեցայ ի ձեռս Հռովմայեցւոց. որք, իբրև դատեցան զիս, կամեցան արձակել վասն և ոչ մի ինչ վնաս մահու գտանելոյ յիս: Ի հակառակել Հրէից՝ հարկ եղև բողոքել ի կայսր, իբր ոչ եթէ զազգէն իմմէ ունէի ինչ չարախօսել: Վասն այսր պատճառանաց աղաչեցի զձեզ տեսանել և խօսել, քանզի վասն յուսոյն Իսրայելի կամ ի շղթայս յայսոսիկ: Եւ նոքա ասեն ցնա. Մեք ոչ թուղթս ինչ վասն քո ընկալաք ի Հրէաստանէ, և ոչ եկեալ ոք յեղբարց պատմեաց կամ խօսեցաւ ինչ վասն քո չարութիւն. բայց աղաչեմք ի քէն լսել թէ զինչ խորհիցիս. զի վասն հերձուածոյդ այդորիկ յայտ իսկ է մեզ զի ամենայն ուրեք հակառակութիւն կրէ:

Ժամ եդեալ նմա օր մի (or մը որոշել՝) եկին ի վանսն (բնակարան) առ նա բազումք, որոց պատմէր վկայութեամբ զարքայութիւն Աստուծոյ, և հաւանեցուցանէր զնոսա (փաստ տալ) վասն Յիսուսի յօրինացն և ի մարգարէից յայգուէ մինչև ցերեկոյ: Եւ ոմանք

հաւանէին բանիցն, և կէսքն չհաւատային, և անմիաբանք լեալ միմեանց՝ արձակէին (կը մեկնէին, կ'երթային): Եւ եղև Պաւղոս զերկեամ մի (երկու տարի) բովանդակ իւրով վարձու, և ընդունէր զամենեսեան որ մտանէին առ նա:

Գործ Գլ. ԻԳ. ԻԴ. ԻԵ. ԻԶ. ԻԷ. ԻԸ.

ԹԱԳԱՒՈՐՆ Դարեհ արար խրախուճիւն (խնճոյք) մեծ, և ժողովեաց զամենայն իշխանս իւր և զընտրոծինս (իր տունը ծընեալ ծառայ) իւր և զամենայն մեծամեծս Մարաց, Պարսից և Քաղդեացւոց, և զամենայն նախարարս և զզօրագլուխս և զետեղակալս (կուսակալ) ընդ նոսա ի կողմանցն Հնդկաց մինչև ի կողմանս ԵԹուովպացւոց: Եւ էին նախարարք հարիւր քսան և եւԹն. և կերան և արբին և յագեցան և ուրախ եղեն: Եւ յորժամ վախճան եղև, Դարեհ Թագաւոր եմուտ ի սենեակ իւր, և ելեալ ի գահոյս (անկողին) իւր ի քուն եղև: Յայնժամ երեք պատանիք որ էին սենեկապանք նորա,

և մինչդեռ ի քուն կայր Թագաւորն, ի ներքս ի սենեկի ապաւ կալեալ (ապաստանել) և պահ ուներին (պահպանել) նմա, խօսել սկսան ընդ միմեանս և ասեն. Եկայք, իւրաքանչիւր ասասցուք բան մի. և որ ասասցէ իմաստուն և առաւել զօրաւոր քան զընկերս իւր, տացէ նմա Դարեհ Թագաւոր պարգևս մեծամեծս, և մեծ և անուանի երևեսցի քան զամենեսեան, և ծիրանի զգեցուսցէ նմա. և ոսկի սպասուք (անօր) արբցէ և կերիցէ, և իվերայ ոսկեղինաց նստցի և ննջեսցէ, և վարեսցէ (գործածել) երիվարս ոսկեսանձս, և խոյր բեհեզեայ Թագ կապեսցի նմա, և մանեակ ոսկի ի պարանոցի նորա, և յերկրորդ աՀոռն Դարեհի նստցի վասն իմաստուԹեան իւրոյ, և ազգական Դարեհի անուանեսցի:

Եւ յայնժամ իւրաքանչիւր գրեալ զիւր բան, կնքեցին և եղին առ սնարս (գրլխուն դին) Դարեհի արքայի և ասեն. Յորժամ յարիցէ, տացուք ցնա զգիրդ. և ընտրեսցէ (որոշել) Թագաւորն և երեք մեծամեծ իշխանք Պարսից. և որոյ գտցի բան իմաստնագոյն՝ նմա տացէ զյաղԹո-

ղական պարգևն: Եւ գրեաց առաջինն. ասէ. Ցաղթող և զօրաւոր է քան զամենայն գինի: Եւ գրեաց երկրորդն և ասէ. Ցաղթող և զօրաւոր է քան զամենայն թագաւոր: Եւ երրորդն գրեաց և ասէ. Ցաղթող և զօրաւոր են քան զամենայն կանայք, և քան զամենայն յաղթէ ճշմարտութիւն: Եւ յորժամ զարթեաւ թագաւորն, առեալ զգիրն զոր ետուն ցնա, կարդաց. և առաքեալ կոչեաց զամենայն մեծամեծս Պարսից և Մարաց, և զնախարարս և զսպարապետս և զտեղակալս և զիշխանս. և նստաւ ի տեղւոջ յայգորելի (բարեւելու եկողներն ընդունելու տեղ), և կարդացին զգիրն առաջի ամենեցուն: Եւ ասէ թագաւորն. Կոչեցէք այսր զպատանիսն, և նոքա մեկնեսցեն զբանս իւրեանց· Եւ կոչեալ՝ մտին առաջի. և ասեն ցնոսա ամենեքեան. Պատմեցէք մեզ զգրեալսդ: Եւ սկսաւ ասել առաջինն որ ասաց վասն զօրութեան գինւոյ, և ասէ այսպէս. «Ո՜ երբ, զիարդ ոչ է զօրաւոր գինի. զի ամենայն մարդիկ որ ըմպեն զնա՝ յիմարեցուցանէ ըզ միտսն, և զթագաւորաց և զտառապելոց

մի միտս առնէ. նոյնպէս զտեառն և ըզ ծառայի, զմեծատանց և զաղքատաց, և զամենեցուն միտս դարձուցանէ և շրջէ յուրախութիւն: Եւ ոչ երբէք յիշեն ըզ տրտմութիւն և զախտս ինչ, քանզի զամենեցուն սիրտ լնու զուարթութեամբ և մեծութեամբ, և տայ խօսել զմեծամեծս: Եւ յորժամ ըմպէ, ոչ յիշէ զսիրելիս և զեղբարս և զթշնամիս. և բազում անգամ հանեալ իցէ սուր, և յորժամ բաւիւ գինիւն (գինովութիւնն անցցի), ոչ յիշէ զինչ գործեաց: Ո՜վ երբ, զիարդ ոչ է զօրաւոր գինի որ զայս ամենայն բռնադատէ գործել:» Եւ ասացեալ զայս ամենայն, լռեաց:

Եւ սկսաւ խօսել երկրորդն որ ասաց վասն զօրութեան թագաւորի· «Ո՜ երբ, ոչ ապաքէն զօրացեալ են մարդիկ որ ունին զծով և զցամաք և զամենայն որ ինչ ի նոսա. իսկ թագաւոր զօրացեալ տիրէ ամենայն երկրի և մարդկան. և զոր ինչ ասէ և հրամայէ՝ վաղվաղակի առնեն. եթէ հրամայէ պատերազմել ընկեր ընդ ընկերի իւրում, ոչ իշխեն անցանել զբանիւ (խօսքն չկատարել), և

եթէ առաքէ զնոսա ի պատերազմ ընդ Թշնամիս, երթեալ վաղվաղակի գործեն մենքենայս և լերինս և պարիսպս և աշտարակս, սպանանեն և մեռանին, և զհրամանաւ Թագաւորին ոչ կարեն անցանել. և եթէ յաղթեսցեն, զամենայն բարութիւնս բերեն Թագաւորին: Եւ ոչ միայն զօրականք պատերազմողք, այլ և մշակք որ գործեն զերկիր, յորժամ սերմանեն և հնձեն, զարդիւնս (բերք) իւրեանց բերեն Թագաւորին. և հարկահանք (հարկ առնող) դարձեալ բռնադատեալ զաշխարհ, հանեն հարկս (հարկ առնել) Թագաւորի: Եւ Թագաւոր միայն զօրացեալ իշխան է ի վերայ ամենայնի. և եթէ հրամայէ սպանանել, սպանանեն. և եթէ կեցուցանել՝ կեցուցանեն. և եթէ շինել՝ շինեն. և եթէ քակել՝ քակեն. և եթէ տնկել՝ տնկեն. և ամենայն աշխարհ Թագաւորի զօրութեան և հրամանի լսեն (հնազանդիլ). և ինքն արքայ զինչ և կամի՝ գործէ, և ինքն ի հանգստեան կայ. բազմի, ուտէ, ըմպէ և ի քուն մտանէ. և այլք ամենեքեան շուրջ պահեն զնա և հրամանի նորա անսան, և ոչ իշխեն (չեն

համարձակիլ) ըստ կամս իւրեանց երթալ ուրեք և կամ գործել, և ոչ իշխեն անցանել զհրամանաւ Թագաւորի: Արդ, ո արք, զիարդ ոչ զօրաւոր է Թագաւոր, որոյ բան հրամանի իւրոյ այսչափ զօրացեալ իշխէ ի վերայ ամենեցուն: » Եւ զայս ասացեալ լռեաց:

Եւ երրորդն որ ասաց վասն զօրութեան կանանց և վասն ճշմարտութեան, այս է Զօրաբաբել, սկսաւ խօսել և ասէ. Ո արք, եթէ մեծ է Թագաւոր և կամ այլ բազում մարդիկ. և կամ զօրաւոր է գինի, ո՞ է որ յաղթեալ ունի և տիրէ ի վերայ ամենեցուն: Ոչ ապաքէն կանայք. քանզի կանայք են որ ծնանին զԹագաւորս. և ամենայն մարդիկ որ տիրեն ծովու և ցամաքի՝ ի նոցանէ ծնան: Կանայք ծնան և սնուցին զմշակս որ տնկեն զայգիս՝ ուստի լինի գինի· և նոքա են՝ որ առնեն զհանդերձս արանց. և նոքօք զարդարին և փառաւորին մարդիկ. և ոչ է հնար առանց նոցա լինել մարդկան: Եւ եթէ ժողովեսցեն զոսկի և զարծաթ և զամենայն բարութիւնս, և տեսեալ կին մի գեղեցիկ՝ դարձեալ ի նա և բերանաբաց եղեալ հա-

յին ընդ նա. և ամենայն կամօք իւրեանց սիրեն զնա առաւել քան զոսկի և քան զարծաթ և քան զամենայն բարութիւնս. և թողեալ (մարդ) զհայր և զմայր իւր որ ծնան և սնուցին զնա, և զաշխարհ իւր, երթայ զհետ կնոջ իւրոյ. և այնպէս միացեալ ոգեխառնի (մէկ հոգի կ'ըլլայ) ընդ նմա, մինչև ոչ յիշէ զհայր իւրև ոչ զմայր և ոչ զաշխարհ:

Եւ յայսմանէ արժան է ձեզ գիտել թէ տիրեն ի վերայ ձեր կանայք ձեր. զի զամենայն ինչ զոր գործէք և աշխատիք՝ բերէք և տայք ցկանայս ձեր: Եւ առեալ առն զսուր իւր գնայ ի ճանապարհ հեռի. և եթէ շահի ինչ կամ աւազակէ և գողանայ, կամ ընդ ծով և ընդ գէտս նաւէ և գազանաց պատահէ և ընդ խաւարուտ գնայ, և յորժամ գողանայ և յափշտակէ և ընդ ամենայն վիշտս անցանէ (կը հանդիպի), գայ բերէ զամենայն վաստակսն (աշխատութիւնը) առ կին իւր. քանզի առաւել սիրէ մարդ զկին իւր քան զհայր իւր և զմայր իւր: Եւ բազումք յիմարեցան ի մտաց իւրեանց, և վասն կանանց իւրեանց անկան ի ծառայութիւն. և բա-

զումք ի կորուստ մատնեցան և մեռան և ապանին, և սխալեալ անկան ի մեծամեծ մեղս վասն կանանց: Եւ այժմ ոչ հաւատայք ինձ: Ո՞չ մեծ Թագաւորդ անձնիշխան (ազատ) է ինքն. և ամենայն որ ի մարդկանէ ոչ իշխէ մերձենալ ի դա: Տեսանէի ես զդուստր հարցի Թագաւորին զի նստէր ընդ աջմէ Թագաւորիդ, և առեալ զԹագն ի գլխոյ դորա՝ դնէր ի գլուխ իւրում. և ածեալ ապտակ Թագաւորիդ: Եւ առ այս Թագաւորդ ոչ ցասնոյր, այլ բացեալ զբերան իւր հայէր ընդդէմ նորա. և եԹէ ծիծաղէր, ծիծաղէր ընդդէմ նորա. և եԹէ տրտմէր, Թագաւորըդ ողոքէր (սիրտ առնել), մինչև սԹափեցուցէ (տրտմութիւն փարատել) զնա: Արդ, ո արք, զիարդ ոչ են զօրաւոր կանայք որ զայս ամենայն առնեն: »

Եւ յայնժամ Թագաւորն և մեծամեծք նորա սկսան հայել այր ընդ ընկեր իւր: Եւ սկսաւ խօսել Զօրաբաբել վասն ճշմարտութեան և ասէ. « Ո արք, ոչ ապաքէն զօրաւոր են կանայք. մեծ է երկիր. բարձրք են երկինք և երագնԹաց է արեգակն վասն զի ունի արշաւանս (ընթացք) ընդ

կամարաձև խորանն երկնից, և դարձեալ վաղվաղակի սլացեալ (օդին մէջ արագ երթալ) հասանէ ի տեղի իւր ի միում աւուր: Ոչ ապաքէն մեծ է այն որ զայս ամենայն արար: Արդարև ճշմարտութիւն մեծ և զօրաւոր է քան զամենեսեան. ամենայն երկիր ապաւինի ի ճշմարտութիւն. և երկինք օրհնեն զճշմարտութիւն և ամենայն գործք շարժին և դողան առաջի նորա. և ոչ է ի ճշմարտութեան անիրաւութիւն և ոչ մի: Անիրաւ է գինի. անիրաւ է թագաւոր. անիրաւ են կանայք. անիրաւ են և ամենայք որդիք մարդկան. անիրաւ են և ամենայն գործք նոցա, և ոչ գոյ ի նոսա ճշմարտութիւն, և յանիրաւութեան իւրեանց կորնչին: Իսկ ճշմարտութիւն կայ և մնայ և զօրաւոր է յաւիտեան, և կենդանի է և ունի (կը տիրէ) իշխանութիւն նորա յաւիտեանս յաւիտենից. և ոչ գոյ ի նմա ակնառութիւն (երեսպաշտութիւն) և ոչ երբէք փոփոխի, այլ իրաւունս առնէ (արդարութիւն կընէ). և մերժեալ է ի նմանէ անիրաւութիւն և չարութիւն. և ամենայն գործք ճշմարտութեան հաճոյ են ամենե-

ցուն. և ոչ գոյ ի դատաստանի նորա անիրաւութիւն, քանզի ճշմարտութիւն է զօրութիւն թագաւորաց և իշխանութիւն և մեծութիւն. և է օրհնեալ Տէր Աստուած ճշմարտութեան: » Եւ ասացեալ զայս լռեաց ի խօսելոյն. և ամենայն ժողովն յայնժամ մեծաձայն աղաղակեցին և ասեն. Մեծ է ճշմարտութիւն և յաղթող զօրաւոր:

Ս. Եզր. Գլ. Գ, Դ.

Յամին երրորդի թագաւորութեան իւրոյ արար Արտաշէս կոչունս (խնճոյք) սիրելեաց իւրոց և մեծամեծաց Պարսից և Մարաց, և ամենայն իշխանաց նախարարացն. և եցոյց նոցա զմեծութիւն թագաւորութեան իւրոյ և զփառս վայելչութեանն զաւուրս հարիւր և ութսուն: Եւ յորժամ յաւուրս եղանէին (լմնալ) աւուրք հարսանեացն, դարձեալ միւսանգամ հրաման ետ կոչել զռամիկ (հասարակ) քաղաքացիս ի գաւիթ տանն արքունի զաւուրս վեց: Եւ էր (տունն) զարդարեալ բեհեզովք (ազնիւ կտաւ) և կերպասովք (մեսափեղէն) ի խոյակս (գլուխ. վերի ծայրը) ոսկիս և ի ծիրանիս որ կային ի վերայ սեռանցն պատուականաց. և ի վե-

բոյ խարսխաց (պատուանդան, յատակ) ոսկեղինաց կային գահոյք (նստարան) բազումք ոսկեղէնք և արծաթեղէնք, ընդելուզեալք (բանուածք) մարգարտովք և ակամբք պատուականօք, և գոյնազոյն նկարուք և պատուական հանդերձիւք. և ի վերայ վարդայատակ գաւթին կային թակոյկք (մեծ աման) և ըմպելիք, (գաւաթ) թագաւորին ոսկեղէնք և արծաթեղէնք որք էին յերից բիւրուց բանքարաց. և գինի յոյժ արքայի ըմպելի: Եւ Ասթինէ կին թագաւորին արար կոչունս կանանց յապարանս թագաւորին Արտաշիսի:

Եւ յաւուրն եօթներորդի յանձն իւր զուարճացեալ (զուարթանալ գինիէն) լինէր թագաւորն, և ասէ ցպաշտօնեայս իւր ցներքինիս՝ կոչել զկինն յարքունիս և ցուցանել ամենայն իշխանաց զգեղեցկութիւն նորա զի էր գեղեցիկ յոյժ. և ոչ լուաւ նմա Ասթինէ գալ առ նա ընդ ներքինիսն: Եւ տրտմեցաւ թագաւորն և բարկացաւ յոյժ և ասէ ցսիրելիս իւր զիրսն զոր արար Ասթինէն: Արդ, ասարէք, ասէ թագաւորն, այսուհետև օրէնս և իրաւունս: Եւ մատեան առաջի

նորա իշխանք Պարսից և Մարաց որ էին մերձաւորք և աթոռակիցք արքային. և պատմեցին թէ որպէս օրէն է առնել Ասթինեայ կնոջ թագաւորին, զի ոչ արար զհրամանս արքային զոր հրամայեաց նմա ի ձեռն ներքինեացն: Եւ ասէ Ումիքևս ցարքայ և ցիշխանսն. Ոչ եթէ արքայի միայն ընդդէմ դարձաւ Ասթինէ տիկնաց տիկին, այլ ամենայն իշխանաց և կուսակալաց արքայի: Սոյնպէս և ամենայն կանայք լինին անհնազանդ իշխանաց Պարսից և Մարաց. յորժամ լսեն զարհամարհանս կնոջ թագաւորիս, համարձակին իշխել անարգել զարս իւրեանց: Արդ, եթէ կամք իցեն և հաճոյ թուեսցի արքայի, մի մտցէ նա առ արքայ. և զտիկնութիւն նորա տացէ կնոջ որ լաւ ևս իցէ քան զնա: Եւ լուիցեն զօրէնս զոր հրամայես ի թագաւորութեանդ քում, և պատուեսցեն կանայք զարս իւրեանց պատուով մեծաւ յաղքատաց մինչև ի մեծամեծս: Եւ հաճոյ թուեցաւ բանն արքայի և ամենայն իշխանաց նորա, և արար թագաւորն որպէս խօսեցաւ Ումիքևս:

Եւ դադարեաց Թագաւորն ի բարկութենէ անտի, և ոչ յաւել յիշել ևս զԱսթինէ. և այսպէս մերժեալ ընկեցաւ (երեսէ ինկաւ) կինն: Եւ ասեն սպասաւորք Թագաւորին. Խնդրեսցեն արքայի աղջկունս կոյս, գեղեցիկս տեսանելով. և հրամայեսցէ արքայ գաւառապետս (վերակացու, գործակալ) կացուցանել ընդ ամենայն երկիր Թագաւորութեանդ քոյ, և ընտրեսցեն աղջկունս կոյս, և տացեն ածել ի Սուսէն քաղաք ի կուսանոց մի, և տացեն զնոսա ցներքինին արքունի որ պահապանն է կանանց, և հրամայեսցէ արքայ տալ նոցա իւղ և աւծառ (սապոն) և զամենայն դարմանս. և կին՝ որ հաճոյ լիցի արքայի, Թագաւորեսցէ նա փոխանակ Ասթինեայ: Եւ հաճոյ Թուեցան արքայի իրքն, և արար այնպէս:

Եւ էր այր մի Հրեայ ի Սիսիա քաղաքի, և անուն նորա Մուրթքէոս. և էր նորա մանուկ սնուցեալ, զդուստր Ամինադաբայ եղբօր հօրն իւրոյ, և անուն էր նորա Եսթեր. և յառնուլ զնա ի մօրէն և ի հօրէն իւրմէ՝ կամէր առնուլ իւր

կնութեան. և էր աղջիկն բարի յոյժ տեսանելով: Եւ յորժամ լու եղև հրաման Թագաւորին, ժողովեցան աղջկունք բազումք ի Սիսան քաղաք: Տարան և զԵսթեր առ Ովգա որ էր ներքինի ի վերայ կանանց. և հաճոյ եղև նմա աղջիկն, և եգիտ նա շնորհս առաջի նորա. և փութացաւ Ովգա տալ նմա զաւծառն և զմասն դարմանոյ նորա և զեւթն աղջկունսն զորս տուեալ էր նմա նաժիշտ յարքունեաստ. և դարմանէր զԵսթեր առաւելագոյն քան զայլ ընկերս նորա, և զնաժիշտս նորա նոյնպէս: Եւ յա ճախէր Մուրթքէ զամենայն օր շրջել առ տամբ կանանցն և տեսանել Թէ որպիսի անցք անցցեն ընդ Եսթեր: Եւ այսպէս կատարէին աւուրք դարմանոյ նոցա. ամիսս երիս օծանէին իւղովք անուշիւք (օծանելիք), և ամիսս վեց ի խունկս անուշունս և յաւծառս: Իբրև լնոյր (կատարուիլ) ժամանակն Եսթերայ մտանել առ արքայն, ոչինչ ապահաս առար (պարապը հանել) զոր միանգամ պատուիրեաց նմա ներքինին որ էր պահապան կանանցն. և եմուտ Եսթեր առ

արքայն յամսեանն արեգ, և հաճոյ Թուեցաւ Եսթեր արքայի յոյժ և եգիտ նա շնորհս քան զամենայն կանայսն, և եդ Թագաւորն ի վերայ գլխոյ նորա զթագ կանանցն: Եւ արար Թագաւորն կոչունս ամենայն սիրելեաց իւրոց և զօրացն իւրոց զաւուրս եւթն. և բարձրացոյց (փառաւոր ընել) նա զհարսանիսն Եսթերայ. և հրաման ետ Թողութիւն առնել ամենեցուն որ ընդ Թագաւորութեամբ նորա էին: Եւ Մուրթքէ դարմանէր և կազմէր զտուն Թագաւորին: Եւ երկու ներքինիք արքային, որ պահպանապետքն էին մարդկանն (կանանց), կամէին սպանանել զԱրտաշէս արքայ. և ազդ եղև (իմացաւ) Մուրթքէի բանս այս և յայտնեաց Եսթերայ. և Եսթեր եցոյց (իմացուց) արքայի զխորհուրդս մահուն, և արքայն կշտամբեաց (յանդիմանել) զերկոսին ներքինիսն և կախեաց զնոսա ըզփայտէ. և հրամայեաց Թագաւորն զիրսն գրել զգուշութեամբ, եթէ որպէս հաւատարիմ եղև առ նա Մուրթքէոս:

Յետ այսորիկ փառաւորեաց արքայ Արտաշէս զՀաման, և բարձրացոյց զնա

յառաջին աթոռ քան զամենայ սիրելիս իւր. և ամենեքին՝ որ միանգամ էին ի տան Թագաւորին, երկիր պագանէին նմա, զի այսպէս հրամայեաց Թագաւորն առնել: Այլ Մուրթքէ ոչ պագանէր նմա երկիր. և ամբաստան եղեն զՄուրթքէէ առաջի Համանայ: Յորժամ գիտաց Համան եթէ ոչ պագանէ նմա երկիր Մուրթքէ, բարկացաւ յոյժ. և քանզի Հրեայ էր Մուրթքէ, խորհուրդ արար Համան զի կորուսցէ զՀրեայսն որ ընդ Թագաւորութեամբն Արտաշեսի արքայի իցեն: Մուրթքէ իբրև գիտաց զիրսն, պատառեաց զպատմուճան իւր և զգեցաւ քուրձ (չուլ) և ցանեաց մոխիր զգլխով իւրով, և եկն մինչև ի դրունս տանն արքունի և եկաց. զի ոչ իսկ էր արժան նմա մտանել ի գաւիթն արքունի, զի զգեցեալ էր զքուրձ և զմոխիր: Եւ ընդ ամենայն գաւառս՝ ուր և կարդային զգիրն, աղաղակ և կոծումն և սուգ մեծ լինէր Հրէից, և արկանէին քուրձ և մոխիր զիւրեամբք: Եւ մտին ներքինիքն և նաժիշտք տիկնանց տիկնոջն, և պատմեցին Եսթերայ. և խռովեցաւ յոյժ,

ֆբրև լուաւ վասն հրամանին զոր ետ Թագաւորն: Եւ Եսթեր կոչեաց զԱռնաթև ներքինի իւր որ կայր հանապազ առաջի նորա. և առաքեաց ճշմարտել (ստուգել) ի Մուրթքէէ թէ արդարև այնպէս իցէ: Եւ Մուրթքէ եցոյց նմա զիրսն որպէս և լեալ էին, և զխոստումն զոր խոստացաւ Համան արքայի տալ գանձս բիւր քանքար զի կորուսցէ զՀրեայսն. և զպատճէնն (օրինակը) որ ի Սուսիս քաղաքի կարդացեալ էր առ ի կորուսանել զնոսա՝ ետ զայն ցներքինին զի ցուցցէ Եսթերայ. և ետ ասել ցնա պատուիրելով. Ցիշեսցես զաւուրսն տառապանաց քոց որպէս և սնարն ի ձեռս իմ. աղաչեսցես զՏէր Աստուած խնդրուածովք և խօսեսցիս Թագաւորիդ վասն մեր և փրկեսցես զմեզ ի մահուանէս: Եւ եմուտ Առնաթև և խօսեցաւ ընդ նմա զամենայն զբանս զայս: Եւ ասէ Եսթեր ցԱռնաթև. Գնա դու առ Մուրթքէ և ասա. Ազգ ամենայն Թագաւորութեանս գիտէ եթէ ամենայն այր կամ կին՝ որ մտանիցէ առ արքայ ի ներքին սենեակն առանց կոչելոյ նորա, չիք փրկութիւն, բայց մի

այն առ որ ձգէ (երկնցնէ) արքայ զոսկի գաւազանն՝ նա միայն ապրի. և ես ոչ եմ կոչեցեալ մտանել առ արքայ, զի են այս աւուրք երեսուն: Եւ պատմեաց Առնաթև Մուրթքէի զամենայն զբանսն Եսթերայ: Եւ ասէ Մուրթքէ ցԱռնաթև Երթ և ասա դու նմա, թէ՝ Եսթեր, մի ասեր դու յանձն քո եթէ ես միայն ապրիցիմ ի Թագաւորութեանս յամենայն Հրէից. այլուստ լինի օգնականութիւն և փրկութիւն Հրէից, այլ դու և տուն հօր քոյ կորնչիք:

Եւ Եսթեր տիկինն ապաստանեալ առ Տէր և հաստատեալ էր ի ճիգն (տագնապ) մեծ. և եհան յիւրմէ զհանդերձ փառաց Թագաւորութեան իւրոյ, և զգեցաւ նա քուրձ նեղութեան և սգոյ. և փոխանակ պէս պէս պատուական իւղոցն և խնկոց՝ մոխրով և աղբով ելից զգլուխ իւր. և զմարմինս իւր ի բազում աշխատութիւնս խոնարհեցոյց. և զամենայն տեղի զարդու զցնծութեան իւրոյ ելից ի գիսոյ հերաց իւրոց. և մատուցեալ բազում աղօթիւք խնդրուածոց հայցէր ի Տեառնէ Աստուծոյ Իսրայէլի և ասէր. Տէր իմ

և Թագաւոր մեր, դու միայն օգնեա ինձ միայնումս՝ որ ոչ ունիմ ինձ օգնական բաց ի քէն, զի վտանգ մեծ է առաջի իմ: Եւ յաւուրն երրորդի, իբրև դադարեաց յաղօթիցն իւրոց, մերկացաւ յիւրմէ զհանդերձ ազոյն, և զգեցաւ զծիրանիս իւր և եղև երևելի յոյժ: Եւ կարդաց նա առ տեսուչն իւր Աստուած և փրկիչն ամենայնի. և առ նա զերկուս նաժիշտսն իւր զսիրելիս. մին ունէր զատրոտ (Դղանց) զգեստուն նորա ի վեր, և զմիւսսն արկեալ էր զձեռն իւր: Եւ նա զամօթի հարեալ (ամչնալով) երկընչէր վասն գեղոյ մանկութեան իւրոյ. և երեսք նորա զուարթք առ ի սիրել, այլ սիրտ նորա նեղեալ էր յահէ անտի: Եւ եմուտ նա ընդ ամենայն դրունս ապարանիցն և եկաց նա առաջի Թագաւորին. և նա նստէր յաթոռ Թագաւորութեան իւրոյ, և զգեցեալ էր զպատմուճան փառաց իւրոց որ էր ընդելուզեալ ոսկւով և մարգարտով և ակամբք պատուականօք, և էր ահաւոր յոյժ. և ի վեր համբարձ զերեսս իւր զի էին կարմրացեալ փառօք, և նայեցաւ: Եւ գլորեցաւ

տիկինն և փոխեաց նա զգոյն իւր և եղև նա իբրև զԹալացեալ (մարած) և խոնարհեցաւ ի գլուխ նաժշտին որ երԹայր առաջի նորա: Եւ դարձոյց Աստուած զոգի Թագաւորին ի հեզութիւն. և փութացեալ վաղվաղակի էջ մեծաւ երկիւղիւ յաԹոռոյ անտի իւրմէ Թագաւորն, և առ զտիկինն ի վերայ զրկաց իւրոց և կանգնեաց զնա, և աղաչէր և միխԹարէր զնա բանիւք խաղաղութեան, և ասէր ցնա. Զի է քեզ, ԵսԹեր տիկին. ես եղբայր քո եմ. համարձակեաց. ոչ մեռանիս, զի ի միասին է իմ և քո հրաման. մատիր դու, և առ զգաւազանն զոսկի և դիր ի վերայ պարանոցի տիկնոջդ: Եւ համբուրեաց զնա և ասէ. Խօսեաց ընդ իս: Եւ ասէ ցնա ԵսԹեր. Տեսի զքեզ, Տէր, իբրև զհրեշտակ Աստուծոյ, և խռովեցաւ սիրտ իմ յահէ փառաց քոց. զի սքանչելի ես, Տէր իմ, և երեսք քո լի են շնորհօք: Եւ մինչդեռ խօսէր ընդ նմա, գլորեցաւ միւսանգամ յահէ Թագաւորին, և Թագաւորն խռովեալ էր յոյժ, և ամենայն ծառայք նորա. և ապաստաւորք Թագաւորին ապա-

չէին զտիկինն: Եւ ասէ Թագաւորն. Զինչ կամիս, Եսթեր, և զինչ են աղաչանք քո. արդարև ասեմ քեզ. եթէ խնդրեսցես մինչև ի կէս Թագաւորութեան իմոյ, տացց քեզ: Եւ ասէ Եսթեր. Օրս իմ այս նշանաւոր է. Եթէ կամք իցեն արքայի, եկեսցես դու և Համան ի կոչունսն իմ զոր առնելոց եմ այսօր: Եւ ասէ Թագաւորն. Կոչեցէք վաղվաղակի զՀաման, և կատարեսցուք զբանն Եսթերայ: Եկին երկոքեան նոքա ի կոչունսն զոր ասաց Եսթեր: Եւ մինչդեռ ըմպէին գինի, ասէ արքայն ցԵսթեր. Զինչ կամիս, տիկին Եսթեր. տացց քեզ զոր ինչ և խնդրեսցես: Եւ ասէ Եսթեր. Աղաչանք իմ և խնդրուածք իմ այս են. եթէ գտի ես շնորհս առաջի արքայի, եկեսցէ արքայ և Համան ի կոչունսն զոր առնեմ ձեզ վաղիւ միւսանգամ: Եւ ել Համան յերեսաց արքայի ուրախութեամբ մեծաւ և զուարթութեամբ, և եմուտ ի տուն իւր, և կոչեալ զսիրելիս իւր և զկին իւր՝ ասէ ցնոսա. Ոչ կոչեաց տիկինն Եսթեր ի կոչունս իւր ընդ արքայի զոք բաց յինէն. և դարձեալ առ վաղիւ եւս (վաղն ալ) հրաւիրեաց զիս. և արդ՝ այս ոչ Թուի ինձ հաճոյ, յորժամ տեսանեմ զՄուրթքէ, զայր հրեայ, ի տան Թագաւորին: Եւ ասեն ցնա կինն իւր և սիրելիք իւր. Հրաման տուր հատանել քեզ փայտ մի յիսուն կանգուն. և ընդ առաւօտն ասասցես արքայի, և կախեսցի Մուրթքէ զփայտէն. և դու մտանիցես ի կոչունսն հանդերձ արքայիւ, և ուրախ լինիցիս ընդ նմա: Եւ հաճոյ Թուեցաւ Համանայ բանն և պատրաստեցին զփայտն:

Եւ Տէր Աստուած մերժեաց (հեռացնել) զքուն յարքայէ զգիշերն զայն. և ասէ ցդպրապետն (ատենադպիր) իւր բերել առաջի իւր զգիր յիշատակացն և կարդալ: Եւ եգիտ նա զհրովարտակն զոր գրեալ էր վասն Մուրթքէի, եթէ որպէս պատմեաց վասն երկոցունց ներքինեաց նորա, յորժամ պահէին զապարանս Թագաւորին. և կամէին սպանանել զարքայ Արտաշէս: Եւ ասէ Թագաւորն. Եւ զինչ շնորհս և կամ փառս տուաք Մուրթքէի: Եւ ասեն սպասաւորքն արքայի. Զարարեր և ոչինչ նմա, յորժամ

հասեր ի վերայ (իմացար) խնամոյ հաւատարմութեան նորա առ քեզ: Եւ ընդ առաւօտան եկին ի գաւիթ Թագաւորին. և ասէ արքայ. Ով է ի գաւիթս: Եւ Համան եկն եմուտ հրաման առնուլ ի Թագաւորէն զի կախեսցէ զՄուրթքէ զփայտէն զոր պատրաստեաց: Եւ ասեն սպասաւորքն արքայի. Ահաւասիկ Համան արտաքոյ է: Եւ ասէ արքայ. Կոչեսցի ի ներքս: Եւ ասէ Թագաւորն ցՀաման. Զինչ արարիցս ես առն զոր ես կամիմ փառաւորել: Եւ խորհեցաւ Համան և ասէ ի միտս իւր. Զով կամի արքայ փառաւորել եթէ ոչ զիս: Եւ ասէ ցարքայ. Զայրն՝ զոր արքայ կամի փառաւորել, բերցեն, և զպատմուճանն զարքունի և զերիվարն յորում արքայ հեծանէր. և զգեցուսցեն զպատմուճանն առն այնմիկ զոր արքայն սիրէ, և հեծուսցեն զնա յերիվարն արքունի. և քարոզ կարդասցի ընդ հրապարակս քաղաքիս, և ասասցէ. Այսպէս եղիցի ամենայն առն զոր արքայ փառաւորէ: Եւ ասէ արքայ ցՀաման. Բարւոք խօսեցար. զայդ արասցես Մուրթքէի,

առն հրէի, խնամակալի (հոգաբարձու) տան իմում. և մի վրիպեսցի (պակսի) բան մի ի բանից քոց զոր խօսեցարդ: Եւ առ Համան զպատմուճանն և զերիվարն արքունի, և զգեցոյց զՄուրթքէ, և հեծոյց զնա յերիվարն, և անց նա ընդ փողոցս քաղաքին. և քարոզն աղաղակէր և ասէր. Այսպէս լիցի ամենայն մարդոյ զոր արքայ կամիցի փառաւորել: Եւ դարձաւ Մուրթքէ յապարանս արքունի, և Համան գնաց ի տուն իւր գլխարկեալ (գլուխը կախած), լի տրտմութեամբ. և պատմեաց Համան որ զինչ անց ընդ նա՝ կնոջ իւրում և սիրելեաց իւրոց:

Մինչդեռ նոքա խօսէին, եկին երկու ներքինիքն կոչել զՀաման ի ճաշ տիկնոջն: Եւ եմուտ Թագաւորն և Համան ի գիներբուս (կոչունք) տիկնոջն: Եւ ասէ արքայ ցԵսթեր յաւուրն երկրորդի, մինչդեռ ըմպէին գինի. Զի՞ է քեզ, Եսթեր տիկին, և զինչ է խնդրուածդ քո և կամ աղաչանքդ. եղիցի քեզ մինչև ի կէս Թագաւորութեանս իմոյ: Պատասխանի ետ Եսթեր և ասէ. Եթէ գտի ես

շնորհս առաջի քո, արքայ, տացի անձն մի խնդրոյս իմում, և բան աղաչանացս իմոց ընդունելի քեզ լիցի. վասն զի վաճառեցաք, ես և ժողովուրդ իմ, ի կորուստ, և ի ծառայութիւն և ի յափշտակութիւն՝ մեք և որդիք մեր. և ես ոչ հաւատացի: Արդ, ոչ է առն բանսարկուի (խաւ) արժան ի տան Թագաւորի լինել: Եւ ասէ արքայն. Ուր՞ է որ իշխեացն առնել զիրս զայս: Եւ ասէ Եսթեր. Այրս Թշնամի, Համան, որ չարս է՝ սա արար: Եւ Համան զահի հարեալ խռովեցաւ յոյժ յարքայէ և ի տիկնոջէն: Եւ յարեաւ Թագաւորն ի ճաշոյ անտի և եմուտ ի ծաղկոցն (պարտէզ) արքունի, և Համան կամէր հրաժարել ի տիկնոջէն, քանզի էր յերկիւղի մեծի: Եւ դարձաւ Թագաւորն ի ծաղկոցէ անտի և ետես զՀման զի կայր անկեալ առաջի գահոյից տիկնոջն, և աղաչէր զնա վասն փրկութեան իւրոյ: Եւ ասէ Թագաւորն. Արդ, յա՞յդ չափ հասեր, զի կամիս զկին իմ բռնադատել ի տան իմում: Եւ Համան իբրև լուաւ, զահի զամօթի հարեալ անկաւ ի վերայ երեսաց իւրոց:

Եւ ասէ մին ի ներքինեաց անտի ցարքայ. Ահա Համան և փայտ մի կազմեաց (պատրաստել) Մուրթքէի սիրելւոյ արքայի, և կանգնեաց զնա ի տան իւրում յիսուն կանգնեան: Եւ ասէ Թագաւորն. Խաչեսցի ի վերայ նորա: Եւ կախեցին զՀման զփայտէն զոր պատրաստեաց Մուրթքէի. և ապա Թագաւորն դադարեաց ի բարկութենէ իւրմէ:

Եւ յայնմ աւուր պարգևեաց Թագաւորն Եսթերայ զգանձն Համանայ քսուի. և զՄուրթքէ կոչեցեալ Թագաւորին, քանզի պատմեաց նմա Եսթեր եթէ Ազգական իմ է, առ զմատանին զոր եհան ի Համանայ, և ետ զնա Մուրթքէի. և կացոյց Եսթեր զՄուրթքէ ի վերայ ամենայն ընչից Համանայ: Եւ յաւել ևս խօսել ընդ արքայի, և անկաւ առաջի ոտից նորա, և աղաչէր զի մի մինչև ի վախճան լիցի պատուհասն ի վերայ Հրէից զոր հասոյց Համան: Եւ ձգեաց արքայ առ Եսթեր զգաւազանն ոսկի. և յարեաւ Եսթեր երթալ ի սենեակն արքայի: Եւ ասէ Եսթեր. Եթէ կամք իցեն քեզ, և գտեալ է իմ շնորհս առաջի քո, առա-

քեսցէ արքայ հրեշտակս և դարձուսցէ զհրովարտակսն որ գրեցանն ի Համանայ կորուսանել զՀրեայս որք են ի բում Թագաւորութեանդ. և զիարդ կարիցեմ ես տեսանել զչարիս ժողովրդեան իմոյ: Եւ ասէ Թագաւորն ցԵսթեր. Իսկ եթէ զամենայն ինչս և զստացուածս Համանայ ետու շնորհեցի քեզ, և զնա կախեցի զփայտէ, զի ձեռն արկ (ձեռմ զարկաւ) նա ի Հրեայս. զինչ այլ ևս ինչ խնդրես. գրեցէք արդ դուք հրամանաւ բանի իմոյ որպէս կամք իցեն ձեզ, և կնքեցի մատանեաւս իմով. զի որչափ և գրէք, իմ արքայի հրաման տուեալ՝ զի մի ոք գտցի դիմակաց (դէմ կեցող) այնց հրամանաց: Եւ կոչեցին զդպիրսն. և գրեցաւ, որպէս և ետ (Եսթեր) հրաման աշխարհահամար (հասարակաց) դպրացն, որք միանգամ իշխանքն և կուսակալք էին ի գաւառս գաւառս նախարարաց և իշխանաց նախարարացն, ի Հնդկաց մինչև յԵթիովպացիս, հարիւր քսան և եւթն կուսակալաց, ըստ գաւառաց գաւառաց յիւրաքանչիւր լեզուս նոցա, հրամանաւ

Թագաւորին. և կնքեցաւ մատանեաւ նորա: Եւ առաքեցին զհրովարտակսն ի ձեռն հրեշտակաց, որպէս զի կացցեն Հրեայք ողջք և անաւրատք, իւրեանց օրինօք յամենայն քաղաքի:

Եսթեր.

Ես Տուբիթ զճանապարհս ճշմարտութեան գնացի և յարդարութեան զամենայն աւուրս կենաց իմոց. և ողորմութիւնս բազումս արարի ես եղբարց իմոց և ազգին իմում որ ընդ իսն էին յերկրին Ասորեստանեայց ի Նինուէ: Եւ յորժամ էի ես ի գաւառի իմում յերկրին Իսրայէլի, և մինչդեռ մանուկն էի, ամենայն ազգն Նեփթաղիմայ հօրն իմոյ մերժեցան, ի բաց եղեն ի տաճարէն Երուսաղէմի զոր ընտրեալն էր յամենայն ազգաց իսրայէլի զոհել յամենայն տոհմս. և ես միայն երթայի բազում անգամ յԵրուսաղէմ ի տօնս տարեկանաց (տարեդարձ). զպտուղս և զտասանորդս զարդեանց (բերք) տայի որդւոցն Ղևեայ որք պաշտօնեայքն էին յԵրուսաղէմ. և զերկրորդ տասանորդսն ժողովէի և վաճառէի, և երթայի ծախէի զայն ամենայն յԵրուսաղէմ ըստ ամենայն

տարեկանի (տարի) և զերրորդն տայի որոց արժան էր, որպէս պատուիրեաց Դերուբա մայր հօրն իմոյ, զի որբ մնա ցեալ էի ես ի հօրէն իմմէ: Եւ յորժամ եղէ այր, առի ես ինձ կին ի զաւակէ հայրենեաց իմոյ և ծնայ ես ի նմանէ զզ Տուբի: Եւ յորժամ գերի վարեցայ ի Նինուէ, ամենայն եղբարք իմ և ազգ իմ ուտէին ի հացէ անտի հեթանոսաց, և ես պահեցի զանձն իմ զի մի կերայց: Եւ ետ ինձ Բարձրեալն շնորհս և գեղեցկութիւն առաջի Նեմեսարայ և էին նորա վաճառական: Երթայի ես ի Մարս. և եդի ես ի պահեստի (պահել) առ Գաբաեղայ յերկրին Մարաց արծաթոյ քանքարս տասն: Եւ յորժամ մեռաւ Նեմեսար և Թագաւորեաց Սենեքերիմ որդի նորա փոխանակ նորա, և զի էր խռով յամս նորա, ոչ եկաց ինձ երթալ յերկիրն Մարաց: Եւ յաւուրս Նեմեսարայ ողորմութիւնս բազումս առնէի ես եղբարց իմոց. զհաց իմ տայի քաղցելոց և զձորձ իմ մերկոց, և զոր տեսանէի ես յազգէն իմմէ թէ մեռեալ էր, և ընկենուին զնա արտաքոյ պարսպին, և ես թաղէի. և կամ թէ յորժամ

սպանանէր զոք Սենեքերիմ արքայ յորժամ եկն փախստական ի Հրէաստանէ, զողանայի և թաղէի զնոսա. վասն զի զբազումս կոտորեաց սրտմտութեամբ իւրով և յետոյ խնդիր առար (փնտռել) մարմնոց դիականցն և ոչ եգիտ: Եւ եմուտ ոմն ի Նինուէացւոց անտի, և իմացուցանէր Թագաւորին վասն իմ զդիականսն թաղելոյ, և թաքեայ, զի գիտացի ես եթէ խնդրեն սպանանել զիս. և զահի հարեալ փախստեայ գնացի. և յափշտակեցան ամենայն ինչք իմ և ոչ մնաց բնաւ ինչ բայց միայն կին իմ և Տուբի որդին իմ: Եւ ոչ անցին աւուրք յիսուն. մինչև սպանին զնա երկոքին որդիք իւր և փախեան նոքա ի լերինս Հայոց: Եւ Թագաւորեաց Ասորդան որդիք նորա ընդ նորա. և կարգեաց նա զԱքիաքարոս որդի եղբօր իմոյ ի վերայ ամենայն իշխանաց Թագաւորութեան իւրոյ և ի վերայ ամենայն տան իւրոյ. և աղաչեաց Աքիաքարոս զզ Թագաւորն վասն իմ, և եկին դարձուցանել զիս, և եկի ես ի Նինուէ: Եւ էր Աքիաքարոս տակառապետ. (մատռուակ մեծամեծաց) և ամենայն գիր համարոյ

ելի և մոի տան Թագաւորին ի ձեռին նորա: Եւ յորժամ եկի ես ի տուն իմ, ետուն ինձ զԱննա կին իմ և զՏուբի զորդին իմ:

Եւ ի տօնին մեծի արարին ինձ ճաշ մեծ. և բազմեցայ ուտել և ըմպել. և տեսի ես առաջի իմ խորտիկս բազմապատիկս և ասեմ ես ցորդին իմ. Երթ, ած դու յեղբարց մերոց յաղքատաց զորս և գտանես. և ես մնամ քեզ: Եւ եկն և ասէ. Հայր, մի ոմն յազգէս մերմէ որոյ Թափեալ են (ինկած են) ոտք նորա, և անկեալ պնդունք (ոտին թաթը) նորա, կայ ի հրապարակի անդ մեռեալ: Եւ իմ մինչչև էր ճաշակեալ, չոքայ առի զնա և բերի ի տուն իմ մինչև եմուտ արեգակն և ընդ երեկս լուացայ և ուտէի զհաց իմ տրտմութեամբ, և լացի յոյժ. և յորժամ եմուտ արեգակն, փորեցի և Թաղեցի զնա. և մերձաւորքն իմ այպն առնէին (մեղադրել) և ասէին. Արդ ոչ ևս երկնչի մեռանել վասն իրացս այսոցիկ. զի վասն որոյ հալածեցաւն՝ դարձեալ եկեալ Թաղէ զդիակունսն:

Եւ ի նմին գիշերի դարձայ իբրև Թաղեցին. և ննջեցի ես պղծեալ առ որմոյ գաւթին, և զերեսս իմ ոչ ծածկեցի: Եւ ոչ գիտէի Թէ ճնճղուկք նստէին յառաստաղս (չաթր) անդ. և աչօք բացօք ի վեր հայէի. և ծրտէին ձագքն ջերմաջերմ յաչս իմ. և երթեալ իմ առ բժիշկս, ոչինչ օգնէին ինձ. և Աքիաքարոս դարմանէր (կերակրել, նայել) զիս ոճկօք (թային) իւրովք: Եւ կինն իմ մանէր և գործէր ձեռօք իւրովք, և տայր տերանցն, և նոքա տային զվարձս նորա, և յաւելին և ետուն նմա ուլ (այծի ձագ) մեւս ևս: Եւ յորժամ եկն նա առ իս, սկսաւ կագել (կռուել խօսքով) ընդ իս. և ասեմ ես ցնա, Ուստի բերեր դու զուլդ զայդ. միթէ գողունի (գողցուած բան) իցէ. տուր անդր ցտեարս իւր, զի ոչ է ինձ օրէն ուտել զգողունի: Եւ ասէ կինն իմ. Պատիւ ետուն ինձ վասն վարձուց իմոց. և ես անհաւատացի (չհաւատացի) նմա. այլ ստիպէի տալ ցտեարս իւր և ես զամօթի հարկանէի ի նմանէ. և նա ասէ ցիս. Ուր՞ են արդ ողորմութիւնք քո և արդարութիւնք. զի ահաւասիկ յայտնի եղեն քեզ: Եւ ես տրտմեցայ և լացի. և

յարեայ կացի յաղօթս զայրագին սըրտիւ: Քանզի և ի նմին իսկ աւուր էր լուեալ Տուբիթայ զիրսն որ էր անցեալ (պատահած էր) ընդ Սարրա ընդ դուստրն Հռագուելայ որ էր յԵկբատանս ի Մարաց գաւառին. զի նախատէին զաղջիկն աղախնայք Հօր իւրոյ, քանզի էր տուեալ զնա արանց եւթն, և Ազմոդևս դևն չար սպանանէր զնոսա, մինչչև մերձեցեալ էին ի նա ըստ օրինի արանց և կանանց: Եւ նախատէին զնա աղախնայքն և ասէին. Ոչ՞ իմանաս զի հեղցուցանես զարս քո. զի ահա եւթն այր առեր և ոչ ի միում ոչ վայելեցեր, արդ զմեզ զի՞ տանջես ընդէր և ոչ դու ընդ նոսա կորեար: Զայս իբրև լուաւ աղջիկն, տրտմեցաւ յոյժ, և կամէր խեղդել զինքն. և ասէր. Մի եմես, միամօր (մէկ հատիկ) հօրն իմում, արդ՝ եթէ առնել զայս նախատինս առնեմ նմա, իջուցանեմ ես զծերութիւն նորա ցաւօք ի դժոխս: Եւ կայր նա յաղօթս ընդ պատուհանն որ էր ընդդէմ Երուսաղէմի: Եւ լսելի եղեն աղօթք երկոցունցն (Տուբիթայ և Սարրայի) առաջի մեծին Հռափայելայ, և առաքեցաւ նա բժշկել զերկոսեան. Տուբիթայ կեղևել (կեղեւ հանելու պէս հանել) զլուանն (աչքի փերst) յաչաց նորա, և զՍառայի զդստերն Հռագուելի հանել զԱզմոդ դևն, և տալ զնա կին Տուբիայ որդւոյ Տուբիթայ, վասն զի Տուբիայ անկ իսկ էր (կիյնար) ժառանգել զնա: Եւ ի նմին ժամանակի դարձաւ Տուբիթ և եմուտ ի տուն իւր, և Սառա էջ ի վերնատանէ իւրմէ:

Եւ յաւուր յայնմիկ յիշեաց զարծաթն զոր եդ առ Գաբայեղայ ի Հռագիւս քաղաքի յերկրին Մարաց. և ասէ նա ի միտս իւր. Ես խնդրեցի մահ անձին իմոյ ընդէր ոչ կոչեմ զՆուբիայ զորդին իմ և ցուցանեմ նմա զամենայն մինչչև մեռեալ իցեմ: Եւ կոչեաց զնա և ասէ ցնա. Որդեակ իմ, եթէ մեռանիցիմ ես, թաղեսջիր զիս. և մի անարգիցես և կամ անտես առնիցես (հոգ չտանել) զմայր քո, այլ պատուեսցես զսա զամենայն աւուրս կենաց քոց, և արասցես սմա զամենայն ինչ որ հաճոյ է սմա. և մի տրտմեցուցանիցես զսա. և յիշեսցես դու զի բազում ճգունս (նեղութիւն) կրեաց վասն քո յորժամ էիր դու յորովայնին և յորժամ մե-

ուանիցի, Թաղեսցես ընդ իս ի նմին շիրմի (գերեզման): Ցընչից քոց առնիցես ողորմութիւնս. և մի ազահիցէ (ցանկալ) ակն քո յորժամ առնիցես դու զողորմութիւնն. և մի դարձուցանիցես զերեսս քո յամենայն աղքատէ, և ի քէն ոչ դարձուսցէ Տէր Աստուած զերեսս իւր: Որչափ և իցէ քո՝ ըստ նմին բազմութեան արասցես զողորմութիւնն. եթէ սակաւ իցէ քո՝ ըստ սակաւին, և մի յապաղիցես (դանդաղիլ) առնել զողորմութիւնն, զի գանձս բարիս գանձեսցես քեզ յաւուրըն կենաց քոց. զի ողորմութիւնք փրկեն ի մահուանէ: Եւ առնուցուս դու կին ի զաւակէ հարց քոց և մի առնուցուս դու կին յազգէ օտարէ: Վարձք վարձկանի (վարձուոր) քո առ քեզ մի ազցին (առջի իրիկուընէ մինչեւ յաջորդ առտուն մնալ) այլ հատուսցես դու առժամայն (անմիջապէս). և զոր ատես դու՝ ումեք մի առնիցես: Գինի արբեցութեան (գինովցնող) մի ըմպիցես. մի երթայցես դու արբեալ (գինով) ի ճանապարհ. ի հացէ քումմէ տացես քաղցելոց և ի հանդերձէ քումմէ մերկոց: Խորհուրդ յամենայն մարդոյ

խնդրեսցես. և մի արհամարհեսցես զամենայն խորհուրդս պիտանեաց: Եւ արդ որդեակ իմ, յիշեսցես դու զամենայն պատուիրանս իմ զոր պատուիրեմ ես քեզ. մի ջնջեսցին նոքա ի սրտէ քումմէ: Եւ արդ, ես ցուցանեմ քեզ զտասն բանքար արծաթոյն զոր եդի ի պահ (պահել) առ Գաբայեղայ ի Հռագաւ յերկրին Մարաց: Եւ մի երկնչիցիս, որդեակ, զի աղքատացաք յոյժ. զոն քո բազում ինչք և ստացուածք, եթէ երկնչիցիս դու յԱստուծոյ, և ի բաց լինիցիս յամենայն մեղաց, և արասցես դու զհաճոյս առաջի նորա:

Պատասխանի ետ Տուբիա և ասէ ցնա. Հայր, արարից զամենայն ինչ զոր պատուիրեցեր ինձ. այլ ես զիարդ կարացից գտանել զարծաթն, զի ոչ գիտեմ զայրն: Եւ ետ նմա (Տուբիթ) զգիր (սէնեակ) առնն առ որում կայր արծաթն յաւանդի. և ասէ ցնա. Խնդրեա դու քեզ այր որ եկեսցէ ընդ քեզ. և ես տաց զվարձս նորա մինչև կենդանիս եմ, և երթիցես առցես զարծաթն: Եւ գնաց Տուբիա խնդրել ընդ իւր վարձուոր: Եւ եգիտ նա զՀռափա-

յէլ հրեշտակ. և նա ոչ գիտէր ով իսկ նա. և ասէ ցնա Տուբիա. Կարեա գալ դու ընդ իս ի Հռագաւ յերկիրն Մարաց. և կամ ես դու տեղեակ խելամուտ տեղեացն. Ասէ ցնա հրեշտակն. Եկից ես ընդ քեզ. և ճանապարհին տեղեակ եմ, և ճանաչեմ զԳաբայէլ զեղբայրն մեր: Եւ ասէ ցնա Տուբիա. Մնա դու վայրիկ մի (միչ մը ատեն) աստէն մինչև մտից հարցից ես զհայրն իմ: Եւ ասէ ցնա (հրեշտակն). Երթ և մի յամիցես (ուշանալ):

Եւ եմուտ պատմեաց հօրն. Ահաւասիկ գտի ընկեր որ գայ ընդ իս. և ասէ ցնա հայր իւր. Կոչեա դու զնա առ իս զի գիտացից թէ յորմէ ազգէ է նա. և կամ թէ հաւատարիմ է գալ ընդ քեզ: Եւ նա կոչեաց զնա ի ներքս, և ողջոյն ետուն միմեանց: Եւ ասէ ցնա Տոբիթ. Եղբայր, յորմէ՞ ի ցեղիցն մերոց ես դու. պատմեա ինձ: Եւ ասէ ցնա. Զազգատոհմ իմ խնդրես թէ վարձուոր որ երթայ ընդ որդւոյդ քում: Եւ ասէ ցնա Տոբիթ. Կամիմ եղբայր, գիտել զազգն քո և զանուն: Եւ ասէ. Անուն իմ է Ազարիա Անանիա: Եւ ասէ ցնա Տոբիթ. Ողջ եկիր, եղբայր, և

մի ցասնուր ինձ զի խնդրեցի զազգատոհմն քո գիտել. զի դու եղբայր իմ իսկ ես, ի բարի և յազնուական ազգէ: Այլ արդ, ասա դու ինձ. զինչ տայցեմ քեզ վարձս. դրամ մի յաւուր, և զառոնիկն (ուտելիք) որպէս որդւոյ իմում. և յաւելից ևս ի վարձսն քո, եթէ ողջութեամբ դառնայցէք այսրէն. և հաճոյ թուեցաւ նոցա առնել այսպէս: Եւ ասէ Տուբիթ. Պատրաստեա դու, որդեակ, ի ճանապարհն և յաջողեսցի ձեզ. և պատրաստեաց մանուկն զթոշակ (պաշար) ճանապարհին. և ասէ ցնա հայրն իւր. Գնա դու որդեակ, ընդ առնդ ընդ այդմիկ. այլ որ բնակեալն է յերկինս Աստուած՝ յաջողեսցէ զճանապարհ ձեր. և հրեշտակ նորա ուղեկից լիցի ձեզ: Եւ ելին գնացին երկոքեան ի միասին, և շուն պատանեկին ընդ նոսա: Եւ ասէ մայրն նորա լալով. Տուբիթ, զի՞ արձակեցեր զորդեակն ի մէնջ. ոչ դա է ցուպ ծերութեան մերոյ. մտանել և ելանել առաջի մեր. արծաթ արծաթոյ մի ժամանեսցէ. այլ եղիցի փոխանակ որդեկին մերոյ. քանզի որ պատրաստեալս է մեզ յԱստուծոյ՝ բաւական է մեզ: Եւ ասէ

ցնա Տուբիթ. Մի լիցի քեզ տրտմութիւն, քոյր, զի ողջութեամբ եկեսցէ, և աչք քո տեսցեն զնա. զի հրեշտակ նորա բարի առաջնորդեսցէ նմա և աջողեսցէ զճանապարհս նորա. և դարձցի այսրէն ողջութեամբ: Եւ ապա դադարեաց մայրն ի լալոյ անտի, և նոքա գնացին ի ճանապարհն:

Եւ եկին ի գետն Դկղաթ (Տիգրիս), և հանգեան առ ափամբն. և պատանեակն էջ լուանալ յեզր գետոյն, և վազեաց (ցատկեց) ձուկն մի ի գետոյ անտի, և կամէր կլանել զպատանեակն: Եւ հրեշտակն ասէ ցպատանեակն. Բռռն հար (բռնէ), կալ զձուկնդ: Եւ կալաւ պատանեակն զձուկնն և հան զնա ի ցամաք: Եւ ասէ ցնա հրեշտակն. Բաց դու զփոր ձկանդ. և հան զսիրտդ և զլեարդդ (սեւ ճիյէր) և զլեղիդ, և դիր զգուշութեամբ. և արար պատանեակն որպէս և ասաց ցնա հրեշտակն. և զձուկնն խորովեցին (կրակի վրայ եփել. ֆեպապ) և կերան. և ապա գնացին երկոքեան ի միասին, մինչև մօտ եղեն յԵկբատանս:

Եւ ասէ պատանեակն ցհրեշտակն

Ազարիա եղբայր, վասն ո՞յր բարձաք (առինք ուէկտեղ) զսիրտս և զլեարդս և զլեղիս ձկանս: Եւ ասէ ցնա. Սիրտդ և լեարդդ՝ եթէ զոք ունի դև կամ այս պիղծ, զայս արժան է ծխել (թիւրսիւ ընել) առաջի առնն կամ կնոջ, և այլ ոչ ևս դիւահարեսցէ. և լեղիս՝ եթէ ոք ունի զլուսն յաչս իւր, օծանի (խուիլ) սուաւ և բժշկի: Եւ մերձեցան նոքա ի Հռագաւ. ասէ հրեշտակն ցպատանեակն. Եղբայր, այսօր ունիմք մեք հանգչել առ Հռագուելայ, և նա ինքն ազգական է քո. և է նորա դուստր, և անուն է նորա Սառա. արդ խօսեցայց ես վասն նորա զի տացէ զնա քեզ կին. զի քեզ անկ է ժառանգութիւն աղջկանն. և դու միայն ես յազգէ նորա, և աղջիկն արդարև բարւոք է, զգաստ է և իմաստուն (խելքը գլուխը, ֆեամիլ). և արդ լուր ինձ և խօսեցայց ընդ հօր աղջկանն, և յորժամ դարձցուք մեք այսրէն ի Հռագուացւոց անտի, արասցուք քեզ ըզ հարսանիսն. քանզի գիտեմ ես զՀռագուէլ զի ոչ տացէ զնա առն օտարի. վասն զի և զժառանգութիւնն քեզ ար-

ժանէ առնուլ քան ամենայն մարդոյ: Յայնժամ ասէ պատանեակն ցհրեշտակն. Եղբայր, Ազարիա, իմ այսպէս լուեալ է վասն աղջկանն, Թէ տուեալ է զնա եւԹն առն, և ամենեքեան նոքա մեռեալ են յառաջագոյն (հարսին ու փեսին սենեակը) անդ. և ես մի եմ, միամօր հօրն իմում. երկնչիմ զուցէ մտանիցեմ և մեռանիցիմ որպէս և առաջինքն. զի ունի զաղջիկն դև և սիրէ զնա, և ոչ մերձենայ մեղանչել (վնասել) ումեք բայց միայն որոց մերձենանն առնուլ զնա կնուԹեան. արդ՝ եԹէ առնեմ զայս, երկնչիմ. զուցէ իջուցանիցեմ ես զհայրն իմ և զմայրն իմ ցաւօք ի վերայ իմ ի գերեզման իւրեանց. և որդի այլ ոչ գոյ որ Թաղէ զնոսա: Եւ ասէ ցնա հրեշտակն. Ոչ՝ յիշես դու զբանս պատուիրանաց հօր քոյ առնուլ քեզ կին յազգէ քումմէ. և արդ լուր դու ինձ, զի քեզ եղիցի նա ի կնուԹիւն, և վասն դիւին մի ինչ հոգար. զի ի գիշերիս յայսմիկ առցես դու զնա քեզ կնուԹեան: Եւ յորժամ մտանիցես յառաջագոյն անդր, առցես դու ածխանաման կրակ (քեօզ)

յորում խունկք ծխեալ են. և դիցես դու ի վերայ նորա ի սրտէ անտի և ի լերդէ ձկանն, և ծխեսցես. և հոտոտիցէ (հոտը առնել) դևն և փախիցէ, և ոչ ևս դարձցի անդրէն: Եւ յորժամ մտանիցէք դու և աղջիկն ի սենեակ անդր, յարիջիք դուք երկոքեան և գոչեսջիք առ ողորմածն Աստուած լալով մեծաւ. և կեցուսցէ զձեզ և ողորմեսցի ձեզ, զի քեզ էր պատրաստեալ ի սկզբանէ իւրմէ, և դու ապրեցուսցես զնա. և նա ընդ քեզ եկեսցէ ի տուն քո, և կարծեմ Թէ որդիք լինին քո ի նմանէ: Եւ իբրև լուաւ զայս Տուբիա, ասկաւ նմա գուրբ (սէր կապեց) ընդ աղջկանն, և ոգի նորա կցեցաւ ի սէր նորա:

Եւ եկին նոքա յԵկբատանս և մտին նոքա ի տուն Հռագուելայ, և եղ ընդ առաջ (դիմաւորել) նոցա Սառա և ողջոյն ետ նոցա և նոքա նմա. և տարաւ զնոսա ի տուն: Եւ Հռագուէլ ասէ ցՀեգնա ցկին իւր. Տեսանէս զի նման է պատանեակս ՏուբիԹայ եղբօրորդւոյն իմոյ: Եհարց ցնոսա Հռագուէլ և ասէ. Ուստի էք, եղբարք: Եւ ասեն ցնա.

Ցորդուոցն Նեփթաղիմայ եմք որք գերեալն են ի Նինուէ: Եւ ասէ ցնոսա. Ճանաչէք դուք զՏուբիթ զեղբայր մեր. և ասեն. Ճանաչեմք. և ասէ ցնոսա. Ողջ է. և նոքա ասեն. Ողջ է և կենդանի է. և ասէ Տուբիա. Հայր իմ է: Եւ յարուցեալ վաղվաղակի Հռագուէլ համբուրեաց զնա և ելաց յոյժ. և օրհնեաց զնա և ասէ ցնա. Բարւոյ և բարերարի առն որդի: Եւ իբրև լուաւ թէ Տուբիթայ կացին աչքն (կոյրնալ), ելաց. և տրտմեցաւ ինքն և Հեգնայ կին իւր և Սառա դուստր նոցա: Եւ ընկալան և հանգուցին զնոսա մեծաւ ուրախութեամբ, և զենին նոցա խոյ մի ի խաշանց, և յօրինեցին եղին առաջի նոցա խորտիկս բազումս: Եւ ասէ Տուբիա ցՀռափայէլ. Եղբայր Ազարիա, արդ խօսեաց դու վասն որոյ խօսէիրն դու ի ճանապարհի անդ, զի եղիցի այնպէս. և դարձոյց (Հռափայէլ) զբանսն անդրէն առ Հռագուէլ: Եւ ասէ Հռագուէլ ցՏուբիա. Կեր, արբ և ուրախ լեր զի քեզ անկ է առնուլ զմանուկն իմ. բայց ասեմ քեզ զճշմարիտն. եթու ես զմա

նուկդ իմ եւթն առն. և յորժամ կամէին մտանել առ դա, մեռանէին ի նմին գիշերի. այլ դու այժմ, որդեակ իմ, ուրախ լեր: Եւ ասէ Տուբիա. Ոչինչ ճաշակեմ ես աստ, մինչև հաստատէք առ իս զիրսդ: Եւ ասէ Հռագուէլ. Առ զնա քեզ ըստ օրինաց, զի դու եղբայր ես աղջկանն, և քեզ լիցի: Եւ կոչեաց նա զՍառա զդուստր իւր, և կալաւ նա զձեռանէ նորա և ետ զնա Տուբիայ կնութեան և ասէ. Ահաւասիկ ըստ օրինացն Մովսէսի առ դու զնա, և տար դու զնա առ հայր քո. և օրհնեաց զնոսա: Եւ կոչեաց նա զՀեգնա զկին իւր, և առեալ նա տայր աղջկանն զամենայն ինչս զտանն. և հաստատէր մուրհակօք (սեւեռեց) և կնքէր. և ապա սկսան ուտել և ըմպել և ուրախ լինել: Եւ կոչեաց Հռագուէլ զՀեգնա զկին իւր և ասէ ցնա. Քոյր, պատրաստեա դու զմեւս սենեակն և տար անդր զաղջիկն: Եւ արար որպէս և հրամայեաց նմա. և տարաւ զնա անդր և ելաց. և ջնջէր մաքրէր մայրն զարտասուս աղջկանն, և ասէր ցնա. Քաջալերեաց, դուստր. Տէր երկնից և

երկրի տացէ քեզ ուրախութիւն և ցընծութիւն փոխանակ տրտմութեանս այսորիկ. քաջալերեաց, դուստր, քաջալերեաց: Եւ իբրև կատարեցին նոքա ուտել զընթրիսն, տարան զՏուբիա առ աղջիկն: Եւ իբրև եմուտ, յիշեաց նա զբանսն Հռափայելի, և առ նա զաճիւնախառն զկրակն խնկոցն, և եդ ի վերայ նորա զսիրտ ձկանն և զլեարդն, և ծխեաց. և իբրև հոտոտեցաւ դևն ըզ հոտն զայն, փախեաւ ի վերին կողմն սահմանացն Եգիպտոսի. և կապեաց զնա հրեշտակն: Եւ ննջեցին երկոքին ի միասին ի գիշերին յայնմիկ: Եւ չոքաւ Հռագուէլ և փորեաց նմա գերեզման. քանզի երկնչէր եթէ գուցէ և նա մեռանիցի: Եւ եկն Հռագուէլ ի տուն իւր, և ասէ ցՀեզնա ցկին իւր. Ցղեա դու զմի ոք յաղախնաց այտի, և տեսցէ թէ կենդանի է. ապա թէ ոչ թաղեսցուք զնա և մի ոք գիտասցէ: Եւ եմուտ աղախինն և ետես զերկոսեան զի ննջէին. և էլ նա և պատմեաց նոցա եթէ կենդանի են: Եւ հրամայեաց Հռագուէլ ծառայից իւրոց խնուլ (գոցել ծակ մը եւայլն.)

զգերեզմանն. և արար նոցա հարսանիս աւուրս չորեքտասան: Եւ ասէ ցնա Հռագուէլ. Երդմնեցուցանեմ զքեզ. մի գնասցես դու աստի մինչև կատարեսցին աւուրք չորեքտասան հարսանեացս. և ապա առցես դու զկէս ընչից իմոց, և երթիցես դու և աղջիկդ խաղաղութեամբ առ հայր քո. և զայլն ամենայն առնուցուք, յորժամ մեռանիցիմք ես և կինս իմ:

Եւ կոչեաց Տուբի զՀռափայէլ և ասէ ցնա. Եղբայր Ազարիա, առ դու ընդ քեզ պատանի մի և երկուս ուղտս. և գնա դու ի Հռագիս Մարաց առ Գաբայէլ, և բեր դու ինձ զարծաթն անտի, և զնա առեալ ընդ քեզ ածցես ի հարսանիս. վասն զի երդուաւ Հռագուէլ եթէ Ոչ արձակեմ զքեզ: Արդ հայր իմ համարէ (թուէ) զաւուրսս. և եթէ յամեմք, մեծաւ վշտօք ի տրտմութեան լինի: Եւ գնաց Հռափայէլ և հանգեաւ առ Գաբայելայ, և ետ նմա զգիր մուրհակին, և եբեր նմա զպարկսն (տոպրակ) կնքօքն հանդերձ և ետ նոցա: Եւ կանխեալ (կանուխ ելլել) ընդ առաւօտսն

գնացին նոքա ի հարսանիս անդր. և հաճեցաւ Տուբիա ընդ կինն իւր:

Եւ Տուբիթ հայր նորա զամենայն աւուրս խորհէր ի սրտի իւրում: Ցորժամ կատարեցան աւուրք ժամանակելոյն (որոշուած օրերը) և ոչ եկին, ասէ. Արդեւք մեռաւ Գաբայէլ և ոչ ոք ետ նմա զարծաթն. և նա ոչ կամի գալ յամօթոյ: Եւ տրտում էր նա յոյժ. և ասէ ցնա կինն իւր. Կորեաւ մանուկն զի յամեաց այսչափ. և սկսաւ նա լալ և սգալ զնա և ասէ. Ոչ է ինձ պէտս, որդեակ իմ, և ոչինչ. այլ ընդէր բնաւ Ցողի զքեզ, լոյս աչաց իմոց: Եւ ասէ ցնա Տուբիթ. Լուռ լեր և մի հոգար (վէսվէսէ ընել), ողջ է. և նա ասէ ցնա. Դու լուռ լեր և մի խաբեր զիս. զի մանկիկն իմ կորեաւ: Եւ ելանէր զօրհանապազ (ամէն օր) և գայր ի ճանապարհն ընդ որ գնացինն. ի տուէ հաց ոչ ուտէր և ի գիշերի ոչ դադարէր ի սգալոյ զՏուբիա զորդին իւր: Իբրև կատարեցան աւուրք չորեքտասան հարսանեացն զոր երդուաւ Հռագուէլ լինել նոցա անդ. ասէ Տուբիա ցՀռագուէլ. Արձա-

կեա զիս. զի հայր իմ և մայր իմ ոչ ևս ակն ունին տեսանել զիս ի հոգոց (վէսվէսէ): Եւ ասէ ցնա աներն իւր. Կաց մնա դու աստ առ իս. և ես յղեցից մանկունս առ հայր քո, և նոքա պատմեսցեն նմա վասն քո: Եւ ասէ Տուբիա. Ոչ է այդպէս. այլ արձակեսցես զիս առ հայր իմ: Եւ յարեաւ Հռագուէլ և ետ նմա զՍառա զկին նորա և զկէս ընչից իւրոց և զծառայ և զաղախին և զանասուն և զարծաթ. և օրհնեաց զզ նոսա և արձակեաց և ասէ. Յաջողեսցէ ձեզ, որդեակ իմ, Տէր Աստուած երկնից մինչչև մեռեալ իցեմ ես: Եւ ասէ ցդուստրն իւր. Պատուեա դու, որդեակ իմ, զսկեսուրն քո և զսկեսրայրն, քանզի արդ նոքա են քո հայր և մայր. և ի քաց (հեռու) լեր դու ի բանից ատելութեանց. և համբուրեաց զնա: Եւ Հեգնա ասէ ցՏուբիա. Եղբայր սիրելի, ողջութեամբ տարցի զքեզ Տէր ի տուն քո. և տացէ տեսանել ինձ զաւակ ի Սառայէ դստերէս իմմէ, զի բերկրեցայց (շուտ ուրախ լլլալ) ես առաջի Տեառն: Եւ արդ յանձն առնեմ զսա քեզ, և յանձն լիցի.

մի տրտմեցուցանիցես զսա յետ այսորիկ: Եւ Տուբիա երթայր և օրհնէր զԱստուած, զի յաջողեաց նմա զճանապարհ նորա: Իբրև մերձեցան նոքա ի Նինուէ, ասէ Հռափայէլ ցՏուբիա. Արդ ոչ գիտես դու եղբայր, որպէս թողեր դու զհայր քո. եկ, յառաջ անցցուք մեք քան զկինդ քո և պատրաստեսցուք մեք զտունն. և առ դու ի ձեռն զլեղի ձկանն: Եւ գնացին նոքա, և եկն շունն զկնի նոցա: Եւ Աննա նստէր և սպասէր ըստ սովորութեանն ճանապարհի որդւոյն իւրոյ. և ետես նա զնա զի գայր և ասէ. Ահաւասիկ որդին քո գայ, և այրն՝ որ ընկերն չոքաւ, ընդ նմա: Եւ ասէ Հռափայէլ ցՏուբիա. Գիտեմ ես զի բանան աչք հօր քոյ. արդ՝ օծ (քսէ) շուրջ զաչսքն զլեղիդ. և նա կսկծեցուսցէ (ցաւցընել) և հանցէ զլուսն յաչաց նորա, և տեսանիցէ: Եւ ընթացաւ ընդ առաջ Աննա և անկաւ ի վերայ պարանոցի որդւոյն իւրոյ և ասէ ցնա. Տեսի ես զքեզ, որդեակ իմ. արդ այսուհետև անհոգ մեռանիմ. և լացին երկոքին: Եւ Տուբիթ ելանէր արտաքոյ առ դրունսն, խարխափէր (մութ տեղը կամ կոյրի պէս երթալ) գլորէր. (գլորիլ. իյնալ). որդին ընթացաւ առ նա, և յարուցանէր կանգնէր զհայրն իւր. և ցանէր նա զլեղին յաչս հօրն իւրոյ և ասէր. Ժուժեա, հայրիկ, և համբերեա: Եւ իբրև եկաց վայր մի (քիչ մը ատեն), վաղվաղակի կեղևեցաւն և անկան լուսունքն յաչաց նորա. և ետես նա զորդին իւր, և անկաւ նա զպարանոցաւ նորա և լայր: Եւ եմուտ որդի նորա ի ներքս խնդութեամբ, և պատմեաց նա հօրն իւրում զմեծամեծսն որ եղեն նմա ի Մարս: Եւ ել Տուբիթ ընդ առաջ նուոյն (հարս) իւրոյ խնդութեամբ, և օրհնէր զԱստուած առ դրունսն Նինուէի. և զարմանային ոյք տեսանէին զնա զի յընթանալն իւրում տեսանէր: Եւ Տուբիթ գոհանայր առաջի նոցա թէ որպէս ողորմեցաւ նոցա Աստուած. և իբրև մօտ եղև Տուբիթ առ հարսն իւր, օրհնեաց զնա և ասէ. Եկիր ողջութեամբ, դուստր. օրհնեալ է Աստուած որ ածդ զքեզ առ մեզ. և եղև ուրախութիւն ամենեցուն եղբարցն նորա որք էին ի

Ինուէ. և արարին անդ հարսանիս աւուրս եւթն:

Եւ կոչեաց Տուբիթ զՏուբիա զորդին իւր և ասէ ցնա. Տես արդ, որդեակ, զվարձս (տեսանել զվարձս, վարձքն տալ) առնդ որ եկն ընդ քեզ. և յաւելուլ յայն արժան է: Եւ ասէ ցնա. Հայր, ոչինչ պակասէ ինձ, եթէ տամ դմա զկէս ընչից իմոց զոր բերին. զի զիս ած առ քեզ ողջ, և զկինն իմ ողջացոյց, և զարծաթն իմ եբեր և զքեզ նոյնպէս ողջացոյց: Եւ ասէ ծերն. Ցիրաւի է տալ նմա: Եւ կոչեաց նա զհրեշտակն և ասէ ցնա. Առ դու զկէս այնր ամենայնի զոր բերերն: Եւ կոչեաց յայնժամ զնոսա զերկոսին և ասէ ցնոսա. Օրհնեցէք դուք զԱստուած և խոստովան եղերուք առաջի ամենայն կենդանեաց վասն այդր զոր արարդ ընդ ձեզ. զի բարի է օրհնել զԱստուած և բարձրացուցանել (փառաւորել, հռչակել) զանուն նորա, և զպատգամս գործոց Աստուծոյ պատուով մեծացուցանել: Զխորհուրդ Թագաւորի բարւոք է ծածկել, այլ զգործս Աստուծոյ յայտնել

փառօք: Արդ՝ ոչ ծածկեցից ես ի ձէնջ բան մի. զի ասացի իսկ եթէ զխորհուրդս արքայի ծածկել բարւոք է, այլ զգործս Աստուծոյ յայտնել փառօք: Թորժամ կացեր դու յաղօթս և նուն քո Սառա, ես մատուցի զյիշատակս աղօթից ձերոց առաջի Սրբոյն. և յորժամ Թաղէիր դու զմեռեալսն, ես ընդ քեզ էի. և յորժամ ոչն դանդաղեցար ի յառնելն և Թողուլ զճաշն քո, զի երթիցես և ամփոփեսցես զմեռեալն, ոչ մոռացայ զքեզ, այլ ընդ քեզ էի: Եւ առաքեաց զիս Աստուած բժշկել զքեզ և զնուն քո Սառա: Ես եմ Հռափայէլ յեւթանց անտի ի սրբոցն հրեշտակաց որք հանեն մատուցանեն զաղօթս սրբոցն, և մտանեն առաջի փառաց Սրբոյն: Եւ խռովեցան երկոքին և անկան ի վերայ երեսաց իւրեանց զի զահի հարան (զարմանքով վախնալ) յոյժ: Եւ ասէ ցնոսա. Մի երկնչիք, խաղաղութիւն լիցի ձեզ և զԱստուած օրհնեցէք. զի ոչ եթէ իմով ինչ շնորհօք եկի ես, այլ կամօք Աստուծոյ ձերոյ եկի: Զամենայն զաւուրսն զոր յայտնէի ես ձեզ, ոչ կերայ

և ոչ արբի, այլ իբրև տեսիլ տեսա-
նէիք: Եւ արդ՝ այժմ ելանեմ ես առ
այն որ առաքեացն զիս, և գրեցէք դուք
զայս ամենայն որ եղևս և կատարեցաւ:
Եւ գրեցաւ ի գիրսս, և այլ ոչ ևս տե-
սին զնա:

Տովբիր.

Նաբուգոդոնոսոր արքայ հանդէս առ-
նէր (այցելութիւն ընել, ճնել) զօրաց
իւրոց: Գոչեաց նա զամենայն մեծամեծս
իւր և զկուսակալս իւր և խորհէր ընդ
նոսա զի խնդրեսցէ զվրէժ յամենայն երկ-
րէ: Եւ նոցա պատասխանի տուեալ ա-
սեն. Սատակեսցի ամենայն մարդ դիմա-
կաց (դէմ կեցող) Թագաւորի: Եւ եղև
իբրև կատարեաց զխորհուրդս զայս, կո-
չեաց նա զՀողեփեռնէս զսպարապետ
ամենայն զօրաց իւրոց և ասէ ցնա. Ընտ-
րեսցես առցես դու ընդ քեզ որք յուսա-
ցեալ ի զօրութիւնս իւրեանց հետևակս
(ոտանաւոր զորք) հազարս հարիւր
բսան, և բազմութիւն յոյժ հեծելոց բիւրս
երկոտասան. և ելցես դու ընդ կողմն
արևմտից, քանզի ապահաս արարին (բա-
նի տեղ չդնել) զբանիւք հրամանաց իմոց:

Եւ պատուիրեսցես նոցա զի պատրաս-
տեսցեն զերկիրն և զջուրսն, զի ելանեմ
ես բարկութեամբ իմով ի վերայ նոցա,
և առնեմ կոխան ոտից (ոտին տակն
առնել) զօրութեամբ իմով. և վիրաւորք
նոցա լցցեն զձորս և զծործորս (փոսր
ձոր, տէրէ) իւրեանց, և գետք խաղացցեն
(հալել, վազել) յարենէ նոցա: Եւ դու
ելանիցես, պատիցես պաշարիցես ինձ
զսահմանս նոցա. և ոչ անիայեսցէ (խնա-
յել) ակն իմ ի վերայ այնոցիկ որ
ապահաս արարին զիս: Եւ դու մի զանց
առնիցես (չկասարել) և մի զմիով բանիւ
զոր ետու քեզ հրաման:

Եւ ել Հողեփեռն յերեսաց տեառն իւ-
րոյ. և կոչեաց առ ինքն զամենայն իշ-
խանս և զզօրագլուխս. և ընտրէր ի
նոցանէ, և Թուէր արս ի պատերազմ
բիւրս երկոտասան, և զհեծելազօրս
աղեղնաւորս երկոտասան հազար, և կար-
գէր կազմէր զնոսա ճակատեալս ի պա-
տերազմ: Եւ առ նա ուղտս և զրաստս
(բեռ կրող անասուն) բազումս յոյժ,
բառնալ զկահ և զկարասի. և խաշն (ոչ-
խարի տեսակ) և արջառս (եզան տեսակ)

և երամակս (սիւրիւ) այծից ի դարմանս (պաշար) իւրեանց. և տայր ամենեցուն Թոշակ ի ծանապարհ՝ ոսկի և արծաթ ի տանէ Թագաւորին բազում յոյժ: Եւ գնացին նոքա ի Նինուէ քաղաքէ գնաց երից աւուրց (երեք օրուան ճամբայ) ի դաշտն. և բանակեցան նոքա մերձ առ լերինն ի ձախակողմն վերին Կիլիկեայ. և առ զամենայն զօրս իւր՝ զհեծեալս և զհետևակս (ոտանաւոր զօրք). և զէնս և զկառս, և գնաց նա անտի ի լեռնակողմն: Քանդէր (կործանել) և աւար հարկանէր (կողոպտել) զամենայն որդիսն Հռամասեայ որ բնակեալ էին ընդ երեսս անապատին, ընդ հարաւակողմն: Եւ անց ընդ Եփրատ գետ և շրջեցաւ նա ընդ միջագետս և եհար վանեաց զամենայն քաղաքս բարձունս. և հարկանէր սատակէր զամենայն դիմադարձս իւր: Եւ եկն մինչև ի սահմանս Թաբեթայ ի հարաւակողմն որ է դէմ յանդիման (դիմացը) Արաբիայ. և արգիլեալ փակեաց զամենայն որդիսն Մադիամու, և հրձիգ արար զամենայն յարկս և զխրանս նորա, և աւերէր քանդէր զամենայն գոմս (ոչխարներու ախոռ խաշանց նոցա: Եւ էջ նա ի դաշտն Դամասկոսի յաւուրս հնձոց ցորենոյ, և հրձիգ արար զամենայն զանդս և զագարակս նոցա, և զհօտս և զանդեայս (արջառներու խումբ) նոցա արար յապականութիւն. զքաղաքս նոցա աւար հարկանէր և զմանկունս նոցա ջարդէր, և հարկանէր սատակէր զերիտասարդս նոցա ի բերան սրոյ: Եւ անկաւ սհ և երկիւղ ի վերայ բնակչաց ծովեզերեայց: Եւ առաքեցին առ նա խօսել ընդ նմա բանիւք խաղաղութեան և ասեն. Ահաւասիկ մեք ծառայք Նաբուգոդոնոսորայ եմք. ահա տուանք մեր և ամենայն դաշտք ցորենոյ և հօտք և անդեայք և ամենայն գոմք խաշանց մերոց. եկ, մուտ ի սոսա որպէս և բարի Թուի քեզ: Եւ առ նա ի քաղաքաց անտի արս ընտիրս պատերազմակիցս իւր. և ելին ընդ առաջ նորա քաղաքքն այնոքիկ երգովք և պսակօք և ծնծղայիւք (զիլ) և Թմբկօք (տավուլ): Եւ փոքեաց նա զսահմանս նոցա և ի բաց ընկեց զամենայն անտառս նոցա. և եկն նա դէմ յանդիման

սարոյն (լեռան ծայր) մեծի Հրէաստանի, և եղև անդ ամիս մի ժողովել ռոճիկս և դարմանս (կերակուր. պարէն) զօրաց իւրոց:

Իբրև զայն լուան որդիքն Իսրայելի և բնակիչքն Հրէաստանի, երկեան նոքա յոյժ յերեսաց նորա. զի ընդ այն ժամանակս էին դարձեալ ի գերութենէ անտի իւրեանց, և իբրև նորք էին ժողովեալք ի Հրէաստան, և զսեղանն Տեառն Աստուծոյ իւրեանց և զսպասսն (կարասի, գործիք) և զտունն ի պղծութենէ անտի դեռևս էին սրբեալ: Եւ առաքեցին նոքա յամենայն սահմանս Շամրնի (Սամարեայ). և հասին կալան զամենայն գլուխս լերանց բարձանց, և պարսպեցին զգիւղս որ էին ի նոսա. և կազմեցին և եղին անդ զդարմանս (պաշար) ի գործ պատերազմի, զի ընդ այն ժամանակս * էին հնձեալ զանդս նոցա: Եւ գրեաց Յովակիմ քահանայ մեծ և ծերակոյտ ժողովրդեանն Իսրայելի որ նստէին յԵրուսաղէմ՝ բնակչացն Բե-

* Տես Բեր. էջ. 101.

տիղուայ և ասեն. Ելէք, կալէք զանցս (անցնելու տեղ) լեռնային կողմանն. զի ընդ այն էին մուտք ի Հրէաստան. և էր դիւրին նոցա արգելուլ զնոսա, քանզի նեղ էին անցք կրճից (նեղ տեղ) զոր կարէին պահել արք երկու: Եւ արարին որդիքն Իսրայելի որպէս և հրամայեաց նոցա Յովակիմ քահանայ մեծ. և կարդացին առ Տէր և խոնարհեցուցին զանձինս իւրեանց՝ ինքեանք և կանայք իւրեանց, և ամենայն պանդուխտք և վարձկանք հանդերձ անասնօք իւրեանց պաշարեցան, և արծաթագին ծառայք նոցա արկին քուրձ զմիջովք իւրեանց. և ամենայն այր Իսրայելի կանամբք և մանկամբք իւրեանց ի գուճս իջեալ (ծնկաւն վրայ գալ) առաջի տաճարին Տեառն աղաչէին, և արկին մոխիր ըզ գլխովք իւրեանց, և Յոթափէին զգուրձն առաջի Տեառն, և զսրբութեան սեղանօքն քուրձ արկանէին:

Եւ պատմեցին Հողոփեռնեայ եթէ որդիքն Իսրայելի պատրաստեցան ի պատերազմ, և զանցս լեռնային կողմանցն փակեցին, և պարսպեցին զամենայն

գլուխս լերանց բարձանց, և Թագուցին
ի դաշտս որոգայթս: Եւ բարկացաւ յոյժ
Հողոփեռնէս բարկութեամբ մեծաւ, և
կոչեաց նա զամենայն իշխանս և զզօրա-
գլուխս և զամենայն նախարարս ծովե-
զերեայս, և ասէ ցնոսա. Պատմեցէք
դուք ինձ, ով են ժողովուրդս այս որ
նստին ի լեռնակողմանս. և զինչ քա-
ղաքք են յորս բնակեալ են սոքա և կամ
բազմութիւն զօրաց նոցա. և ի՞նչ է ոյժ
նոցա և կամ զօրութիւն. կամ ո՞վ է Թա-
գաւոր նոցա և առաջնորդ զօրաց նոցա,
և ընդէր Թիւրեցին (ծուել, դարձնել)
զմիտս իւրեանց զի մի եկեսցեն ընդ
առաջ (դիմաւորել) իմ: Եւ ասէ ցնա
Աքիովր առաջնորդ ամենայն որդւոցն
Ամոնայ. ժողովուրդս այս են յազգէ
Քաղդէացւոց. և ելին նոքա ի հայրենի
երկրէն իւրեանց, և երկիր պագին Աս-
տուծոյ երկնաւորի զոր ճշմարտեալ ծա-
նեան: Եթէ անգիտութիւն (յանցանք)
ինչ լինի ի ժողովրդեան նոցա և մե-
ղանչիցեն Աստուծոյ իւրեանց, գումա-
րեսցուք ի վերայ նոցա, և տացուք ի
վերայ նոցա պատերազմ: Ապա Թէ

չիցէ ինչ նոցա անիրաւութիւն առ Աս-
տուածն իւրեանց, զանց արասցուք առ
նոքօք. գուցէ պաշտպանիցէ նոցա Տէր
Աստուածն իւրեանց, և լինիցիմք յամօթ
նախատանաց ամենայն երկրի: Եւ եղև
իբրև դադարեաց Աքիովր ի խօսելոյ
զբանս զայս, տրտնջեաց ամենայն բա-
նակն որ շուրջ զխորանսն. և ասեն
իշխանքն ցՀողոփեռն զի պատուհասես-
ցէ զԱքիովր: Եւ ասէ Հողոփեռնէս ցԱքի-
ովր. Ո՞վ ես դու, Աքիովր, որ դիմա-
դարձ ես ժողովրդեանն այլազգեաց:
Եւ զի ասացեր Թէ մի տացուք պատե-
րազմ ընդ որդիսն Իսրայելի, ոչ ևս
յաւելցես տեսանել զերեսս իմ յօրէս
յայսմանէ մինչև խնդրեցից վրէժ յազ-
գէն որ յԵգիպտոսէն ելին. և ապա
անցցէ (մտնել, խոթուիլ) սուր զօրաց
իմոց ընդ կողս քո: Այլ այժմ դարձուս-
ցեն զքեզ ծառայք իմ ի լեռնակողմն,
և պահեսցեն զքեզ յանցս քաղաքի միոյ
որ յանցս ճանապարհացն է, և մի կո-
րնչիցիս մինչև սատակեսցիս նոքօք հան-
դերձ. և եթէ յուսաս եթէ ոչ մատնին,
յայդ ինչ մի վստահ լինիցիս: Եւ կալան

զնա ծառայք Հողոփեռնեայ և ածին զնա
արտաքոյ բանակին ի դաշտ անդր, և
գնացին նոքա ի դաշտէ անտի և եկին
ի լեռնակողմն աղբերցն ի ներքոյ Բե-
տիուղայ: Եւ իբրև տեսին զնոսա արք
քաղաքին ի վերայ գլխոյ լերինն, առին
նոքա զզէնս իւրեանց և յարձակեցան
ի վերայ նոցա ի գլուխ լերինն. և ամե-
նայն այր պարսաւոր (սապան նետող)
կալան զելս (ելելու տեղ) նոցա և խա-
ռածիգ արարին (խար նետել) ի վերայ
նոցա. և մտին նոքա ընդ լեռնոտամբն
և կապեցին զԱքիորը և ընկեցին զնա
առ լեռնոտինն: Եւ իջին որդիքն Իս-
րայելի ի քաղաքէ անտի, և հասին ի
վերայ նորա և լուծին զնա, և տարան
ի Բետիուղա: Եւ կոչեցեալ զԱքիորը ի
մէջ ամենայն ժողովրդեանն՝ հարցանէին
զնա եթէ վասն էր եղեն ընդ բեզ այդ
անցք (դիպուած). և նա պատմէր զբանս
խորհրդոյն Հողոփեռնեայ, և զոր ինչ
միանգամ մեծաբանեալ խօսեցաւ Հողո-
փեռնէս վասն տանն Իսրայելի: Եւ ի
դուռս իջեալ ամենայն ժողովուրդ երկ-
րին երկիր պագանէին Աստուծոյ: Եւ

մխիթարեցին զԱքիորը և գովեցին յոյժ
զնա. և առ զնա Ոզիա և տարաւ ի
տուն իւր, և արար նմա կոչունս:

Եւ ի վաղիւ անդր պատուիրեաց Հողո-
փեռն զօրաց իւրոց չուել գնալ ի Բետիու-
ղա, և ի վերայ ելից լեռնակողմանն,
և հատանել տալ պատերազմ ընդ որդիսն
Իսրայելի: Եւ կազմեցան պատրաստե-
ցան գնացին յաւուրն յայնմիկ ամենայն
այր պատերազմի և ամենայն հետևակա-
զօր պատերազմողացն հարիւր եւթանա-
սուն հազար, և հեծելազօրքն վառելք
երկոտասան հազար, Թող զայլ ռամիկն
ամենայն և զկահ և զկարասի բազում
սաստիկ յոյժ: Եւ բանակեցան նոքա ի
հովտին որ մերձ էր ի Բետիուղա ի վերայ
աղբերն. և հանին զառաջս (առջեւի
մասը) բանակացն ընդ հարաւակողմն, ի
յայնութիւն՝ մինչև ի Գովթայիմ, և յեր-
կայնութիւն՝ մինչև ի Կիսամ: Եւ որդիքն
Իսրայելի իբրև տեսին զայնչափ բազ-
մութիւնն, խռովեցան յոյժ. և ասեն այր
ցընկեր իւր. Այժմ լիզուն նոքա զամենայն
երեսս երկրի, և ոչ լերինք բարձունք և
ոչ ձորք և բլուրք կարասցեն կալ առա-

ջի (դիմանալ, դէմ դնել) զօրութեան դոցա: Եւ առին որդիքն Իսրայելի այր իւրաքանչիւր զզէն իւր. և լուցանէին ջահս ի վերայ աշտարակաց քաղաքին. և կային պահէին զամենայն գիշերն զայն: Եւ յաւուրն երկրորդի եհան Հոդոփեռնէս զամենայն զհեծելազօրն դէմ յանդիման որդւոցն Իսրայելի որ էին Բեթիուղա, և հաստ նստ ի վերայ ելից քաղաքին նոցա, և զաղբերս ջրոցն բննեաց և աճապարէր (փութալ) պաշարել զնոսա. և հարկանէր (կարձակէր, կը հանէր) ի վերայ նոցա բանակս բանակս յարանց պատերազմողաց և ինքն չուէր գնայր անդրեն (վերադառնալ) ի բանակն իւր: Եւ մատեան առ նա զօրագլուխք ծովեզերեայց և ասեն. Ժողովուրդ որդւոցս Իսրայելի ոչ են յուսացեալ ի նիզակս իւրեանց և ոչ ի զէնս, այլ ի վերայ լերանց բարձանց իւրեանց, և ոչ իսկ հնար է հասանել ի նոսա: Եւ արդ, Տէր, մի տար դու ընդ նոսա մարտ պատերազմի, այլ կալցին ծառայք քո զաղբերս ջրոցն որ ելանեն ի լեռնոտանէ անտի. քանզի անտի ըմպեն ամենայն բնակիչք քաղաքիդ. և

սատակին նոքա ի ծարաւոյ, և ապա ինքեանք իսկ մատնեսցեն զքաղաքն ի ձեռս քո. քանզի սպառեսցին նոքա ի սովոյ և ի ծարաւոյ, ինքեանք և կանայք իւրեանց և որդիք իւրեանց, մինչև եկեալ իցէ ի վերայ նոցա սուր. տապաստ անկցին (մեռած իյնալ) ի հրապարակս քաղաքին իւրեանց, փոխանակ զի ի կռիւ կացին (կռուի ելլել) և ոչ հնազանդեցան քեզ խաղաղութեամբ: Եւ հաճոյ Թուեցաւ խորհուրդն Հոդոփեռնեայ, և գնաց բանակ որդւոցն Ամոնայ և ընդ նոսա հազարք հինգ յորդւոցն Ասուր, և բանակեցան նոքա ի ձոր Հովտին, և հասին կալան նոքա զաղբերս ջուրցն զորդւոցն Իսրայելի: Եւ որդիքն Իսրայելի գոչեցին առ Տէր Աստուած իւրեանց, զի զահի հարեալ սպառեալ էին ոգիք նոցա: Եւ լքան պարտասեցան (շունչը հատնիլ. մարիլ) ամենայն բնակիչք Բեթիուղայ. և ամենայն ամանք նոցա սպառեալ էին ի ջրոյ, և գուբք (ջրհոր. խազնիկ ջուրի) սպառեալ Թափեալ (պարպուած) էին, և ոչ գոյր ըմպելի միում աւուր. և զոր ըմպէինն չափով և կշռով ըմպէին, և ի

վարանի և ի տարակուսի կային կանայք և մանկունք նոցա, և երիտասարդք նոցա լքեալ էին ի ծարաւոյ և գլորեալք (ինկած, կործանուած) կային ի հրապարակս քաղաքին և ընդ անցս դրանցն, և ոչ ուստեք էր նոցա միխիթարութիւն: Եւ ժողովեցան ամենայն ժողովուրդն ի վերայ Ոզիայ և ի վերայ իշխանաց քաղաքին, երիտասարդք և կանայք և մանկտին, և լացին նոքա ձայնիւ մեծաւ առաջի ամենայն ծերոց ժողովրդեանն, և էին ի վարանս և ի մեծ տարակուսանս:

Եւ լուաւ յաւուր յայնմիկ Ցուդիթ դուստրն Մերարեայ, և այր նորա Մանասէ յազգէ նորուն և ի հայրենեաց նորա, և մեռաւ այր նորա յաւուրս հնձոց գարեաց, զի կայր նա ի վերայ հնձողաց իւրոց ի դաշտին. զի յընթանալ (փչել) խորշակին (սաստ եղջի) և գայ հասանել ի վերայ գլխոյ նորա մեռաւ ի Բետիուղա ի քաղաքի իւրում և թաղեցաւ նա առ հարս իւր յուգարագին որ մերձ էր առ Դովթայիմ: Եւ նստէր Ցուդիթ այրի ի տան իւրում ամս երիս և ամիսս չորս. և արար նա տաղաւար (գուշիպկ) ի տանիս (տանը վրան.

տամ) տան իւրոյ, և ած ֆուրձ (ֆուրձ պատել) ի վերայ միջոյ իւրոյ, և էր արկեալ զիւրեւ (հագնիլ) հանդերձ այրութեան, և պահէր նա զամենայն աւուրս այրութեան իւրոյ, բայց միայն զօր շաբաթուն և զամսամտից (ամսու գլուխ) և զտարեկանացն և զուրախութեան տանն Իսրայելի: Եւ էր նա գեղեցիկ յոյժ տեսանելով. և եթող նմա Մանասէ այր նորա ոսկի և արծաթ, ծառայս և աղախնայս և անդս և ագարակս և անասուն. ինքն Ցուդիթ դարմանէր զայն. և ոչ ոք ասէր վասն նորա բան չարութեան, զի երկիւղած էր նա յոյժ ի տեառնէ: Եւ առաքեաց զնաժիշտն (կին սենեկապետ) իւր որ էր ի վերայ ամենայն ընչից իւրոց, և կոչեաց զՈզիա և զծերս ամենայն քաղաքին իւրոյ և ասէ ցնոսա. Լուարուք դուք ինձ. արարիցեն իրս մի որ պատմեսցի ազգաց մինչև յազգս, և որդւոց մինչև յորդիս: Դուք կացջիք առ դրան քաղաքիս զգիշերս զայս, և ելից ես նաժշտաւս իմով. և դուք մի քննէք զգործն իմ զոր գործելոց եմ, քանզի ոչ իսկ ասացից ձեզ մինչև կատարեսցի այն զոր ես առնեմ: Եւ

ասէ Ոգիա իշխանօքն հանդերձ ցնա. Գը-նա դու ի խաղաղութիւն : Եւ նոքա դարձան ի տաղաւարէ անտի Ցուդթայ յիւրաքանչիւր տեղիս :

Եւ անկաւ Ցուդիթ ի վերայ երեսաց իւրոց. և ի բաց առ (վերցուցել) զքուրձն զոր զգեցեալ էր, և ցանեաց մոխիր ի վերայ գլխոյ իւրոյ. և էին ի նմին ժամու խունկք մատուցեալք երեկոյինք (երեկոյեան) յԵրուսաղէմ ի տաճարին Տեառն, և կարդաց նա ձայնիւ մեծաւ առ Տէր Աստուած. և ասէ Ցուդիթ. Տէր Աստուած հօրն իմոյ Շմաւոնի որում ետուր զսուրն ի ձեռն խնդրել զվրէժն յայլազգեաց. որ զարշանս համարեցաւ զպղծութիւն քեռն իւրոյ : Եւ արդ, Տէր Աստուած իմ, լուր ձայնի աղաչանոյ քոյ, և նայեաց ի խնդրուածս այրեոյս, զի ամենայն ճանապարհք քո պատրաստ են և դատաստանք քո կանխագէտք են : Ահաւասիկ Ասորեստանեայն ելից զօրօք իւրովք զերկիրս. և բարձրացաւ հեծելովք երիվարացն, և հպարտացեալ մեծամտեաց (մեծ համարում ունենալ) ի բազուկ հետևակացն բազմութեան, և յուսացան ինիզակս

և ի սպառազինութիւնս և ի կորովս (երդութիւն) աղեղնաւորացն և պարսաւորաց և ոչ գիտացին թէ դու, Տէր, ես որ խորտակես զպատերազմունս : Տուր ձեռին (օգնէ) աղաչանոյ քում, և հար կործանեա զծառայն խաբանօք (հրապոյր) շրթանց իմոց, և խորտակեա զաստակութիւն նոցա ի ձեռն կնոջս. զի ոչ եթէ ի բազմութենէ է քո զօրութիւնդ, և ոչ կարդ (կարողութիւն) քո յայնս է որ հզօրքն են, այլ խոնարհաց ես Տէր Աստուած, և կարօտելոց ես օգնական, տկարաց ես ընդունելութիւն (ընդունող), կարօտելոց ես խնդրակ (խնդրող), անյուսից ես փրկիչ :

Եւ իբրև դադարեաց Ցուդիթ յաղօթից իւրոց, յոտն եկաց. և կոչեաց զնաժիշտն և էջ ի տուն իւր : Մերկացաւ յիւրմէ ըզքուրձն զոր զգեցեալն էր, և ի բաց եհան զհանդերձ այրութեան իւրոյ, և լուաց զմարմինս իւր ջրով, և օծաւ իւղու անուշիւ, և եհիւս զհեր գլխոյ իւրոյ, և կապեաց զապարաւշն (գլխու կապ) ի ծակատ իւր, և զգեցաւ զհանդերձ ուրախութեան իւրոյ զոր զգենոյր առ կենդանու-

Թեամբ առն իւրոյ Մանասէի. և ագանէր կօշիկս ոսկեզօծս, և արկանէր ապարանջանս ի ձեռս իւր, և արկանէր քայռս (կիrsանլրգ) յականց պատուականաց ընդելուզեալս մարգարտով ի պարանոց իւր և մատանիս ի մատունս իւր և գորշապահանգս (գլուխը խոթելու զարդ) ի գլուխ իւր. և յօրինէր կազմէր ամենայն զարդու իւրով, և պայծառանայր առաւել յոյժ առ ի խաբել և պատրել ի գեղ երեսաց իւրոց զամենեսին որ տեսանէին զնա: Եւ եւ ցաղախին իւր զմախաղն, և ելից զնա փոխնդով (փոխինդ. եղով մրկած ալիւր) և պաղատոկօք (չոr բուզ շարfով. տիզի ինձիr) և հացիւք սրբովք. և զհագաղակն (տամհանա. չօդրա) գինւոյ և զսրուակն (շիշհ) իւղոյ, և սրբէր կազմէր զամենայն ըստ օրինի իւրեանց և տայր ցաղախին իւր: Եւ ել Ցուդիթ ինքն և աղախին իւր ընդ նմա. և միտ դնէին նմա արք քաղաքին յերթալն նորա. մինչև եղև նա ընդ լերամբն, մինչև անց նա ընդ ծործոր (տեrհ ուսի ջուr կր վաղէ) հովտին, և ապա ոչ ևս տեսին զնա: Եւ երթային նոքա ընդ ծործոր հովտին

ուղիղ ընդ Ճանապարհն. և պատահեցին նոցա պահապանքն Ասորեստանեայց և կալան զնոսա և տարան զնա ի խորանն: Եւ Հողոփեռն նստէր ի գահոյսն իւր, և էր փակեալ զնա վարագուրօք շուրջանակի, զորս էր ընդելուզեալ (բանուած) ոսկւով և մարգարտով և ակամբք պատուականօք: Եւ իբրև լուաւ նա զՑուդիթայ, եկ նա արտաքս ի սրահ խորանին ջահիւք և լապտերօք արծաթեօք, բանզի գիշեր էր, և իբրև ետես զնա Հողոփեռնէս, զարմացաւ ընդ տեսիլ գեղոյ նորա: Եւ անկեալ ի խոնարհ երկիր պագանէր Ցուդիթ Հողոփեռնեայ. և կանգնեցին զնա ծառայք նորա: Եւ ասէ ցնա Հողոփեռնէս. Համարձակեաց, կին դու, և մի երկնչիր: Ժողովուրդ քո այդ որ բնակեալդ է ի լեռնակողմանդ, եթէ ոչ էր ապստամբեալ դոցա յինէն, ոչ իմ առեալ զնիզակ իմ ի վերայ դոցա. այլ դոքա ինքեանք արարին անձանց իւրեանց զայս: Արդ ասա դու ինձ, վասն որոյ ես դու փախուցեալ ի նոցանէն և եկեալ ես մեզ: Եւ ասէ ցնա Ցուդիթ. Ընկալ զբանս աղախնոյ քո, և խօսեսցի աղախին քո առաջի

քո. և ոչ ինչ ստութիւն պատմեմ տեառն իմում ի գիշերիս յայսմիկ: Զբանսն զոր խօսեցաւ Աքիմվր ի խորհրդեան սենեկի քում, լուաք և մեք. զի խնայեցին ի նա արք Բետիուղայ, և նա պատմեաց զամենայն որպէս և խօսեցաւ ընդ քեզ: Եւ արդ այժմ, Տէր, մի անցաներ զքանիւք նորա (անոր խօսքէն մի ելլեր) այլ հաստատեա զնոսա ի սրտի քում, քանզի ճշմարիտ են. զի ոչ ոք կարէ չարչարել զազգս մեր, և ոչ տուր թշնամւոյ վնասել մեզ. բայց յորժամ մեղանչիցեն Աստուծոյ իւրեանց: Արդ արարին նոքա մեղս մեծ անօրէնութեան. և ես աղախին քո յորժամ գիտացի զայս, փախեայ ի նոցանէ, զի աղախին քո աստուածապաշտ է, և աղաչեմ զցայգ և զցերեկ զՏէր Աստուած երկնից: Եւ արդ մնացից ես առ քեզ, տէր իմ, և ելցէ աղախին քո ի գիշերիս յայսմիկ ի ծորժոր հովտին. և կացից յաղօթս առ Տէր Աստուած իմ, և պատմէ ինձ յորժամ մեղանան (մեղանչել) նմա. և ես գամ և պատմեմ քեզ. և դու ելցես ամենայն զօրօք քովք հանդերձ, և ոչ իցէ

ի նոցանէ որ ապրիցէ ի քէն: Եւ տարայց զքեզ ընդ մէջ Հրէաստանի, մինչև տարայց զքեզ յԵրուսաղէմ, և արկցես զաթոռ քո ի միջի նորա, և ժողովեսցես զնոսա որպէս զհօտ որոց ոչ իցէ հովիւ. և ոչ հաջեսցէ շուն մի լեզուաւ իւրով ընդդէմ քո: Հաճոյ թուեցան բանք նորա առաջի Հոլոփեռնեայ և առաջի ամենայն ծառայից նորա, և զարմանային ընդ իմաստութիւն նորա, և ասեն. Ոչ գտանի կին գեղեցիկ համեմատ սմա ի ծագաց (ծագ, ծայր) երկրի մինչև ի ծագս իմաստութեամբ, բանիւք և գեղեցկութեամբ երեսաց իւրոց: Եւ ասէ ցնա Հոլոփեռնէս. Տեսանեմ զքեզ կայտառ (աշխոյժ. վառվռուն) տեսլեամբ. եթէ արասցէ որպէս խօսեցար Աստուածն քո, եղիցի նա և իմ աստուած. և դու ի տան Նաբուքոդոնոսորայ նստցիս և եղիցիս անուանի բան զամենայն երկիր:

Եւ հրամայեաց տանել զնա ի տուն գանձին. և հրամայեաց (կարգեց) նմա ռոճիկս (ուտելիք եւ ըմպելիք. թային) յիւրոց խորտկաց (կերակուր) և ի գինւոյ անտի զոր ինքն ըմպէր: Եւ ասէ

Ցուդիթ. Ոչ կերայց ես ի դոցանէ. այլ տացես ինձ հրաման ուտել ինձ անտի զոր բերին ինձ ի քաղաքէ անտի: Եւ ածին զնա ծառայքն Հողոփեռնեայ ի խորան անդր, և ննջեաց նա անդ մինչև ի մէջ գիշեր: Եւ եղև նա ի բանակի անդ աւուրս երիս. և ելանէր նա ի գիշերին ի ձորն Բետիուղայ և մկրտէր (լուացուիլ) ի բանակի անդ յաղբիւրս ջուրցն ըստ օրինի Հրէիցն:

Եւ եղև յաւուրն չորրորդի արար Հողոփեռնէս կոչունս ծառայից իւրոց միայն, և կոչեաց ի կոչունսն և ոչ զմի ոք յօտարաց անտի: Եւ ասէ ցԲագու ցներքինին իւր որ էր հազարապետ (տնտես) հաւատարիմ ի վերայ ամենայն ընչից նորա. Երթ, հաւանեցո (համոզէ) դու, ասէ, զկինն Հեբրայեցի որ է առ քեզ, ուտել և ըմպել ընդ մեզ, և զինչ է այդ այպն կատականաց (ամօթ, նախատինք) թողուլ մեզ զայսպիսի կին և ոչ բնաւ խօսել ընդ նմա. արդ եթէ ոչ առցուք զմարդդ (կին) և մերձեցուսցուք առ մեզ, գուցէ (չըլլայ որ) ծաղր ինչ առնիցէ զմեզ: Եւ ել Բագու յերեսաց

Հողոփեռնեայ, և եմուտ առ նա և ասէ ցնա. Մի դանդաղեսցի աղախինդ գեղեցիկ գալ առ տէր իմ և փառաւորել ի նմանէ, և ըմպել ընդ նմա զգինի ուրախութեան մեւք հանդերձ: Եւ ասէ ցնա Ցուդիթ. Եւ ո՞վ ոք եմ ես որ ընդդէմ դառնամ տեառն իմում: Եւ յարեաւ զարդարեցաւ զարդու իւրով ըստ զարդու կանանց. և մատեաւ նաժիշտ իւր և արկ նմա բազմական (նստարան, սէտիր) ի գետնի դէմ յանդիման Հողոփեռնեայ զակռումբն մաշկեա (մորթէ նստարան) զոր առ նա ի Բագուայ ի հանապազորդ ապաւ (շարունակ գործածելու) նմա. և բազմեցաւ Ցուդիթ ի վերայ նորա. և յիմարեցաւ Հողոփեռնէս ի գուն երեսաց նորա, և խռովեցաւ անձն նորա: Եւ խնդրէր խաբել զնա յօրէն յայնմանէ յորմէ ետես զնա: Եւ ուրախ եղև Հողոփեռնէս ի վերայ նորա, և արբ նա գինի սաստիկ յոյժ որչափ ոչ էր արբեալ նորա այնչափ յօրէ ծննդենէ իւրմէ: Եւ իբրև երեկոյ եղև, փութացոյց զծառայս իւր գնալ արտաքս. և Բագու փակեաց զդուրս խորանին, և

գնացին Նոքա յիւրաքանչիւր անկողինս իւրեանց արտաքոյ քան զխորանն, քանզի էին ամենեքեան խոնջք եւ վաստակք (յոգնած) ի բազում գիներբուաց (շատ գինի խմելէն) անտի. և մնացին Ցուդիթ և Հողոփեռնէս միայն ի խորանին: Եւ Հողոփեռնէս մտեալ ի գահոյս իւր ի քուն եղև, և էր թմբրեալ յոյժ ի գինւոյ անտի: Եւ ասէ Ցուդիթ ցաղախին իւր զի կացցէ արտաքոյ խորանին և սպասեսցէ նմա: Եւ մատեաւ Ցուդիթ առ քանուն (երկայն գաւազան, փարմագլուգ) գահոյիցն որ էր ընդ անարան Հողոփեռնեայ, և եհան զդաշոյն նորա յազդերէ նորա, և կալաւ զգլուխ նորա և ասէ. Զօրացո զիս, Աստուած Իսրայելի, յաւուրս յայսմիկ. և եհար ի պարանոցի նորա երկիցս զօրութեամբ իւրով, և հատեալ եբարձ զգլուխ նորա, և թաւալեցոյց (գլտորել) ընկեց զմարմին նորա ի գահոյից անտի: Եւ յետ ժամու միոջ ել և ետ նաժշտին իւրում զգլուխն Հողոփեռնեայ, և ընկեց ի մախաղ (չանթա) կերակրոյն իւրոյ: Եւ ելին երկոքին ի միասին ըստ սովորութեան

իւրեանց, և անցին Նոքա ըստ բանակն, և շրջեցան եկին ընդ ձորն. և ելին Նոքա ի լեառնն Բեթիուղայ, և եկին Նոքա ի դրունս քաղաքին: Եւ ասէ Ցուդիթ ի հեռաստանէ ցպահապանս դրանցն. Բացէք, բացէք արդ զդրունսդ. զի ընդ մեզ է Տէր Աստուած մեր:

Եւ իբրև լուան արք քաղաքին զձայն նորա, փութացան իջանել ի դրունս քաղաքին իւրեանց. և կարդացին (կանչել) Նոքա զծերս ժողովրդեանն, և ժողովեցան ի փոքուէ մինչև ցմեծամեծս, քանզի զարմացեալ էին Նոքա յոյժ ընդ գնալն նորա: Եւ բացին զդուռն քաղաքին և առին զնոսա ի ներքս, և լուցին զլապտերս իւրեանց և կացին շուրջ զնոքօք: Եւ ասէ Ցուդիթ բարձրաձայն բարբառով. Որդիք Իսրայելի, օրհնեցէք զԱստուած որ ոչ մերժեաց զողորմութիւն իւր ի տանէս Իսրայելի, այլ եհար վանեաց զթշնամիս մեր ի ձեռն իմ ի գիշերիս յայսմիկ: Եւ եհան զգլուխն ի մախաղէն և եցոյց նոցա, և ասէ ցնոսա. Ահաւասիկ գլուխն Հողոփեռնեայ զօրագլխի զօրացն Ասուրայ. և ահա վարագոյրքն պատուա-

կանք ընդ որովք անկեալ դնէր յարբեցութեան իւրում, և սատակեաց զնա Տէր Աստուած ի ձեռն կնոջս։ Եւ ասէ Յուդիթ ցնոսա. Լուարուք դուք ինձ, եղբարք, զոր ասեմս. Առէք զգլուխս զայս և կախեցէք զսա առաջի մահարձանաց (աշտարակ. մէջը մտնելով կռուելու տեղ) պարսպաց քաղաքիս։ Եւ եղիցի յորժամ մերկասցի առաւօտն և ծագեսցէ արեգակն յերկիր, վառեցարուք ամենայն արք զօրաւորք պատերազմի, և կացուցանիցէք ի վերայ ձեր զօրավարս և ելանիցէք արտաքոյ քաղաքիս, իբրև թէ իջանիցէք ի դաշտ անդր ի թև մի պարսկապանաց (բանակի պահապան) որոց Ասուր. և անդր մի իջանիցէք, այլ խռով հարկանիցէք (խռովեցնել) նոցա. և նոքա առցեն զզէնս իւրեանց և գնասցեն ի բուն. բանակն և յարուցանիցեն զզօրագլուխսն, և ժողովեալք դիմեսցեն ի խորանն Հոլոփեռնեայ և զնա ոչ գտանիցեն. և անկցի ի վերայ նոցա սոսկ և ի փախուստս դարձցին (փախչին) նոքա յերեսաց ձերոց. և դուք զկնի մտեալ (եսեւէն իյնալով) և ամենայն բնակիչք

սահմանաց Իսրայելի՝ տապաստ արկեալ վանեսջիք զնոսա յամենայն ճանապարհս նոցա։ Եւ արդ՝ մինչև տարաբեալ զայս՝ կոչեցէք առ իս զԱքիորվ զի տեսցէ զայս որ ընդ ոտն ենար (արհամարհել. նախատել) զտունս Իսրայելի. որ կոչեցին զնա և եւ ածել այսր ի մահ։ Եւ կարդացին զԱքիորվ ի տանէն Ոզիա. և իբրև եկն և եռեալ նա զգլուխն Հոլոփեռնեայ ի ձեռին առն միոջ ի ժողովրդեանն, անկաւ ի վերայ երեսաց իւրոց և թաւալեցաւ (գլորվիլ իյնալ). և իբրև անդէն զօրացաւ, ասեկեալ առ ոտս (ոտքը իյնալ) Յուդիթայ երկիր եպագ նմա։

Եւ յորժամ ծագեաց առաւօտն, կախեցին զգլուխն Հոլոփեռնեայ ի պարսպէ անտի. և վառեցաւ (գինուիլ) ամենայն այր զզէն իւր. և ելին նոքա առնել զայն ընդ անցս կողմանս ի վերայ լերինն։ Եւ որդիքն Ասուր իբրև տեսին զնոսա, ազդ արարին նոքա առ առաջնորդս իւրեանց, և եկին նոքա առ զօրագլուխս և առ իշխանս և առ հազարապետս. և դիմեցին նոքա ի խորանն Հոլոփեռնեայ և ասեն ցանենկապետ նոցա. Արդ՝ մուտ,

յարո զՏէրդ մեր, զի իշխեցին ծառայքն ի վերայ մեր ի պատերազմ, և սատակեսցուք զնոսա ի ապառ (մինչեւ վերջը, բոլորովին). Եւ եմուտ Բազու և բախեաց զդուրս սենեկին. քանզի կարծէր Թէ ի քուն իցէ հանդերձ Յուդիաւ: Իբրև ոչ ոք ետ նմա պատասխանի, քաջալերեալ եմուտ ի ներքս ի սենեակն. և ետես զի անկեալ կայր ի վերայ գետնոյն մերկ, և գլուխ իւր բարձեալ էր ի նմանէ: Եւ գոչեաց Բազու ձայնիւ մեծաւ և լալով և ողբմամբ յոյժ. և պատառեաց նա զպատմուճան իւր. և եմուտ նա ի սենեակն Յուդիայ և ոչ եգիտ զնա. և ել ընթացաւ նա առ զօրսն և ասէ. Արար ամօթ նախատանաց կին մի Հեբրայեցի տան արքային Նաբուզոդոնոսորայ, զի ահաւասիկ Հոլոփեռն յերկիր կործանեալ և գլուխ իւր չէ առ նմա: Եւ իբրև լուան զայս բանս իշխանք զօրացն Ասուրայ, պատառեցին ամենեքեան զպատմուճանս իւրեանց և երկեան յոյժ: Եւ իբրև լուան որք ի վրանսն էին, յիմարեցան վասն իրացն որ եղեն. և անկաւ ի վերայ նոցա ահ և դողումն յոյժ և ապա ոչ մնացին

ամենևին այր ընկերի իւրում. և հեղեալք զբաղեալք (դուրս տարածուիլ. ցրուիլ) առ հասարակ ի փախուստ դարձան ի դաշտակողմանն և ի լեռնակողմանն շուրջ զԲետուիղաւ. և դարձեալ անտի փախստեայք լինէին: Եւ ապա ամենայն այր պատերազմող որդւոցն Իսրայելի յարձակէին անկանէին ի վերայ նոցա, և կոտորէին հարկանէին. և ամենեքեան որք ի լեռնակողմանցն եկեալ էին, պատմէին. և որք ի Գաղաադն էին և որք ի Գալիլեա՝ հասանէին հարկանէին վանէին զնոսա, մինչև անցուցանէին զնոսա ընդ Դամասկոս և ընդ սահմանս նորա:

Այլ բնակիչքն Բետիուղայ ելանէին անկանէին ի վերայ բնադրացն (բանակին տեղը) Ասուրայ, աւար հարկանել. ժողովել զառ և զապուռ (կողոպուտ,) բանակացն, յորս լցան յղփացան (առատութեամբ ունենալ) մեծացան (հարստանալ) յոյժ: Եւ որդիքն Իսրայելի դարձան ի կոտորածէ անտի. և սկսանէին ժողովել զկապուտ (աւար) կողոպուտ զանկելոցն (պատերազմի մէջ մեռած). և զեղքն և ագարակք

ֆեռնակողմանցն և դաշտականացն եկեալ առնուին զմնացորդս յոյժ աւարացն: Եւ ժողովուրդն կրէին զաւար բանակին զաւուրս երեսուն. և ետուն Ցուդայ զխորանն Հողովիեռնեայ և զամենայն զարծաթ խորանին և զգանձսն, և զամենայն զապասան զոսկւոյ և արծաթոյ նորա: Եւ նորա առեալ կուտէր զայն ի սայլս իւր և ի վերայ գրաստուց իւրոց և բերէր ի ներքս ի քաղաքն: Եւ եկին առ նա ամենայն կանայք որդւոցն Իսրայելի տեսանել զնա. և օրհնեցին զնա և նուագէին նմա երգս պարուք. և առեալ նորա ոստս արմաւենեաց և ձիթենեաց ծաղկօք հանդերձ՝ տայր նոցա: Եւ այլ ևս կանայք մեծամեծք տեղեացն գային գունդագունդք գովել զնա. և ամենայն Իսրայէլ զկնի երթային նոցա վառեալք և կազմեալք, պասկս գունակս գունակս (պէս պէս) ի գլուխս իւրեանց. և օրհնութիւնք ամենեցուն ի բերանս իւրեանց փառաւորել զԱստուած:

Ցուդիթ.

Ի ժամանակի իրրև դիմեաց (յարձակիլ) Դեմետրիոս ի կողմանս Պարսից,

անթիւ անհամար զօրօք հանդերձ, հասեալ կայր ի տաճար անդր Անտիոքոս և որ ընդ նմա բարեկամքն էին՝ առնուլ զգանձսն ամենայն իրրև ի պատճառս վարձկանաց համարի: Առաջի արարին (առաջարկել, ներկայացնել) քահանայք տաճարին զամենայն. և նա յոժարեաց գալ մտանել սակաւուք ի ներքս: Իրրև եղեւ միջամուտ (ներս մտնել) սրահիցն, համարձակ կզդրուանսն առին (գոցել) զարտաքինս պարսպացն ընդ որ եմուտ Անտիոքոս. և բացին զպատուհանսն գաղտնիս որ ընդ առաստաղակալօքն (յարկ. չաթը) էին. և ընդ այնոսիկ սկսան հոսել վիրգս (fur) մեծամեծս, և անդէն զառաջնորդն գնդաւն հանդերձ սատակեցին: Իրրև զնոսա ի ներքս յօշեցին (կտոր կտոր ընել), հանին զկառափունսն (գլուխ. ֆելէ) և ընկեցին ի պարսպէն ի մէջ զօրացն:

Բ. Մակաբ.

Ի ժամանակի յորում վարեցան հարքն մեր ի կողմանս Պարսից, որ այնց ժամանակաց պաշտօնասէր (բարեպաշտ) քահանայքն էին՝ առին ի սեղանոյ անտի

զիուրն ի ծածուկ, և տարան Թաքուցին ի խորշս (անկիւն. ծածուկ տեղ) կողմանցն անջուր ջրհորոցն. անդ զգուշու Թեամբ զտեղին հեռախաղաղ ծածկէին (տեղը անյայտ ըրին) զի ամենայն տեղին անելուոյթ լիցի: Իբրև անցին ամք բազումք, առաքեաց Նէեմի զհրոյն (կրակը բերելու համար մարդ դրկեց), հրամանաւ Պարսից արքային, զԹոռունս քահանայապետիցն այնոցիկ որոց ծածկեալ Թաքուցեալ էր զհուրն, զի բերցեն: Նոքա իբրև եկին, պատմեցին և ասեն. Բայ՝ հուր ինչ մեք անդ ոչ գտաք. բայց գտաք մեք անդ ջուր դանդաղամած (քանձրացած, գաթը) Թանձրացեալ. ապա ետ նոցա հրաման (Նէեմի) երթալ մխոցաւ (էփչէ) առնուլ և բերել: Եւ իբրև եկն ժամ պատարագացն ողջակիզաց, հրաման ետ քահանայապետն Նէեմի ցանել զայն ի վերայ փայտիցն և պատարագացն. և իբրև զայս արարին, փոքր մի ժամանակ անց ի վերայ և արեգակն շող ամպռագոյն (ամպի նման ճոյլ) ի վերայ ծագեաց, բորբոքեցաւ բոց հրոյն ի վերայ փայտից սեղանոյն և մաշեաց

զողջակէզսն, զի սքանչացեալ էին ամենեքեան: Զայն առին (բարձր ձայն հանել) սկսան օրհնել քահանայքն, մինչդեռ ողջակէզքն կատարէին. բայց առաջնորդէր (երգին առաջնորդ ըլլալ) ՅովնաԹան իբրև ի բերանոյ Նէեմեայ, և այլքն զկնի կցէին (գլխաւոր երգչին հետեւիլ): Քահանայքն օրհնէին զօրհնուԹիւնս խրեանց, և ողջակէզքն տակաւ վառեալ բորբոքեալ մաշէին: Եւ իբրև վախճան (վերջ) եղև պատարագացն, զջուրն մնացեալ հրամայեաց Նէեմի զվիմօքն արկանել (թափել): Եւ իբրև այս եղև, առաւել բոցն ի վերայ բորբոքեցաւ. և իբրև բոցոյն ճշոյլ եղեն (բոցը մարելու պէս եղաւ), դարձեալ միւսանգամ վառեցաւ բորբոքեցաւ սեղանն և որինչ էր մնացեալ՝ և այն մաշեցաւ: Ապա իբրև եհաս Թագաւորն յիրացն հաստատութեան վերայ (եղելութիւնը իմացաւ) հրամայեաց շուրջ փակել զտեղին, և տաճար շինեցին:

Եւ գտանի այս գրեալ ի մատեանս առաջինս, եԹէ Երեմիա մարգարէ հրաման ետ առնուլ ի հրոյ անտի: Արդ՝ եկն

Եհաս Երեմիա մարգարէ, ի տեղի անդր (ուր գնուրն Թաքուցին), և անդ եգիտ այրս ամուրս անառաւախիտս (ծառերով պատած) *զվրան ժամուն և զտապանակն կտակարանաց և զսեղանն խնկոց անդ տարեալ դնէր ի ներքս, և զդրունսն ինքնին առաքանէր* (առջեւը դնել. զոգել): *Եւ անդէն մատեան որ ընդ նմայն իսկ էին՝ նշանակել* (նշան դնել) *զտեղին. և ամենեքին Ճանապարհն ի տեղի անդր ոչ կարացին գտանել: Իբրև զգաց* (իմացաւ) *Երեմիա, պատուհասել* (յանդիմանել) *սկսաւ զնոսա և ասէ. Իբր՝ ոչ գիտէք եթէ անծանօթ հրաման է զտեղիդ կացուցանել մինչև ժողովել հրամայեացէ Աստուած զժողովս ժողովրդեան իւրոյ, և ապա Տէր յայտնեսցէ զայս: Յուսամք ի Տէր եթէ հուպ ընդ հուպ* (միչ ատենին) *ժողովեսցէ ի սուրբ տեղին:*

Գ. Մակար.

Որինչ միանգամ ի ձեռն Յասոնեայ Կիւրենացւոյ ի հինգ գլուխս գպրութեան (գիրք) *ցուցեալ է, զայն ամենայն ջանասցուք ի մի գլուխ հրովարտակիս* (գրութիւն) *կարճ ի կարճոյ ցուցանել. զի հա-*

յեցաք մեք ի խուռն (շատութիւն) *մեծութիւն համարոյ բանիցդ, և հոգացաք մեք առնել ընթերցանելեացն* (կարդացողներուն) *զբօսանս: Եւ մեզ՝ որ զաշխատութիւնս զայս յանձն առաք վասն համառօտ բանիս, մի դիւրին ինչ ջան* (աշխատութիւն) *համարիջիք, կամ սակաւ բրտանց և տգիտութեանց* (հակում) *արժանի: Որպէս որ զի պատրաստիցի առնել ուրախութիւն կոչնոց ընկերաց. մեծանաց* (կերակուրներ առաս) *գործիցէ զընկերացն ուրախութիւն, և ոչ զիւր դիւրութիւն խորհիցի: Սակայն վասն բազմացն հաճութեան ջան յանձն առաք. զձշդելն և զձշմարտելն* (ստուգել) *զայն առաջնոյն* (մատենագրին) *Թողաք, զեղչելն և զբազկելն* (կրճատել) *և զկարճառօտ բանն ի համառօտ կացուցանել՝ զայն մեք ոչ պանդպղեցաք: Որպէս վասն հատարակաց շինութեան ապարանից բազմաց զգործ բաժանեալ, սկիզբն և կատարած* (վերջ) *շինուածոցն ի բուն ճարտարապետ անդր հայի* (կը վերաբերի)*, այլ ծեփելն և գունելն* (ներկել) *և արծնելն* (փայլեցնել, ճիլա) *և նկարելն՝ այն*

ի զարդարիչ անդր հայի: Սոյնպէս և մերս. հարցանելն և փորձելն և քննելն և զիեռ վարել (եռեւէն ըլլալ. փնտռել) ճշմարտութեան բանից և զխորին խորհուրդս խորագիտութեամբ (յառաջատեսութիւն) ի վեր բերել (մակաբերել՝) որ առաջնորդն եղև այնց դպրութեանց՝ ի նմանէ խնդրելի է (պէտք է խնդրել). այլ զհամառօտ կարճառօտ բանից, որպէս այժմիկ պատմելոյ յանձն առեալս է, յինէն պահանջելի է: Արդ աստի սկիզբն ասացուք պատմել. այսչափ ինչ զօդեսցուք (կցել. կապել) յառաջին անդր. բայց սակայն և այս անագորոյն մտաց է. զճառս մատենին յառաջագոյն երկայնել, և զմատեանն ի գլխովին (նոյն իսկ. բուն) համառօտ կարճառօտ պատմել:

Գ. Մակաբ.

Սիմոն ոմն անուն ընդ հակառակս եղեալ (հակառակորդ ըլլալ) քահանայապետին, իբրև յաղթել ինչ և առնել Ոնեայ ոչ կարաց, եկն եկաց առաջի Ապոլոնի Դիրատեանց որ յայնմ ժամանակի ատորին Ասորւոց և Տաճկաստանի ապա-

բապետ էր. և պատմեաց նմա եթէ բազում են այն գանձք որով լցեալ պահեն զտուն գանձուցն յԵրուսաղէմ, և ազգի ազգի գանձիցն զրիւ եւ զհամար ոչ մարթէ ոք ուսնել (համրել): Եւ պարտ այնպէս էր, ասէ, ընդ ձեռամբ արքայի ի սպասս զոհիցն պաշտել (գործածել) զայն: Յանձն առին Ապոլոնիոս և Թագաւորն. նա յառաջ կոչեաց զՀեղիոդորոս զհանդերձապետ (տնտես. գործակալ) իւր, հրաման ետ նմա զայսչափ գանձս հանել բերել ի քաղաքէ անտի: Վաղվաղակի չու առնէր, խաղայր գնայր Հեղիոդորոս. իբրև եկն ետես յԵրուսաղէմ, անդ սիրով քահանայապետն և քաղաքն ամենայն ընկալան զնա ամենայն առատութեամբ: Սկսաւ նա պատմել նոցա ո՛ կամ ընդէր և կամ որպէս ամբաստան եղեն առ արքայի, և հարցանէր թէ արդարև այնչափ գանձք լցեն զոր ասացինն: Եկաց յառաջ (առաջ եկաւ) քահանայապետն և ասէ. են, են արդարև աւանդք այրեաց և որբոց ի պահ եդեալ (պահուած պահուելու համար դրուած) այլ ոչ եթէ այնչափ որչափ ամբաստանող նամակագիրն անօրէն

Սիմոն խօսեցաւ: Ընդ ամենայն թէ քաջ (Էն շատ. ԲԼԼայ ԲԼԼայ...) իցեն բանքարք արծաթոյ չորեքհարիւր, և բանքարք ոսկւոյ՝ երկերիւր: Նա իբրև լուաւ զբանս քահանայապետին, զարքունի հրամանն ի մէջ առնոյր (մէջ բերել) և ասէր. ի ապաս և ի պէտս արքունի երթալ հրաման է գանձիդ այդմիկ. օր և ժամ յայտ առնէր մատանել համարել առնուլ ըստ հրամանին արքունի: Եւ անդ լինէր ոչ սակաւ ջան (նեղութիւն, տագնապ) և վտանգ խռովութեան բազաքին: Փահանայքն ինքնին Թաւալէին (իյնալ գետինը) առաջի սեղանոյն նովին արքութեան պատմութեանն. ապաչէին զայն որ վասն աւանդապան զգուշութեան զօրէնս հաստատեաց, զի զայն ոչ անարատ յիւրաքանչիւր աւանդատուս հասուցանել մարթասցեն: Անդ էր տեսանել զտեսիլ քահանայապետին, և զհալել ի միտս իւր. զի տեսիլն և զոյն երեսացն ցուցանէր զսրտին Թախծութիւն. զի իջեալ մածեալ՝ պատեալ պաշարէր զնա սի և երկիւղ և տակու�(դող) մարմնոյ: Դարձեալ յիւրաքանչիւր ապարանիցն (տուն)

դատարան մտանէին ի համաշխարհի (հասարակաց) խնդրուածս, զի մի յարհամարհանս պատիւ մեծի տաճարին գընասցէ. և կանայք բրձազգածք ընդ հրապարակս աշխարէին (ազբակ). արգելակաւեր (ան որ արգիլուածէ, չերեւնար) կուսանաց ի կուսասատանաց անտի ի զբուն և ի պարիսպս ընթանային, և կէսք ընդ պատուհանս արտաքս կարկառէին (երկնցնալ). և ամենեքին առ հասապակ ազօթից բարբառով զձեռս համբարձեալ յերկինս մատունս տատանէին: Եւ անդ էր ոգորմ (ողորմելի) տեսիլ տեսանել՝ առ հասապակ անկեալ մարդկանն զաղօթս Թաւալելով յերկինս մատուցանել:

Եւ Հեղիոդորոս զյայտնութեան վճիռն զտանէր. մինչդեռ նա ապատաւորաւն հանդերձ ընդ գանձի տունն շրջէր, որ ի վերայ ոգւոց և ամենայն իշխանութեանց զօրութիւն ի ձեռս իւր ունի, երևոյթ մի նշանի մեծ արար. զի ամենեքեան որ իշխեցին մտանել ընդ նմա՝ լուծան, լքան, ընդարմացան (փայտ կտրիլ, չկրնալ շարժիլ), ի պարտութիւնս վատթարութեան

մատնեցան յԱստուծոյ զօրութենէ անտի: Զի երևեցաւ նոցա յանկարծակի երիվար մի մեծաշուք (մեծափառ) հեծելով հանդերձ, երևելի զարդու ի զէն ոսկի վառելով. և այլ երկու արք երիտասարդք զօրեղք (դեռ ուժը վրան) ի զարդ գեղեցիկ զարդարեալք առաջի հեծելոյն՝ մատեան վաղվաղակի յաջմէ և յահեկէ, ի մեծամեծ հարուածս հարկանէին զՀեղիոդորոս. մինչև անկեալ յանզգայ թմբրեալ մերձ ի մահ՝ բառնային զնա: Որ այնչափ շքով և պատուով և սաստիւ և սպասաւորօք մտեալ ճեմէր ի տան գանձին՝ անմռունչ (անձայն) անբարբառ պակասեալ յամենայն յուսոյ փրկութեան ընկեցեալ յերկիր կիսամահ դնէր: Յայնժամ փութապէս ոմանք յեկելոց անտի բարեկիրք (լաւագոյն բնաւորութիւն ունեցող), աւագ ընկերք զօրաւարին, յոտս հասանէին Ոնեայ խնդրել ի բարձրելոյն զոնէ զշունչն (կեանքը) շնորհել նմա: Խորհուրդ կալաւ քահանայապետն. գուցէ կարծիս (կասկած) ինչ տացէ թագաւորին՝ իբրև դաւով ինչ ի նմանէ կամ ի Հրէից անտի զայրն վնասեալ. ի խընդ-

րուածս լինէր, պատարագս մատուցանէր վասն առնն փրկութեան: Այն ինչ բաւութիւնքն ի ձեռս քահանայապետին մատչէին, վաղվաղակի նոյն երիտասարդք գային իջանէին առաջի Հեղիոդորայ նովին հանդերձիւ զարդարեալ, և ասէին. Բազում շնարհս դու Ոնեայ քահանայապետի կալջիր. վասն նորա քեզ Տէր զոգիսդ շնորհեաց. և զայս իբրև ասացին, անդէն վերացան:

Հեղիոդորոս իբրև անձին զգաց (խելքը վրան եկաւ), յոտն կացեալ վաղվաղակի՝ ողջակէզս պատարագաց մատուցանէր, ուխտս և աղօթս մեծամեծս կատարէր Տեառն որ շնորհեաց նմա զոգիսն, և անդրէն ի նոյն չափ յառաջինն զօրացոյց: Զքահանայապետն զՈնեայ մեծապատիւ մեծապարգև մեծարէր. և ինքն չուտարար, խաղաց գնաց անդրէն առ թագաւորն: Թագաւորն իբրև սկսաւ հարցանել զՀեղիոդորոս թէ Որպէս զիարդ՝ յոր գործ երթեալ էիր զինչ վճարեցեր, սկսաւ տալ զրոյցս քանքատելով և ասէ. Ոհ՝, յերու սաղէմ երթեալ երթիցէ (թող երթայ) որ որ ձեր թշնամի և իրաց մեծաց ձերոց

վնասակար իցէ. և գաջիր զնա անտի այսր գանալից չարագան (չարաչար ծեծուած, վայն իվրան եկած). Թէ ապրել միայն կարասցէ: Վասն Հեղիոդորայ և գանձի տանն պաշարելոյ այսչափ բանք եղեն: Այլ Սիմոն որ գանձին և գաւառին նամակագիր էր՝ (գրով լուրտուող) առաւել ևս յաճախէր (շարունակէր) ամբաստան լինել վասն Ոնեայ, եթէ նա ինքնին գլխովին է որ զՀեղիոդորոսն շարժեաց (գեցինը զարնել) և լկեաց (չարչարել). և ամենայն չարեաց ինքն է առաջնորդ և գործելի. և զբարերար քաղաքին, զայցելու (տեսուչ. հոգացող) և զերախտաւոր զազգին, զնախանձայոյզ զվրէժխնդիր զօրինացն իբրև զվնասակար իրաց արքունի իշխէր ի ներքս արքունի կըշտամբել. և այնչափ վարէր զհեռ (չմտնելը) և զնախանձ Թշնամութեան, մինչև մահու պարտ (պարտաւոր, յանցաւոր) առնէր զաւրքն:

Գ. Վակար.

Իբրև Սելևկոս փոխեցաւ յաշխարհէ և առ զԹագաւորութիւնն Անտիոքոս որ անուանեալն կոչէր Եպիփանէս (երեւելի), Յա-

սոն անուն ոմն, եղբայր Ոնեայ, ջանացաւ հանել (առնուլ) զքահանայապետութիւնն յՈնեայ: Խոստացաւ տալ յարքունիս վասն քանքար ի վերայ երեք հարիւր քանքարոյ, և յայլոց մտից ութսուն քանքար: Եւ այլ ևս հարիւր մատուցից, ասէ, եթէ գործն աջողեսցի. զքաղաքն ի ձեզ նուաճեցից (հնազանդեցնել). Թեատրոնս և կրկէսս (ընդարձակ տեղ ուր խաղեր կը կատարուին) շինեցից: Իբրև յանձն առ Թագաւորն և եգիտ (ձեռք ձգել) նա զիշխանութիւնն զոր խնդրէր, հեռ ընդ հեռ (անմիջապէս) վաղվաղակի ի Յունաց հեթանոսութիւն անդր զընտանի օրէնսն դարձուցանէր. ի ներքս ընդ բերդաւն իսկ Թեատրոնս և երիտասարդանոցս շինէր. ժիրաժիր մանկունս ընտրանաւ յուսումն պրուեստականացն (երաժիշտ) տային: Եւ զի այնուհետև Թողեալ էր զպաշտօն պատարագաց սեղանոյն և զսպասս տաճարին, և արհամարհեալ էր զողջակէզս պատարագացն, յոժարագոյնս տային զանձինս իւրեանց ազգք քահանայիցն ի մարզիչս (կռուելու մէջ կրթող) և ի

բռնամարտիկս (բռամբ, նուամրուխով, կռուող). և յանօրէն բաշխոյս (բաշխոյմ, պարգեւ) կաբաւչայ. զհայրենի պատիւն առ ոչինչ համարէին, զանօրէն հեթանոսութեան փառս բան զօրինութեան փառս լաւ համարեալ: Վասն այսորիկ իսկ և վաղ հասանէին ի վերայ նոցա նեղութիւնք. զի որոց ընդ բարս և ընդ գնացս նախանձէին և կամէին ամենայնիւ նմանել նոցա, զնոսին իսկ պահիցս և Թշնամիս և տանջիչս անձամբ անձին ինքեանք իսկ պատրաստեցին. զի անօրինել որ յաստուածեղէն օրէնսն գիւրին մի համարիցի. այլ զայս ամենայն ժամանակդ որ առաջի կայ՝ յայտնապէս պատմեսցէ:

Յայնմ ժամանակի խաղաց գնաց Անտիոքոս ի քաղաքն Յոպպէացւոց, և անտի եկն յԵրուսաղէմ, անդ մեծապէս մեծարեցաւ ի Յասոնէ և ի քաղաքէ անտի ջահիւք և բոցաշանչ ապառաւք. ապա անտի խաղաց գնաց ի կողմանս Տանկասատանի ամենայն զօրօքն հանդերձ: Ապա յետ երից ամաց ժամանակի արձակեաց Յասոն զՄենեղաւոս զեղբայր

մելեկան (մոլի. դիւահար) Սիմոնի. ի ձեռն ետ նմա տանել առ արքայ զգանձն զարքունի: Նա իբրև յանդիման եղև արքային և մեծարեցաւ ի նմանէ, յանձն իւր սկսաւ կորզել (իրեն ձգել) զքահանայութիւնն. յաւել ևս ի սակ (գին, չափ) զանձին այլ ևս երեք հարիւր քանքար, և առեալ զայր զհրաման իշխանութեանն զարքունի: Եկն ենաս, քահանայապետութեան ինչ արժանի գործ ոչ գործեաց: Եւ Յասոն որ դաւով (նենգութիւն) զիւրոյ եղբօր զքահանայութիւնն առեալ էր, դարձեալ զնորա քահանայութիւնն նոյնպէս այլ տարաւ (առաւ). և նա փախստեայ յերկիրն Ամոնացւոց հալածական անկանէր: Իսկ Մենեղաւոս առնուլ առ ի ձեռս զիշխանութիւն քահանայութեանն, բայց զայն ինչ որ Թագաւորին խոստացեալ էր՝ ոչ (ամբողջ, ճշդիւ) ոչ կարէր առնել: Իբրև ստիպել տագնապել պահանջել սկսաւ հազարապետն, զի նմա էր յանձն հանել հարկ (հարկ առնուլ) զաշխարհին, երկոքին ի միասին ի դուռն կոչեցան: Իբրև ետես Մենեղաւոս թէ չէ զհարկն ի դուրս

հաստուցանելոց, կացոյց փոխանակ զԼիւսիմաքոս զեղբայր իւր. և ժամանակ իւր պատապոյ գտեալ (յարմար ժամանակ գտնելով) Մենեղաւոս, մեղմով (կամացուկ մը) սպաս ոսկի զողացաւ ի տաճարէ անտի և ետ Անդրոնիկեայ, որպէս յանդիմանութեամբ յայտ առնէր Ոնիա յամրէ (ամուր. բերդ) անտի յոր անկեալն (ապաւինեալ) էր. վասն այնորիկ Մենեղաւոս իբրև իւր արարեալ (իրեն կողմը շահիլ) զԱնդրոնիկոս՝ ապաչէր զնա և նոմաւ ջանայր զքառամբ արկանել (ձեռք ձգել) զՈնիա: Գնաց եկն առ Ոնիա, և հաւատացուցանէր զնա նենգութեամբ և դաշինս հաւատարիմս կռէր ընդ նմա ծանր ծանր երդմամբք. և հաւանեցոյց զնա ելանել յամրէ անտի. Թէպէտև էր ինքն ի միտս կասկածոտս (սուտ, կեղծ). և անդէն իբրև եհան, խողխողեաց. ամենևին ոչ զանգիտեաց յիրաւանցն արդարութենէ. վասն այսորիկ ոչ միայն Հրեայք՝ այլ և Հեթանոսք բարկացեալ էին վասն առնն տարապարտուց մահուանն: Այլ Թագաւորն իբրև դարձաւ ի կողմանցն

Կիլիկեայ, առաջի սենկանեին (գանգատիլ) քաղաքաց քաղաքաց Հրեայքն և Հեթանոսք սրտցաւութեամբ վասն առնն զուր մեռելոյ: Յայնր վերայ սրտի մտօք Անտիոքոս դժգմեցաւ (դժուարեցաւ). ի գութ դարձաւ և արտասուեաց յոյժ ի վերայ սրբութեան և բազում իմաստութեան առնն. և ջեռաւ (տաքցաւ) բորբոքեցաւ ի սրտմտութիւն բարկութեան իւրոյ. և անդէն հրամայեաց ըզ գլխով ածել (հանել, մերկացնել) զԺիրանիսն Անդրոնիկեայ. և զԱնդրոնիկոս մերկացեալ ի հանդերձէ իւրմէ, շուրջ ածեալ զքաղաքաւն, ի նմին տեղւոջ ուր զՈնիայն անօրինեցին՝ հրամայեաց զկատարիլ. հարկանել (գլուխը կտրել) զանօրէն մահապարտին:

Իբրև բազում գաղտագողօնք (գաղտնի գողութիւններ) լինէին գանձին ի ձեռն Լիւսիմաքեայ Մենեղեայ խորհրդով և համբաւն ի դուրս յանախեր (լուրը դուրս կ'ելլեր), ժողովեցան զօրքն ի վերայ Լիւսիմաքեայ: Իբրև սկսան զօրքն տագնապել և լի բարկութեամբ ի վերայ յարձակել, վառեցոյց Լիւսիմաքոս արա

իբրև երիս հազարս. սկսաւ ձեռն ի գործ արկանել և սկիզբն առնել գործոցն չարութեան արամբ միով որ խուժադուժ ևս էր տեսանելով բան զմտօքն Թանձրութեան: Իբրև տեսին զԼիւսիմաքեայ զդաւն և զնենգութիւն, խռնեցան վաղվաղակի. ձեռն ի գործ առնէին. ումն վէմս, ումն վիրգս, կէսքն զաւազն ըզ խիճն (աւազ խոշոր) հողախառն առհասարակ յարձակելոցն ի վերայ արկանէին. զոմանս վիրաւորս, զոմանս կառափնատս (գլուխը պատռած) արձակէին. զբազումս սպանանէին և զամենեսին առհասարակ ի փախուստ դարձուցանէին. զնոյն ինքն զսեղանազերծ (սեղանը կողոպտող. արբապիղծ) զտաճարակապուտ՝ զգանձի տաճարն արկանելիս փախուստեայ (գանձատունէն կը փախցնէին): Վասն այսր ամենայնի լինէին դատաստանք (արդար հատուցում) ընդ Մենեղաւեայ: Իբրև եկն էջ Թագաւորն ի Ծուր (Տիւրոս), յանդիման նորա իսկ էին դատաստանք. զի եկին արք երեք ի ծերակոյտ ժողովրդենէ անտի ցուցանել զիրաւունս (դաս վա-

ղել): Իբրև ի պարտութիւն մատնեցաւ Մենեղաւոս, խոստացաւ գանձ բազում տալ Թագաւորին զի հաճեսցի զմիտս նորա (սիրը առնի). վասն այսորիկ առեալ զԹագաւորն մեկուսի, իբրև զբօսանաց պատճառաւ, շրջեաց զմիտս նորա (միտը դարձուց) զամենայն չարեացառպարտ զՄենեղաւոս արձակել ի պարտեաց անտի, և զայն տառապեալս՝ որ Թէպէտ առաջի Խաղտեաց դատ վարէին, իրաւունս գտանէին և արձակեալք գտեալք անարատք երԹային, զնոսա մահապարտս առնէին: Վասն այսր ամենայնի Ծուրացիքն (Տիւրացի) չարատեացք առատապէս սրտցաւութեամբ հանդերձեցին զնոսա:

Բ. Պակար

Ժամանակօք երկրորդ զալատեանն Անտիոքու յերկիրն Եգիպտացւոց, դէպ լինէր ընդ ամենայն քաղաքն յաւուրս քառասուն երևել ընդ երկինս և ընդ երկիր արս հեծեալս տիգաւորս, ի զարդ ոսկի վառեալս, զարդարեալս, արշաւեալս (արշաւել, ձիով վազել, յարձակիլ), յարձակեալս, խառնեալս ընդ միմեանս.

անդ էր լսել Ծնդիւն (օդը շարժելէն յառաջ եկած ձայն) վահանաց, շկահիւն (բան մը օդին մէջ նետելէն յառաջ եկած ձայնը) գաղեղանց, շողիւն (փալիլիլը, ցոլացում) սուսերաց, շաչիւն նշանաց (բանի մը գետնի վրայ քալելէն կամ իրարու խառնելէն եկած ձայնը), շառաչիւն (կոտրելէ կամ պայթելէ յառաջ եկած ձայն) նետից, զփայլիւն զոսկեղէն վառելոց: Իբրև շռինդն (լատ. ccնջիւն) ինն յանկարծուստ զհամբաւի հարկանէր իբրև Թէ Անտիոքոս փոխեալ իցէ յաշխարհէ, առնոյր Ցասոն ոչինչ պակաս բան ըզ բան հազար վառեալ, և յարձակէր ի վերայ քաղաքին. և նոքա վասն յանկարծ դաւոյն ի պարապէ անտի մերժէին. և Մենեղաւոս արշաւեալ ի քաղաք անդր հասանէր՝ ուր Ցասոնն մոլեգին յանխնայ անկեալ գործէր մեծամեծ կոտորած քաղաքացեացն իւրոց: Այլ իշխանութեան ինչ ոչ կարաց հասանել. բայց ի կատարած (ի վերջոյ) զամօթ դաւոյն ժառանգէր (ունենալ, ստանալ). և ինքն քաղաքէ ի քաղաք փախստեայ լինէր. ատելի հալածական յամենեցունց իբրև ապըստամբ յօրինացն, պղծեալ զարշեցեալ իբրև զաւառի և քաղաքի և գնդի մատնիչ և դահիճ, յերկրին յԵգիպտացւոց հեռացեալ Թաքեաւ: Բազում և անթիւ յիւրմէ աշխարհէ օտարացոյց, և ինքն օտարացեալ ի մէջ օտարաց կորեաւ անուշ, անխնամ, անհանդերձ, և զերեզմանացն հայրենեաց չեղև արժանի:

Իբրև ազդ եղև արքային վասն իրացն եղելոց, ապստամբ համարեցաւ Թագաւորն զՀրէաստան յիւրմէ. վասն այսորիկ փութացաւ գնաց յերկրէն Եգիպտացւոց, եկն առ զքաղաքն զԵրուսաղէմ ի սուր սայր (սուրի բերան) սուսերի և ի տէգ նիզակի (նիզակին ծայրը). և հրաման ետ զօրացն՝ որ ի բուն անկանիցին յանխնայ կոտորեացին, և որ յապաստան ամրացին (ապաւինել), անդէն ի ներքս սատակեացին: Եւ անդ լինէր տղայոց և ծերոց առ հասարակ կոտորած, կանանց և մանկանց առ հասարակ սատակումն. ութ բիւր յայն երիս աւուրս միանգամայն կոտորեցին, և չորս բիւրս ի վաճառի (վանառանոցի մէջ) ոչինչ պակաս լաւութեամբ բան զապանեալն վաճառեցին:

Եւ իբրև այսու չարեօք ոչ յագեցաւ, իշխեաց ձեռնամուխ լինել (ձեռք զարնել) ի սուրբն ամենայն աշխարհաց. իշխեաց մտանել ի տաճար անդր. առաջնորդ ի ձեռն ունէր զՄենեղաւոս որ օրինացն և աշխարհին և գնդին մատնիչ և դահիճ եղեալ էր:

Այլ Անտիոքոսն ուՀ հարիւր քանքար ի վերայ ինն հարիւրոյն բարձեալ բերէր ի տաճարէ անտի. արագ արագ հասանէր ի քաղաքն Անտիոքացւոց. հպարտացեալ մտօք համարէր զծով ի ցամաք՝ և զցամաք ի ծով փոփոխել: Եւ անդ Ցողոյր զՓիլիպոս, յազգէ Փրանգ բայց ի բարուց խժդժագոյն (բարբարոսագոյն) ևս բան զայն որ եՀող գնա անդ, չարչարել զմնացորդս Երուսաղէմացւոց: Ապա առաքեաց նա զԱպողոնիոս երկուք բիւրուք զօրօք, զի զամենայն մարդ հասակաչափ (չափահաս) կոտորեացէ, և զկանայս և զմանկունս վաճառեացէ: Սա իբրև եկն յԵրուսաղէմ, նախ զառաջինն խաղաղութեամբ գաւով եմուտ. իբրև յաւուրն շաբաթուց եգիտ զՀրեայսն դատարկացեալս, հրաման ետ զօրացն իւրոց

վառել. և որ վիանգամ ի գնին (ի տեսն) տեսլեանն եկին՝ սուր ի վերայ եղեալ կոտորեաց. և ընդ քաղաքն ընդ ամենայն գինու հանդերձ այսր անդր վառեալք ընԲանոյին, առ հասարակ տարածեալ դիբաւալ կացուցանէին (ապանելով գեսինը պառկեցնել):

Յուդա Մակաբէ փախստեայ լինէր, յանապատ ելանէր. գազանակեաց կեանս ի լեռինս անցուցանէր. և այնպէս զընդսուն որ ընդ նմա էին՝ խոտաբուտ (խոտով կերակրող) կերակուր կերակրեալ անցուցանէին զժամանակն զի մի ի պըղծութիւնս մերձեացին:

Գ. Մակաբ.

Յետ բազում ժամանակաց առաքեաց Թագաւորն զԱԹենոբիոս ծերունի՝ ստիպել տագնապել զՀրեայսն անցանել ըզ հարցն օրինօք և յօրէնսն Աստուծոյ այլ ևս մի յամենալ (մնալ, տեւել). և պըղծել զտաճարն Երուսաղէմի և անուանել զնս յանուն հիւրասէր որմզդական դիցն վանատրի. և չարաչար դժուարին նեղութիւն չարեաց ի վերայ հասուցանէին: Եւ անդ էր ոչ զօրէնս շաբաթուց տեսանել,

և ոչ զտօնս տաբեկանաց զհայրենիս պահել, և ոչ բնաւ ամենևին Հրեայ անուն անուանել իշխել: Իբրև տօն հասանէր սպանդարամետական (Բաfոսի) պաշտամանն, տագնապէին զնոսա պսակեալս Թաւ (շաs մազ կամ տերեւ ունեցող) ոստոք Սպանդարամետին (Բաfոս) կաբաւել: Հրաման առաքեցին յամենայն մօտաքաղաքս պաշտօնաւորս (պաւշտող) լինել. և այն որ ոչ յանձն առնուցուն զոհել՝ անդէն սուր ի վերայ դնել. և անդ էր տեսանել շտապ (անապարանիf. շիոթութիւն տագնապ ի տառապանս չարչարելոցն: Նամակագիր եղեն զերկուց կանանց վասն զորդիս իւրեանց Թլփատելոյ. ածին վաղվաղակի, զմանկունսն զբստեանցն կախեցին զմարցն, և զնոսա ընդ հրապարական առ առակի (խայտառակութեան համար) շրջեցուցանէին. ապա ի պարապաց անտի ի վայր հոսեցին (նետել): Կէսքն երթեալ գաղտուկ յայրս մօտաւորս՝ զշաբաթուց աւուրսն անցուցանէին. իբրև ի վերայ հասանէին. կենդանեւոյն խանձատեալս (երել, մրկել) հրով սպանանէին վասն երկիւղածութեան

աւուրն փափկութեան և օրինացն սրբութեան:

Այլ ես ապաչեմ զամենեսեան որ զգիրս սրդ յակն արկանիցէք (աչքէ անցնել) մի ինչ վասն ազգին խղճիցէք (գէշ մտքի երթալ), և զվիշտս զայս ամենայն առ սատակման տոհմին (ազգ) համարիցիք, այլ ի խրատ ազգին մերոյ. զի ոչ եթէ որպէս առ այլ հեթանոսս երկայնամիտ լինի (համբերել, սպասել) Ատուած մինչև լցցեն զչափ մեղաց իւրեանց և եկեսցեն հասցեն ի դատաստանս անհնարինս. այլ մօս առ մօս (շուտով) խրատէ, և արագ արագ ածէ ի վերայ զողորմութիւն: Զայս բանս ընդ ձեզ վասն յիշատակի բանիցդ խօսեցաք. արդ անդրէն ի գլուխ պատմելոյն մատիցուք:

Եղիազարոս այր մեծ, ընդ առաջինսն ի գնդի անդ, լցեալ աւուրբք, ծերացեալ հասակաւ, գեղեցիկ երեսօք, ածեալ գայլ ի բերան ստիպէին ուտել խոզենի (խոզի միս): Նա ի մտի եղեալ, յամառեալ պնդեալ (հաստատուած) սրտիւ, յանձն առ ընդունել զմահ քաջ անուամբ քան զկեանս խղճիւ (խղճի խայթով) և

ընկերաց ստգտանելով (մեղադրել)։ Ընտրեաց ինքնակամ հասանել ի տանջանս. մեռնիցէ զիլիկր (համարձակիլ) Թքանել անարգել զպաշտօնս նոցա, որ։ պէս օրէն է համբերողաց քաջք ի քաց (հեռու, մէջդի) անարգել ինչ զոր ոչ է օրէն յանձինս մատուցանել։ Իսկ այն որ պատրաստեալ եկեալ էին՝ ինքեանք առ տկարութեան մտացն, վասն անձնասէր բարոյից զոհից ի պաշտօն, ծանօթ ևս էին առնն աւագութեան, առեալ մեկուսի. իբրեանց տկարութեան մտօքն գնաստատեալ միտսն ի հրապոյրս ցոփութեան (թուլութիւն, մեղկութիւն) դարձուցանել ջանային։ Ցանձն առ, ասեն, զհրաման Թագաւորիդ, և քեզ այլ միս մատուցուք զի շուծցես զկարծիսն (ուրիշին կարծիքը ջրել, վրայէն նեսել) և ի մահուանէդ ապրեցիս։ Նա գեղեցիկ խորհուրդս հաստատուն յանձին եղեալ զարժանի հասակին, ըստ ծերութեան մեծութեանն, ըստ երևելի վայելչութեանն, ըստ զուարթաժպիկ (աղէկ բուսած) ալեացն զուարճացելոց (բուսնիլ աղէկ), ըստ գեղեցիկ ի մանկութենէ

մինչև յաւագոյթ (աւագութիւն, մեծութիւն տարեօք) անեղեանն, մանաւանդ առաւել ըստ աստուածազարդ սրբութեան օրինագիր կրօնից, ամենայն կարգօք լի, արագ արագ առնէր զպատասխանին։ Ոչ արժան և ոչ պատշաճ է, ասէ, մերոյ չափոյ հասակի՝ կեղծաւորութիւն մտանել ընդ սրբութեան խոստովանութիւն. լցեն բազումք ի մանկտուոյ այսի որ ընդ ակամբ (ծուռ աչքով) հայիցին, կարծիս ի մոլ դնիցեն և ասիցեն եթէ Եղիազարոս ինամեան, անցեալ ծերութեամբ (ծերացած), հասեալ ի դուռն վախճանի (մահ), յայլազգութիւն դարձաւ, և նոքա վասն իմ կեղծաւորեալ գայթակղեսցին. և զայս խիղճ (խայթ) մտաց և կեղտ (աղտոտ) անուն ծերութեանս յաշխարհի Թողից։ Իսկ արդ՝ եթէ ամենեին նոյնչափ ժամանակս կենաց շնորհիցեն ինձ, և ի ձեռս մարդկան բնաւ ոչ մատնիցիմ, սակայն յաւիտենից ի մշտնջենաւոր ձեռաց անտի, ոչ կենդանեօք (կենդանութեան ատենը) և ոչ յետ կենդանութեան, ուրեք փախչել կարիցեմ։ Վասն այսո-

ріկ քաջութեամբ փոխեցայց յաշխարհէ սատի, զի արժանի իմոյ ծերութեան երևեցայց, և օրինակ բարեաց և առաքինութեան մանկտւոյ Ծողից, զի յօժարութեամբ և քաջութեամբ ի վերայ սրբութեան օրինացն մահու չափ (մինչեւ ի մահ) ջանալ մարթասցեն: Զայս ամենայն իբրև ասէր, ինքնակամ դիմագրաւ (դիմացը երթալով) կամակար (իր կամօքը) ի վիշտս մահուն և տանջանացն դիմէր: Նոքա որ յառաջագոյն շուրջ մատուցեալ մխիթարէին՝ զբանս մխիթարութեանն ի Ճշնամութիւն դարձուցանէին, և զիմաստութեան խորհուրդն իբրև մոլորութիւն համարէին. առաւել մատուցեալ ի տանջանս տագնապէին (ոտիպել): Նա իբրև մերձ եղև ի տանջանաց անտի ի վախճան, եբաց զբերան իւր հեծեծելով, սկսաւ խօսել ի Տէր որ ունի զգիտութիւն սրբութեան խորհրդոց և ասէ. Այս մի ինչ յայտ եղև, եթէ ի ձեռս իմ էր արձակել ի մահուս վշտաց (մահ կրելէն). զայս խստութեան տանջանս մարմնոյ ընկալեալ համբերեմ. այլ հոգւով քաջ քաղցրութեամբ վասն

ոմի սատիցն (սաաs, արգիլող պատուէր) Տեառն ընդունիմ: Եւ սա զայս օրինակ պատերազմեալ յաշխարհէ փոխեցաւ:

Ռ. Մակար.

Դէպ եղև եղբարս եւթն, մարքն հանդերձ կալեալս, ածել յատեան Թագաւորին. ի խոշտանգանս (տանջանք) զանի ստիպէին ուտել խոզենի: Մի ի նոցանէ նահատակեցաւ յառաջագոյն. սկսաւ խօսել և ասէ. Զի կայք, կամ զմեզ զինչ հարցանելոց էք. մեք պատրաստ եմք ի մեռանել քան անցանել բաs orենս (օրէնքը չպահել) հայրենիս: Բարկութեամբ սրտմտութեամբ լի եղև Թագաւորն, հրամայեաց ջեռուցանել տապակս (թավա) և կատաղս (մեծ թէնճէրէ) և անիւս, և պէս պէս գործիս տանջանաց պատրաստել: Զայն իբրև վաղվաղակի ջեռուցին պատրաստեցին, հրամայեաց զնահատակն յառաջ կացուցանել. և նախ զլեզուն կտրեցին և ըզ ղլխոյն մորթն զերեսօքն դարձուցին. ապա զոտս և զձեռս առաջի մօրն և եղբարցն ծայրամաղս առնէին (ծայրերը կտրել): Եւ ապա իբրև ի բանից և ի ձեռաց ան-

պիտան առնէր, հրամայէր կենդանւոյն (ողջ ողջ) ի տապական ջեռուցեալս իջուցանել. ապա իբրև ճենճերն (եղին ծուխը) ընդերկար այնպէս ի տապակէ անտի ելեալ դիզացեալ ծառանայր (ծառի պէս բարձրանալ), սկսան եղբարքն ընդ միմեանս մարքն հանդերձ միսիթարել և ասել. Քաջութեամբ մեռցուք, զանուն և զոգիս ժառանգեսցուք. հայի Տէր Աստուած ի ճգնութիւն պատերազմի՝ մերոյ և ի ծառայս իւր միսիթարի:

Իբրև առաջինն զօրինակ զայս (ասկերպով) յաշխարհէ փոխեցաւ, զերկրորդն ի տեղի տանջանացն մատուցանէին, և զգլխոյն մորթն վարսիւքն (գլխու մազ) հանդերձ զերեսօքն արկանէին. և անդէն հարցանէին. Կերիցես խոզենի միս. մինչև զամենայն մարմինդ անդամ անդամ լուծեալ է: Նա ետ պատասխանի իբրեանց բարբառովն և ասէ. Ոչ. վասն այսորիկ և սա ի նոյն տանջանսն տանջեալ վախճանէր: Իբրև յոգւոցն պարզեղ ապաստան եղեւ (հոգին տալու մոտ եղաւ), սկսաւ խօսել և ասէ զԹագաւորն. Այ՛ սէգ (զոռոզ), հպարտ և ամբարտա-

ւան, դու զմեզ յայսց կենաց աշխարհիս կարճել (ջնջել. վերցնել) համարիս. իսկ այն որ աշխարհաց Թագաւորն է, Թէպէտ և մեռանիմք մեք վասն օրինացն, ի կեանսն յաւիտենից ի միւսանգամ ծընընդեանն ժամանակի կենաց ի կեանս դարձուցանէ: Յետ նորա զերրորդն ածին, և զլեզուն խնդրէին. նա վաղվաղակի մատուցանէր, և զձեռսն քաջասիրտս (քաջասրտութեամբ) տարածանէր, զի և Թագաւորն ինքնին իսկ զարմացեալ լինէր վասն պատանւոյն ուշի մեացն (մտքին հաստատութիւնը) և սրտին քաջութեան. զի առ ոչինչ զցաւսն համարեցաւ: Եւ սա իբրև փոխէր, զչորրորդն ի տեղի մատուցեալ՝ ի նոյն տանջանս չարչարէին: Իբրև շունչն վախճանի (վերջի շունչը) հասանէր, խօսել սկսաւ այսպէս: Մեզ լաւ է զի փոխիմք աստի ի մարդկանէ. և յուսոյն ակն ունիմք միւսանգամ ծննդեանն յարութեան մեռելոց, քան քեզ ի կենդանիս, զի արգելեալ փակեալ է ի քէն յարութիւն մեռելոց: Յետ սորա զհինգերորդն մատուցին ի տանջանս չարչարանացն. իբրև զաչս ի

վեր եբարձ, հայեցաւ ընդ Թագաւորն, սկսաւ խօսել ընդ նմա և ասէ. Իշխանութիւն առեալ մարդկան՝ և դու մարդ մահկանացու՝ գործես զինչ և կամիս. բայց մի ի վաստութիւն ինչ և զմեր ազգս հաստատիցես (վաստացնել), կամ լքեալ Թողեալ ինչ ի ձեռաց Աստուծոյ համարիցիս: Կաց մնա դու, և տեսցես զզօրութիւն մեծամեծ սքանչելեացն, որպէս զի զքեզ և զազգատոհմն քո չարաչար հարուածովք չարչարիցէ:

Յետ այսորիկ ածեալ եղև վեցերորդն. և իբրև մերձ եղև ի մեռանել, ասէ. Զի մոլորեալ ես տարապարտուց. ընդ մեզ այս անցք անցանեն (աս բաները կը հանդիպին) վասն մեր մեղաց. զի մեղանչեմք առ Աստուած արժանի զարմանալոյ. բայց դու մի ակնունիցիս (յուսալ) ողջանդամ (ողջ մարմնով) բարեմիտ ապրել յաստուածամարտ (Աստուծոյ հետ պատերազմ) մատուցեալ: Եւս առաւել քարեաց յիշատակաց արժանի մայրն սքանչելի, որ զայնպիսի զեւեն որդի յիւրմէ կորուսեալ ի միում աւուր վասն յուսոյն Աստուծոյ՝ բաջալերեալ սրտա-

պնդեալ (քաջալերել) զմի մի ի նոցանէ. միխիթարէր իւրեանց բարբառովն. և ըզ սիրտն և զմիտսն զիգուԹեան առնապէս (էրիկմարդու պէս) վառեալ՝ քաջուԹեամբ յառաջ մատուցեալ ասէր. Զգիտեմ որպէս բնաւ դուք յարգանդիս երևեցարուք. և ոչ ես ինչ զոգիսդ կամ զկեանսդ ձեզ շնորհեցի, և ոչ զկերպարանսդ ձեր գիւրաքանչիւր ես նկարեցի, և ոչ զհասակսդ ձեր ծնեալ և սնուցեալ: Այսուհետև ես իմ ինչ ոչ համարեցայց. այլ որ աշխարհի արարիչն է, որ ստեղծ զծնունդս մարդկան՝ զկեանսդ և զոգիսդ ի գալստեան իւրում իւրով ողորմուԹեամբք ի ձեզ դարձուցանէ: Անտիոքոս Թէպէտ և արհամարհեալ զինքն համարեցաւ վասն բարբառոյ նահատակացն, սակայն, մինչդեռ ոգիքն կրտսերոյ մանկանն առ իւր կային, սկսաւ ոչ միայն բանիւք մխիթարուԹիւն մատուցանել, այլ և երդմամբ հաստատէր ի մեծուԹիւնս յաւագուԹիւնս (մեծութիւն, իշխանութիւն) հասուցանել, եթանելի (եոչանիկ) առնել յաշխարհի, միայն Թէ ի նախնեացն օրինաց փոխեցի. գործ ի ձեռն տալ (պաշ-

տօն տալ) և բարեկամ անուանել Թագաւորաց: Իբրև ետես Թէ ամենեին պատանին ի բանս Թագաւորին ոչ խոտորեցաւ (զիջաւ), կոչեաց Թագաւորն զմայրն, և աղաչէր լինել պատանւոյն կենաց խորհրդական զի փրկեսցի: Իբրև կարի շատ ստիպեաց, յանձն առ խօսել ընդ որդւոյն. խոնարհեցաւ ի նա, սկսաւ ծաղր առնել զհպարտ զամբարտաւան Թագաւորն և ասէ. Ողորմեաց ինձ, որդեակ իմ. յուշ ցիցի քեզ (յիշէ) զի կրեցի զքեզ ինն ամիս յարգանդի և սնուցի զքեզ զերիս ամս ի գիրկս ստեամբք, և հասուցի զքեզ յայդ չափ մեծութեան հասակի. արդ աղաչեմ զքեզ, որդեակ, մի զարհուրիր դու ի չարաշուք դահճէ այտի. այլ եղբարցն արժանի եղեալ ընտրեա (նախադաս համարէ) զմահ քան զկեանս աշխարհի, զի ընդ այն եղբարս ընկալայց զքեզ ի ձեռն ողորմութեան մեծին Աստուծոյ: Եւ մինչդեռ մայրն զայն միխիթարութիւնս մատուցանէր ի միտս հաստատունս, ըսկսաւ խօսել պատանեակն և ասէ. Ո՞ւմ կայք, զի յապաղէք. չեմ ինչ լսելոց հրամանի Թագաւորիդ, այլ հնազանդեալ

եմ օրինաց հարցն ժերոց: Այլ դու որ զամենայն չարիս խորամանկեցեր (նենգութեամբ նիւթել) ի վերայ որդւոցդ Եբրայեցւոց՝ անօրէն, ապստամբ, պիղծ, վատ արանց, զի՞ զուր հպարտանաս յուսով քով սնոտւով ի վերայ ծառայից նորա, չես ինչ ապրելոց յամենագէտ յամենակալ դատաստանացն Աստուծոյ. այլ ես յուսացեալ կարդամ առ Աստուած ինև և եղբարբքն իմովք զամենայն նիւթեալ (պատրաստել, մեքենայել) սրբամտութիւն բարկութեան ջնջել և ի բաց անցանել:

Յայնչափ բաջութեան սրտի մանկանցն եւթանեցունց սրտաբեկ ցիներ (վհատիլ) Թագաւորն. առաւել ի վերայ կրտսերոյն դառնապէս տանջանս մատուցանէին. սակայն և սա անարատութեամբ և սրբութեամբ յուսացեալ ի Տէր մեկնեցաւ յաշխարհէ: Հետ որդւոցն և մայրն երանելի ի նոյն օրէնս կատարեցաւ:

Ռ. Մակաբ.

Այլ Յուդա Մակաբէ և որ ընդ նմա էին՝ աստ անդ գաղտագողացեալ (յանկարծ. գաղտ) մտանէին ի գեղս. ի բաղաքս և

յազարակս : Յիւսիսի արկանիր (իրեն ձգել) Յուդա զազգատոհմն և նուաճէր զՀրեայսն որ կացեալ էին հաստատուԹեամբ յուխտին իւրեանց. կազմէր լինէր զօրաժողով. դիմակալ (դեմ դնել) ինչ ոչ լինէին նմա հեԹանոսքն. հասանէր ի վերայ գիւղից և քաղաքաց. հրձիգ առնէր զամուր ամուր տեղիս Թշնամեացն, անդրէն նուաճէր դարձուցանէր զըմբռնեալսն ի Թըշնամեաց. մեծամեծ սաստիկ հարուածս ի վերայ �թշնամեացն հասուցանէր. մանաւանդ զգիշեր ևս իւր օգնական գործակից գտանէր. և համբաւ (լուր) քաջուԹեանն ընդ ամենայն կողմանս ընԹանայր: Իբրև զայն տեսանէր Փիլիպպոս զի գամ քան զգամ (երբալով) իրք առնն յառաջադէմ աջողէին, արքունի հրովարտակօք առ Պտղոմէոս սպարապետ ստորին Ասորւոց և Տաճկաստանի հրեշտակս առնէր (պասգամաւոր ղրկել) օգնական ի Ԥիկունս (կռնակ, օգնութիւն) զօրս ի ձեռն հասուցանել: Նա վաղվաղակի իբր և առնոյր զհրովարտակսն, զՆիկանովր Պատրոկղեանց զառաջին սիրելի աւագաց (մեծամեծներուն) իւրոց ի ձեռն զումա-

րէր ոչ ինչ պակաս քան զքառասուն հազարաւ առհասարակ բառնալ ի միջոյ, ջնջել զազգն Հրէից. յանիմանէր (ներկայացնել) նմա զԳորգի սպարապետ, զայր քաջ, իրաց պատերազմի տեղեակ, ամենայնի հմուտ: Յանձն առ Նիկանովր զհարկն առաջին՝ զոր տային Հռոմայեցւոց հարիւր քանքար, ի Հրէից զերուԹենէ անտի լնուլ: Անդ հրաման տայր շուրջ զԳովեզերօքն կոչել զվաճառականսն մարդագինս (մարդ գնող) ի Հրէաստան. խոստանայր իններուն իններուն մարդ տալ նոցա ի քանքար մի: Յուդայի էին ոմանք որ գուշակ լինէին (լուր տալ, իմացնել) վասն Նիկանովրայ արշաւանին, Նոքա (Հրեայք) առ վատասրտել իւրեանց այսր անդր խուսափէին ապրել յանօրէն յանարժան ձեռանէ Նիկանովրայ որ, մինչև տեսեալ էր նորա, ընդ վաճառականս անձանց նոցա գինս հատանիր (գին կտրել): Այլ Յուդա մխիԹարէր զնոսա զի մի պակասիցեն (թուլնալ) յայնչափ զօրաց բազմուԹենէ և մի վհատեսցին. և այսու մխիԹար քաջալեր բանիւբվառէր պատրաստէր զնոսա ի վե-

բայ օրինացն և աշխարհին իւրեանց մը-
տագիւր (յօժարութեամբ) մարտնչել, հա-
մարձակ մեռանել : Յերիս գունդս զզօրն
բաժանէր : Երկոցունց գնդացն զերկոսին
զեղբարսն զՇմաւոն և զՅովսէպ զօրավար
կացուցանէր. և առաջնոյ գնդին ինքնին
զօրագլուխ պատրաստեալ՝ յարձակէր
ի դիմի հարկանէր (դէմը ելլել, զարնը-
ալ) Նիկանովրայ : Հասանէին հարկա-
նէին ի զօրաց անտի Թշնամեացն աւելի
քան զիննհազար ապառազէն. և զայլսն
խոցս (վիրաւոր) և խեղս (սաքաթ) և
վիրաւորս առնէին. և շուրջ զբանակաւն
պահ արկանէին (պահապան դնել), և
զինչս և զգանձս մարդագին վաճառակա-
նացն իւրեանց (իրենց, տրակ.) առնուին,
և զմնացեալ զօրսն Նիկանովրայ առաջի
իւրեանց փախստականս առնէին, մինչ
օրն տարաժամէր (իրիկուն ըլլալ): Իբրև
ժամ աւուրն ի տարաժամել անկանէր,
այսրէն վաղվաղակի տագնապաւ դառ-
նային, և ոչ ընդ երկար (երկայն ատեն)
հալածէին զնոսա զի ի վաղիւ անդր շա-
բաթ էր. այլ հաւանալ այսրեն՝ (նորէն
սադին գալով) ունէին զճակատուն տեղի

զզէնս քաղէին (ժողվել) զանկելոցն.
դիազերծ առնէին (մերկացնել, կողոպ-
տել մեռածները) զվիրաւորսն և ինքեանք
շաբաթուն պատրաստէին : Յետ շաբա-
թուն՝ նեղելոց և այրեաց և որբոց մասն
առնէին յաւարէ անտի, և ապա ինքեանք
ընդ բաժինս աւարին խառնէին (աւա-
րին մասնակից ըլլալ) : Իբրև զայս գոր-
ծեցին, առհասարակ աղօթս անկեալ
մատուցանէին առ ողորմածն Աստուած.
աղաչէին մինչ ի վախճան հաշտ լինել
(չրարդողած մնալ) ընդ ծառայս իւր :
Իսկ յամենայն կողմանց Թշուառացեալ
Նիկանովր, որ զհազար վաճառականսն
ի մարդագին (մարդ գնելու) ածէր որ-
դւոց Հրէիցն. մեծաւ տասապանօք Թըշ-
ուառութեամբ անկեալ ի փառացն հան-
դերձէ, գձձեալ (անարգ վիճակի հա-
ռած), ընդ մուրողս անկեալ (մուրացկան
իյնալ) մեծ սուգ առեալ վասն զօրացն
կորստեան, փախստեայ, կորացեալ (ա-
մօթալից) ի քաղաքն Անտիոքացւոց ան-
կանէր : Եւ որ զՀռոմայեցւոցն խոստա-
նայր զհարկն յԵրուսաղեմացւոց գերու-
թենէ անտի լնուլ, ինքնին նովին բե-

բանով պատմէր թէ յայտնի Աստուած է նոցա օգնական, վասն այսորիկ ողջանդամ (ողջ առողջ) և առանց խոցոտելոյ ի պատերազմէ ելանեն:

Բ. Մակաբ.

Ընդ այն ժամանակս դէպ եղեւ դառնալ Անտիոքայ մեծաւ անարգանօք ի կողմանցն Պարսից. քանզի էր երթեալ նա՝ քաղաքն ի բուն նոցա. խորհեցաւ ձեռն արկանել զգանձիւն, և թէ հնարեսցի. (եթէ համբաւն զնեն) զքաղաքն իսկ առեալ ջանայր: Իբրև զայն զգացին զօրք քաղաքին, առ հասարակ ի զէնս իւրեանց ընթացան. և զայն որ մեծաւ ասստկութեամբ ի վերայ երթեալ էր, անարժան կորակոր (ամօթով) յանձանց ի բաց մերժէին: Իբրև չու առնէր, խաղայր գնայր ամօթալից Անտիոքոս, ազդ լինէր նմա որ ինչ անցք անցեալ էին ընդ նա: Զմտաւ ածէր զատահակութիւն (դիմադարձութիւն) քաղաքացւոցն որ զնա ի փախուստ դարձուցին. լցեալ սրտմտութեամբ զմտաւ ածէր յԵրուսաղեմացիս անդ յագեցուցանել զսրտմտութիւն բարկութեան իւրոյ. հրաման տայր կառավարին ստէպ (ասիպողական) տագնապաւ անդադար վարել՝ միտ եղեալ ճանապարհին. մեծամեծս փիլայր (մեծ մեծ ջարդել) ի հպարտութիւն ամբարտաւանութեան իւրոյ, և ասէր անմարդի (անմարդ) զԵրուսաղէմ Հրէից հասուցանել: Իսկ ամենակալ Բարձրեալն եհար զնա աներևոյթ հարուածովք. այն ինչ բանքն ի բերան նորա էին, ցաւք սաստիկք և անհնարին ոսկերաց ի վերայ հասանէին, և դառնութեան խիթք (աւնձի) ի փոր անկանէին: Կարի յիրաւունս. զի որ բազում նորանոր չարաչար ցաւս յայլոց մարմինս տանջանօք հասուցանէր, նոյն սաստկութեան ցաւք զնովաւ անկեալ պաշարեալ պահէին. և այն որ այն ինչ կամէր ի վերայ ալեաց ծովու սաստել, զվերին լերանցն ներքին (տակի դին) առնել և զներքին վերին, զնա ինքն յերկիր հողեալ՝ (գետինը պառկեցնել) շալակաւ (վերցնելով) շրջեցուցանէին. մինչև յաչաց անտի անօրինին եռանդն (եռացումն) որդանց բղխեալ սորսորել (թափթփիլ), և ի նեխոյն (նեխ, վէրին փտիլը) հոտոյ զօրացն ամենայնի նեղել

տագնապաւ. և որ յառաջն հպարտացեալ մտօք զաստեղս երկնից ամփոփել համարէր, այսր անդր զնա շրջշրջել (դարձնել) ոչ ոք կարէր վասն նեխոյն հոտոյ տագնապի. ինքն իսկ ոչ կարէր ժոյժ ուլնել (համբերել) ի նեխոյ հոտոյ անտի: Սկսաւ այսպէս խօսել. Պարտ և պատշաճ է հնազանդ լինել Տեառն Աստուծոյ, և մի ի մարմինս մահկանացուս աստուածակերպ օրինակ (Աստուծոյ պէս) բարձրանալ: Ուխտս դնէր զսուրբ քաղաքն մարդաշատ և ազատ ցուցանել. զՀեբրայեցիսն որոց սպառնայր ոչ պատանաց և ոչ Թաղելոյ արժանի առնել, այլ կանամբք և մանկտւով ի հաւակերի դնել (թոչունների կերակուր ընել) զազանաբեկս (գազանների ջարդուած) արարեալ՝ զնոսա քաղաքակիցս իւր, հաւատարս Աթենացւոց գրով մուրհակօք (սենեդ, գիր) կացուցանել. և զտաճարն սուրբ զոր յառաջ սպառնայր կապուտ կողոպուտ Թողուլ. գեղեցիկ պատարագօք զարդարել, զզարդ և զսպաս (ամանների) որ յառաջ անտի տարեալ իցէ, բազմապատիկ անդրէն դարձուցանել և

ի վերայ այսր ամենայնի Հեբրայեցի ևս լինել և յամենայն մարդաշէն (մարդիկներով շէն) տեղիս հասանել պատմել ըզ զօրութիւն մեծութեանցն Աստուծոյ: Եւ մարդախաշոշն (մարդիկ սպանող), անօրէն հայհոյիչն, զայս օրինակ անկեալ կործանեալ սատակման ղիւեր (սատկիլ). յօտար լերինս չարաչար տանջանօք՝ զոր ընդ այլս անցոյց (հասցուցնել) կարճէր ի կենաց անտի: Իսկ Փիլիպպոս դայեկորդի իւր որ առեալ տանէր զմարմին նորա՝ երկեաւ յորդւոյ անտի. առ Պտղոմէոս յերկիրն Եգիպտացւոց հատուածով (գաղթելով, զատուելով) փախստեայ լինէր:

Մակաբէոս և որ ընդ նմա էին՝ յօգնականութենէ Տեառն զօրացեալ, գերեդարձ առնէին (գերիները դարձնել) քաղաքին և տաճարին, ոստս առեալ գեղեցիկս ի Թաւ ծառոց և ոստս արմաւոյ՝ ցնծութեամբ և ուրախութեամբ առնէին տօն զուԹ օր ըստ աւուրցն տաղաւարահարաց, զի յուշ լիցի նոցա որպէս յառաջ զտօնս տաղաւարահարացն ի լերինս պաշտէին, յայրս և ի քարածերպս (քարե-

ում մէջ տեղեր) զօրէն էրէց (վայրի անասուն) խոտաճարակ շրջեալ : Այլ վասն Անտիոքայ երևեալն անուանելոյ մահուանէն այսչափ բանք . բայց վասն հօրամոյն (հօրը նման) Անտիոքայ անօրէն զաւակի (սերունդ) ցուցցուք համառօտ :

Գ. Մակաբ.

Իբրև առ թագ (թագաւորել) Անտիոքոս, կացոյց ի վերայ իրացն արքունի կողմանցն ատորին Ատրոց և Տաճկաստանի զՎիւսիաս և զՊտղոմէոս որում քարձրանէն (բարձրահասակ) ասէին. զիրաւունս հաստատուն պահէր (Լիսիաս) առ Եբրայեցիս : Վասն այսորիկ ամբաստան լինէին զնմանէ ընկերքն իւր առ Անտիոքոս, և մատնիչ կոչէին զնայն սակս նա իբրև ոչ համբերէր նախատանացն, դեղս (թոյն) առ անձամբ իւրով և մեռաւ :

Գորգիաս զօրավար վայրացն զօրաժողով լինէր Եդոմայեցւովքն հանդերձ՝ հասանել հարկանել զամուր ամուր կողմանսն. Իսկ որ զՄակաբայեցւովքն էին՝ կանխեցին հարկանել զամուրսն Եդոմայեցոց. եկին հասին, պատեցին,

խուռնք առարին (գունդ ըլլալ), առհասարակ ի վերայ յարձակեցան, զամուրսն փլուզին, հարին կոտորեցին, զոր ի ձեռն առին (ձեռք ձգեցին) առհասարակ սատակեցին : Էին ոմանք որ փախստեայ գնացին, և եկին ամրացան ի բերդս երկուս ամուրս. և նոքա (Մակաբեանք) ընդ իւրեանս ունէին զամենայն կահ (կազմած. թափրմ) մենքենայից. շուրջ պահ եդին (պահել, պաշարել) և զմենքենայսն առ պարիսպսն կանգնեցին : Եւ Մակաբէոս եթող ի վերայ բերդին զՇիմոն և որ ընդ նմա զօրք էին՝ վասն բերդիցն պաշարման, և ինքն գնաց : Իսկ Շիմոնեանք որ զբերդաւն նստէին՝ ի պատգամս անկանէին, կաշառագնաց լինին (ներսինները հեռ խօսք ընելով կաշառ առնել). առնուին յամրականաց անտի եւթն բիւր սատեր արծաթոյ, և թոյլ տային նոցա ելանել ափոռել յամրոցաց անտի : Իբրև ազդ եղև Մակաբեայ վասն իրացն որ եղեն, ժողովէր զիշխանսն ամենայն, ամբաստան լինէր. յայտ առնէր զի արծաթոյ վաճառեցին զեղբարսն և արձակեցին ըզ

Թշնամիսն: Զայնոսիկ որ այնպէս մատն եղեն (մատնել) օրինացն՝ ածին սատակեցին, և ինքեանք ի բերդն արշաւեցին: Եւ Տիմոթէոս որ յառաջ ի պարտութիւն մատնեցաւ՝ դարձեալ զուարթանայր (զօրանալ, ծաղկիլ), դարձեալ զօրաժողով լինէր յօսարակողմն կուսաց (osar կողմերէ). բազում զայրուձի կուտեալ, ի մտի եղեալ զայր վարել ի գերութիւն զերկիրն Հրէաստանի: Իսկ որ զՄակաբայեցւովքն էին՝ ընդ մերձենալ նոցա ի խնդրուածս պնդէին (սասիկ խնդրուածներ կընէին) առ Աստուած, հող ի գլուխ հրաւզգած լինէին (հուրձ հագնիլ): Իբրև զաղօթսն կատարեցին, առհասարակ ի զէն գարձան. հարուստ մի (բաւական տեղ) ըստ քաղաքն արտաքս ելին. իբրև մերձ եղեն ի գունդն Թշնամեաց, կարգեցան կազմեցան օրինօք ճակատեցան: Այն ինչ վարդագոյն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր, և նոքա երկոքին կողմանքն ընդ միմեանս խառնէին. կիսոցն օր բարենջան (յաջող) զուարթութեամբ պատրաստեալ, կիսոցն սրտմտութիւն բար-

կութեան: Յայնմ աւուր անկեալ գտանէր ի գնդէ անտի Թշնամեացն առաջի նոցա բաան հազար և հինգ հարիւր սպառազէն. և ինքն Տիմոթէոս պրծեալ (գաղտ ազատիլ) ընդ ամբոխն ի փախուստ դառնայր, և եկն անկաւ (ամրացաւ) ի քաղաք մի ամուր: Մակաբէ զօրօքն եկն. փակեաց պաշարեաց զամուրն ի չորս աւուրս. իսկ այն որ ի ներքս անդ էին՝ յամրութիւն քաղաքին յուսացեալ՝ այպն կատակ լինէին (ծաղրել) Եբրայեցւոցն և բանս կսկծելիս Թշնամանաց առ Իւրեանց չարի (ի վնաս իւրեանց) ի նոսա արձակէին: Իբրև օրն հինգօրեայ շաբաթուց լուսանալ կամէր, արք ընտիրք բաան ի գնդէ անտի Եբրայեցւոց զէնս առեալ ընդ դուռն քաղաքին ի ներքս յարձակեցան. զորս առ դրանն գտին՝ առ ոտս իւրեանց կոտորեցին, և որ զօրք պարսպապահ ի վեր անդ կային՝ քաւն զտեղ քաւն զտաւրայի (անձրեւէ աւելի) Թանձր և արագ ի վերուստ ի վայր Թօթափէին. և զօրքն առհասարակ ի ներքս անկանէին. զաշտարակս բերդին և զամենայն փայտակերտ (փայտէ շինուած) քաղաքին հրձիգ

առնէին. ապա իւարոյկս ի մէջ քաղաքին արկանէին (կրակ վառել), և զհայհոյիչ Թշնամանողսն ի նմա այրէին. մինչև զՏիմոԹէոս եկին գտին փախուցեալ և Թագուցեալ ի գբի միջ. զնա և զեղբայր նորա ի նոյն գուբ (փորուած տեղ) փողոտեցին:

Յետ սակաւ ժամանակաց հազարապետն արքայի Լիւսիաս իբրև լուաւ, մեծաւ բարկուԹեամբ լի նախանձու ծանրացեալ տրտմէր ի վերայ գործոցն եղելոց: Զօրաժողով լինէր, կուտէր ուԹսուն հազար, և զամենայն զօրսն հեծելազօրս ընդ իւր առեալ խաղայր ի վերայ Եբրայեցւոցն, և զփիղսն աղխաղխեալ (կուտել) տանէր. ի մտի եդեալ զքաղաքն գլխաւոր առնել բնակուԹիւն հեԹանոսաց, և զտաճարն սրբուԹեան դրամաժողով (դրամ ժողվելով) ի վարձու կացուցանել իբրև զայլ մեհեանս, և զքահանայապետուԹիւնն ինքնին վարձկան (վարձուոր. հարկաւոր) գանձուն կացուցանել ամ յամէ: Իբրև ի Հրէաստան մխեցաւ և մերձ եղև յամուրսն ԲեԹսուրայ որ մերձ է յԵրուսաղէմ իբրև ասն-

պարիսօք հինգ. և ի նեղ մեծ զամուրն հասուցանէր, ազդ եղև Մակաբէացւոցն պաշարումն ամրոյն. միաբան միահաւան վառեալ պատրաստեալ յառաջ մատչէին: Այն ինչ լինէր նոցա մերձ ի կողմն քաղաքին Երուսաղէմացւոց հասանել, եկն էջ առաջի նոցա այր մի սպիտակաձի յոսկիազէն (ոսկիէ զէնք) վառեալ. ճօճէր (երերցնել) զնիզակն և պատրաստէր յարձակել. և առհասարակ ամենեքին խուսիոյս (հաջալերութեան ձայն) բարձեալ երԹային իբր ոչ եԹէ մարդկան ինչ ի դիմի հարկանել, այլ Թէ և գազանք ինչ անհնարինք պատահեսցեն և կամ պարիսպք երկաԹիք, հարկանել, սատակել, կործանել, Թափ անցանել (միանչեւ նեռը, խորտ մտնել): Եւ այնպէս վարազախառն (վայրի խոզի պէս) առիւծաբար յարձակեցան ի վերայ գնդին Թշնամեաց. և անդէն ի նմին տեղւոջ հարին, տապաստ արկին մետասան հազար զընտիր զօր. և բազումք ի նոցանէ խոց վիրաւորք և ապիկար (անկարող) մերկանդամք փախստեայք ապրեցան: Եւ ինքն Լիւսիաս կորակոր փախուցեալ

մաքապուր ղիւեր (հագիւ ազատիլ). իբրև ոչ եթէ անմիտ ինչ լինէր յանձն իւր վասն իւրոյ վատթարութեանն. անհնարին առ յաղթութիւն (անյաղթելի) ասէր զԵբրայեցիսն: Եւ յղեաց (մարդ ղրկեց) զկնի նոցա հաշտութիւն առնել. և Թագաւորն ևս յանձն առ, զի և զԹագաւորին միտս հաճեաց (համոզեց) բարեկամ լինել ընդ նոսա: Յանձն առ Յուդա զոր միանգամ Լիւսին աղաչեաց զնա վասն օգտի հասարակաց. և որչափ միանգամ Մակաբէ նամակ ետ (գրով խրնդրեց) ցԼիւսիաս վասն Հրէից՝ Թողացոյց (շնորհեց) նոցա արքայն: Եւ Լիւսիաս անց գնաց անդրէն առ Թագաւորն. և Հրեայք անդրէն զգործովք և զարարովք (արարք, ստացուած) և զարդեամբք (բերք) պատաղեցան (գբաղիլ):

Բ. Մակաբ.

Արք անօրէնք յիսրայելացւոց անտի գնացին առ արքայն և ասեն. Մեք հաւանեալ եմք ծառայել հօր քում և երթալ զհետ հրամանաց նորա. այլ որդիք ժողովրդեան մերոյ ի մեզ ձեռս մխեցին, և այժմ եկեալ պաշարեալ պահեն զմիջնա-

բերդն Երուսաղէմի առնուլ զնա. և ըզ Բեթսովրա ամրացուցին: Եւ եթէ ոչ վաղ (ժամ մը յառաջ) աճապարեսջիք, ևս մեծամեծս ինչ քան զայս գործիցեն, և դուք զառաջս ոչ կարիցէք ուռնել (առջեւը առնել): Իբրև զայն լուաւ Թագաւորն, բարկացաւ յոյժ. հրամայեաց կոչել զիշխանս որ ի վերայ զօրացն էին. և եկին առ նա զօրք բազումք ի վարձու. և էր Թիւ զօրաց նորա հարիւր հազար ասպար (վահան) ի ձեռին տիգաւոր հեծեալ, և բան հազար հեծեալ սպառազէն, երեսուն և երկու փիղք վարեալք երիվարիկք (երիվարի պէս կրթուած): Եւ եկին ճակատեցան, պատեցին զԲեթսովր քաղաք, և մարտ պատերազմի եղին շուրջ զնովաւ աւուրս բազումս, կազմեցին շուրջ զմանգղիոնս և մեքենայս: Զուեաց խաղաց գնաց Յուդա ի միջնաբերդ ամրոցէ անտի, և եկն բանակեցաւ դէմ յանդիման բանակի արքային: Կանխեաց (փութաց) ընդ առաւօտն Թագաւորն. առ զբանակն, տարաւ բանակեցոյց ի միջոյ անտի, և զզօրսն ամենեցս ճակատեցոյց ի մարտ

պատերազմի: Փող հարին. կազմեցին պատրաստեցին զփիղսն, ճաշակեցուցին յարիւն խաղողոյ, ի զմուռս և ի գինիս: Եւ կարգեցան. բաշխեցին ի գունդս գունդս. և կարգեցին առ փիղ փիղ (ամեն մէկ փղի) հազար հազար (հազարական) այր սպառազէն. և պահապան գլուխ գնդիցն հինգ հազար հեծեալ վառեալ ևժոյգ ի ձեռն (ձի եէտէկ) պաշտպան գնդիցն. զի ուր և կայցեն գազանքն՝ կայցեն և նոքա. և ուր և գնայցեն՝ գնայցեն և նոքա. և վանդակակապ (փարմախլրգլը, գաֆէսլի) մարտկոցս մենքենայիւք ի վերայ փղացն կազմեցին. և զփղապանն ի վերայ գլխոյն նստուցին. և զայլ այրուձին յաջ և յահեակ (ձախ) Թևս գնդին կազմեցին: Իբրև անտի արեգակն ծայրս արձակեր (ծագել), առհասարակ ի զրահաւոր պատենազէն (զրիխլը, գաւիշանա) պղնձապատ վահանացն նշոյլք (ցոլացում) զլերամբքն փայլատակէին (փայլ արձակել), և ճառագայթք հաստանէին (լոյս կը ցոլանար) իբրև ի փայլատականց (կրակին փայլելը) հրոյ: Եւ երկայնէր ճակատն և

զեղոյր (կը տարածուէր) զբարձամբք լեռանցն, զձորովք և զխորովք և զդաշտիւք: Եւ խաղային յառաջ առհասարակ կարգեալք և կազմեալք, միաբան շարժէին առհասարակ ամենեքին որ լսէին զձայն բարբառոյ բազմութեանն, զշաչիւն զինու և զշառաչիւն, զերիվարացն Թնդիւն, զոտնաձայն վահանաւոր վառելոցն: Եկն եհաս Ցուղա իւրով գնդաւն. յարձակեցաւ, ի դիմի հարաւ գնդի Թագաւորին. յայնմ տեղւոջ յանդիման Թագաւորին վեց հարիւր հեծեալ սպառազէն դիմաւալ կացուցանէր: Ցայնմ վայրի դէտ ակն իվեր ամբառնայր (դիտել, նայել) Եղիազար Աւարան. տեսանէր զմի իգազանաց անտի վառեալ զարդարեալ ի զէն արքունի և նշանս արձակեալ (դրօշ բաշուած). համարեցաւ Թէ արքայն իսկ ի նմին իցէ. յարձակեցաւ ի վերայ գնդին, յաջ յահեակ կոտորեաց, չոքաւ մինչև եհաս ի փիղ անդր նշանաւոր. զէն վերացոյց և եմուտ ի ներքոյ, եհար և անդէն կործանեաց. և էջ նստաւ փիղն ի վերայ և զնա անդէն ճմլեաց: Նոքա իբրև տեսին զզո-

թութիւն Թագաւորին, խոյս ետուն. և խօսեցաւ նա ի հաշտութիւն խաղաղութեան Բեթսովր քաղաքին, և ելին սփռեցան նոքա ի քաղաքէ անտի զի ոչ գոյին նոցա անդ համբարք (պաշար): Եւ Թագաւորն պաշարեալ պահէր զսուրբ քաղաքն աւուրս բազումս. և շուրջ զնովաւ կանգնէին մանգղիոնս և մենքենայս, հրացանս և քարընկէցս (քար նետող) ռըմբաքարս (խոշոր քար նետելու) և բաղիստրը, նետաձիգ աշտարակս և աշտարակս պարսաւորաց: Դարձեալ և նոքա ի քաղաքէ անտի սկսան կազմել մենքենայս առ մենքենայս նոցա. մարտ եղեալ կռուէին աւուրս բազումս. բայց համբար ինչ ոչ գտանէին, զի գաղթականք աշխարհին սպառեցին զհամբարսն մըթերեալս (ժողովուած), և սոքին սաստկացեալ էր ի վերայ նոցա: Իբրև լուաւ Լիւսի եթէ Փիլիպպոս դարձաւ ի Պարսից և ի Պարթևաց, և զօրքն ամենայն ի նա հաստան (անոր յարեցան), և ինքն կամի հասանել ի վերայ իրաց աշխարհին, եկն և ասէ նա ցարքայ. Նեղին զօրքս հանապազ. համբարք նուազեալ են և կերա-

կուրք կարծեալ (լմնցած) են. և տեղիդ յորոյ վերայ պատերազմդ է՝ ամուր է և անհնարին (անառիկ). արդ եկայք ի հաշտութիւն խօսեցարուք. դաշինս կրռեսցուք (դաշինք ընել), խաղաղութիւն արասցուք ընդ արս ազգիդ այդորիկ: Բանս հաստատեսցուք (պայման դնել) մեք ընդ նոսա կալ նոցա յիւրաքանչիւր օրէնս իբրև զառաջինն. զի վասն օրինացն իսկ իւրեանց բարկացան նոքա. ի վեգ եկին (դէմ դարձան) և արարին զայս ամենայն: Հաճոյ Թուեցաւ բանն առաջի Թագաւորին, և արձակեաց նա հրեշտակս խօսել ի խաղաղութիւն, և ընկալան:

Ա. Մակաբ. Գլ. Զ.

Յամին հարիւրորդի յինեերորդի յառաջնում համբարձաւ Գեմետրիոս Սելևկեան ի Հռոմ քաղաքէ. և եկն նա ստակաւ զօրօք ի քաղաքն ծովեզերեայ. և Թագաւորեաց նա ի նմա: Եւ եղև իբրև մտանել կամէր Անտիոքոս ի տուն Թագաւորութեան հարց իւրոց, շուրջ եղեն, պատեցին զնա զօրք բազումք, ձերբակալ արարին զԼիւսի և զԱնտիոքոս կալեալ

կապեալ ածին առ Դեմետր: Նա հրաման ետ և ասէ. Բնաւ զերեսս նոցա ինձ յակն մի արկանիք (մի ցուցնէք). և տարան սպանին զնոսա. և նստաւ յաթոռ Թագաւորութեան Դեմետր: Եւ եկին առաջի նորա արք անօրէնք ամբարիշտք յազգացն Իսրայելի. և Յակիմոս գլուխ էր նոցա, զի ինքն իսկ անսայր (կրսպասէր) քահանայութեանն. ամբասաքան եղեն զժողովրդենէն և ասեն. Կորոյս ըսպառեաց Յուդա զմեզ զեղբարս իւր և զքո բարեկամս, և զմեզ ցրուեաց յերկրէ անտի: Եւ ընտրեաց կայսր զԲաքիդ սիրելի զարքայի, իշխան մեծ հաւատարիմ յարքայութեան իւրում, և արձակեցին զնա և զանօրէնն Յակիմոս ընդ նմա. և ետ (թագաւորն) հրաման խնդրել զվրէժ որդւոցն Իսրայելի: Զու արար, խաղաց գնաց Բաքիդ, և հրեշտակս արձակեաց ի տեղւոջէ անտի առ Յուդա և առ եղբարս նորա խօսել ընդ նոսա ի խաղաղութիւն բանիւք նենգութեամբ. և նոքա ոչ ինչ անսացին բանից նորա: Սկսան ժողովել առ Բաքիդ և առ Յակիմոս ժողովք դպրաց որ խնդրէին զիրաւունս: Նախ

Ասիդացիքն էին յորդւոցն Իսրայելի որ խնդրէին զխաղաղութիւն. զի այսպէս համարեցան եթէ այր քահանայ ի զաւակէ Ահարոնի եկեալ է ընդ զօրսն. ոչ ինչ տացէ մեղանչել մեզ: Եւ խօսեցաւ ընդ նոսա բանս խաղաղութեամբ և երդմնի եղեւ (երդում բրաւ) նոցա եթէ ոչինչ տաց մեղանչել ձեզ. և հաւատացին ինա, և նա առ ի նոցանէն արս վաթսուն և սպան յաւուր միում: Եւ անկաւ ահ և երկիւղ ի վերայ ժողովրդեանն, զի ասացին թէ Զիք ի նոսա իրաւունք և ոչ ճըշմարտութիւն. զի անցին ըստ հաստատութիւն և ըստ երդումն (երդումը չպահեցին) զոր երդուան: Զուեաց Բաքիդ յԵրուսաղէմէ և եկն բանակեցաւ ի Բեթսէթ. և առաքեաց կալաւ նա զբազումս ի նոցանէ, յարանցն ինքնեկաց (ինքնեկ, ինքնիրեն եկող), և հրամայեաց փողոտել ի ջրհոր անդր ի ներքս: Իբրև ետես Յուդա զչարիսն զոր արար Յակիմոս և որ ընդ նմա էին որդիքն Իսրայելի, յարձակեցաւ նա ի վերայ Հրէաստանի շուրջանակի զսահմանսն նորա, և արար վրէժխնդրութիւն ի վերայ արանցն որ

ինքնակամ գնացեալ էին ի Հեթանոս, և կարճեցան (դադրեցան) նորա այնուհետև դառնալ անդրէն յերկիրն Հրէաստանի:

Իբրև ետես Յակիմոս եթէ միւսանգամ ևս զօրացաւ Յուդա, և գիտաց թէ Ոչ կարեմ ժոյժ ուևել (դիմանալ) նմա, դարձաւ անդրէն առ Թագաւորն չարախօս լինել զնմանէ: Եւ առաքեաց Թագաւորն զՆիկանովրա, մի ի փառաւոր յիշխանաց անտի որ մանաւանդ ատեայր և Թշնամութեամբ կայր ընդ կողմն Իսրայելի: Եկն ետես Նիկանովր զօրօք բազմօք, և առաքեաց նա առ Յուդա բանս խաղաղութեան ներգութեամբ. Մի եղիցի կռիւ ընդ իս և ընդ ձեզ. եկիցս ես սակաւ ապամբ տեսանել զերեսս ձեր խաղաղութեամբ: Եւ եկն Յուդա և ողջոյն ետուն միմեանց խաղաղութեամբ. և զօրքն Յակիմեալ պատրաստեալ էին յարձակել ձերբակալ առնել զՅուդա: Իբրև ազդ եղև բանն այն առ Յուդա եթէ ներգութեամբ եկեալ է զնմանէ (զանի առնելու եկած է), խռովեցաւ, խորշեցաւ (ֆաուիլ), մերժեցաւ, հեռացաւ և այլ

ոչ կամէր տեսանել զերեսս նորա: Իբրև ետես Նիկանովր եթէ յայտնեցաւ խորհուրդս նմա, խաղաց պատահել նմա պատերազմաւ ի կողմանս Փարսաղայ: Հասին Յակիմեանք երկոքեան ի միմեանս և ընդ միմեանս բախեցան: Ի պարտութիւն մատնեցաւ, խորտակեցաւ գունդն Նիկանովրայ, և անկաւ նախ ինքն ի սուր սուսերի ի մէջ երկուց Յակիմուցն: Իբրև ետես գունդն եթէ անկաւ Նիկանովր, զեռնիկեց ցիւեին (զէնքերը թողուլ), ի փախուստ դառնային, սրբա զհետ երթային նոցա օր մի մինչև եկին հասին յԱզեբա. և հարկանէին զփոքս նշանաց զհետ նոցա, և ելանէին յամենայն բաղաքաց անտի Հրէաստանի շուրջանակի և կրճատէին (նամբան կտրել) զնոսա: Եւ անկան յայնմ աւուր ամենեքին ի սուր սուսերի և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: Եւ եկին խառնեցան ընդ աւար, ընդ կապուտ, ընդ զէն, ընդ գանձ, ընդ կահ բանակին. և զգլուխն Նիկանովրայ աջոյ ձեռամբն հանդերձ զոր իշխեաց ձգել նա հպարտութեամբ ի տաճար անդր, բերին պրկեցին (կապել) զնա յանդիման

Երուսաղէմի: Եւ ուրախ եղև ժողովուրդն յոյժ, և արարին զօրն զայն տարեկան (տօն) մեծ, և կարգեցին ամ յամէ զօրն զայն տօն տարեկանաց, զերեքտասանեորորդ ամսոյն Ադարայ: Իբրև լուաւ Դեմետր զի անկեալ կործանեալ էր Նիկանովր զնդաւն իւրով ի նոցանէ պատերազմաւ, անդրէն կրկնեալ յղեաց զԲաքիդ և զՑակիմոս և զյառաջակողմն Թևոն իւրոյ ընդ նոսա յերկիրն Հրէաստանի: Եւ գնացին ի ճանապարհն Գաղգաղայ և եկին բանակեցան մերձ առ Երուսաղէմ. և չուեցին գնացին հասին ի Բերէթ քան հազար մկնդաւոր (նիզակաւոր) արամբք և երկուք հազարօք հեծեալ սպառազինաւ: Եւ Յուդա էր բանակեալ յԵղիշա, և երեք հազար սպառազէն ընտիրք, Իբրև տեսին զամբոխ բազմութեան զընդին, երկեան յոյժ. և բազումք Թօթափեցան (թողուցին անիկայ) ի նմանէ. և ոչ ոք մնաց առ Յուդայի բայց ութ հարիւր հեծեալ սպառազէն: Իբրև ետես Յուդա Թէ Թօթափեցան զօրքն ի նմանէ և պատերազմն նեղէր զնա, նեղեցաւ ի սիրտ իւր, լուծաւ, լքաւ, անկաւ. ակը-

ասաւ խօսել ընդ մնացեալսն և ասէ. Եկայք, հարցուք ի դիմի. Թերևս կարասցուք կծանել (կոտորել) ինչ ի նոցանէ: Եւ ինքն յարձակ յարձակ խաղայր. և զօրքն մատուցեալ պաշարէին դարձուցանել անդրէն. սկսան խօսել ընդ նըմա և ասեն. Այր դու, նոցա ինչ մեք ոչ կարեմք ատնանել (քան մը ընել, վնաս ընել). բայց այժմ զանձն ապրեցուցանել ուշ դիցուք (նայինք, ջանանք). հապա դարձցուք ժողովեսցուք զեղբարս մեր, ապա մարտիցուք՝ Թէպէտև իցեմք սակաւք: Պատասխանի ետ նոցա Յուդա և ասէ. Քաւ լիցի ինձ առնել զիրսդ զայդ ի փախուստ դառնալ ինձ ի նոցանէ. եԹէ հասեալ իցէ ժամանակ մեր, մեռցուք քաջութեամբ և ոչ խառնեսցուք զանուն վատութեան մերոյ ընդ արութիւնս (արիութիւն) քաջութեան: Եւ ելին զօրքն յիւրաքանչիւր բանակէ և ճակատեցան դէմ յանդիման միմեանց. երկու գունդք լինէին, գունդքն բաբիղեան սպառազինաւ. պարսաւորքն և ապեղնաւորք առաջի գնդին խաղային, և նահատակքն յառաջագոյն խաղացեալ էին: Բայց Բաբիղ

յաջում Թեի անդ ճեպէր զզօրն. ի ձայն փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր: Եւ զունդն Յուդայեան փող հարեալ ի վերայ յարձակեալ գային, մինչև երկիրն շարժէր յամքոխ (խառնաձայն) ազապակէ անտի երկոցունց կողմանց. և եղև պատերազմն խառնեալ անդադար յառաւօտէ մինչև յերեկոյ: Իբրև ետես Յուդա եթէ Բաքիդդ ընտիր ընտիր զօրօք յաջում Թեի անդ է, զընտիր ընտիր ազատազինաց յիւրմէ գնդէ անտի յառաջ կոչէր, քաջալերէր և անդէն ի վերայ յարձակէր: Ի նմին ժամանակի զաջակողմն Թեին բեկանէր և զձախուն արկանէր. և անդստին առաջի արկեալ փախստեայս տանէր մինչև ի կողմանս վերինս Ազովտայ: Եւ որ ի ձախակողմն Թեի անդ էին՝ իբրև տեսին Թէ աջակողմն Թեին բեկաւ առաջի Յուդայեանց, գային խառնէին և զՅուդա գնդաւն հանդերձ ի մէջ արկանէին: Յայնմ վայրի վիրաւորք յերկուց կողմանց անկեալ ընդ երկիր Թաւալէին: Անդ անկանէր Յուդա առաջին նահատակօքն (ախոյեան, յարձակող). և որ մնացեալ էին՝ ի փախուստ դառնա-

յին: Դարձան Յովնաթան և Շմաւոն, եղբարքն երկոքին, բարձին զՅուդա, տարան Թաղեցին իշիրիմս հարց իւրեանց: Լացին, կոծեցան որդիքն Իսրայէլի կոծ մեծ. սուգ առին աւուրս բազումս և սկսան խօսել և ասեն. Զիա՞րդ անկաւ, կործանեցաւ հզօր փրկիչն Իսրայէլի:

Այլ ուրեք ուրեք մարտ կամ ճակատ կամ մղել պատերազմի կամ քաջութիւնս ինչ զոր արարեալ է Յուդայի՝ գրեցաւ իսկ ոչ յայսմ մատեանի. զի բազում էր կարի յոյժ:

Ա. Մակաբ. Գլ. Է. Ը.

Որ զօրացն զօրավարքն էին Տիմոթէոս և Ապողոնիոս քաջեան և ի վերայ սոցա Նիկանովր՝ ամենեին ոչ տային դլալ (հանգչիլ) և դադարել նոցա: Այլ Յոպպէացիքն եկին բարեխօսք. ստիպէին (զզօրավարսն) որ շուրջ զնոքօք Հրեայքն էին՝ կանամբք և մանկտւով ածել զնոսա նաւուք. և նոքա յանձն առին իբրև Թէ ի խաղաղութիւն միաբանութեան առին ածել զնոսա: Սոքա (Հրեայք) յանձն իբրև ոչինչ կասկած կամ կարծիս ի մտի ունել: Ածին զնոսա. ընկլուզին (ընկղմել)

ի ծով ոչ սակաւ քան զերկերիւր մարդ: Իբրև զգաստ եղև (իմացաւ) Յուդա վասն անօրէն խակութեան (ապստամբութիւն) վնասին որ եղև, ետ պատուէր զօրացն որ զիւրեաւն էին՝ կարդալ առ արդար դատաւորն: Յայն վայր վաղվաղակի հասանէր ի վերայ մահապարտացն, և գիշերայն զնաւահանգիստն հրձիգ առարին (կրակ տալ, փոնկցնել) և զնաւսն այրեցին, և որ ի նոսա ապաստան եղեն՝ անդէն խոցոտեցին: Եւ զամուրսն ի պահ զգուշութեան փակեալ (պաշարելով)՝ դարձեալ ժամակալ լինէր (որոշել, խօսք տալ) ի դարձին միւսանգամ առհասարակ սատակել զազգն Յոպպէացւոց: Եհաս նա և ի վերայ Յամնէացւոցն, իբրև զնոյն գործ կամէին գործել և ի վերայ իւրեանց քաղաքակից Հեբրայեցւոցն: Գիշերախառն հասանէր ի վերայ Յամնէացւոցն և զնաւահանգիստն նաւուբքն հանդերձ հրձիգ առնէր, մինչև ճառագայթք (լուսաւորութիւն, ցոլացում) հրոյն յերուսաղէմ երևէին. զի էին անտի անդր վասանք (մղոն) իբրև չորեքհարիւր ութսուն:

Եւ անտի կաթեցին (շուտով հասնիլ) իբրև քսան վտաւանաւ ի վերայ Տիմոթէի, և անկանել կամեցան. ընդառաջ եղեն նմա տաճիկք (Արաբացի) իբրև հինգ հազար և հինգ հարիւր հեծեալ. և իբրև մարտն սաստկացաւ, գունդքն ի միմեանս հասին: Գունդն Յուդայեան յուսացեալ յօգնականութիւն Տեառն՝ ըզ բարենշան նշան յաղթութեան առաջի աչաց տեսանէին: Իբրև ի պարտութիւն մատնեցան արօտականքն (հովիւ, վրանաբնակ), առաջի կացին գնդին Յուդայեան. և հնազանդեալ առաջի անկեալ դաշինս հաստատել խնդրէին. և խոստացան ևս խաշինս տալ նոցա. և ի բազում պէտս պէտս օգտակար լինել նոցա: Խորհեցաւ Յուդա եթէ շատ ինչ իրք են յորում օգուտ են նոքա նոցա. յանձն առ ներեաց և արար ընդ նոսա խաղաղութիւն: Նոքա իբրև դաշինս հաստատեցին, յիւրաքանչիւր բանակս ափռեցան: Սոքա ասպատակ եդին (յարձակիլ կողոպտելու համար) ի կողմն մի, զքաղաք մի ամրացեալ պարսպօք, լցեալ պէս պէս խառնիճաղանճ ազգաւն՝ և զայն

զատեալ պաշարեալ պահէին: Իսկ որ ի ներքս անդ էին՝ ի պարսպացն ամրութիւն յուսացեալ էին, և ի համբարոցն (պաշար) բազմութիւն հայէին. հպարտագոյնս արհամարհանօք ընդ Յուդա և ընդ զօրսն հայէին, և բանիւք ևս նախատանաց կսկծելեօք հայհոյէին զնոսա, և խօսէին զայն ինչ զոր ոչ էր արժան: Իսկ նոքա (Յուդայեանք) խուռմբ արարին (ժողովուիլ), առհասարակ ի վերայ պարսպացն գազանաբար յարձակեցան. հասին առին զամրացեալ քաղաքն և անդ ինքեանս բազում կոտորածս զօրացն գործեցին. մինչև ծովակն որ զնովաւ շուրջ էր, զի էր ինքն որչափ քան զերկուս վտաւանս, խառնեալ արեամբ երևէր:

Եւ անտի պարզեցան (տարածուեցան) մեկնեցան ի կողմն Քարայի իրրև վտաւանօք հինգ հարիւր և յիսուն. անդ զբոտանէին զՏիմոթէոս ոչ ինչ գործ ի ձեռս յաջողեալ, լուծեալ լքեալ ի զօրութենէ իւրմէ. սակայն Թողեալ էր պահապանս զօրս ի տեղւոջ միոջ ուժգին ամրացեալ: Ապա Դոմսիթէոս և Սոսիպատրոս, որք

հզօրք զօրաւարք ի Մակաբայեցւոց գնդէ անտի, իբրև արտաքս ըստ զօրսն ելեալ շրջէին գնդաւն իւրեանց, եկին դիպեցան ամրոյն այնմիկ, հարին, ապանին, կոտորեցին ի նմա իբրև աւելի քան զտասն հազար այր: Իսկ Մակաբէոս զզօրն ամենայն ի գունդս գունդս բաժանէր. և ինքն իւրով գնդաւն ի վերայ Տիմոթէի հասանէր. և զնովաւ էին զօրք վահան ի ձեռին երկոտասան բիւր և հեծեալք իբրև երկուհազար և հինգ հարիւր: Տիմոթէոս իբրև զգայր (իմանալ) զարշաւանն Մակաբէացւոց, արձակեաց վաղվաղակի զկան և զգանձ. և զկին և զմանուկ զօրացն որ ընդ իւրն էին՝ յամուր անդր Կառնացւոց յուղարկէր. և ինքն ամենեքն անհնարին էր առ պաշարել վասն դժուարամատոյց (անմատչելի, անառիկ) նեղութեան ամրութեան վայրացն: Այլ իբրև երևեցաւ գունդն Յուդայեան, յառաջ զեռալ (յառաջ գալ բազմութեամբ) սկսան զօրք Թշնամւոյն. զի ահ ամենակալին ի վերայ անկեալ՝ արտաթափս (զարհուրած) անդէն և անդ մրրկեալ ընդ միմեանս պողեր պոցորեր

(ծիռքելով իրար անցնել), և առհասարակ ընդ ամենայն կողմանս ի փախուստ դարձուցանէր. և այնք բազում էին որ առ անին յիմարութեան ընդ իւրեանց զենս եղանէին (իրենք զիրենք սպաննել): Իսկ գունդն Ցուդայեան սաստկագոյն հալածանօք բռնեալ ի վերայ եդեալ (բռնադատել) զփախստեայսն տանէր. ի նմին տեղւոջ տապաստ արկանէին իբրև երիս բիւրս այր պատերազմի ի մարտիկ զօրէ անտի. և ինքն Տիմոթէոս դիպէր առաջի գնդին Դոսիթեան և Սոսիպատրեայ: Արդ ի ձեռն անկեալ նոցա՝ աղաչէր Թողուլ զնա կենդանի, զի ասէր բայ՝ Բազմաց ի ձէնջ են ընտանիք առ մեզ և եղբարք, զամենեսին զնոսա ողջ բռվանդակս (ողջ առողջ) փոխանակ միոյ գլխոյ իմոյ ի ձեզ արձակեցից. և այնու բանիւք հաստատեալ, փոխանակ իւր զբազումս արձակելոյն, Թոյլ ետուն նմա վասն եղբարցն փրկութեան: Նա իբրև ել անկաւ յամուր անդր, կոտորեաց յայնցանէ զոր խոստացաւն արձակել աւելի քան զերկուս բիւրս մարդկան:

Նոքա նոյնհետայն արշաւեցին ի բա-

զաք մի ամուր Եփրոն անուն՝ յորում էր բնակեալ ինքնին Լիւսիաս. և բազումք արտաքոյ պարապացն, ապաստան յամուրն և ի հանդերձս (պատրաստութիւն) մեքենայից նետիցն, և ի զինուն պատրաստութիւն, հաստատեալ կային և մտադիւրագոյնս ներքուստ արտաքս մարտնչէին: Իսկ տոքա վաղվաղակի ըզ քաղաքն ամրութեամբն հանդերձ ի ձեռն առնուին. անդ ի ներքս հարկանէին, կոտորէին, տապաստ արկանէին իբրև երկուս բիւրս և հինգհազար այր: Անտի ասպատակ դնէին ի քաղաք մի Սկիւթացւոց որ ի բացեայ էր յԵրուսաղեմէ իբրև վեցհարիւր վտաւանաւ. որք զանձինս իւրեանց երախտաւորս համարէին առ ազգն Հրէից. և ինքեանք ևս Հրեայքն որ ի ներքս բնակեալ էին՝ վկայութիւն տային (վկայել) երախտեացն զոր նոցա ի քաղաքացեացն գտեալ էր ի ժամանակի նեղութեան իւրեանց: Նոքա, իբրև խաղաղութեան պատահար ի Մակաբայեցւոց գնդէ անտի աջողեցաւ, ձայն բարձին ի գունդ անդր յայսմհետէ յառաջ առաւել ևս յազգս նոցա հնազանդութիւն պահե-

լոյ : Սոքա զանցին զԼոմօմ (զանոնմ զանց ըրին) փութացեալ ի քաղաքն Երուսաղեմացւոց . զի տօնք եւ Թներորդ շաբաթակրօնիցն մերձ ի վերայ հասեալ կային :

Այլ իբրև կատարեցաւ տօն պենտակոստէիցն , դիմեցին նոքա ի վերայ Գորգեայ որ կողմնապահ (կուսակալ , սահմանակալ) կայր կողմանցն Եդովմայեցւոց : Նա եւ ընդ առաջ նոցա երիւք բիւրուք վահանաւոր զօրու և չորիւք հազարօք հեծելազօր գնդաւ : Իբրև յայսկոյս յայնկոյս միմեանց ընդդէմ ճակատեցան, դէպ եղև սակաւուց յԵբրայեցւոց գնդէ անտի անկանել ի մէջ երկուց ճակատուցն : Դովսիթէոս ոմն անուն ի Տովքեկենացւոց գնդէ անտի , այր հզօր , սպառազէն, պատերազմող , յարձակեալ գայր ի վերայ Գորգեայ . և այն ինչ կամէր զանօրէնն ձերբակալ կալեալ կապեալ առաջի Մակաբէացւոց գնդին պատաբաղ մատուցանել , և անտի վառեալ մի ի Թրակաց գնդէ անտի զուս հարկանէր , ի վայր քարշէր և զԳորգին ի ձեռաց նորա Թափէր , մեզապուր ձղ-

ղուրեալ (հազիւ ազատելով) յամուրն փախստեայ անկանէր : Իբրև երկայնագոյն լինէր նոցա մարտ պատերազմի և բազում կոտորածք ի միջի լինէին, յայնմ ժամանակի գունդն Մակաբայեցւոց խրախոյս բարձեալ իւրեանց բարբառովն՝ ձեռն ի գործ առնեին (գործի սկսիլ) և զԳորգի հանդերձ զօրօքն ի փափուստ դարձուցանէին : Ի վաղիւն գային ընդ կողմն Հրէաստանի ամփոփել զմարմինս անկելոցն ի պատերազմի. զի տոհմային (համազգի) եղբարքք հանդերձ յիւրաքանչիւր շիրիմս առ հարսն իւրեանց ծածկիցեն : Եւ իբրև հասանէին ի ճակատուն տեղի, գտանէին զիւրեանց եղբարց դիակունսն , և ի ներքոյ հանդերձից նոցա յուռուԹ (դիւթական բան), ուղուներ եւ բժժանս (կախարդական բան մը՝ վրան կախելու համար) յամենայն կռոց ուսընդանուԹ (չափրասդ) ունէին . ուստի մանաւանդ գարշէին օրէնքն , և զՀեբրայեցիսն յայնպիսի գործոց ամենևին ի բաց մերժէին : Ապա իբրև զայն գտին , ստուգեցին ի միտս իւրեանց եԹէ կոտորած նոցա յայնց

պատճառաց լեալ իցէ : Ապա ամենեքին առ հատարակ օրինէին զարդար զդատաւորն զՏէր որ զզազտնի ծածկեալսն ի յայտնութիւն դարձուցանէ. և անկեալ խնդրուածս առնէին զեղեալ անցեալ ըզ մեղսն զայն արտի մեջ (անկեղծաբար) Թողուլ նոցա : Քաջիկ ևս Ցուդա մխիթարէր զզօրսն և ասէր զգոյշ լինել վասն նորին մեղաց. Զի ձերովք աչօք տեսէք, ասէ, զպատուհասդ եղեալ վասն մեղացըն եղելոց :

Բ. Մակար.

Ցամին հարիւրորդի քառասներորդի իններորդի՝ դէպ եղև առ ժամանակօքն Ցուդայ, եկն Անտիոքոս բազում զօրօք, Լիւսիաւ հանդերձ, ի Հրէաստան մետասան բիւրու վահանաւոր զօրօք, հինգհազար և երեքհարիւր հեծելազօր գնդաւ և քսան և երկու փղօք, երեքհարիւր գերանդազէն (գերանդեով զինուած) կառօք : Անկեալ (յարեալ) էր և Շիմոն ի նոսա ի խելս կերպարանեալս (կեղծաւորաբար, ի վերին երեսս), իբրև Թէ բարեխօս էր ի խաղաղութիւն աշխարհին. բայց սրտի խորհրդով ցանկացեալ

էր բահանայապետութեան աշխարհին : Իսկ արքայ, արքայից արքայ, յոյժ յուզեաց զսրտմտութիւն բարկութեան Անտիոքայ ի վերայ անօրէն Շիմոնի. մանաւանդ Լիւսի ևս ցուցանէր Թէ սա է պատճառք ամենայն չարեաց որ լինին յաշխարհի անդ : Հրաման տայր (Թագաւորն) ըստ օրինի ի նմին տեղւոջ կալեալ կորուսանել : Եւ էր ի տեղւոջ անդ աշտարակ մի յիսուն կանգուն շինեալ, լի մոխրով, գործած բոլորշի (կլոr, բոլորակ) յամենայն կորմանց. դուռն առ ի շեղ (ծուռ, զառ ի վայr) ի ներքսակողմն ի մոխիր անդր առ շեփ (զառ ի վայr, ուշուրում) շինեալ. յայն արկանէր ըզ վնասակար տաճարին : Այսպիսի օր հասաւ (մահ) հրամայեցին զանօրէն Շիմոն ի միջոյ ջնջել, զի մի հոգոյ (թաղման) մի պատանաց յիւրում բնակութեան աշխարհին արժանի լիցի : Քանզի բազում չարիս էր ցուցեալ նորա ի սեղան անդր, ուր հուրն սրբութեան կայր և աճիւնն (կրակ մոխրախառն), վասն այնորիկ մոխրահեղձոյց (մոխրով խղդուած) մահու զկատարած իւրմախնանէր : Բ. Մակար.

Անտիոքոս արքայ առաւել վայրենացեալ խորհրդով զայր պատրաստեալ չարաչար տանջանս քան որ առ հարքն եղեն հասուցանել իվերայ Հեբրայեցւոց: Իբրև զայն զգայր Յուդա, պատուէր տայր ժողովրդոցն զցայգ և զցերեկ կարդալ առ տէր. մխիթարէր զնոսա ասելով զգալ (սիրտ առնուլ). և ինքն առնոյր զծերակոյտ ժողովրդեանն առանձինն. ի խորհուրդ մտանէր: Պնդեսցուք (ամրացնել, գոցել), ասէ, զքաղաքդ, մինչչև զօրաց Թագաւորին ի ներքս ի Հրէաստան մտեալ է. և մեք ելցուք քաջութեամբ մահու չափ մարտնչել իվերայ օրինացն, քաղաքին և տաճարին, աշխարհի և տէրութեան: Իբրև զայն ասէր, պնդէին (դիմել) վաղվաղակի ի կողմն Մոդիիմ քաղաքի զօրօքն հանդերձ: Բանակ հարկանէր (բանակիլ), զնշան բաշխէր, յանձն առնէր Աստուծոյ զանձն և զզօրսն և զյաղթութիւնն: Եւ առնոյր զԱրիստիդէս ընտիր ընտիր երիտասարդ վառելովք. անկանէր (յարձակիլ) գիշերի ընդ բանակս Թագաւորին ի ներքս զսրահակօքն. կոտորէր զգիշերապահ

դռնապահսն, և զգլխաւոր փղացն փղապետաւն հանդերձ անդէն սպանանէր. և այնպէս զդռնապահսն տապաստ արկեալ այարէն դիմէր (աս դին կուգար): Յայնմ ժամանակի զամենայն բանակն խռովութեամբ և դողութեամբ լնոյր. և ամենեքին լքեալք և լուծեալք և սպառեալք և տարակուսեալք յայն առաւօտն հասանէին: Իսկ Թագաւորն որ զայսպիսի ճաշակս քաջասրտութեան քաջութեան զԵբրայեցւոց զնդին առնոյր, խելօք (հնարով, խորամանկութեամբ) միւսանգամ փորձ փորձէր. և ի Բեթսովր ասպատակեալ՝ պահ պահեսցէ պաշարումն մատուցանէր (կը պաշարէր). սակայն և անդ յարձակեալ մարտուցեալ ի պարտութիւն մատնէր: Զի որ ի ներքս անդ էին՝ ինքնին Յուդա նետ և զէն և համբաւրըս ընդ աներևոյթ կողմանս ի ներքս մատուցանէր: Այսց խորհրդոց առ Թըշնամի անդր Ռոդոկ անուն ի Հրէից գնդէ անտի մատն եւ գուշակ լինէր (մատնել, խաբպար տալ). բննեցաւ, խնդրեցաւ զբտաւ, պատժեցաւ, ի սուր սպառեցաւ. Իբրև աչդ զգուշութեան եղև Թագաւորին

ամբակամեայն բռնութիւն, սկսաւ. Թողեալ զզօրութիւնն, նենգաւ ջանալ ընդ ամբականան. դաշինս կռէր ի յառնուլ առնէր (առնելու վրայ ելլալ) զամուրսն: Անդէն անդուստ յարձակէր ի կողմն Յուդայեանց. և յերկոցունց կողմանց իմարտութիւն մատնեալ՝ վատթարեալ գտանէր:

Ապա ազդ եղև նմա մոլեգին գնացքն Փիլիպպեայ. զի բռնութեամբ տիրաբար ի վերայ իրացն ապքունի հասեալ շրջէր յաշխարհին. լուծաւ, լքաւ, տրտմեցաւ. աղաչեաց զԵբրայեցիս և հաւանեցաւ նոցա. ուխտ եդ. երդմնի առար (երդում արաւ) զամենայն իրաւունս նոցա անդրէն դարձուցանել. զխաղաղութիւն հաշտութեան ի մէջ հաստատեաց. մատոյց պատարագ և մեծաւորեաց զտաճարն ի զուն սէր բաղցրութեան մարդասէր լինէր ընդ ամենայն տեղիս նոցա: Փառաւորեաց զՄակաբէ և ճոխագոյն եւս (աւելի մեծ իշխանութեամբ) կացոյց ըզ նա ի վերայ նոցա քան զառաջինն. և եթող անդ ապարապետ ի վերայ աշխարհին զՀեգեմոնիդէս. ինքն եկն եմուտ ի Պաղեստինս: Բարկացեալ յոյժ էին բա-

զաքացիքն վասն ուխտիցն հաշտութեան. ոչ հանդարտէին, այլ ի նմին խռովութեան կային, զի անդրէն լուծցէ (աւրել) զհաշտութիւն հաւանութեանն: Մատեաւ ինքնին Լիւսիաս, առաջի եկաց իմաստնաբար, հաճեաց զմիտսն, մեղմացոյց, դարձ արար անդրէն ի կողմանս Անտիոքացւոց: Այն արշաւան Թագաւորին այսպիսի դարձիւ վճարեցաւ:

Բ. Մակաբ.

Յետ երից ամաց ժամանակի դէպ եղև դիմել Դեմետրեայ սելևկեանց ի վերայ Հեբրայեցւոց ընդ երիքբաղաքեան նաւահանգիստ, մեծաւ գնդաւ բազում զօրօք ի ներքս յաշխարհամէջս անդր արշաւել, մերժել զԱնտիոքոս և զնորուն եղբայր Լիւսիաս: Աղկիմոս ոմն անուն էր քահանայապետ լեալ յառաջ, եկն եկաց առաջի արքայի Դեմետրեայ, մատուցանէր նմա պսակս ոսկիս և արմաւենիս և ոստս Թաւս ի պատիւ մեհենին. և զայն օր լուռ լինէր. բայց ժամանակի ապասէր իւրում անմտութեանն օգնական գտանելոյ: Իբրև դէպ եղև օր մի ի խորհուրդ կոչել զնա Դեմետրեայ, սկսաւ հարցա-

նել զնա արքայն. Ցինչ օրէնս, յինչ կամ-
ըս, յինչ խորհուրդս կան ընդ մեզ Հեր-
բայեցիքդ որ ի Հրէաստանի են: Այսպէս
ետ պատասխանի. Ասիղացիքդ որ ան-
ւանեալ են ի մէջ Հրէիցդ, որոց սպարա-
պետ և զօրաւար Յուդա Մակաբէ համ-
բարձեալ է, զօրաժողով են. ի մարտ
պատերազմի պատրաստեալ են. յուզեն
հանապազ զժողովս նոցա և ոչ տան խա
ղաղութեամբ հնազանդել ձերում տէրու-
թեանդ: Վասն այսորիկ իմ աւասիկ Թո-
ղեալ ի բաց զփառան հայրենի, զքահա-
նայութիւնն, եկեալ հասեալ եմ առ քեզ
նախ զվասն իրացս արքունի սրտցաւու-
թեամբ ցուցանել և ապա վասն մեր. զի
մեծաւ ծփանօք (մտատանջութիւն, վա-
ռանք) մտախոհ հասի առ քեզ վասն
սրանցն անմտութեան: Այլ որպէս ընդ
կողմանս կողմանս և ընդ աշխարհս ամե-
նայն խորհուրդս խապաղութեան և կամ
մարդասէրս ունիք՝ զայն ամենայն տեղե-
կացեալ գիտեմ. այլ մինչ Յուդա կեն-
դանի է, անհնար է խաղաղութիւն առ-
նուլ իրաց արքունի ի Հրէաստանի:
Իրրև նա այսպէս սկսաւ խօսել վասն

նորա, այլ աւագանին (մեծամեծները)
որ Թշնամութեամբ ոխս պահէին Յուդայ՝
առաւել ևս շուրջ զայրացուցին զԹագա-
ւորն, մինչ անդէն վաղվաղակի հրամա-
յեաց կոչել զփղապետն Նիկանովր, ետ
զօրս ի ձեռն և կացոյց սպարապետ կող-
մանցն Հրէաստանի. արձակեաց մեծաւ
հանդերձաւ (պատրաստութիւն, հանդէս),
բազում պատուիրանաւ, զՅուդա ինքնին
ի գլխովին զբռամբ արկանել (ձեռք ձր-
գել), և զգունդն ամենայն յայսկոյս
յայնկոյս ցրել (ցրուել). անդ կացուցա-
նել զԱղկիմոս քահանայապետ մեծ ի տա-
ճարին: Այն որ ի Հրէաստանէ անտի
ազգքն փախստական գնացեալ էին վասն
Յուդայ, գային պառակտեալք (բաժ-
նուած. մաս մաս) և անդէն խառնէին
ի գունդն Նիկանովրայ. զՀրէիցն Թշուա-
ռութիւն իւրեանց փառաւորութիւն հա-
մարէին: Սոքա իբրև լսէին զՆիկանով-
րայ զարշաւանն և զայնչափ յոյզն
(շարժում) Հեթանոսաց, հող ի գլուխ
ցինէին (գլուխը հող ցանել), առաջի
Թաւալէին որ ի սկզբանէ յաւիտենից
հաստատեաց զիւր ժողովուրդ և յամե-

նայն ժամանակի յայտնապէս ձեռնկալու (ձեռք բռնող) լինէր իւրոյ վիճակին (ժառանգութիւն. ստացուած): Իբրև հրաման տայր զօրավարն (Ցուդա), փութանակի ընդ առաջ եղեւ (դիմաւորել) նմա ի գիւղ մի Գեսամ անուն Շմաւոն եղբայր Ցուդայ. ի դիմի հարաւ (զարնուիլ, կռուիլ) Նիկանովրայ՝ առ փոքր մի (քիչ մը) նիզակակցացն յանզգաստութենէ (անզգուշութիւն) ի պարտութիւն մատնեալ (յաղթուիլ): Սակայն լուեալ էր Նիկանովրայ զարանցն քաջութիւն և զմարտ պատերազմի ի վերայ աշխարհին ճգնութեան քաջութեամբ. երկնչէր զիրս դատաստանին արեամբ վճարել, վասն այսորիկ յղեաց կոչեաց նա զՊոսիդոնիոս տալ և առնուլ (բանագնացութիւն ընել) և կռել դաշինս (դաշինք ընել) Իբրև բազում տարուբեր (բանագնացութիւն) և խորհուրդք ի մէջ լինէին՝ և ի բազում ևս զօրագլուխն ըզ խորհուրդն ապրէր՝ և զօրքն ևս միաբանութեամբ միով հաւանութեամբ զհաշտութիւն յանձն առնուին. եղին զուխտն առաջի և դաշինս կռեցին: Ժամագիր

լինէին (ժամանակ որոշել) միմեանց յորում աւուր ի մի վայր հաւաքել զուխտսն հաստատեսցեն: Եկին առ միմեանս, աթոռս արկին (նստիլ), խորհուրդ խորհեցան, դաշինս կռեցին: Ցուդա հրաման ետ իւրեանց գնդին վառել, պատրաստել, դարանամուտ լինել (գաղտուկ տեղ մը կենալ դիտել), զի մի դաւ ինչ չապրագործութեան նոցա ի Թշնամեացն լինիցի. և այնպէս զգուշութեամբ դաշինս ընդ միմեանս հաստատէին: Եւ մտեալ (Նիկանովր) շրջէր յերուսաղէմ ոչինչ անկարգ և անօրէն գնացիւք. զայն որ խառնիճաղանճ զօրս յինքն կուտեալ էր՝ յիւրաքանչիւր տեղիս արձակէր, և ունէր զՑուդա զրգանօք փափկութեամբ (մեծ խնամքով) և մտադիւր (անկեղծ) սիրով: Ազաչեաց կին առնուլ ի նմանէ, զի գուրանկցի եւ զաւակ խառնեսցի (սէր եւ ազգականութիւն ըլլայ). յանձն առ Ցուդա, հաւանեցաւ, հաստատեաց, ընտանեցաւ:

Իբրև ետես Աղկիմոս զնոցա ընդ միմեանս հաւասարութիւն և զդաշինսն որ ի մէջ կռեցան, վարեաց եկն վաղվաղա-

կի առ Դեմետրիոս. ամբաստան լինէր զՆիկանովրայ և ցուցանէր օտարածայն այլամիտ (տարբեր, հակառակ) խորհուրդս ունել նմա ընդ օրէնս արքունի, զի զվնասակարն իրաց արքունի յորդեգիրս առեալ՝ ժառանգ իւր անձին փոխանակ կացուցանէ: Իբրև լսէր զբանս անօրէն բանսարկուին, ի արտմտութիւն բրդեցաւ (բարկացաւ) Թագաւորն. հրաման ետ հրովարտակս տալ, յայտ առնել Թէ չէ հաճեալ ընդ դաշինս հաւանութեանն: Ի նմին հրովարտակի հրաման տայր կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք տալ ածել զՄակաբէ ի քաղաքն Անտիոքացւոց: Իբրև այս ամենայն ազդ եղև Նիկանովրայ, խոնարհեալ կործանեալ՝ կայր տրտմեալ ի միտս իւր Թէ ստութիւն ինչ մտցէ ի դաշինս անդր և ուխտքն եբիցին տարապարտուց յանիրաւի յոչինչ՝ վրասու ի վերայ առնն արդարոյ: Բայց քանզի զհրամանաւ ինչ ոչ անցանել կարէր զԹագաւորին, սպաս արար (յարմար աւթի սպասել) մարթանօք (վարպետութեամբ) զհրամանն կատարել: Իսկ Մակաբէոս իբրև ետես յայրատագոյնս

(անամօթաբար) ի մեն մատուցեալ Նիկանովրայ, և խստագոյնս և շինականագոյնս (գեղջկօրէն) մերձեալ նորա ի նա, ոչ լաւ համարեցաւ զյանդգնութիւնն. անդէն յանդիման նորա շատ զոք ընդ իրեարս շփոթեաց, և ինքն ել գնաց յերբեսաց նորա: Իբրև ետես Նիկանովր Թէ այնպէս զձեռօք ոչ կարաց ածել (ձեռք ձգել) զայրն որպէս կամէր, ելն եհաս ի վերայ քահանայիցն. սաստէր (սպառնալիքով հրամայել) նոցա զայրն ի ձեռս տալ վաղվաղակի: Նոքա երդմամբ հաստատեցին Թէ ամենեւին զայն այր և տեսեալ չիք մեր: Զգեաց զձեռն իւր ի տաճար անդր և այսպէս երդուաւ. ԵԹԷ ոչ կապեալ ոտիւք և ձեռօք զՅուդա ի ձեռս իմ տայցէք, զայդ տաճար Աստուծոյ հարթ յատակ արարից (գետնի հետ հաւասար ընել:)

Հռաքս ոմն անուն ի ծերակոյտ ժողովրդենէ անտի, ի զօրացն Երուսաղէմի, այր ընդընկերասէր (ընկերասէր), մարդասէր յոյժ, բարենշան, բարեհամբաւ, ըստ խնամոտ մտաց հայր կարդացեալ Եբրայեցւոց. զի յառաջ ժամանակի անդ

զանխատն զանապակ (մամուր, գուս) օրէնսն օրինադիր լինէր Հրէութեան՝ ոգւով և մարմնով: Իբրև կամեցաւ Նիկանովր յայտ յանդիմանութեամբ զՄշնամութիւն յայտնել զոր ունէր ընդ Հրէայսն, հատոյց (զատել) զօր աւելի քան զհինգհարիւր՝ երթալ ի բուռն առնուլ զնոսա: Իբրև հասին զօրքն, զաշտապակն պատեցին և ի վերայ դրանն գուռն գործեցին (ջանք, զօր բնել): Նոքա (Մշնամիքն) ձայն տային միմեանց հուր մատուցանել զի զդուռնն հրձիգ արասցեն: Իբրև այնչափ ի վարան տագնապի մտանէր (նեղը մտնել) այրն, ուշ առնէր (միտը դնել, որոնել) անձին հուսանալ (ինքը զինք ապանել), դնել տուսեր ընդ պորտով. կամէր ազատօրէն մեռանել քան անկանել ի ձեռս անօրինաց և պղծել զանձին ազնուութիւն. և սրովն ուղղորդ (շիտակ) ի ներքս երթայր վասն ձեպոյն վտանգի (վուբալէն) և զօրացն ընդ դրունսն խուժելոյ (բազմութեամբ մտնել). կամէր ելանել ի վեր և զանձն ի բարձուէ ընդ պարիսպն հոսել (ինքը զինքը պարիսպէն վար նետել): Նոքա իբրև յիւրեանս

այսր անդր խուճապեցան՝ (դիմել բազմութեամբ) և ի նմանէ ամբոխն փարատեցաւ, եդ զառաւերն (սուրը խօթել) և չոքաւ զիւրովին. և կանգնեցաւ անդրէն, մինչդեռ զօրն (ուժը) և ոգիքն անդէն կային. եկն յայտ անդր զայրագին լի բարկութեամբ, մինչարիւնն գունդագունդ արտաքս հոսէր և վէրքն չարաչար պատառեալ էին և ամբոխն առաջի անդ յայսկոյս յայնկոյս փարատէր: Եկ եկաց ի վերայ վիմի միոջ յանդիման կողմանցն երկոցունց. խոնարհեցաւ, առ ի գիրկս իւր զաղիսն արեամբն հանդերձ և ցոյց ի վեր յերկինս, կարդաց զՏէր կենդանութեան զհոգւոց և զմարմնոց և ասէ. Զսոյն հատուցումն հատուսջիր դու նմա: Եւ նա զայս օրինակ փոխեցաւ յաշխարհէ:

Իսկ Նիկանովր, իբրև ազդ եղև նմա վասն Ցուդայեանց ի կողմանց Շամրտացւոց (Սամարացւոց), խորհեցաւ պատրաստեցաւ յաւուր պահոց շաբաթու անկանել ի վերայ. և Հրեայքն որ ընդ նմա էին. քանզի բռնադատեալ տանէր Նիկանովր, սկսան աղաչել և ասել. Քաւ քեզ (մի ընէր), տէր. մի այդպէս խիստ

և խժաբար (բարբարոսաբար) կատարէր զկամս քո. այլ դիր պատիւ (պատուէ) աւուրս որ պատուեցաւ ի պատիւ հանգստեան ամենակալ սրբոյդ: Սկսաւ անդէն հարցանել անօրէնն և ասէ. Եւ զոյ Աստուած ամենակալ յերկինս որ հրամայեաց ձեզ փափուկ ունել (սուրբ պահել) զօրն շաբաթուց: Նոքա պատասխանի ետուն և ասեն. Այո, զոյ Տէր ամենազօր կենդանի որ հրամայեաց փափուկ ունել զեւթներորդ օր շաբաթուց: Եւ ժանտաժուտն (չար) ասէ արհամարհանօք. Հզօրն երկրիս է որ տայ գործել զինու և զարդու և գործել զգործ արքունի: Եւ ոչ մեղմացաւ անօրէնն ի հպարտութենէ անտի. այլ ամենայն հպարտութեամբ խստապարանոց գնացեալ՝ համարէր հասանել ի վերայ Ցուդայեանց, հասանել սատակել և նշան յաղթութեան կանգնել: Իսկ Մակաբէոս միսիթարէր զայնոսիկ որ ընդ իւրն էին՝ մի ձանձրանալ, մի զանգիտել. պնդասրտեալ (քաջալերուիլ) յօժարագոյնս ևս առնէր ըզ նոսա՝ զհեթանոսացն ևս ստութիւնս ի մէջ բերելով և զուխտիցն անցանել և

զերդմանցն անարգել. և զմի մի ի նոցանէ առաւել վառէր միսիթարութեան բանիւք քան զինուքն և տիգօք և ասպարօք: Եւ երազ ևս սկսաւ պատմել նոցա զի առաւել զուարթացոյց զամենեսեան. և էր տեսիլ երազոյն օրինակ այս. Ոնիա որ յայնժամ լեալ էր քահանայապետ՝ գեղեցիկ հայելով, շքեղ տեսանելով, հեզ բարոյիւք և հանդարտ սրտիւ, եկեալ խօսաւ արկանէր (խօսել) գեղեցիկ, որպէս սովոր էր ի մանկութենէ, զամենայն զանձին քաջութենէ. համբարձեալ զձեռս իւր աղաչէր ի վերայ ազգացն Հեբրայեցւոց հաստատութեան: Ապա դարձեալ տեսանէր (Ցուդա) զծերութիւն փառաւորութեան, սքանչելի և կարի վայելուչ ինն որ շուրջ զնովաւ բակ առեալ (բորտիէր պատել) ունէր: Անդուստ խօսել սկսաւ Ոնիա և ասէր. Եղբայր, ծերս այս՝ սա է որ բազում աղօթս անպակաս յաճախ մատուցանէ Աստուծոյ, Երեմիա մարգարէ: Եւ ձգէր զաջ ձեռն իւր Երեմիա և տայր ձեռն ի ձեռն ցՑուդա սուսեր մի ոսկեհանդերձ, և ընդ տալն ասէր այսպէս. Առ զսուսերդ զայդ սուրբ պար-

գեւ ի տեառնէ զի դովաւ սատակեցեա զՅշնամիս ամենայն: Մխիթարեցան ի բանից անտի Յուդայ ի զօրեղ և ի գեղեցիկ. և բարձրացան յոյժ քաջալերութեամբ, և անձինք երիտասարդաց վերստին նորոգեցան: Եղին ի մտի այնուհետեւ ոչ այսր անդր սայթաքել (կաղալ. դեղեւիլ), այլ հաստատուն զոտս ի բոյս հարկանել (հաստատ կենալ), յենուլ ի համբերութիւն, պնդել (պինդ, ամուր ըլլալ) ի պատերազմի, ժառանգել զանուն քաջութեան, առնուլ յանձն զճգնութիւն ի վերայ քաղաքին, ի վերայ կանանց և մանկանց և եղբարց հարազատաց, ի վերայ դայեկաց բնակաց (բնիկ), տոհմային քաղաքացւոց: Արդ իբրև կողմանք զօրացն երկոցունց ի միմեանս հասանէին, փող հարկանէր, պատրաստութիւն լինէր, ճակատ յարդարէր, զփիղսն վառեալս գնդաց գնդաց ի գլուխ յօրինեալ կացուցանէին, զհեծելազօրն յաջ և յահեակ թեւս գործէին: Զայն աՀեղ տեսիլ Յուդա իբրև հայեցեալ տեսանէր. զգնդացն դրօշու դրօշու պատրաստութիւն, զվինուցն զպէսպէս սրբութիւն,

զնշանացն փողփողել (փայլել, ծածանել). զմեծամեծ գազանացն զանհնարին գազանութիւնն, զձեռս յերկինս համբարձեալ ի նշանագործ տէրն կարդայր. ասէ. Տէր ամենազօր, առաքեա զհրեշտակ քո առաջի մեր յահ, յերկիւղ և ի դողումն, զի զահի հարցին և պակիցեն (վախէն պաղիլ մնալ) որ հայհոյութեամբ հասեալն են ի վերայ ժողովրդեան քո:

Իսկ Նիկանովր մեծաշուք. ի գոչիւն փողոյ, բազում արուեստականաց (երաժիշտներու) ձայնիւ զճակատն յառաջ մատուցանէր: Սոքա ատի զձեռս ի գործ արարեալ՝ հասանէին հարկանէին ի զօրացն հեթանոսաց ոչինչ պակաս յերից բիւրուց և ի հինգ հազարէ: Անդ գըտանէին անկեալ զՆիկանովր առաջի գնդին կոտորելոց, զինուն, զարդուն, նշանօք հանդերձ, ի մէջ երկուց ճակատուցն: Հրամայեաց Յուդայ զգլուխն հատանել զՆիկանովրայ և զաջ ձեռն թիկամբն հանդերձ և տանել յԵրուսաղէմ: Իբրև եկն ինքն, կոչեաց զազգատոհմն և զքահանայսն առաջի սեղանոյն, և ետ

ուծել զամբապահ (ամրոցին պահապան-ները) միջնաբերդին, և ցոյց նոցա զանօրէն զհայհոյիչ զՆիկանովրայ զգլուխն և զձեռն զոր իշխեաց ձգել ի տաճար անդր յամենակալի Աստուծոյ պարծանօք հրպարտութեամբ: Եւ զլեզուն հրամայեաց զանօրէն Նիկանովրայ հատանել և ասէ, Մանր մանր կոտորեալ զայս Թուչնոց գէշագէշ ջամբեցից (կերակուր տալ): Եւ զանմտութեան բազուկն յանդիման տաճարին հրամայեաց կախել: Եւ կախեաց զգլուխն զբարձրամուր աշտարակէն յայտ յանդիման ամենեցուն: Ուխտեդին առ հասարակ, հրաման ետուն ընդ ամենայն ազգն ի հասարակաց (ընդհանուր, միաբան) կամաց հաւանութենէ՝ առնել զօրն զայն օր տօնից տարեկանաց, զի մի Թողցեն աննշան (ան որ նշանաւոր չէ) զօրն զայն:

Այն որ ինչ վասն Նիկանովրայ իրացն խօսք են՝ այսչափ. և յայնց ժամանակաց յորում հասու եղեն Հեբրայեցիք քաղաքին՝ ի նմին վայրի և ես զբանս վախճանեցից. և եԹէ իցեն ի կարգի, գովեցայց, ի կարգել անդ՝ զայս և ես կամիմ. ապա

Թէ հետևակ (ցած, սորին) ինչ և տըկարս ինչ խօսեալ իցէ, ես այդչափ ինչ կարող էի:

Բ. Մակաբ.

Յետ հարուածոցն Աղեքսանդրի կայսեր Մակեդոնացւոց որդւոյ Փիլիպպեայ որ խաղաց գնաց յերկրէն Քետիմացւոց ի ժամանակի զի հարկանէր զԴարեհ արքայ զՊարսից և զՊարթևաց, և որ Թագաւորեաց իսկ յետ նորա ի վերայ Յունաց աշխարհին և Հռոմոց՝ անկանէր ի մահճիս իւր և զախտս մահու ջերաներ (հիւանդանալ): Իբրև ետես Թէ մեռանի, կոչեաց նա զծառայսն դայեկորդիսն իւր, զչորեսին փառաւորեալս ի նմանէ, որ ընդ նմա իսկ սնեալ էին ի մանկութենէ. և բաժանեաց ետ նոցա զարքայութիւն իւր, մինչդեռ ինքն կենդանի էր: Յետ նորա զատեալ հաստատեցան կացին յիւրաքանչիւր տէրութեան դայեկորդիքն իւր. Թագ կապեցին իւրաքանչիւր, և որդիք նոցա յետ նոցա:

Ի նոցանէ բղխէր արմատ չարի շառաւիղ (նիւղ) դառնութեան անօրէնն Անտիոքոս, որ էր մնացեալ ի պատանդս

ի Հռոմ քաղաքի: Յաւուրս ժամանակաց այնոցիկ ելին զառան յորդւոցն Իսրայելի արք անօրէնք. ի բանս պատիրս, ի բանս հրապուրանաց արկին զբազումս և ասեն. Եկայք երթիցուք. ուխտ դիցուք և դաշինս կռեսցուք ընդ ամենայն ազգս հեթանոսաց որ շուրջ զմեզդ բնակեալ են. զի յաւուրցն ժամանակաց հետէ յորմէ անջատեցաք (զատուիլ) մեկնեցաք մեք ի նոցանէ՝ չարիք բազումք կարկեորք (երեւելի, գլխաւոր) եկին հասին ի վերայ մեր: Հաճոյ Թուեցաւ բանն ի միտս բազմաց. յօժարեցին ոմանք ի ժողովրդենէ անտի երթալ յանդիման լինել Թագաւորին:

Իբրև աջողեցաւ Թագաւորութիւնն առաջի Անտիոքայ, եղ ի մտի իւրում նա Թագաւորել և ի վերայ երկրին Եգիպտացւոց. միաբանել զերկոսին Թագաւորութիւնն: Դիմեաց խազաց գնաց նա ի վերայ երկրին Եգիպտացւոց տալ պատերազմ ընդ Պտղոմեայ. ի պարտութիւն մատնեցաւ Պտղոմէոս յերեսաց նորա և փախուստական լինէր առաջի նորա: Յայնմ մարտի բազում վիրաւորք անկա-

նէին: Ապատակ ափռէր ընդ աշխարհն ամենայն Անտիոքոս. վաղ հասանէին, արագ արագ զաւարն ժողովէին և առնուին զամուրս ամենայն երկրին Եգիպտացւոց:

Յամին հարիւրորդի քառասներորդի երրորդի եկն եհաս ի վերայ քաղաքին Երուսաղեմացւոց մեծաւ պատերազմաւ: Զառաջինն դիմեաց յանդիման տոճարին. կեղևեաց (կեղեւի պէս վրայէն հանել) ամրեաց (հալեցնելով թափել) զամենայն. և առ նա զարծաթն և զոսկին, զզէնն և զզարդն և զամենայն զիսահ պատերազմի. եհեղ արիւն բազում և արար մահուանս անհամարս: Եւ եղև տուգ մեծ ի վերայ Իսրայելի. հեծեցին իշխանք և ծերք կուսանք և երիտասարդք տկարացան. եղծաւ զեղ կանանց, և ամենայն փեսայից լի եղեն բերանք յողբոց լալուԹեան. և ամենայն հարսանց եղեն արգելանք ազոյ սրսկապանք (ճերմին սենեակ) իւրեանց:

Զհետ երկուց տմաց ժամանակացն այնոցիկ՝ արձակեաց արքայ Անտիոքոս իշխան հարկահան (հարկ առնող) ի քա-

դաքսն Հրէաստանի. և եկն յԵրուսաղէմ զօրօք բազմօք. անկաւ նա ի վերայ քաղաքին յանկարծակի և հար զնոսա ի հարուածս մեծամեծս. և առ նա զաւար քաղաքին և հրէից արար զամենայն փայտակերտ զապարանից նորա. քակեաց և աւերեաց շուրջ զպարիսպս քաղաքին և զամենայն զորմս շինուածոց զապարանից նորա: Եւ շինեցին զամրակումն ըզ գլուխ քաղաքին ի պարիսպս ամուրս. և եղև նոցա այն իբրև բերդ ի բերդի ամրացեալ քաղաքին. ամրացուցին զինու. հանդերձեցին լցին համբարօք, և զամենայն զօրն Երուսաղեմի ի ներքս կուտեցին, և եղեն յորոգայթ մեծ տանն Իսրայելի և ի խափան սրբութեանն. և զարձան տօնք տաբեկանաց նոցա ի սուգ: Հրեշտակս արձակեաց Թագաւորն հրովարտակօք հանդերձ յԵրուսաղէմ և ի քաղաքսն Հրէաստանի դարձուցանել ըզ նոսա յօրէնս օտարոտիս (osur). խափան առնել (խափանել) ողջակիզացն պատարագաց. նուիրեալ սեղանս կանգնել, երևեցուցանել անդս մեհենից. յազել (զոնի համար կsrել) զխոզս և խառ-

նակ զանասունս. Ըստ ամենայն բանի զոր գրեաց Թագաւորն՝ արար ոստիկանս (դիsոդ. հոգ տանող) ընդ ամենայն տեղիս. և պատուէր ետ քաղաքացն Հրէաստանի մատուցանել զոհս քաղաքի քաղաքի: Եւ ժողովեցան առ նոսա այր ամենայն որ ապստամբ լեալ էր յօրինաց անտի. և արարին ամրախիտ (ամուr տեղեr ապաւինող) զիսրայել յամենայն տեղիս ամրութեան ապաստանաց նոցա: Եւ շինեաց նա պատկեր պղծութեան ի վերայ սեղանոյն. ընդ ամենայն Հրէաստան շուրջ զքաղաքօքն շինեցին մեհեանս, և ի վերայ ամենայն դրանց ապարանիցն և ընդ ամենայն գնացս (համբայ) քաղաքացն խունկս արկանէին (խունկ ծխել): Եւ զգիրս ամենայն կտակարանացն զոր գտանէին՝ պատառէին և հուրբ կիզուին. և ուր առ ումեք գտանէին գիրք կտակարանաց կամ թէ որ ուրեք ընդ օrենս հաւատարեr (օrէնքին կը յարմարէr), հրաման Թագաւորին զնա մահու սպանանէր: Եւ ըստ քսան և հինգ և քսան և հինգ ամսոյ զոհս ի բագինս բագինս մատուցանէին: Բազումք յե-

թուսապեմացւոցն հաստատեցան. պնդեցին զանձինս իւրեանց զի մի կերիցեն ի պղծութենէ անտի. յանձն առին յօժարութեամբ մեռանել և ոչ պղծել զանձինս իւրեանց ի խառնակ կերակրոյ անտի:

Ա. Մակաբ. Գլ. Ա.

Յաւուրս ժամանակացն այնոցիկ համբարձաւ Մատաթի Շմաւոնեան. եկն և նստաւ նա յամուրս այրիցն ի Մոդիիմ: Սկսաւ ողբալ և ասէ. Վայ ինձ. իսկ ընդէր պատրաստեցաւ բնաւ տեսանել ինձ զբեկումն ժողովրդեան իմոյ. զի կաց մնաց նա մատնեալ ի ձեռս թշնամեաց իւրոց. ամենայն զարդք նորա զերծան (կողոպտուեցան) ինմանէ. և ամենայն գեղ զարդուն մերոյ և փառք մեր յաւար կործանեցան. և զի պիտոյ են բնաւ մեզ այս կեանք: Եկին հասին ի Թագաւորէ անտի որ ասիպաւ տաճնապետին (բռնադատելասիպել) զապստամբութիւնն: Հապա, խօսել սկսան որ եկեալն էին և ասեն ցը Մատաթի. Իշխան փառաւոր ես դու և մեծ ես դու ի քաղաքիս յայսմիկ. արդ մատիր նախ դու. արա զհրաման կամաց Թագաւորին: Պատասխանի ետ Մատաթի

ի ձայն մեծ և ասէ. Քաւ լիցի (Ասուած չընէ) մեզ Թողուլ զօրէնս և զիրաւունս Աստուծոյ. ոչ Թողումք զպաշտօն հարցն. ոչ Թիւրիմք (խոտորիլ, ծռիլ) յաջ կամ յահեակ և ոչ անեսամք հրամանի Թագաւորին: Այն ինչ նորա բանքն ի բերան էին, այր մի ի հրէից անտի յանդիման ամենեցուն յառաջ կաց զոհս մատուցանել առաջի մեհենին ի բագնի անդ: Իբրեւ ետես Մատաթի, ի նախանձ բարկութեան բրդեցաւ. երիկամունք իւր զդողանի հարան (դողալ), զոտս արձակեաց (ոտքն վերցուց), հար զՀրեայն և անդէն սատակեաց առաջի բագնին. և զայրն որ արքունի հրամանաւն տագնապէր զզոհսն մատուցանել, անդէն սպանանէր. զբագինն կործանէր, զմեհեանն աւերէր: Ի ձայն բարձր աղաղակել սկսաւ և ասել. Հապա, ամենայն մարդ որ դիցէ ի մտի իւրում խնդրել ըզ նախանձ վրիժուց օրինացն. որ ընդ հաստատութիւն կամիցի օրինացն՝ զհետ իմ ելցէ: Խաղացին, փախստեայ գնացին նա և եղբարք իւր ընդ լերինս, և Թողին զամենայն ինչս իւրեանց անդէն ի քաղաքի:

Յայնմ ժամանակի իշին բազումք յանապատ անդր նստել անդ կանամբք և որդւովք և անասնովք հանդերձ: Ազդ եղև իշխանաց Թագաւորին և զօրաց որ էին ի քաղաքին՝ եթէ իշին արք ոմանք յամուրս անապատին. իշխեցին ցրել (մերժել) զհրաման Թագաւորին և բազումք միաբանեալ իշին ընդ նոսա: Ժամ ետուն, (ասեն որոշեցին) կազմեցան, պատրաստեցան, հեծան, հասին, պատեցին զամուրս անապատին. եկին ի մարտ պատերազմի և փակեցին զնոսա յաւուրս շաբաթուց: Նախ բանագնաց (իրարու խօսք ղրկել) եղեն. սկսան խօսել ընդ նոսա և ասեն. Գոնէ արդ յայսմհետէ կացէք ի հրամանի Թագաւորին և կեցջիք: Անդուստ (անդիէն) խօսել սկսան և ասեն. Ոչ ըստ ամուրս (ամրոցէս դուրս, անդին) ելանեմք. ոչ ըստ այդմ բանի հրամանի Թագաւորին պղծեմք զշաբաթս մեր: Իբրև զայն բան լուան, սաստկացուցին ըզ պատերազմն առաւել ի վերայ նոցա. և պնդեցին (պաշարել) զամուրսն յառնուլ զնոսա: Նոքա ոչ զկիրճս առին (նեղ տեղերը բռնել), ոչ գիլս (քար) արձակեցին.

ոչ զամուրսն փակեցին և ոչ բնաւ բանիցն ետուն պատասխանի վասն շաբաթուն: Իբրև զայն տեսին, սաստկացուցին ըզ պատերազմն յաւուրն շաբաթու և սպանին ի նոցանէ հազար ոգի, Թող զմարդ և զանասուն զոր ի գերութիւն վարեցին. Իբրև զայն լուան Մատաթի և եղբարքն իւր, սուգ մեծ առին և տրտմեցան յոյժ: Յայնմ ժամանակի ժողով լինէր առ նոսա բազում զօրաց Ասինացւոց. ազգ հզօր և պատերազմող յորդւոցն Իսրայելի. այր ամենայն ինքնակամ նահատակեալ (դէմ դնող, ախոյեան) ի վերայ օրինացն. և ամենայն փախստեայք զային յաւելուին ի նոսա: Զօր կազմեցին և գունդ գոլանդակեցին (գունդ շինել) և աջողեցաւ գործն ի ձեռս նոցա: Իբրև մերձեցան աւուրքն Մատաթեայ մեռանելոյ, կոչեաց զորդիսն առաջի իւր և ասէ ցնոսա. Զօրացարուք, որդիք, բաջ լերուք. աւադիկ Շմաւոն եղբայր ձեր. զի այր խորհրդական (աղէկ մտածող) է, դմա լուիջիք. նա ձեզ լիցի ի տեղւոջ (փոխանակ) հօր: Եւ Յուդա Մակաբէ՝ դա լիցի ձեզ սպարապետ զօրավար զօրացդ, և

տացէ պատերազմ ընդ զօրս : Բայց դուք յարեաջիք ի ձեզ զամենայն օրինակիս (օրինաց կողմնակից) օրինաց . նախանձայոյզ (նախանձաւոր) լիջիք խնդրել ըզ վրէժ ժողովրդեան ձերոյ :

Ա. Մակաբ. Գլ. Բ.

Համբարձաւ Յուդա որ անուանեալ կոչէր Մակաբէ. և ձեռնտու (օգնող) օգնական եղեն նմա ամենայն եղբարք նորա: Զգեցաւ զէն իբրև զհսկայ, և հանդերձեցաւ (պատրաստուեցաւ) ի զարդ պատերազմի . մղէր զմեծամեծս ի պատերազմի և հովանի լինէր ամենայն գնդին իւրով նիզակաւն : Նմանեցաւ առիւծու գործովք իւրովք. և իբրև զկորիւն առիւծուց որ յորս մռնչէր: Սարսեցին անօրէնք յահէ նորա, և ամենայն սատարք (գործող, մեակ) անօրէնու- Թեան խռովեցան . և աջողեցաւ փրկութիւն ի ձեռս նորա : Հապա զօրաժողով լինէր Ապողոնիոս հեթանոսաց հանդերձ, և բազում ևս զօրս ի Շամրոնացւոց ժողովէր գալ տալ ընդ Իսրայելի պատերազմ: Իբրև ետես Յուդա, ել ընդ առաջ նորա . հար սպան զնա . և արկանէր բազում վիրաւորս ի զօրաց նորա և զմնացեալսն

ի փախուստ դարձուցանէր . առնոյր ըզ կապուտ և զաւար նոցա, և զսուսերն Ապողոնեայ առնոյր Յուդա և այնու իսկ հարկանէր զզօրս նոցա զամենայն աւուրս կենաց իւրոց: Իբրև զայն լսէր Նրէն իշխան զօրացն Ասորեստանեայց եթէ զօրաժողով է Յուդա, խորհեցաւ յանձն իւր և ասէ . Արարիցս և ես անուն և փառաւորեցայց. տաց պատերազմ ընդ Յուդայի և պարտեցից զայնոսիկ որ անարգեն ըզ հրաման Թագաւորին: Դարձեալ կրկնէր լինէր զօրաժողով և բազում զօրք ընդ նմա անօրինացն ի թիկունս հասանելիս (օգնութեան կուգային): Ել Յուդա ընդ առաջ նորա սակաւուք . իբրև տեսին զգունդն զի գայր ճակատեալ ընդդէմ նոցա . սկսան խօսել որ ընդ Յուդայի էին և ասեն. Զիարդ կարասցուք մեք սակաւաձեռն (քիչուոր) մարտնչել ընդ այնչափ պնդակազմ (ուժով, շատուոր) գնդի . մանաւանդ զի լքեալք և լուծեալք (թուլցած). զի այսօր քանի է զի նօթի (անօթի) եմք: Քաջալերել սկըսաւ զնոսա Յուդա և ասէ. գործ մի դիւրին է Աստուծոյ մատնել զբազումս ի ձե-

ոբս սակաւուց. և ոչինչ է խսիր (տուրբերութիւն չկայ) առաջի երկնաւորին ընդ բազումս եւ ընդ(*) սակաւս: Այլ դուք զօրացարուք, քաջ լերուք, մի զանգիտէք: Այն ինչ (դեռ, հազիւ) բանքն ի բերան էին, յարձակէր ի վերայ գնդին, զայն Թև բեկանէր յորում վառեալ կայր Նրէն արքայ. և շարժէր ըզ գունդն ի տեղւոջէ. և զզօրսն ամենայն առաջի նորա նովաւ հանդերձ ի փախուստ դարձուցանէր. և ինքնեանք զհետ լինէին նոցա, և բազում վիրաւորս ի նոցանէ դիաԹաւալ յերկիր կացուցանէին. և անկանէին ի նոցանէ իբրև արք ութ հարիւր, և որ մնացեալքն էին՝ փախստեայք անկանէին ի Փիղիստիմ: Եւ սկսաւ ահն և հոյն (վախ, սարսափ) երԹալ առաջի Ցուդա և եղբարցն. յօժարէին այնուհետև ասպատակ տալ (կողոպտելու համար յարձակիլ) ի հեԹանոսսն որ շուրջ էին զնոքօք:

Իբրև լուաւ Անտիոքոս կայսր զբանս զայս, բարկացաւ. զօրաժողով լինէր

(*) Տես Բերականութիւն էջ 162, 8°.

յամենայն աշխարհաց իւրոց, զորս կուտէր բազում յոյժ: Գանձ բանար, պարգևս բաշխէր զօրացն տարւոյ միոջ. իբրև ետես եԹէ գանձքն սպառեցան և հարկ աշխարհին նուազեաց վասն երկպառակուԹեանն և հարուածոցն. զարհուրեցաւ Թէ գուցէ ոչ բաւեցուցցէ զպարգևսն և զռոճիկս որպէս յառաջ առատաձեռն բաշխէր. վարանէր յանձն իւր. խորհեցաւ մտանել յաշխարհն Պարսից, առնուլ հարկ յաշխարհացն անտի, կուտել արծաԹ յոյժ: Եւ եԹող նա զԼիւսի այր փառաւոր յազգէ ԹագաւորուԹեանն ի վերայ իրացն արքունի. և եԹող առնմա զկէս օրացն և զփիղսն, և պատուէր ետ նմա վասն Հրէաստանի և Երուսաղէմի: Եւ գումարտակ առաք (զորք ղրկել) ի վերայ նոցա սատակել զնոսա և ջնջել ի տեղւոջէ անտի զյիշատակ նոցա և բնակեցուցանել անդ զորդիս օտարաց. լարաբաժին (չուանով չափելով բաժնել) առնել զերկիր նոցա. և ինքն առ զկէս ի զօրաց անտի: Խաղաց գնաց յԱնտիոք քաղաքէ, և անց նա ընտ(*)

(*) Տես Բերականութիւն էջ 103, 1°.

գեսն մեծ ըստ Եփրատ և երթայր ընդ(*) կողմն վերնագաւառացն:

Եւ ընտրեաց Լիւսիաս զՊտղոմէոս և զՆիկանովր, արս հզօրս, բարեկամս, խորհրդականս արքայի. և ընդ նոսա առնէր զումարտակ քառասուն հազար հեծեալ և եւթն հազար ձի ասպատանիկ (կրքուած) գալ հասանել իվերայ երկրին Հրէաստանի, հարկանել սատակել զաշխարհն: Խաղացին գնացին ամենայն զօրքն հանդերձ, և եկին հասին բանակեցան մերձ ի Յոմուով, ի տափակողմն ի դաշտագետին վայրին (շիտակ տեղ. օվա): Լու եղեւ վանառականաց (վանառականներր լսեցին) աշխարհին եթէ եկեալ հասեալ են զօրք աւար առնուլ զերկիրն Հրէաստանի, ի գերութիւն վարել զորդիս և զդստերս նոցա. առին զարծաթ և զոսկի իւրեանց և մարդիկ բազում որչափ ձեռնհաս (կարող) էին օգնական իւրեանց գալ գնել զորդիսն Իսրայելացւոց յանաշխարհիկս (osur երկրէ գերի) իւրեանց: Իբրև ետես Յուդա և եղբարք իւր եթէ

(*) Տես Բերականութիւն էջ 101. 5°.

եկին հասին ամենայն չարիքն ի վերայ նոցա, սկսան խօսել այր ընդ ընկերի և ասեն. Եկայք պնդեսցուք զանձինս մեր, կանգնեսցուք զգլուխն ժողովրդեան մերոյ: Եւ էր Երուսաղէմ աւերակ Թափուր (պարապ) և սրբութիւնն կայր կոխան (կոխուած) յորդւոցն այլազգեաց. և ամբակողմն գլուխ քաղաքին բնակութիւն եղև հեթանոսաց, և բարձան ուրախութիւնք Յակոբայ, պակասեցին փողք և տաւիղք, և լռեցին ամենայն ցանկալի ուրախութիւնք արուեստականաց (երաժիշտս): Եկին ժողովեցան ամենեքին. ծոմ կարդացին (ծոմ հրատարակեցին) քրձազգած լինէին, խորգ (մազեղէն շապիկ) և մոխիր առնուին, հող ի գլուխ լինէին, զօձիս (եախաւ) պատառէին. ի ձայն բարձր միաբարբառ աղաղակէին և ասէին. Զիարդ կարասցուք մեք զդէմ ունել, եթէ ոչ դու, Տէր, օգնեսցես մեզ: Փող հարկանէին, զաղաղակ դնէին (պռուտ) ի ձայն բարձր յերկինս կարդային: Յետ այսորիկ կարգել սկսաւ Յուդա զժողովուրդսն, և ասէ ցայնոսիկ որ շինէին շինուածս և խօսէին կանայս

և տնկէին այգիս, և պատուէր տայր վաստասրտաց (վախկոտ, վատ) զի դարձցին ի տունս իւրեանց: Անդուստ բաջալերել սկսաւ զզօրսն և ասէ. Վառեցարուք, պատրաստեցարուք, զօրացարուք վաղորդայն (վաղն առտու) տալ պատերազմ ընդ հեթանոսս:

Ա. Մակաբ. Գլ. Գ.

Փոխ հարին ի կողմանցն Յուդայի. ի մի վայր ժողովեցան, ի վերայ յարձակէին. ձեռն ի գործ առնէին, զբազումս առ ետեղ (նոյն տեղը) սատակէին և զբազումըս փախստականս առնէին ընդ երեսս դաշտին: Խօսել սկսաւ Յուդա ընդ զօրսն և ասէ. Մի ինչ աչս արձակէք (աչք տնկել) դուք յաւար, ի կապուտ դիականցն անկելոց. զի դեռ աւանիկ Գորգիոս վառեալ պատրաստեալ ընդդէմ կայ մեր զօրօք իւրովք. այլ կացէք կա: շարուք զտեղի (կայնեցէք). զդէմ կալարուք (դէմ դրէք) Թշնամեաց ձերոց. ապա յետ մարտին յաղթութեան դարձչիք համարձակութեամբ: Մինչդեռ նա զայն ընդ նոսա խօսէր, տեսին զի գունդ մի երևեցաւ ի լեռնէ անտի. և գիտացին

եթէ ի պարտութիւն մատնեալ հուր արկանելոյ (կրակ վառել) սկսան ի բանակի անդ. և ծուխն որ դիզանէր՝ նշան լինէր գործոյն եղելոյ: Նոքա իբրև հայէին ի գունդն Յուդայեան որպէս ճակատեալ կայր պատրաստութեամբ, կասէին (կայնել, դադրիլ). ապա ջոտս արձակէին (ոտքը վերցնել), փախստեայ գնային յերկիրն Փղշտացւոց: Եւ Յուդա դառնայր ի տեղի պատերազմին ի կապուտ կողոպուտ յաւար դիականցն անկելոց. և առնոյր ի բանակէ անտի նոցա զոսկի և զարծաթ, զհանդերձս պատուականս, ըզ կարմիր, զկապուտակ, զծովու ծիրանիս, մեծութիւն (հարստութիւն) բազում:

Ի գալուստ ամին միւսոյ՝ զօր հաստատեր (զօրք հաւել) Լիւսիաս, այրուձի (ձիաւոր զօրք) առնէր. իբրև վեց հազար հետևակ, հինգ հազար հեծեալ սպառազէն գալ հասանել աւար առնուլ զերկիրն Հրէաստանի: Եկին հասին ճակատեցան ի կողմանս Բեթովրայ: Եկ նոցա ընդ յառաջ Յուդա մետասան հազար արամբ. և իբրև տեսին զգունդն (Լիւսեայ) ստուար (հաստ, բազմաթիւ) և հզօր, սկսան կալ

յաղթեա և ասեն. Ծէր Աստուած, խորտակեա զզօրութիւն զօրացս այսոցիկ. արկ զնոքօք զվատութիւն: Եւ հարձեալ միմեանց ի դիմի (զարնուեցան). և անկան ի ժամանակին յայնմիկ ի գնդէ անտի Լիւսեայ հինգ հազար հեծեալ առաջի նոցա: Սկսաւ խօսել Յուդայ եղբարքն հանդերձ ընդ ժողովուրդսն և ասէ. Ահաւասիկ խորտակեցան թշնամիք մեր ի ներքոյ ոտից մերոց. եկայք երթիցուք մաքրեսցուք զտաճարն առնել նաւակատիս (տարեքարձ)ի նմա: Ժողովեցան ժողովքն ամենայն. եկին հասին ի լեառն Սիոն. տեսին զսրբութիւնն աւերեալ և զսեղանն աղտեղեալ, զդրունսն այրեցեալ, քուսի առ քուսի բուսեալ (վայրենի խոտերով ծածկուած) ի սրահսն իբրև անտառի կամ իբրև միոյ միոյ լերանց. ըզկոնքս աւերեալս և զվարագուրաձիգսն (վարագուրով ծածկուած տեղ) խաթարեալս (ապականուած): Զեռս զօձեօք արկանէին (իրենց օձիքը բռնելպատռել), զպատմուճանս պատառէին, հող ի գլուխ լինէին, ընդ երկիր թաւալէին, փողաՁչաւք հարկանէին (փող զարնել նշան տալու համար), յերկինս աղաղակէին: Յայնմ ժամանակի հրաման տայր Յուդա զօրահաւոյց առնել (զօրք հանել) ի վերայ միջնաբերդին պաշարել զնա զի մաքրեսցէ զսրբութիւնսն: Եւ ընտրեաց նա քահանայս անարատս կամարարս (բարեպաշտս). և ի բաց առին զվէմսն որ պղծեալ էին, եդին մեկուսի ի տեղի մի. և խորհուրդ կալան ի վերայ սեղանոյ ողջակիզացն եթէ զինչ արասցեն զնա: Հաստատեցաւ բանս այս ի խորհրդի անդ քակել զսեղանն, և քակեցին զսեղանն և տարան եդին զգարինսն ի դիպան (պաստաճն) տեղւոջ. և առին վէմս անկոփս (չգործուած) և շինեցին զսրբութիւնսն. և զսրահսն սրբեցին, և ըստաս սրբութեան նոր գործեցին: Եւ արկանէին խունկս ի վերայ սեղանոյն. ճրագսս լուցանէին և լոյս տային տաճարին և ձգէին (քաշել) զվարագոյրսն: Յաւուրսն յայնոսիկ յորս պղծեցին հեթանոսք՝ ի նմին ժամանակի և նորոգեցաւ յերգս օրհնութեան, ի փող և ի քնար և ի սրինգ: Եւ հաստատեաց Յուդա եղբարսն հանդերձ և ամենայն ժողովքն

Իսրայելացւոց, հանապազ կացցեն աւուրքս այս նաւակատեաց սեղանոյն տարւոջէ ի տարի ի գլուխ տարեկանի աւուրս ութ :

Ա. Մակաբ. Գլ. Դ.

Եւ տայր պատերազմ հանապազ Յուդա ընդ որդիսն Եսաւայ որ են ի կողմանս Եղովմայեցւոց. հարկանէր զնոսա ի հարուածս բազումս և նուազ առնէր զնոսա. և առնոյր զկապուտ զաւար նոցա : Փախստեայ լինէին ի նմանէ և ամբանային ի բերդս իւրեանց. գայր, շուրջ պահ դնէր (պաշարել) զնոքօք և հրձիգ առնէր զամուրս նոցա ամենայն բնակչօքն հանդերձ : Եւ ժողովեցան ամենայն հեթանոսք ի Գաղատ վասն Իսրայելի զի ջնջեսցեն զնոսա , և նոքա փախստեայք անկանէին յամուրն ի Դովթայիմ: Եւ արձակեցին նոքա հրեշտակս առ Յուդա և ասեն . Ժողովեալ են աւասիկ ի վերայ մեր ամենայն հեթանոսք, պատեալ պաշարեալ պնդեն զմեզ ջնջել ի տեղւոջէ աստի. պատրաստ են յառնուլ զամուրս յոր անկեալ (ապաւինել) եմք. արդ՝ եթէ իցէ ինչ ի ձեռս (եթէ կարող ես), արա-

գեսցես (փութալ) փրկել զմեզ ի ձեռաց նոցա զի անկան բազումք ի մէջ , և ի գերութեան վարեցան կանայք նոցա և որդիք նոցա, ամենայն կահիւ կարասեաւ իւրեանց առ հասարակ կորեան :

Այն ինչ դեռ թուղթքն ի ձեռին էին , այլ գուժկանք (գէշ լուր բերող) հասանէին ի կողմանցն Գալիլեացւոց անտի՝ զօձիս պատառեալ, զնակաս հագեալ (նակատը վիրաւորել՝ ի նշան սգոյ), և զգոյժս զայս տային և ասեն. ժողովեցան ի վերայ մեր ի Պտղոմեայ և ի Ծուրայ և ի Ծայդանայ (Սիդոն) և ամենայն կողմանք Գալիլեացւոց յայլազգեաց կուսէ (կողմէն) ջնջել զմեզ անտի : Լսեալ սկսաւ Յուդա ընդ Շմաւոնեայ ընդ եղբօր իւրում և ասէ. Ընտրեա դու քեզ արս հզօրս, և երթ փրկել զեղբարսն որ են ի նեղութեան . և ես և Յովնաթան եղբայր իմ երթիցուք ի կողմանս Գաղատու: Եւ եթող անդ զՅովսեպոս Զաքարեանց և զՁաքարի զօրագլուխս ընտիր ընտիր զօրօք հանդերձ յերկրին Հրէաստանի պահապանս . պատուէր ետ նոցա և ասէ . Առաջնորդեսջիք ժողովրդեանս այսմիկ և մի տայցէք դուք մարտ

պատերազմի ընդ հեթանոսս մինչև ի դարձ գալստեան մերոյ անտի: Զօրահատոյց արարին, ընդ երկու զզօրսն բաժանեցին, գնացին երեք հազարք ընդ Շմաւոնեայ ի կողմանս Գալիլեացւոց. և ութ հազար յերկիրն Գաղադու: Եւ գնաց Շմաւոն յերկիրն Գալիլեացւոց, տայր պատերազմ ընդ հեթանոսս և հալածական տանէր զնոսա մինչև ի դրունս Պտղոմեայ: Եւ Յուդա Մակաբէ և Յովնաթան եղբայր նորա անցին յայն կողմն Յորդանան գետոյն և գնացին երից աւուրց գնաց ճանապարհի (երեք օրուան ճամբայ) (*)յերկիր յանապատ: Եւ ընդ առաջ եղեն նոցա Նաբատացիք խաղաղութեամբ և պատմէին նոցա զամենայն անցսն որ անցին ընդ եղբարսն, և ասեն. *ի մի վայր միաժողով են* (մէկ տեղ ժողվուած են) *հեթանոսք, առ վաղիւ* (վաղուան համար) *ժամադիր են* (իսուֆ մէկ ըրած են) *փակել* (պաշարել) *պատել զամուրսն, առնուլ ջնջել սատակել զմենեսին յաւուր միում*: Իբրև զայն

(*) Տես Բերականութիւն էջ 108. 4°:

լուաւ Յուդա, զունդ կազմեաց վաղվաղակի ճանապարհ կալաւ ընդ անապատս (անապատէն անցաւ), յանկարծակի անկանէր ի վերայ Բոսորայ. յանկարծակի յեղակարծում ժամու զամենայն քաղաքն ի բռնն առնոյր (ձեռք ձգել, առնել). և ինքն գիշերայն զընդաւն հանդերձ դիմէր ի վերայ ամրոցն (ամուր, գոյ. բերդ) պաշարելոց: Այն ինչ կամէր առաւօտն ի գիշերոյն մերկանալ (առտու ըլլալ) զաչս ի վեր ամբարձին, տեսին զօրս բազումս զի ոչ գոյր նոցա թիւ. բարձեալ բերէին սանդուղս և պէսպէս մենքենայս ի վերայ ամրոցն: Եւ իբրև ընդ այն հայեցաւ Յուդա և ետես զի սկիզբն էր մարտին, անտի՝ աղաղակ քաղաքին և աստի՝ զօրացն որ պաշարեալ պահէին՝ ձայն մարտի, ձայն պատերազմի, ձայն փողոյ առ հասարակ յերկինս ելանէր, սկսաւ խօսել ընդ զօրսն իւր և ասէ. Հապա, ժիրք (արի) լերուք, պինդ (հաստատուն) կացէք. գործ այսօր է մարտնչել ձեզ ի վերայ եղբարց ձերոց: Եւ զզօրսն ամենայն յերիս գունդս բաժանէր, և շուրջ զնոքօր

ճակատեալ ի մարտ մատուցանէր : Փող հարին, խրախոյս (համարձակութեան ձայն, խօսք) բարձին, ի վերայ յարձակեցան : Ազգ եղև Տիմոթեայ և զօրացն թէ Մակաբէ զօրօքն ի վերայ հասեալ է. իբրև հայեցան տեսին. շրտեան (ապշած մնալ), լքան, կասեցին, ընկեցին զիւրաքանչիւր մենքենայս և ի փախուստ դարձան : Եւ հարկանէր յաւուր յայնմիկ զնոսա ի հարուածս սաստիկս. տանէին փախստեայս առաջի իւրեանց. մի առ միոջ (իրարու հով) դիմաթաւալ կացուցանէին. արկանէին ի սուր (բերան) սուսերի իւրեանց իբրև աս ութ հազար սպառազէն. և ինքն դառնայր ի կողմն Մայափայ. մարտ պատերազմի դնէր ըզ նովաւ և առնոյր զնա և ի նմա սպանանէր զամենայն արու մանուկ նոցա :

Յետ այսց ժամանակաց դարձեալ զօրաժողով լինէր Տիմոթէոս և գայր բանակէր դէմ յանդիման (դիմացը) Ռափոփնայ յայնկոյս գետոյն : Դէտ (լրտես) արձակեաց Յուդա զի տեսցէ զբանակս նոցա· եկին պատմեցին և ասեն. Զօրք բազումք կուտեալ են յոյժ. և արուայիկս

(արաբացի) բազումս ածեալ է ի վարձու յօգնականութիւն իւրեանց : Իբրև զայն լսէր Յուդա, նոյն ժամայն (անվիջապէս) խաղայր գնայր ի վերայ նոցա : Իբրև ետես Տիմոթէոս, խօսքէլ ֆաչաաւ (սկսաւ խօսիլ) ընդ իշխանսն և ասէ. Միտ դիջիք դուք Յուդայ և գնդին նորա առ հասանել յափն գետոյն. եթէ զհասանելն և զանցանելն մի արասցէ, ապա մեք ոչ կարեմք լինել դիմակալ նորա. ապա թէ հասցէ յափն գետոյն և ճակատեսցի, յայտ արար թէ զանգիտեաց. մեք անցցուք, մարտիցուք և յաղթեսցուք նմա : Այն ինչ նորա բանք ի բերան էին, և Յուդա զօրօքն հասանէր յափն գետոյն. անդ առ ափն գետոյն կացուցանէր զաշխարհամարդ գպիրսն և տայր նոցա պատուէր զի մի զոք ամենևին թողցեն առ ափն գետոյն բանակել. այլ զամենայն զայր պատերազմող զկնի նորա փողեսցեն (փողի ձայնով ֆալել տալ) : Եւ ինքն զհասանելն, զանցանելն, զյարձակելն ի վերայ մի առնէր, և ամենայն ազգք և ազինք զէնընկէցք փախստեայ զնա-

յին յամրակողմն (ամուր տեղեր):

Իսկ Ցուղայեանքն եկին հասին ի դուռն Եփրոն քաղաքի. և այս քաղաք է մեծ ի վերայ ճանապարհի յամուր վայրի. և ոչ գոյր նոցա այլ ճանապարհ խոտորել յաջ՝ կամ յահեակ, բայց երթալ ընդ մէջ (մէջէն) քաղաքին: Իբրև տեսին զօրք քաղաքին զամբոխ զօրացն, զդրունսն փակեցին, զդրանդսն (մտնելու տեղ, դուռ) սեղմեցին (գոցել, ծածկել) վիմօք և ոչ տային անցանել նոցա: Իբրև զայն ետես Ցուղա, առաքեաց առ նոսա և ասէ. Թոյլ տուք անցից ընդ երկիր ձեր երթալ անցանել ինձ յաշխարհ իմ և ոչ ոք ինչ մեղիցէ (վնասել) ձեզ. և ոչ ուրին յանձն նոքա նմա բանալ զդրունսն:

Ապա հրաման ետ Ցուղա փող հարկանել, քարոզ կարդալ (թելլալ կանչել) և ասել. Հապա, իւրաքանչիւր գունդ յորում վայրի և կացցէ՝ ի ներքս խաղացէ: Եւ մատեան զօրքն յիւրաքանչիւր տեղւոջ յորում կային ի մարտ պատերազմի զամենայն տիւն և զամենայն գիշերն (*)

(*) Տես Բերականութիւն էջ 105. 1°.

մինչև մատնեցաւ քաղաքն ի ձեռս նոցա: Անդ սատակեցին զամենայն արու մանուկ. և ինքեանք անցին ընդ մէջ քաղաքին, գնային երթային ի վերայ դիականցն անկելոց. և անցին նոքա ընդ Ցորդանան գետ ի տափակողմն (շիտակ տեղ, օվա) ի դաշտ մի մեծ և անդ բանակեցան դէմ յանդիման (դիմացը) Բեթսուլնայ. և անդ յանձանձէր (հոգալ) զկաց մնաց (մնացորդ) ժողովրդեանն. միթարէր զամենեսին Ցուղա. ընդ ամենայն չուս ճանապարհին այսպէս առնէր, մինչև ածէր հասուցանէր յերկիրն Հրէաստանի. անդ մատուցանէին զողջակէզս և զպատարագս զի ոչ ծախեցաւ (սպառիլ, կորուիլ) ի նոցանէ

Իբրև զայն քաջութիւնս պատերազմին լսէին Ցովսեպոս զաքարեանց և Զաքարի իշխան զօրացն մնացելոց, ասեն. Եկայք և մեք երթիցուք տացուք մարտ պատերազմի ընդ հեթանոսս, և արասցուք և մեք մեզ անուն: Ժամ ետուն (իմաց տալ) զօրացն, խաղացին գնացին ի կողմանս Յամնեայ: Եւ ել Գորգի ի քաղաքէ անտի զօրօք հանդերձ որ ընդ իւր էին՝ ի մարտ

պատերազմի և հարաւ ի դիմի (զարնը-
ուեցաւ) նոցա. և ի պարտութիւն մատ-
նեցան Յովսեպոս և Զաքարիա և հալա-
ծականս երթային մինչև ի սահմանս երկ-
րին Հրէաստանի: Յայնմ աւուր անկա-
նէին ի նոցանէ արք իբրև երկու հազարք
զի ոչ անսացին (մտիկ ընել, հնազան-
դիլ) նոքա Յուդայի և եղբարց նորա:

Ա. Մակաբ Գլ. Է.

Եւ Անտիոքոս կայսր գնայր նա ընդ
վերնագաւառսն. ապա լու եղև նմա
եթէ է քաղաք մի ի կողմանս Ղիմնեայ
ի Պարսից աշխարհին. քաղաք փառաւոր.
լի ոսկւով և արծաթով. և մեհեանն որ ի
նմա՝ է մեծագանձ յոյժ և կուռք ոսկե-
ղէնք ձուլածոյք (քանդու) մեծամեծք ի
նմա: Առ նա զէն բազում, զրահս և պա-
տեանս զոր թողեալ էր Աղեքսանդրի
կայսեր մակեդոնացւոց: Եկն եհաս նա ի
քաղաքն յայն և խնդրէր առնուլ աւարա-
բար: Ազդ եղև քաղաքացւոցն. ի մարտ
պատերազմի պատրաստեցան և ոչ ե-
տուն մտանել. զանի հարաւ, խաղաց
գնաց ի կողմանցն արեւելից յերկիրն Բա-
բելացւոց: Անդր զուժկան հասակէր առ

կայսր Անտիոքոս ի կողմանցն հարաւոյ
թէ ի պարտութիւն մատնեցան զօրքն որ
ելեալ էին յերկիրն Հրէաստանի: Զի
չոքաւ զառաջին նուագն (առաջին
անգամ) Լիւսի զօրօք բազմօք և ի
պարտութիւն մատնեցաւ: Եւ եղև իբ-
րև լուաւ զբանս զայս թագաւորն,
հիացաւ, զարմացաւ, թմբրեցաւ և խը-
ռովեցաւ յոյժ. անկաւ ի մահիճս իւր և
հիւանդացաւ զի ոչ կատարեցաւ խոր-
հուրդ հրամանի նորա. և անդ դնէր (հի-
ւանդ պառկիլ) նա բազում աւուրս:
Այժ զմտաւ թէ մեռանիմ. կոչեաց զբա-
րեկամս իւր և ասէ ցնոսա. Քուն հատաւ
(քունը կտրիլ) յերեսաց իմոց. պախեալ
(սիրտը բեկած, լքեալ) եմ ի սիրտ իմ
հոգոյ իմոց. յուշ եղեւ ինձ (յիշեցի)
չարիքն այն զոր գործեցի ես յԵրուսաղէմ,
և առի ես զամենայն սպասն զայն զոս-
կւոյ և զարծաթոյ. և զօրս հանգումարեցի
տարապարտուց (յանիրաւի) ի վերայ
նոցա ջնջել զնոսա: Եւ կոչեաց նա զՓի-
լիպպոս, մի ի բարեկամաց անտի իւ-
րոց. կացոյց զնա ի վերայ ամենայն թա-
գաւորութեան իւրոյ. ետ ցնա թագ և

պատմուեան և զմատանին զիւր ածել զորդի իւր զԱնտիոքոս, և անուցանել և յիւր տեղի Թագաւորեցուցանել զնա: Եւ մեռաւ անդ Անտիոքոս արքայ յամին հարիւրորդի բառասներորդի իններորդի:

Ազդ եղև Լիւսեայ Թէ մեռաւ արքայ և կացոյց Թագաւոր զորդի իւր զԱնտիոքոս և եդ անուն նմա հօրամոյն (հօրը նման) Անտիոքոս: Եւ որ ի միջնաբերդին էին արգելեալք՝ խորհեցան բաղաքացիքն ջնջել զնոսա: Իբրև ժողովեցան ի մի վայր և պաշարեցին զնա, եկին ելին նոքա յարգելանէ (արգելարան, բանտ) անտի և զնացին նոքա առ արքայ:

Ա. Մակաբ. Գլ. Զ.

Լուաւ Յուդա զանուն Հռովմայեցւոց եթէ են նոքա հզօրք զօրութեամբ. և նոցա բարեւոր Թուի Թէ որ Թիկունս (օգնական) առնէ զնոսա և զաշնաւոր (դաշնակից) լինի նոցա. և զի զօրացեալ են զօրութեամբ ի վերայ երկրի, և զասն մարտից պատերազմի զի հարկանէին բաջութեամբ իբրեանց զկողմանս Գալատացւոց, զի զօրացան ի վերայ նոցա և կացուցին զնոսա ի հարկի (հարկատու

ընել) և որ ինչ միանգամ արարին նոքա ընդ կողմանս Սպանիացւոց և Թափեցին (ձեռքէն առնել) ի նոցանէ զբովանդ (հանգիստ) ուստի ոսկին և արծաթն հատանի, և ըմբռնեցին նոքա զտեղիսն խորհրդովք իւրեանց և երկայնմտութեամբ (համբերութիւն. յարատեւութիւն) զի էր տեղին կարի բացարձակ (հեռի) ի նոցանէ, և ի Թագաւորաց անտի որ եկեալ էին ի վերայ նոցա ի ծագաց երկրի՝ հարին ի հարուածս մեծամեծս և ջնջեցին զնոսա և զՄեսոպոտան ի հարկի կացուցին տալ նոցա հարկ ամ յամէ (տարուէ տարի). և զՓիլիպպոս և զարքայն Կինէացւոց որ յարուցեալ էին ի վերայ նոցա սատակեցին ի պատերազմի. և Անտիոքոս մեծ արքայն Ասիացւոց որ եկեալ էր ի վերայ նոցա մեծաւ պատերազմաւ ընդ իւր ունէր հարիւր բան փիղ և կառս և երիվարս բազում յոյժ՝ պարտեցաւ ի նոցանէ, զի ձերբակալ արարին (բռնել) զնա կենդանւոյն (ողջ ողջ) և կացուցին զնա ի տեղի մի հարկ հարկանել (հարկ տալ) և զԹագաւորս որ ըստ (*) ետեսնէ

(*) Տես Բերականութիւն էջ 104 4°.

էին՝ ստիպեցին տալ պատանդս և գրաւական (rէնին), և զաշխարհն Հնդկաց և Պարթևաց և Լիդացւոց, զընտիր ընտիր գաւառաց նոցա առին և ի ձեռս եհտեն (յանձնել) Եւմենեայ արբայի։ Իբրև զայն ևս լուան եթէ Ցոյնք խորհեցան զալ սատակել զնոսա, և ազդ եղև բանն նոցա, արձակեցին զմի ի զօրավարաց անտի և եկն եհար սատակեաց զնոսա մեծաւ պատերազմաւ, և արկին ի նոցանէ ի սուր իւրեանց վիրաւորս բազումս և ի գերութեան վարեցին զկանայս և զորդիս նոցա, յաւարի առին զինչս և զբաստացուածս նոցա. կալան զերկիրն ի ծառայութեան, զամուրսն բակեցին (կործանել, փլցնել), զաշխարհն ի հարկի ծառայութեան կացուցին մինչև յօրս յայս, և զայլ Ցագաւորութիւնսն և զկըզիսն որ խլրտէին՝ (կը շարժէին) սատակեցին և ի ծառայութեան կացուցին։ Բայց ընդ բարեկամս իւրեանց և որ Ցիկունս առնէ զնոսա՝ հաստատութեամբ սէր առնեն ընդ նոսա. և զօրացան նոքա իվերայ Եամենայն Ցագաւորութեանց որ մերձ էին և որ հեռի էին. և որ միանգամ

լսէին զանուն նոցա երկնչէին ի նոցանէ. ում կամէին՝ տային զՑագաւորութիւն, զո կամէին՝ հանէին ի տէրութենէ, և բարձրացան յոյժ։ Եւ ի վերայ այսր ամենայնի ոչ ոք ի նոցանէ յանձն առ Ցագաւորել և ծիրանիս արկանել (ծիրանի հագցնել) զի հաստատեսցի տէրութիւնն. այլ տուն խորհրդոց շինեցին և հանապազօր երեքհարիւր և բան այր ի խորհուրդ մտանէին (խորհուրդի նստել) զի զաշխարհն շէն (ծաղկեալ) կալցին. և մի մի այր ի նոցանէն որ հաւատարիմ էր՝ իշխան գլուխ կացուցանէին տարւոյն և ամենեքեան հնազանդութեամբ լսէին միում, և ոչ ինչ գոյր հեռ (հակառակութիւն. նէՀառնիէդ) և նախանձ ի մէջ նոցա։ Ապա կարգեաց արս ընտիրս Ցուդա յիւրաքանչիւր գնդէ անտի, զԱպոլեմոս. զակկոսեան և զՑաան, և առաքեաց ըզ նոսա ի Հռոմ բաղաք խնդրել ի նոցանէ զհաշտութիւն և Ցիկունս. և զի բարձցեն զլուծն ի պարանոցէ նոցա, քանզի ծանրացուցեալ էր Ցունաց զլուծ ծառայութեան ի վերայ պարանոցի Իսրայէլացւոց։ Եւ գնացին ի կողմանս Հռոմայեցւոց. և

էր ճանապարհն մեծ (երկայն). եկին հասին հրեշտակքն և յանդիման եղեն (ներհայացան) նոցա ի տաճարին խորհրդոց. կացին ի մէջ (մէջտեղը կայնեցան) և ասան տալ զպատգամն (խօսելու) և ասեն. « Բուդա Մակաբէ և եղբարք իւր և ամենայն ազգ (զօրք) Հրէաստանեայց խօսին ընդ ձեզ ի հաշտութիւն (հաշտութիւն ընել կ՚առաջարկեն) առնել զձեզ Թիկունս և խնդրել ի ձէնջ խաղաղութիւն: Եւ ձեզ ևս կամ լիցի զբրել զմեզ ձեզ Նիզակակիցս (դաշնակից) և բարեկամս: » Եւ հաճոյ Թուեցաւ բանքն առաջի նոցա. և այս այն պատճէն (օրինակ) է հրովարտակի նոցա զոր գրեցին նոքա առ նոսա ի տախտակս պղնձիս և առաքեցին յԵրուսաղէմ. և առ իւրեանս Թողին յիշատակ Թիկանց և խաղաղութեան:

1. « Խաղաղութիւն և բարիք լիցին ընդ Հրէաստան և ընդ Հռոմայեցիս ընդ ամենայն ծով և ընդ ցամաք. սուր և Թշնամի հեռի լիցի ի նոցանէ:

2. Եթէ հասցէ (հանդիպի) պատերազմ նախ ի վերայ Հռոմայեցւոց կամ նուրեք բարեկամաց նոցա, ի Թիկունս վաղվաղակի հասցէ զունդն Հրէաստանեայց, որպէս ժամանակն ցուցանէ նոցա, մտադիր արտիմտօք (յօժարութեամբ). և ի Թշնամի ինչ մի տացեն և մի ձեռընտուր լիցին (օգնել) արծաթով կամ ոսկւով կամ զինու կամ նաւօք. այսպէս հաճոյ Թուեցաւ Հռոմայեցւոց զի պահեսցեն (Հրեայք) զպատուիրանդ զայդ առանց կաշառոյ:

3. « Այնպէս եթէ ի վերայ ազգին Հրէից հասանիցէ պատերազմ, ի Թիկունս նոցա վաղվաղակի հասցեն Հռոմայեցիք Միամտութեամբ սրտի մտօք, որպէս ժամանակն նոցա ցուցանիցէ. և ի Թշնամի ինչ ոչ տացեն, ոսկի կամ արծաթ կամ զէն կամ նաւս. որպէս հաճոյ Թուեցաւ Հռոմայեցւոց, պահեսցեն զպատուիրանս զայս առանց նենգութեան:

4. « Ապա եթէ յետ այդց բանից խորհուրդ ինչ ի մէջ մտցէ նոցա կամ նոցա հանել կամ յաւելուլ, որ ինչ դիպցի տնցէ՝ (ինչ որ հարկ ըլլայ) կարգեսցեն (կարգադրեն) առ հասարակ հաւանութեամբ և հաստատուն կացցեն: »

Էստ բանիցս այսոցիկ այսպէս հաստատեցին Հռոմայեցիք ընդ գնդին Հրէից. Եւ վասն չարեաց արքային Դեմետրեայ զոր հասուցանէ նոցա՝ գրեսցուք, ասեն, առ նա. գոգցուք (ընեմք). Ընդէր ծանրացուցանէք զլուծ ի վերայ պարանոցի նիզակակից բարեկամաց մերոց: Զայս գիտասջիր. եթէ զբէն ամբաստան լիցին դոքա, դատաստան յիրաւի կալցուք (դատ կ՝ընեմք), մարտ պատերազմի տացուք ընդ քեզ, եթէ ընդ ծով լիցէ եթէ ընդ ցամաք:

Ա. Մակաբ. Գլ. Ը.

Եւ եղև յետ մահուանն Յուդայի բրեցին (հոպը բրբել, փորել) անօրէնք շուրջ զսահմանսն Իսրայելացւոց. բուսան, բղխեցին և բազմացան որ գործեն զանօրէնութիւն: Յաւուրսն յայնոսիկ եղև սով մեծ, և ինքնակամ գնացին մարդիկն ի նոսա. և աշխարհն ձեռնտու էր ի նոսա: Եւ ընտրեաց Բագիդ զսա անօրէնս որ քննէին և խնդրէին և ածէին զբարեկամսն Յուդայի առ Բագիդ և խնդրէին վրէժ ի նոցանէ. տառապեցուցանէին և այպն առնէին (նախատել). և նեղէին և

ծաղր առնէին զիսարայէլ: Եւ ժողովեցան ամենայն բարեկամքն Յուդայի և չորան առ Յոնաթան և ասեն. Եղբայր քո Յուդա մեռաւ. և այր չիք որ նման է նմա ելանել ընդդէմ Թշնամւոյ. այլ զքեզ ընտրեցաք մեք ի տեղի նորա զի եղիցես դու իշխան ի վերայ մեր: Եւ յանձն առ Յովնաթան ի ժամանակին յայնմիկ զառաջնորդութիւն և համբարձաւ նա փոխանակ Յուդայի եղբօր իւրոյ:

Եւ ելին որդիքն Յամբրեայ, ըմբռնեցին զՅովհաննէս և առին զնացին կահիւ հանդերձ ընդ իւրեանս: Յետ ժամանակացս այսոցիկ ազդ եղև Յոնաթանու և Շմաւոնի, եղբարց նորա, եթէ որդիքն Յամբրեայ հարսանիս արարին, և առեալ ածէին զհարսն, դուստր միոյ ուրումն ի մեծամեծաց աւագաց Քանանացւոց անտի մեծաւ չուով, անչափ հանդերձիւ. և յիշեցին նոքա զՅովհաննէս զեղբայր իւրեանց. ելին մտին նոքա ի դարան ի ծործոր (ներ հովիս) լերինն և ամբարձին զաչս իւրեանց, տեսին զի դայր չու (ճամբորդներու բազմութիւն) մեծ և ամբոխ բազում. և ել փեսայն փեսաւիրօքն

(փեսան տանողներ, հարսներոր) և եղ-
բարբք հանդերձ և փողովք և Թմբկաւ և
պէս պէս արուեստականօք և բազում
վառելովք: Եւ ելին սոքա ի դարանէ
աստի, սպանին զբազումս և բազում վի-
բաւորս արձակեցին, և զվառեալսն փա-
խստեայ արարին. և առին յաւարի զկահ
և զհանդերձ, և զչուն աւար հարկանէին:
Եւ դարձան հարսանիքն ի կոծ (ողբ,
ծեծկուիլ), և ձայն արուեստականացն
ի սուգ և յողբս դարձաւ. և խնդրեցին
սպառսպուռ (բոլորովին) զվրէժ արեան
եղբօրն իւրեանց և դարձան ի մարգն
(ջրոս տեղ, դաշտ) Ցորդանան գետոյ:
Իբրև գիտաց Բաքիդ, առ զօրս և խա-
ղաց ի վերայ նոցա և եկն եհաս յանձաւս
(քարուս նեղ տեղ) Ցորդանան գետոյ:
Ասէ Ցոփնաթան ցզօրսն իւր. Աւասիկ
զօրք ճակատեալք յանդիման մեր. ոչ
ամուր թաքուստի (պահուլտելու ամուր
տեղ) ոչ դաշտ փախստի, և գետս Ցոր-
դանան շուրջ զմեզ պատեալ է. յարձա-
կեսցուք ի վերայ, Թերևս ապրեսջիք ի
ձեռաց Թշնամեաց մերոց: Զբանն ասաց
և անդէն խառնեցաւ յարձակեցաւ ի վե-

բայ Բաքիդեայ. և հոսեցան (վար նե-
տուիլ) Ցոփնաթան և որ ընդ նմա էին ի
դարէ (ուշուրում) անտի. անդ հարին
կոտորեցին Բաքիդեանք ի Ցուդայի գնդէ
անտի արս հազար մի և դարձան յԵրու-
սաղէմ: Սկսան շինել քաղաքս ամուրս
յերկրին Հրէաստանի ի պարիսպս ամ-
բացեալս և ի դրունս հզօրս և ի նիգս
հաստատունս. և կացուցին ի նոսա զօրս
բազումս և համբարս յոյժ:

Ի ժամանակին յայնմիկ հարաւ Ցակի-
մոս և խափանեցան գործք նորա: Քա-
կեցան երախք (քերան) նորա, պապան-
ձեցաւ և ոչ կարէր խօսել բան մի և հր-
բաման տալ վասն տան իւրոյ. և մեռաւ
Ցակիմոս ի ժամանակին յայնմիկ մեծաւ
տանջանօք: Իբրև ետես Բաքիդ եթէ մե-
ռաւ Ցակիմոս, դարձաւ անդրէն առ ար-
քայն: Խորհեցան անօրէնք և ասեն.
Ահաւադիկ Ցոփնաթան և որ ընդ նմա են՝
խաղաղութեամբ նստին յանհոգս. եկայք
ածցուք զԲաքիդ և ըմբռնեսցէ զդոսա ա-
մենեսին ի գիշերի միում: Իբրև ազդ ե-
ղեն Ցոփնաթանայ և եղբարց նորա բանք
խորհրդին, կալան նորա արս յառաջնոր-

դաց չարեացն յիսուն մի և անդէն խողխողեցին (մորթել, ջարդել): Եւ խոյս ետուն Ցուվնաթան և Շմաւոն յանապատն. խրամակարկատ արարին (հին կամփլած տեղերը նորոգել) զնա և ամրացուցին: Իբրև ետես Բաքիդ, զօրահատոյց լինէր և գայր պաշարէր. և մարտնչէր աւուրս բազումս, և առնէին կանգնէին շուրջ զնովաւ մենքենայս: Եւ Շմաւոն և որ ընդ նմա էին, ելին հրձիգ արարին ըզ մենքենայս և մարտ պատերազմի եդին ընդ Բաքիդայ: Ի պարտութիւն մատնեցաւ նա ի նոցանէ, զի էր խորհուրդն այն և արշաւան (յարձակումն) նորին ընդունայն: Եւ բարկացաւ Բաքիդ սրտմտութեամբ ի վերայ արանցն որ խրատ ետուն նմա արշաւել յերկիր Նորա. ապան նա զբազումս ի նոցանէ, և դարձաւ յերկիր իւր ուստի եկեալ էր:

Ա. Մակաբ Գլ. Թ.

Լուաւ Դեմետր արքայ եթէ ժողովեաց Աղեքսանդրոս Անտիոքեան Եպիփան զօրըս բազումս և ել տալ ընդ նմա մարտ պատերազմի. յղեաց առ Ցուվնաթան բանըս խաղաղութեան զի մեծարեսցէ զնա:

Աճապարեսցուք, ասէ, դնել ընդ նմա ուխտ (ուխտ, դաշինք ընել) խաղաղութեամբ, մինչչև եղեալ իցէ ընդ նոսա ուխտ Աղեքսանդրեայ: Եւ բնակեցաւ Ցուվնաթան յԵրուսաղէմ. սկսաւ շինել և նորոգել զքաղաքն. և ասէ ցայնոսիկ որ գործէին զգործն շինուածոց պարսպացն. Շինեցէք զպարիսպդ ի չորս կոյս (քառակուսի) յորձաքար (կարծր քար) վիմաց. և արարին այնպէս:

Իբրև լուաւ Աղեքսանդրոս արքայ զաւետիսն զոր ետ բերել Դեմետրիոս առ Ցուվնաթան, ասէ. Միթէ կարեմք ուրեք գտանել այր մի այնպիսի. առէք (աղէ. ծն, հայտէ) առնեմք զնա մեզ բարեկամ և թիկունա. և հրամայեաց առնել առ նա հրովարտակ ըստ բանիցս այսոցիկ.

« Արքայ Աղեքսանդրոս առ եղբայր Ցուվնաթան՝ ողջոյն:

Ազդ եղև մեզ վասն քո եթէ այր քաջ զօրութեամբ ես և արժանի ես դուլինել մեզ բարեկամ. արդ կացուցաք մեք զքեզ այսօր գլուխ քահանայապետութեան ազգի քո. և բարեկամ ար-

բայի կոչել զքեզ. արդ կալ լիցի քեզ (նայէ nr կենաս) յուխտի մերում և պահել զհաւատ բարեկամութեան առ մեզ, ողջ լեր: »

. Եւ ետ տանել նմա պսակ ոսկի և ծիրանիս: Առ զգեցաւ Յոփեանթան զայն ընտիր պատմուճան:

Լուաւ Դեմետր զբանս զայս, տրտմեցաւ յոյժ, և ասէ. Զինչ գործ գործեցաք զի ոչ մեք մեզ աբարաք զնա Թիկունս. և արդ աճապարեաց Ալեքսանդրոս և խօսեցաւ ընդ նմա ի հաշտութիւն և աբար իւր ձեռն հաստատութեան զՀրէաստան: Արդ՝ առէք և մեք զրեսցուք առ նոսա բանս մեծարանաց զի եղիցին նոքա մեզ յօգնականութիւն: Եւ ետ տանել նոցա հրովարտակս ըստ բանիցս այսոցիկ: « Արքայ Դեմետրիոս առ ազգն Հրէից՝ ողջոյն: Քանզի պահեցէք դուք զուխտ և զգաշինս զոր ընդ մեզ եդիք, կացէք մնացէք դուք ի մերում բարեկամութեան և ոչ ձեռնտու եղէք ի Թշնամի, և մեք հատուսցուք ձեզ Թողութիւնս (արսօնութիւն) բազումս: Թողցուք զամենայն Հրեայ ի հարկաց. և զբաժ (տուրք) զաղ-

տիցն և զպսակաց. և զհասարակաց այգւոյն և զծառոյն որ գայր ինչ՝ Թողում ձեզ յայսմ օրէ եւ առ յապա (այսօրվընէ եսքը միշտ). և ի տասանորդէ զմաքս ձեզ Թողեալ լիցի. և զիշխանութիւն զամբիդ ի ներքս տուեալ լիցի ցքահանայապետդ. և ամենայն անձն Հրէի որ ի գերութեան գտցի՝ յերկրէն Հրէաստանի յամենայն Թագաւորութեան իմում՝ արձակեալ լիցի ձրի առանց փրկանաց: Զամենայն հարկս հասի (տուրք բերքէ կամ ուրիշ բանէ nr սակ չէ) և մաքսի և գրաստու մի իշխեսցէ պահանջել ոք. և շաբաթք և գլուխք ամսոց և աւուրք յառաջ քան զտօնն և զկնի տօնին երեք երեք՝ եղիցին ապահարկ (հարկէ ազատ) Թողեալ ամենայն Հրէից. և մի այլ իշխան ձեռնհաս լիցի ի վէրայ նոցա, այլ քահանայապետն: Եւ զքաղաքն Պտղոմայեցւոց տուեալ լիցի նոցա պարգև ի նուէրքս սրբութեանցն (սուրբ տեղոյն, տաճարին) որ յերուսաղէմն են, և ի պէտս ծախիցն որ ի սուրբս անդր ծախեցին: Եւ ես տաց ամ յամէ հնգետասան հազար կշիռ արծաթոյ յարքունի հաշարուն

(արքունի գանձէն)։ Զամենայն մթեր (պաշար) զոր նոքա ոչն կարէին լնուլ՝ (պէտք եղածին չափը գտնել) յայսմ հետէ տացեն յարքունի տարազք (յարքունուս. միրիէն)։ Եւ ի վերայ այսորիկ զհինգ հազար կշիռ արծաթոյն զոր առնուն ի մտից սրբութեան ըստ համարոյ տարւոյն՝ և այդ թողեալ լիցի, զի անկ է (կ'իյնայ, կը վերաբերի) այդ քահանայից։ Որ միանգամ դիմեսցէ ոք փախըստեայ անկանել ի տաճար անդր յԵրուսաղէմ, կամ որ միանգամ ի սահմանաց դորա իցէ և պարտիցի ինչ յարքունիս՝ թողեալ լիցի նմա (*)։ Եւ ամենայն ինչ որ արատեալ կործանեալ կցէ ի շինուածոց սրբոց՝ շինեսցին նորոգեսցին և ծախս համարոյն յարքունուստ վճարեսցի։»

Իբրև լուաւ Յոշիայեան և ժողովուրդն զբանս զայս, ոչինչ հաստատեցին և ոչ յանձն առին. այլ հաճեցան հաւանեցան ընդ հաշտութիւնն Աղեքսանդրի. և էին նոքա նմա նիզակակիցք և թիկունք

(*) Տես Բերականութիւն էջ 215 1°.

զամենայն աւուրս կենաց իւրեանց։

Դարձեալ յամին հարիւրորդի վաթսնեերորդի հինգերորդի եկն Դեմետրիոս որդի Դեմետրեայ ի կողմանց կրետացւոց։ Առաքեաց նա առ Յոշիայեան և ասէ. Դու միայն վերացեալ հպարտացեալ կաս ի վերայ մեր. և ես եղէ ծաղր նախատանաց վասն քո. ընդէր դու նագիս (պանծալ) ի վերայ մեր լերամբքդ. արդ ողէ դու, եթէ յուսացեալ ես ի զօրսդ քո, եկ էջ դու ի դաշտ այսր առ մեզ զի յանդիման լիցուք միմեանց։ Արդ հարց փորձեա դու, տես ո իցեմ ես, կամ ո այն իցեն որ օգնականն իցեն ձեզ. ոչ գոյ ձեզ ոտից կուիւ (ոտք դնելու տեղ մը) առաջի մեր։ Ոչ կարէք դուք զդէմ ունել զայդչափ այրուձիոյ ի դաշտի՝ ուր ոչ գուցէ թուփ թաքստի (պահուրտելու) և ոչ տեղի փախստեան և ոչ վէմ ապաւինի և ոչ խիճ ձեռն ի քար ձգելոյ (նետել)։ Իբրև լուաւ Յոշիայեան զպատգամն զայն, բարկացաւ ի միտս իւր. յոտն եկաց վաղվաղակի, ընտրէր զընտիր ընտիր զօրացն իբրև արս տասն հազար և գայր ի դուրս յԵրուսաղեմէ։ Ընդ առաջ

եղև նմա Շմաւոն եղբայր նորա, ձեռնտու լինէր նմա յօգնականութիւն: Իբրև զայն լուաւ Ապողոնիոս, կազմեցաւ պատրաստեցաւ, առ ընդ իւր երիս հազարս ըստ պառազէնս և այլ զօրս բազումս. մօտ քերեր (մօտէն, քովէն կանցնէր) առ դաշտիւն զի յուսացեալ էր ի զօրս իւր: Զկնի լիներ (ետեւէն իյնալ) նորա Ցովնաթան տալ մարտ պատերազմի: Նա եթող հազար հեծեալ ի դարանի զհետ նորա. իբրև ետես Ցովնաթան և եղբայր նորա եթէ դարան գործեցին զհետ նորա, եկին փակեցին պաշարեցին զամրոց դարանակալացն և շուրջ զնոքօք արկին դպաստնէշ (վէքէրիզ շինեցին). վաստակեցին, տաժանեցան հեծեալքն և լուծան. զգողուղի կալաւ (գաղտնի ճամբով գընացաց) Շմաւոն զնդիւն իւրով, և գայր ձորակին ի վերայ, և անկանէր զնոքօք, մինչդեռ նոքա կային լուծեալք և ձանձրացեալք. անկանէր ի վերայ. զբազումս անդէն ի դարանի անդ սատակէր, զբազում հեծելազօրս ընդ երեսս դաշտին փախստեայ առաջի երեսաց իւրոց տանէր մինչև ի կողմանս Աղովտայ: Այն-

չափ շտապ տագնապի հասուցաներ (ճեղը կը խոթեր) զի փախստեայքն գընային, ի մեհեանն Դագոնեայ ամրանալ անկանէին: Իբրև լուաւ զայս Աղեքսանդրոս, յաւել փառաւորել առաւել ևս զՑովնաթան. և ետ տանել նմա շինզղ (թօքա, պրոշ) ոսկի, զոր օրինակ օրէն էր ունել եղբարց Թագաւորին: Եւ դարձաւ Ցովնաթան յԵրուսաղէմ գնդաւն և բազում աւարաւ, զի բերէր զկապուտ ըզ կողոպուտ բազում զթշնամեաց:

Ա. Մակաբ. Գլ. Ժ.

Եւ Թագաւորն Եգիպտացւոց զօրաժողով լինէր, կուտէր զօրս բազումս իբրև զաւազ առ ափն ծովու և նաւս բազումս. և խնդրէր նա ունել զարքայութիւնն Աղեքսանդրեայ նենգութեամբ: Եւ ել ընդ կողմանս Ասորեստանեայց բանիւ խաղաղութեամբ, և նոքա դուռն բանային նմա և ընդ առաջ երթային նորա, քանզի պատուէր էր յԱղեքսանդրեայ արքայէ քանզի ասեր էր նորա: Իբրև եկն մերձեցաւ նա ի քաղաքն Աղովտացւոց, ցուցին նմա զմեհեանն Դագոնեայ, զքաղաքն և որ շուրջ զիւրեւ էին այրե-

ցեալ ի ժամանակի պատերազմին, և ըզ դիակունսն բերեալ կուտեալ կոյտս կոյտս ի վերայ ճանապարհին. և պատմէին առաջի արքային զոր ինչ միանգամ գործեաց Ցոփնաթան, և յաչաց հանէին զնա. և Թագաւորն լռիկ կայր: Եւ եկն յանդիման եղև Ցոփնաթան Թագաւորին ի քաղաքն Ցոպպէացւոց փառօք մեծօք. ողջոյն ետուն միմեանց և եղեն այն օր առ միմեանս: Եւ արձակեաց Պտղոմէոս հրովարտակս առ Դեմետր արքայն և ասէ. Եկ, ուխտ դիցուք առ միմեանս և դաշինս կռեսցուք, և տաց քեզ զդուստր իմ զոր ունի Աղեքսանդրոս արքայ, զի զղջացեալ եմ թէ ընդէր ետուս ես զդուստր իմ նմա կնութեան. զի խորհեցաւ նա ի վերայ իմ մահ. և այսպէս յաչաց հանէր զնա. զի իւր ակն եդեալ էր (այլ ուներ) տէրութեան նորա: Եկն եմուտ ի քաղաքն Անտիոքացւոց, և եդաւ զթագ զԱսիացւոցն, և պսակեցաւ կրկին, թագաւն Ասիացւոց և թագաւն Եգիպտացւոց: Եւ լուաւ Աղեքսանդրոս, դիմեաց գալ ի վերայ նորա մարտիւ պատերազմաւ. և ել Պտղոմէոս ընդ առաջ նորա

զօրօք բազմօք և դարձոյց զնա ի պարտութիւն. և փախստեայ լինէր Աղեքսանդրոս ի կողմանս Արաբացւոց. և եկն Զաբեել արուային, եհար զգլուխն Աղեքսանդրեայ և ետ տանել Պտղոմէոսի արքայի:

Ընդ առաւօտն ընդ այնոսիկ ժողովեաց Ցոփնաթան զօրս ի Հրէաստան գալ մարտ դնել զբերդաւն որ յԵրուսաղէմ էր. կազմեցին զնովաւ շուրջ մենքենայս բազումս: Ապա գնացին արք անօրէնք պատմել Թագաւորին եթէ Ցոփնաթան մենքենայս կազմեալ, շուրջ զբերդաւն պատեալ, յառնուլ պատրաստեալ (*): Իբրև լուաւ, բարկացաւ յոյժ. ետ հրովարտակս առ Ցոփնաթան զի մի ևս զբերդն շուրջ պաշարեալ պահիցէ. այլ ինքն յարուցեալ վաղվաղակի առ նա հասանիցէ ի քաղաքն Պտղոմէացւոց զի անդ յանդիման լիցին միմեանց: Իբրև լուաւ Ցոփնաթան, ևս քան զևս պնդել (ասասկացնել) հրամայեաց զպահ (պաշարումն) բերդին. և

(*) Տես Բերականութիւն թիւ 223.

ինքն առ աբս ընտիրս իմաստունս ի ծերակոյտ ժողովրդենէ անտի, հանդերձեցաւ (պատրաստուեցաւ) պատարագօք, ոսկւով և արծաթով, և եղ զանձն ի մահ, գնաց յանդիման լինել Թագաւորին և եգիտ շնորհս ինմանէ. Թէպէտ և բազումք էին յանօրինաց անտի ամբաստան զնմանէ: Եւ մեծարեաց զնա Թագաւորն և բարձրացոյց յոյժ առաջի ամենայն բաբեկամաց իւրոց. և կարգեաց (տուաւ) նմա զիշխանութիւն քահանայապետութեանն և որ ինչ այլ ինչ պատիւ ունէր յառաջագոյն քան զնա: Եւ աղաչեաց Յոնէաթան զարքայ զի ապահարկ (հարկէ ազատ) արասցէ զՀրէաստան և զերեսին կուսակալութիւնն: Եւ հաճոյ Թուեցաւ Թագաւորին, և վասն այսր ամենայնի հրաման ետ հրովարտակս տալ առ Յոնէաթան օրինակաւս այսուիկ.

«Արքայ Դեմետր առ Զասթենէս հայր՝ ողջոյն:

Ազգին Հրէից, օգնական, նիզակակից, ուխտակալ (մեկտեղ ուխտ, դաշինք ունեցող) բարեկամաց մերոց իրաւունս համարեցաք գրել բարի առնել փոխանակ արդարութեան միամտութեան (անկեղծ հաւատարմութեան) զոր պահեցին նոքա առ մեզ: Ամենայն որ ինչ հատի օրէն (տուրք բերքէ, ան որ ստակ չէ) գայցէ ի նոցանէ՝ լիցի այն պաշտօնէից յԵրուսաղէմ: Փոխանակ արքունական մտից որ գայր ի նոցանէ ամ յամէ յարմտեաց (գահրէ, ցորեն, բակլա եւայլն) երկրին և ի բերոյ (պտուղ, բերք) ծառոցն պտղոց և այլ որ ինչ տարազք (միրիի վերաբերեալ բան) արքունի կամ տասանորդք կամ մաքս կամ որ ինչ մուտք յարքունիս իցեն, կամ բաժ (տեսակ մը տուրք. ռուսումաբ) աղտից կամ տարազ պտակաց՝ զայս ամենայն Թողցուք ի նոսա: Արդ ձեզ փոյթ լիցի առնել պատճէն մի հրովարտակիդ և տալ ցՅոնէաթան զի դիցի ի գանձն սրբութեան ի դիպան (դիպող, պատշաճ) վայրի, ի նշանաւոր տեղւոջ:

Տրիփոն ոմն անուն էր Աղեքսանդրեան տոհմին. իբրև ետես նՁէ զօրքն ամենայն տրտունջ են զԴեմետրեայ, գնաց նա առ Իմաղկուս արուայիկ որ սնուցանէր զԱնտիոք զպատանեակն Աղեքսանդ-

բի. և առ նմա կանխէր զի տացէ նա, ցնա զմանուկն, և ածցէ Թագաւորեցուցցէ ի տեղի հօր իւրոյ. և պատմեաց նմա զամենայն Թշնամութիւնս զոր միանգամ գուսային (սպառնալ) զօրքն: Եւ Յովնաթան առաքեաց առ Դեմետր արքայ զի հրաման տացէ իջուցանել զզօրսն որ ի միջնաբերդի անդ էին, զի էին նոքա Թշնամութեամբ ընդ Իսրայելի: Եւ առաքեաց Դեմետրիոս առ Յովնաթան և ասէ. Ոչ զայդ միայն արարից քեզ և ազգի քում, այլ և փառաք փառաւորեցից զազգքո, եթէ ժամանակ միայն գտից: Այլ գու բարւոք արասցես առաքել առ իս գունդ մի ի Թիկունս, զի զօրքս աւասիկ յինէն յեսս կացին (ապստամբեցան): Իբրև լուաւ զայն Յովնաթան, վաղվաղակի գունդ մի յերից հազարաց արս ընտիրս ուպառազէնս արձակեաց ի Թիկունս Թագաւորին ի քաղաքն անտիոքացւոց: Իբրև զայն լուան քաղաքացիքն, ժողովեցան յիւրաքանչիւր տեղւոջէ ի մէջ քաղաքին. այն ինչ յարձակեալ էին ի վերայ Թագաւորին և կամէին անդէն սպանանել, նա խոյս ետ ի նոցանէ. և

նոքա առին վաղվաղակի զկիրճսն (անցնելու տեղ) ամենայն գնացից քաղաքին. մարտ եդին և սկսան մաքառել (կռուիլ): Ազդ եղև Իսրայելեան գնդին, կուտեցան ի վերայ ապարանից Թագաւորին, ձայն ետուն (լուր տալ. իմացնել) միմեանց, և սփռեցան ընդ ամենայն քաղաքն. հարին սպանին կոտորեցին արս իբրև տասն հազար. հրձիգ արարին զամենայն փայտակերտս ապարանից նոցա. արկին յիւրեանս զԹագաւորն և ապրեցուցին զգնա ի ձեռաց նոցա: Իբրև տեսին մնացեալ գունդ քաղաքին եթէ զօրացաւ գունդն Իսրայելեան ի վերայ նոցա և կամակար յաղթեցին նոցա, լքան, նուաղեցան և տկարացան ի խորհուրդս իւրեանց. ի ձայն բարբառոյ ողորմանաց (աղաչելու կերպով) սկսան աղաղակել առ Թագաւորն և ասեն. Զեռն տուր (գրքա) մեզ, և դադարեսցէ գունդս մոլեկան (կատղած) ի կոտորածէ քաղաքիս. զայն բան ասէին և զիւրաքանչիւր զէնս առ ոտս պատերազմողացն ընկենուին. և բարձրանայր փառաք գունդն Իսրայելեան առաջի Թագաւորին: Եւ նոտաւ

Դեմետր արքայ յաՁոռ տէրութեան իւրոյ, և սարսեաց (դողալ. շարժիլ) երկիրն ամենայն առաջի նորա:

Ցետ այսորիկ դարձաւ Տրիփոն և պատանեակն Անտիոքոս ընդ նմա Ցագաւորեալ և նստեալ յաՁոռ տէրութեան. և առ նա ժողովէին զօրքն ամենայն որ ցըրուեալ էին ի Դեմետրեայ, և եղուն մարտ պատերազմի ընդ Դեմետրեայ և փախուցին զնա վատՁարեալ: Հրաման ետ հրովարտակ առնել մանուկն Անտիոքոս առ ՁոնվնաՁան և ասէ. Կացուցեալ իմ զքեզ ի գործ քահանայապետութեան և հաստատեալ իմ զքեզ ի վերայ չորիցն օրինաց, և կարգեցաք զքեզ ընդ բուն և ընդ առաջին բարեկամս մեր: Եւ ետ տանել նմա նուագս ոսկիս և սպասս տաճարին. և ետ նմա իշխանութիւն ըմպել ոսկի նուագօք. արկանել ծիրանիս, և իշխել կրել նշան շգեղ ըստ նշանի Ցագաւորաց: Եւ ել ՁոնվնաՁան շրջել յայնկոյս Ցորդանան գետոյ ընդ քաղաքսն. և ժողովեցան առ նա ամենայն զօրք Ասորւոց ի Ցիկունս: Անտի գնաց եկն ի Գազա. և գազացիքն փակեցին նմա

զդրունսն. նստաւ շուրջ զնոքօք և հրձիգ արար զաւանս նոցա: Ապա եկին գազացիքն, առաջի կացին, ձեռն եռուն (հրնազանդեցան) նմա և մատուցին զորդիս իշխանաց իւրեանց ի պատանդութիւն. և նա առ ետ տանել զնոսա յԵրուսաղէմ: Եւ Շմաւոն հասանէր պատերազմաւ ի վերայ ԲեՁսովրայ և պաշարէր զնա աւուրս բազումս և յարգել արկանէր զնոսա. աղաչել սկսան նոքա զնա զի դաշինս արասցէ ընդ նոսա. նա ևս ձեռն (գթաց, խնայեց) նոցա և եհան զնոսա անտի և կացոյց նա անդ պահապանս քաղաքին: Եւ ՁոնվնաՁան զօրօքն իւրովք եկն բանակեցաւ ի վերայ ջուրցն Գեննեսարեթայ. կանխեաց նա ընդ առաւօտն ի դաշտն Նասովրայ. և գունդ մի այլազգեաց ընդ առաջ եղև նմա ի դաշտի անդ: Եւ դարան գործեցին ի վերայ նորա. կէսքն ի դարան մտին, կէսքն ի դիմի հարան նմա. և յարեան դարանակալքն յիւրաքանչիւր տեղեաց, զհետ եղեն նոցա, և զՁոնվնաՁան ի մէջ արկին (պաշարեցին) զօրքն հանդերձ. և արարին զզօրսն ՁոնվնաՁանու փախըս-

տեայս: Ի վերայ յարձակէր Ցոփնաթան բարկութեամբ մեծաւ և ի պարտութիւն մատնէր զնոսա. յայնմ ժամանակի փախստեայքն ամենեքեան անդրէն ի նոյն դառնային, հալածական զՔշնամիսն առնէին առաջի իւրեանց: Եւ դարձաւ Ցոփնաթան յերուսաղէմ:

Ա. Մակաբ. Գլ. ԺԱ.

Իբրև լուաւ Ցոփնաթան եթէ դարձան իշխանք Դեմետրեայ զօրօք բազմօք քան զառաջինն գալ ի վերայ նորա ի մարտ պատերազմի, չուտ արար յերուսաղեմէ, խաղաց ի վերայ նոցա, եհաս, ի դիմի հարաւ. քանզի չետ Թոյլ նմա հասանել յուզել (խռովել) զերկիր իւր: Արձակեաց նա դէտ (լրտես) ի բանակ նոցա. և պատմէին նմա այսպէս եթէ պատրաստեալ են գիշերայն անկանել ի վերայ մեր: Իբրև արևն ի մուտս եղև, հրաման ետ Ցոփնաթան զօրացն զի վառեալք, արթունք, պատրաստեալք, միագունդ կայցեն մինչև յառաւօտ ի մարտ պատերազմի: Պարեկապանս (պահապան, դիտող) հանին, շուրջ զիւրեամբք փակեցին, և ինքեանք կային պատրաստեալք ի մարտ

պատերազմի: Իբրև լուան Թշնամիքն եթէ գիշերայն պատրաստեցան ի պատերազմ, երկեան, զարհուրեցան, բեկան ի սիրտս իւրեանց. խիտ առ խիտ խարոյկըս վառեցին ընդ ամենայն տեղիս և ինքեանք գիշերայն փախստեայք մեկնեցան: Եւ ոչ գիտաց Ցոփնաթան զօրօքն հանդերձ զփախուստ նոցա, զի հայէր ընդ խարոյկսն բորբոքեալս. համարէր թէ առ ետեղ (նոյն տեղը, հոն) իցեն. ապա թէպէտ և զհետ եղև նոցա, չկարաց հասանել, զի անցեալ էր նոցա ընդ գետն Ազատ:

Ապա դարձաւ ի նոցանէ Ցոփնաթան ի վերայ Արաբացւոցն: հարկանէր սատակէր վանէր զբանակս նոցա. և դառնայր ի կողմանս Ցոպպէացւոց, արագէր զօր ի ներքս մուծանել. զի լուաւ թէ ամրականքն (ամրոցին մէջը եղողները) ձեռն տային ի Դեմետր. պահապանս ոստիկանս ի վերայ կացուցանէր: Եւ դարձաւ Ցոփնաթան. զօրընտիր լինէր, զծերակոյտն ի խորհուրդ կոչէր, կամէր զամուրսն շինել Հրէաստանի. և բարձրացուցանել ի բարձրութիւն ի մէջ միջնա-

բերդին, և զքաղաքն ի բարձրութիւն մեծ. անջրպետել (երկու բանին մէջտեղը բաժնել) կամէր ընդ նոսա (ընդ ամուրս) և ընդ քաղաքն զի առանձինն լիցին: Եւ ժողովեցան շինել զքաղաքն և ինչ որ անկեալ է ի պարսպացն յուղխաջուր (որուն ջուրը հեղեղ, սել, է) հեղեղատաց ի ծմակին կողմանց (հովտին կողմէն) անտի: Եւ Շմաւոն սկսաւ շինել զԱղեղա, ամրացոյց զնա և դրունս եդ նմա և նգոք հաստատեաց զնա:

Եւ խնդրէր Տրիփոն Թագաւորել կողմանցն Ասիացւոց և դնել Թագ և ձգել ըզ ձեռն ի վերայ արքային Անտիոքացւոց. բայց երկեաւ զանգիտեաց Թէ գուցէ յանձն ոչ առնուցու Յովնաթան և խաղայցէ ի վերայ նորա մարտիւ պատերազմաւ. և խնդրէր նա հնարս ըմբռնել զնա և կորուսանել: Եւ ել ընդ առաջ նորա Յովնաթան քառասուն հազարաւ ընտիր վառելով: Եւ ետես Տրիփոն եթէ հասեալ է Յովնաթան զօրօք բազմօք, զանգիտեաց ձգել զձեռս իւր ի նա. ապա առ ընկալաւ զնա փառաւորութեամբ: Խօսել սկսաւ ընդ Յովնաթանու և ասէ. Ընդէր

զայդչափ զօրս կոտորեցեր, զի ոչ ինչ գոյր ի միջի գործ պատերազմի. արդ արձակեա դու զզօրսդ յիւրաքանչիւր տեղիս, և ընտրեա դու ընդ քեզ արս սակաւս որ ընդ քեզ հանապազ շրջիցին. և եկ դու ընդ իս ի քաղաքն Պտղոմէացւոց և տաց քեզ զնա ի ձեռս և զայլ ամուրս զօրօքն հանդերձ, և ես դարձայց անդրէն զի վասն այսորիկ իսկ եկեալ էի: Եւ հաւատաց Յովնաթան ի նա, և արձակեաց զզօրսն յիւրաքանչիւր տեղիս. եթող առ իւր ի նոցանէ իբրև արս երիս հազարս. դարձեալ եթող ի նոցանէ զերկուս հազարսն յերկրին Գալիլեացւոց և ինքն գնաց ընդ նմա հազարաւ միով: Եւ իբրև եմուտ Յովնաթան ի քաղաքն Պտղոմէացւոց, առին (գոցեցին) զդրունսն քաղաքացիքն և զնա ի ներքս արգելին և հանին ընդ սուր (սուրէ անցուցեալ) զամենեսին որ ընդ նմա մտեալ էին: Եւ արար Տրիփոն զօրս (զօրք դրկեց) ի վերայ զօրաց նորա որ էին յերկրին Գալիլեացւոց և ի դաշտին մեծի զի երթիցեն սատակեսցեն զամենայն զօրսն Յովնաթանու: Նոքա իբրև գիտացին Թէ

նա ի ներքս արգելաւ և ամենեքեան կորեան որ ընդ նմա էին, Մխիթարեցին զանձինս և գնացին միագունդ միաբանութեամբ ի մարտ պատերազմի: Իբրև տեսին զօրականքն (Տրիփոնեայ) որ ի վերայ երթեալ էին՝ թէ սրտի մտօք ի վերայ իւրաքանչիւր ոգւոց մարտնչէին, զանգիտեցին, թողին և դարձան. և սոքա եկին հասին յերկիրն Հրէաստանի խաղաղութեամբ: Կոծ առին, (ողբալ) լացին զՅոնաթան և զզօրսն որ ընդ նմա էին, և էին յերկիւղի մեծի. և նստէր ի սուգ ամենայն Իսրայէլ:

Ա. Մակաբ. Գլ. ԺԲ.

Լուաւ Շմաւոն եթէ ժողովեաց Տրիփոն զօրս բազումս գալ հասանել ի վերայ երկրին Հրէաստանի սատակել զնոսա, և ստուգեաց թէ յահի յերկիւղի մեծի է, եկն ել յԵրուսաղէմ. ժողովեաց և նա զժողովուրդսն, մխիթարեաց զնոսա և ասէ. Դուք ինքնին գիտէք որչափ գործ գործեցաք ես և եղբարք իմ և տուն հօր իմոյ. քանի մարտ պատերազմի մղեցաք կամ որչափ նեղութեան համբերեցաք, զի վասն Իսրայելի և ձեր ամենեցուն կորեան

եղբարքն ամենայն, և ես մնացեալ եմ միայն: Եւ արդ քաւ լիցի անիւայել ապաչաւել (խնայել) յանձն իմ. արութեամբ (քաջագործութեամբ) ինչ չեմ լաւ քան զեղբարսն. բայց սակայն զօրացայց խնդրել զվրէժ զազգին: Իբրև զայն խօսէր, զուարթացուցանէր, մխիթարէր զամենայն միտս ժողովրդեանն: Ետուն պատասխանի. սկսան խօսել ի ձայն մեծ և ասեն. Դու ես մեր առաջնորդ փոխանակ Յուդայի և Յոնաթանու եղբարց քոց. մարտիր զպատերազմ մեր, և զամենայն(*) որ ինչ ասիցես՝ հնազանդ լիցուք քեզ:

Յետ այսորիկ խաղաց գնաց Տրիփոն ի քաղաքէն Պտղոմէացւոց գալ յերկիրն Հրէաստանի. և ածէր ընդ իւր զՅոնաթան ի զգուշութիւն պահպանութեան: Եւ գիտաց Տրիփոն թէ համբարձաւ Շըմաւոն փոխանակ Յոնաթանու եղբօր իւրոյ, առաւ հրեշտակս (դեսպան ղրկեց) և արձակեաց առ նա. ասէ. Վասն արծաթոյն զոր պարտէր Յոնաթան յար-

(*) Տես Քերականութիւն էջ 215, 1°.

քունիս՝ արգելեալ կայ աստ. արդ տուր բերել զարծաթն հարիւր քանքար և երկուս որդիս յորդւոց սորա տուր առնել առ իս զի մի, յորժամ արձակեսցուք, ապստամբ լիցի սա ի մէնջ: Գիտաց Շըմաւոն եթէ նենգութեամբ խօսի ընդ նմա. ետ տանել զարծաթն և զպատանեակսն. զուցէ ինչ թշնամութիւն լինիցի ընդ ժողովուրդն և ընդ նա, և ասիցեն թէ Ազահեաց (խնայել) յարծաթն և չետ տանել զպատանեակսն և այրն կորեաւ: Սակայն ստեաց Տրիփոն և ոչ յարձակեաց զՑոնաթան: Եւ որք ի միջնաբերդին էին յԵրուսաղէմ՝ յղեցին առ Տրիփոն հրեշտակս ստիպել զնա. զի եկեսցէ առ նոսա ընդ անապատն և հաւաքաւս բերդին ապաւաքն (պաՀաr տայ): Եւ պատրաստեցաւ Տրիփոն գնդաւն հանդերձ գալ մտանել ի գիշերին յայնմիկ. և ձիւնաբեր եղեւ (ձիւն եկաւ) յոյժ, վասն այնորիկ ոչ կարաց մտանել. չու արար եկն ի կողմանս Գաղաադու: Անդ սպան զՑոնաթան և անդէն թաղեցաւ: Եւ առաքեաց Շմաւոն, բարձ անտի զոսկերսն Ցոնաթանու եղբօր իւրոյ. և բերին թաղեցին

զնա ի Մոդթիիմ: Կոծ եդին (ողբալ), լացին (ողբալ) զնա ամենայն Իսրայէլ և սուգ առին (սուգ ընել) աւուրս բազումս: Եւ անդ շինեաց շինուած ի վերայ գերեզմանի հօր իւրոյ և եղբարց իւրոց. և բարձրացոյց զնա գործ քարակոփ (քարկոռոպի, կոփողի) քարակոփ (քարէ կոփուած) շուրջանակի. և կանգնեաց ի վերայ նորա բրգունս (բրգաձեւ քար) դէմ ընդ դէմ (դիմացէ դիմաց). և կացոյց անդ երիս վառեալս հօրն և եղբարցն դէմ ընդ դէմ. սեամբք բարձրութեան (բարձր սիւներով)՝ վանդակապատ (վանդակով, փարմախլրխով պատած). և եղ զկողիւք (ֆովի դիերը) վանդակին գործ քանդակի նաւաց նմանութեան:

Յաւուրսն յայնոսիկ պատեաց Շմաւոն զքաղաքն գազացւոց, և պաշարեաց ըզ նա զօրօք և արար անդ մենքենայս և մատոյց ի պարիսպ անդր և կործանեաց աշտարակ մի. և ելին ի մենքենայէ անտի և յարձակեցան ի ներքս ի քաղաքն և եղև խռովութիւն յոյժ ի քաղաքի անդ: Եւ դիմեցին առ հասարակ քաղաքացիքն

կանամբք և մանկտւով հանդերձ. ճիշ առեալ(պոռալով) և զօձիս պատառեալ և զաղաղակ բարձեալ (պոռալով) կարդային առ Շմաւոն, և աղաչէին ձեռն տալ (գթալ, օգնել) նոցա. զի մի դատեսցի զնոսա ըստ չարութեան նոցա, այլ ըստ ողորմութեան իւրում գթասցի ի վերայ նոցա: Եւ կակղացաւ[3](մեղմացաւ) Շըմաւոն և ցածոյց (դադրեցուց) զպատերազմն. և հրամայեաց հանել զնոսա արտաքս քան զքաղաքն, բնակեցոյց ի նմա արս որ զօրէնսն պահիցեն, ամրացոյց ևս զնս, և շինեաց ի նմա բիւրազգի գործած ապարանից: Իսկ որ ի միջնաբերդին էին յԵրուսաղէմ՝ արգելեալ նեղեալ պաշարեալ կային. զի ոչ էր նոցա ոչ ել ոչ մուտ և ոչ գին և ոչ վաճառ. և նեղեալ սովամահէին, և բազումք ի նոցանէ սատակեցան. աղաղակեցին առ Շմաւոն, աղաչէին կալ առաջի նորա: Նա ևս նոցա ձեռն (գթաց) և եհան զնոսա անտի և սրբեաց նա զմիջնաբերդն յամենայն պղծութեանց նոցա: Եւ մտանէր անդր օրհնութեամբ գոհութեամբ, ոգտով արմատնեօք ի ցնծութիւն փողոց

և սրնգի: Եւ հրաման ետ նա առնել ըզ տօնն զայն ամի ամի. ամրացոյց նա և զլեառն տաճարին առ միջնաբերդաւն, և բնակեալ էր ինքն ի ներքս սեպհական գնդաւն հանդերձ: Եւ ետես Շմաւոն ըզ Յոնաթան զորդի իւր եթէ այր կատարեալ և ի չափ հասեալ է. առ կացոյց ըզ նա իշխան զօրավար առաջնորդ ի վերայ ամենայն զօրացն:

Ա. Մակաբ. Գլ. ԺԳ.

Յամին հարիւրորդի եւթանասներորդի երկրորդի զօրաժողով լինէր Դեմետր արքայ և անցանէր ի կողմանս Մարաց և Պարթևաց խնդրել իւր անտի Թիկունս, զի եկեսցէ տացէ մարտ պատերազմի ընդ Տրիփոնեայ: Իբրև զայն լսէր Արշակ արքայ Պարսից և Պարթևաց թէ եկն եմուտ Դեմետր ի սահմանս աշխարհի նորա, արձակեաց նա զմի յիշխանաց իւրոց երթալ ձերբակալ առնել զնա: Գնաց նա եհար սատակեաց զզօրսն Դեմետրեայ և արար զնա ձերբակալ, եկն, ած կալաւ (առջեր հանել. ներկայացնել) զԴեմետր առաջի Արշակայ, և հրամայեաց (Արշակ) կապել զնա ի կա-

պանս և դնել զնա ի բանտի: Եւ դաղաբեաց երկիրն (Հրէաստանի) զամենայն աւուրս Շմաւոնի, և յաւելոյր բարիս ի բարեաց վերայ ազգին իւրեանց: Եւ գործէին զերկիր իւրեանց խաղաղութեամբ. և երկիրն տայր զպտուղ իւր և ամենայն փայտ ծառատունկ. (ծառ տունկ) տայր զբեր իւր առատութեամբ: Ծերք ի հրապարակս նստէին, ճառս արկեալ (խօսել) զբանից բարութենէ՝ ընդ միմեանս խորհէին, երիտասարդք զփառս զգեցեալ, զարդարեալ ի զարդ պատերազմի. Զքաղաքս պնդէին (ամրացնել) համբարօք, և զանձինս պատրաստէին ի պատրաստութիւն զարդու ամրութեան զինու. և ցնծայր Իսրայէլ յուրախութիւն մեծ. և նստէին իւրաքանչիւր ընդ այգւով իւրեանց և ընդ թզենեաւ: Եւ ծախեաց Շմաւոն զանձս բազումս յիւրմէ և արար նա հանդերձս զինու զարդու ա. բանցն պատերազմողաց ազգին իւրոյ և Կուտեաց նա համբարս և թոշակս զօրականին. և ամրացոյց զքաղաքսն Հրէաստանի և զԲեթսուրա որ ի սահմանս Հրէաստանի էր, անդ հանդերձեալ (պաս-

տել) դնէր զզէնսն ամենայն, զէն և զարդ զօրաց թշնամեաց նոցա. և խրդրէր նա յաւելեալ հանգամանս (ամէն կերպով) բարձրացուցանել զժողովուրդ իւր: Սակայն և Դեմետր արքայ բարձրացոյց զքահանայապետութիւն նորա. վասն այսր ամենայնի ընդ բուն բարեկամս փառաւորեաց զնա. քանզի և շուն եղեւ նմա (լսեց) եթէ անուանեալ կոչին Հրեայքն բարեկամք Հռոմայեցւոց, եղբարք և Թիկունք և նիզակակիցք, և զի ընկալան զհրեշտակն Շմաւոնի փառաւորութեամբ, և զի Հրեայքն ինքեանք հաճեցան, յանձն առին իշխան քահանայապետ կացուցանել զնա, զի փոյթ ցիցի նմա (հոգայ) վասն սրբոցն և յանուն նորին կնքիցին ամենայն մուրհակք աշխարհին. զի իշխանն ցիցի (արտօնութիւն ունենայ) արկանել ծիրանիս և զարդարեալ ոսկւով, և մի որ իշխեսցէ ի ժողովրդոց անտի կամ ի քահանայից ընդդէմ դառնալ հրամանաց նորա. և կամ ժողովել ժողովս յերկրի նորա առանց նորա. և կամ զգենուլ ծիրանիս կամ արկանել շինզդ ոսկի. և եթէ որ մի ինչ յայսցանէ անցցէ (չի

պահէ) և կամ անարգեացէ, մահապարտ լիցի : **Ա. Մակաբ. Գլ. ԺԴ.**

Յամին հարիւրորդի եւթանասներորդի չորրորդի եկն եհաս Անտիոքոս յերկիր հարցն իւրոց : Ժողովեցան առ նա ամենայն զօրքն և սակաւք ինչ մնացին առ Տրիփոնեայ . և հալածեաց զնա Անտիոքոս, և ած արկ զնա ի Դովրա Ծովեզերեայց . և Թողին զնա ամենայն զօրքն, իբրև տեսին զչարիսն որ անցին ընդ նա : Անտիոքոս եկն բանակեցաւ շուրջ զԴովրաւ երկոտասան հազարաւ մարտիկ պատերազմող արամբ և ութ հազար հեծեալ սպառազինաւ, և զծովակողմն փակեաց նաւօք . և ի նեղ արկ զքաղաքն ի ծովէ և ի ցամաքէ կուսէ, և ոչ զոք Թողուին ելանել : Ի վաղիւ անդր մատուցանէր առ նա մենքենայս և ձեռն արկանէր ի նա և ի ներքս արգելեալ պաշարեալ պահէր զՏրիփոն. եւ ոչ եղ ումեք գոյր (ոչ ելնելու հնարք կար) ի ներքուստ արտաքս և ոչ մուտ արտաքուստ ի ներքս: Եւ յղեաց Շեմաւոն ի Թիկունս նմա արս ընտիրս . մարտիկ պատերազմողս երկու

հազար ապառազէնս , և պատարագս հանդերձեալս յոյժ ոսկի և արծաթ : Այլ անարգեաց նա և ետարանայր ի նմանէ : Եւ առաքեաց նա զԱթենոբիոս մի ի բարեկամաց իւրոց . խօսս ի վերջ առնել (խօսակցիլ) ընդ նմա և ասել . Դուք իշխեալ զօրացեալ ունիք զքաղաքս Թագաւորութեան իմոյ և զմիջնաբերդն Երուսաղեմի . զսահմանս նոցա աւերեցէք դուք և հարուածս մեծամեծս հասուցէք ի վերայ երկրին նոցա . տիրեցէք դուք կողմանցն բազմաց և գաւառս բազումս հատէք (յափշտակել առնուլ) զիմոյ տէրութեան : Արդ տուք ի դուրս (ետ տուէք) զքաղաքս և զգաւառս և զկողմանս և ըզ հարկս նոցուն , և որ ինչ միանգամ բըռնութեամբ կալեալ է ձեր ի մէնջ արտաքոյ սահմանացն Հրէաստանի . ապա Թէ ոչ տուք փոխանակ այնորիկ հինգ հարիւր շանքար արծաթոյ . և զխափանած (ետ մնացածը) հարկաց քաղաքացն զոր ցայսօր խափանեցէք՝ այլ հինգ հազար քանքար . ապա Թէ ոչ եկեացուք , հարցուք . վանեսցուք զերկիրն , սատակեսցուք : Եւ իբրև եկն Աթենոբիոս բարեկամ արք-

քայի յԵրուսաղէմ, և եւեթ զփառսն Շմաւոնի և զսպաս ոսկւոյ և արծաթոյ և զհանդերձս պատրաստութեան զօրաց բազմաց, յոտն կայր առաջի Նորա և շրջով (պաsուով) տայր զպատգամ Թագաւորին: Պատասխանի ետ Նմա Շմաւոն և ասէ. Ոչ յերկիր օտար ուրուք մտեալ եմք և ոչ ի բաժին ուրուք տարապարտուց ձեռն բռնութեամբ միսեալ է. զվիճակս ժառանգութեան հարցն մերոց վsարանդի շնալ (osարացած, յափշտակուած) յանպարտ ի Թշնամեաց տարապարտուց՝ քաջութեամբ ժամանակ (պատեհութիւն) գտեալ խնդրեցաք: Այլ վասն Յոպպէացւոց քաղաքին և Գազարայ զոր դուքն խնդրէք, վնաս բազում գործեցին ի մէջ աշխարհին մերոյ, վրէժ խնդրեցաք. վասն այնորիկ տուժեացուք (վնասս հատուցանել) հարիւր քանքար:

Ա. Մակաբ. Գլ. ԺԵ.

Եւ Թագաւորն գումարեաց զԿենդեբոս ծովեզերեայց սպարապետն, և զօրս բազումս հեծեալս և հետևակս ընդ Նմա. պատուէր ետ Նմա զի բանակեսցէ դէմ յանդիման Հրէաստանի: Խաղաց գնաց

Կենդեբոս, եկն եհաս ի կողմանսն Յամնեայ և սկսաւ գրգռել զզօրսն և միսել (մտնել, խոթուիլ) ի Հրէաստան գերել և սպանանել: Եւ ել Յովհան ի Գազարայ, և եկն պատմեաց Շմաւոնի հօր իւրում որպէս եւ գնայր (ինչպէս վարուիլը) Կենդեբոս: Եւ կոչեաց Շմաւոն զերկոսին որդիսն, զՅուդա և զՅովհան, և ասէ ցնոսա. Ես և եղբարք իմ և տուն հօր իմոյ մարտ պատերազմի տուաք ընդ Թշնամիս ի մանկութենէ մերմէ մինչև ցայս օր ժամանակի, և աջողեցան գործքն ամենայն ի ձեռս մեր. բայց արդ ծերացայ, և դուք հերիք (բաւական) էք յամս ձեր փոխանակ իմ և եղբօր իմոյ. արդ ելէք մարտերուք ի վերայ ազգիդ մերոյ. և զօրութիւն օգնութեանց յերկնից եղիցի ընդ ձեզ: Եւ ընտրեաց նա յաշխարհէ անտի իբրև քսան հազար հեծեալ սպառազէն և խաղաց ի վերայ Կենդեբեայ. և եկին ագան այն օր ի Մոդթիիմ. ընդ առաւօտն կանխեալ (կանուխ ելնելով) լինէին դաշտամուխ: Անդ տեսանէին զօրս բազումս հեծեալս և հետևակս որ գային ընդ դէմ Նորա. և հեղեղատ մի

էր իմէջ երկոցունց, և ճակատեցաւ յանդիման նոցա ինքն և զօրքն: Իբրև հայեցաւ ետես զզօրսն Թէ դանդաղեցան անցանել ընդ հեղեղատն, յառաջ ինքն նահատակեցաւ. հապա զօրքն միազունդ զկնի փողեցան (դիմեցին): Եւ բաժանեաց յերկուս գունդս զհեծելազօրն ի մէջ հետևակացն. և էր հեծելազօրն կարի յոյժ: Փող հարին, խրախոյս բարձին, ի վերայ յարձակեցան. ի պարտուԹիւն մատնեցաւ Կենդեբոս. և անկան ի նոցանէ յաւուր յայնմիկ վիրաւորք բազումք. և՞ որ մնացեալն էին՝ փախստեայ անկանէին յամուրսն: Յաւուր յայնմիկ խոց (վիրաւոր) մնայր Յուդա. բայց Յովհան զհետ լինէր փախստեայցն, մինչ ածէր արկանէր զնոսա ի կողմանս Կեղրոնայ:

Եւ Պտղոմէոս Աբբուբեանց էր կացուցեալ ի կողմանց դաշտին յԵրեքով, և ունէր նա արծաԹ և ոսկի յոյժ, զի էր նա փեսայ քահանայապետին: Եւ հպարտացաւ ի սիրտ իւր, մեծամտեաց և կամէր տիրել ի վերայ կողմանցն գաւառին, և խորհուրդ խորհէր նենգուԹեամբ ի վերայ Շմաւոնի և որդւոց նորա ջնջել զնոսա ի միջոյ: Եւ Շմաւոն շրջէր ի կողմանս գաւառացն, խնամէր և տեսանէր (կը հոգար) զպէտս նոցա. և եկն էջ յԵրեքով, ինքն և ՄատաԹի և Յուդա որդիք նորա: Եւ ընկալաւ զնոսա Պտղոմէոս ի մեծարանս նենգուԹեամբ: Անդ ի դարանի առնէր արս. և իբրև կերան և արբին Շմաւոն և որդիք իւր, արբեցան. յարեաւ Պտղոմէոս Թաքուցելովքն հանդերձառին զզէնս իւրեանց և մտին ի վերայ Շմաւոնի. և սպանին անդէն ի տաճարի անդ զնա և զորդիս նորա: Եւ գրեաց Պտղոմէոս առ արքայն զի զօր ի Թիկունս արձակեսցէ նմա, զի ի ձեռս տացէ նոցա զքաղաքն և զհարկսն: Այր մի պընդեցաւ յառաջագոյն ի Գազարա, գոյժ էր Յովհաննու Թէ կորեաւ հայր նորա և եղբարք իւր, և զքէն ևս յղեալ նենգուԹեամբ զի սպանցէ զքեզ: Իբրև լուաւ, զարմացաւ յոյժ և յիմարեցաւ, և ըմբռնեաց զարսն զայնոսիկ և անդէն սպան զնոսա, իբրև գիտաց Թէ նենգուԹեամբ եկեալ են կրրուսանել զնա:

Ա. Մակաբ. Գլ. ԺԶ.

Ազգ եղև Փիղոպատովրայ վասն կողմանցն յորոց մերժէր զնա և զզօրս իւր Անտիոքոս : Ժամ տայր , հրաման հանէր ամենայն զօրաց իւրոց հետևակաց և հեծելոց , և առնոյր ընդ իւր զքոյր իւր զԱրսինոյէ . չու առնէր , խաղայր գնայր ի կողմանս հռափայեցւոց ուր էր բանակեալ Անտիոքոս ամենայն զօրօք իւրովք : Թէոդոտոս ոմն անուն առնոյր գունդ մի որ ընդ իւրով ձեռամբ էր . ծածուկ վառէր . հասանէր գիշերի ի վերայ խորանին Պտղոմեայ , ի ներքս անկանել և զնա անդէն սպանանել և միայն անձամբ վերճարել զգործ պատերազմին : Նմա պատահեալ առաջնորդէր Դովսիթէոս անուն յազգէ Հրեայ . անդէն ի խորանի անդ արագ արագ շիջուցանէին , և այսպէս մարտն բորբոքէր և իրքն Անտիոքայ առաւել յաջողէին : Ցառնէր վաղվաղակի Արսինոյէ . ի ձայն աղորմ լալոյ , զգէաս ուրձակեալ (մազերը թողած) առաջի զօրացն աղաչէր այսուհետև ի վերայ անձանց և որդւոց մարտնչել . և եթէ ինչ յաղթութեան հնարս գտանել մարթացեն , խոստանայր տալ նոցա յայր (մարդ

գլուխ) երկուս երկուս մանեակս ոսկիս : Այլ դէպ լինէր Թշնամւոյն ի ձեռս Անտիոքայ և զօրացն ապականել : Արձակեցին Հեբրայեցիքն ի ծերակոյտ ժողովրդենէ անտի հարցանել զողջոյն (առողջութիւն) Թագաւորին . յայտ առնել զիևնդալ իւրեանց (իրենց խնդակցութիւնը) վասն յաղթութեանն և ուրախութեան : Եւ նա եդ ի մտի իւրում յօժարել հասանել սիրով ուրախութեամբ ի մէջ նոցա :

Իբրև եկն եհաս յԵրուսաղէմ , մեծաւ շքով , բազում պաշտամամբք ողջակէզս պատարագաց մատուցանէր : Եկն եհաս ի տեղին սուրբ . էր զարմացեալ ընդ գեղեցկութիւն վայելչութեանց տաճարին և ընդ օրէնս (կերպ) սպասուցն . խորհեցաւ մտանել ինքն ի տաճար անդր : Նոքա կացին առաջի և ցուցանէին եթէ ոչ օրէն և պատշաճ է զայդ առնել . նա յամառեալ պնդեալ էր զանձն ի ներքս մատուցանել : Անդ քահանայքն ամենայն պատուական հանդերձիքն իւրեանց անկանէին սողէին (գետինը խուզելով երթալ) , աղաղակաւ արտասուօք զտաճարն լնուին , և որ անդ դիպեալ էին քաղաքացիքն

խռովեալ յանկարծակի յայնվայր հասանէին. զինչ իրք իցեն շշնջէին (իrարու հարցնել): Կոյսք ի կուսաստանաց մարքքն հանդերձ ի հրապարակն հասանէին. հող արկեալ զվարսիւք (մազերուն վրայ) ճչիւ աղաղակաւ զքաղաքամէջն լնուին. և որ արդ ևս նորամուտ հարսունք առագաստեալք (ծածկուած) յօրինեալք նըստէին, զօրինաւոր զամօթն մոռացեալ՝ ընթացս յանդգնութեան ընդ քաղաքամէջն ընթանային: Սոյնպէս մատաղամարքն (մատաղ տղոց մայրեր) մանկամբքն հանդերձ, զդարման մանկանցն թողեալ, այնպէս անզգայութեամբ ընդ անդաստանս առանց դարձադարձի յաւագամեծար (մեծերէն կամ հիներէն պատուուած) տաճար անդր պնդեալ (դիմել) ժողովէին վասն այնորիկ՝ որ անօրէնութեամբն խորհէր ձեռն յանձին հարեալ (զոռոզութեամբ) զինքն ի ներքս մատուցանել: Քաղաքացիքն իբրև տեսին թէ պնդեալ (յամառեալ) հաստատեալ կայ զիւր կամն կատարել, ձայն ետուն (բաղալերել) միմեանց և յիւրաքանչիւր զէնս գընացին, և անդէն վաղվաղակի մեծ խռով

ի տեղւոջն կացուցանէին, մինչև հազիւ հազ (գժուարաւ) ծերակոյտ ժողովրդեանն ցածուցանէին զամբոխն: Իսկ որ զթագաւորաւն ծերք և մեծամեծք ժողովրդեանն էին՝ ջանային զվիտան հպարտացեալս ցածուցանել, և զհեստեալ (խօսք մրտիկ չընող) յամառութիւնն զիջուցանել: Ստէպ ստէպ ուրդի մէջ (ուրանց, անկեղծ) աղաղակ էր զօրացն ժողովելոց. անհնարին գոչիւն լինէր, զի կարծեալ այսպէս էր եթէ ոչ միայն մարդիկն աղաղակիցեն, այլ և պարիսպքն և յատակքք հնչիցեն:

Գ. Մակաբ. Գլ. Ա.

Սկսան աղաչել և ասել. Տէր թագաւոր երկնից. դու՝ որ յառաջ զանօրէնութիւնսն գործէին հակայս, որ յանձանց զօրութիւն և ի քաջութիւն յուսացեալ էին՝ ջնջեցեր. ածեր ի վերայ նոցա զանչափ ջուրցն սաստկութիւն, դու՝ որ գործէին զամբարտաւանութիւն զՍողոմայեցիսն՝ յայտ յանդիմանութեամբ չարեօքն իւրեանց հանդերձ խայտառակեցեր, ի

հուր և ի ծծումբ (*) դատեցար, առակ խայտառակութեան յետնոց թողեալ. Դու զ յանդուգն զբուռն (զորաւոր) աբքայն սաստիկ զՓարաւոն որ արկ ի ծառայութիւն (ծառայ ըրաւ) զժողովուրդ քո՝ պէսպէս հարուածովք կշտամբեցեր. ցուցեր զքո զօրութիւն, զի պատրաստեալ զհետ հեծանէր ժողովրդեան քոյ բազում զօրօք, կառօք և երիվարօք, ընկլուզեր զնա ի ծով կարմիր: Արդ աւասիկ պիղծս, հպարտս և ամբարտաւանս հնարի (կը ջանայ) սպրդել (մուտ գտնել) ի ներքս անկանել, թշնամանել զտեղի սրբութեան զանուանի ընդ ամենայն երկիր տաճար փառաց անուան քոյ. թէպէտ և բնակութիւն քո երկնից երկինք են, աներևոյթ անձեռնհաս (ուր ձեռք չի հասնիր) ձեռին մարդոյ: Թէպէտ և յանցաւոր եմք քեզ. մի ցնծասցեն անօրէնք յամբարտաւանութեան խօսից իւրեանց. խօսիցին թէ մեք կոխեցաք զտաճարն սրբութեան զորօրինակ կոխի-

(*) ի նախդիրով հայց. փոխանակ գործիականի. Տես՝ Քերականութիւն,

ցին խառնակոխ (ուր ամէն մարդ անխիր կը կոխէ) յատակք մեհենից: Իսկ սուրբն որ ի սուրբս բնակեալ է, ամենազօրն, ամենակալն, լուաւ զօրինաւոր զաղօթս խնդրուածոց ժողովրդեանն. զայն որ արդ ևս հպարտութեամբ մեծաւ ի վերայ նոցա համարձակ սաստկացեալ էր՝ հարկանէր զնա աստի անտի սաստիկ, տանէր եւ շարժէր (կը տանէր կը բերեր, կ՚երերցնէր) զնա իբրև զեղէգն ի հողմոյ և անդէն զգետնէր (գետինը զարնել). և նա այնպէս անկեալ դնէր անզգայ ընդարմացեալ (փայտ կտրած) անմռունչ (անձայն) անդամալոյծ լուծեալ յամենայն յօդից: Բարեկամքն և որ զնովաւ սպասաւորքն էին, իբրև տեսին թէ այնպէս արագ հասանէր ի վերայ նորա դատաստանն, զահի հարկանէին թէ գուցէ և ոգիին ապառիցին (հոգին հատնի, մեռնի), և վաղվաղակի զնա ի ներքուստ արտաքս քարշէին. զարհուրեալք ի սաստիկ հարուածոց անտի: Իբրև ժամք հարուստ (շատ) ի վերայ անցին և առնն միտ յինքն եկին (խելքը վրան եկաւ), ոչ թէ զդջացաւ ի

միտս իւր յետ մեծի պատուհասին, այլ սաստկագոյնս ևս սկսաւ սպառնալ։

Հրամայէր չու դարձի առնել։ Իբրև եկն եհաս յերկիրն Եգիպտացւոց, զչարութիւնն ևս քան զևս յանձն իւր աճեցուցանէր տաճարակից (որոնց հետ կը նստի կ'ելնէ) ընկերովքն իւրովք մեկնելովք յամենայն իրաւանց։ Գիր առնէր զամենայն ազգն Հրէից յաշխատահագիր առնել (գերի գրել) ի կարգս հարկի ծառայութեան օրինի. և որ սակաւ մի խեռեալ (չինազանդիլ) ընդդէմ դառնայցեն՝ պատուհաս մահու ի վերայ նոցա։ Բազումք ի ժողովրդենէ անտի ծանծաղամիտք (կարճամիտ) որ յառաջն իսկ գայր ի գայրի (կաղալով, տարակուսանօք) կային յօրէնսն առաջինս՝ դիւրաւ տային զանձինս իւրեանց ի ներքս։ Այլ բազումք ի նոցանէ պնդեցան հաստատեցան ի սիրտս իւրեանց և ոչ դըրդուեցան (խախտիլ) յօրինաց իւրեանց. և որ մեկնէին ի նոցանէ՝ իսորշէին զարշէին և զնոսա պիղծս համարէին, որոշէին զատանէին յօրինացն հայրենեաց։

Դ. Մակաբ. Գլ. Բ.

Իբրև ի վերայ հասանէր անօրէնն խորհրդոց նոցա, յանչափ արտմտութիւն բարկութեան բդեհր (շատ բարկացաւ)։ Իսկ որդիքն Հեբրայեցւոց զօրէնս միամտութեամբ ընդ արքային արդար պահէին, մեկնութիւն առնէին (կը զատուէին) յապստամբացն, վասն այսորիկ շատից յաչաց ելանէին։ Իսկ որ ի քաղաքի անդ հեթանոսք էին, իբրև տեսին զ յանկարծակի խռովութիւն մարդկանն և յայնչափ հալածանսն յանկարծակի հասեալ ի վերայ, օգնել ինչ ոչ կարէին և ոչ ընդդէմ դառնալ հրամանացն արքունի. բայց սակայն արգահատէին (գթալ, կարեկից ելլալ), մխիթարէին, քաջալերէին և ասէին. Ոչ թողու Տէր Աստուած իւրեանց զայդպիսի գունդ տարապարտուց (առանց յանցանքի) կորուսանել. և որ այլ ոք բարեկամք և մերձաւորք և վաճառականքն էին, լռելեայն ուխտ դնէին օգնական լինել որչափ ձեռնհաս ղիւնէին (որչափ որ կրնան)։ Բայց անօրէնն այնչափ համբարձեալ էր ի հպարտութիւն, և ածէր զմտաւ թէ մշանջեան (մշտնջենաւոր) իցէ իւրոց խորհրդոցն իշխանու-

Թիւն: Հրովարտակս առնէր ընդ ամենայն աշխարհ օրինակ զայս.

« Արքայ Անտիոքոս առ ապարապետս և առ զօրավարս և առ զօրս՝ ողջոյն. ողջ լիջիք, և ես ինձէն (ես ալ) իսկ ողջ եմ:

Զեր ինքնին լուեալ իցէ վասն առնուձիոյ ճանա գարնին. ոչ զօրութեան բռնութեամբ, ոչ ի տէգ նիզակաց, ոչ ի հաստապինդ (շաս ամուր) բռնութիւն (զորութիւն) աղեղանց, այլ հեզութեամբ և խոնարհութեամբ և մարդասէր խորհրդովք, իբրև դայեկաբար սնուցանել զամենայն կողմանս ստորին Ասորւոց և Տաճկաստանի, մեծապատիւ մեծապարգև արարաք զամենայն կողմանս քաղաքացն: Եկաք իջաք և իքաղաքն երուսաղէմացւոց. կամեցաք մտանել ի տաճարն, ի չարագործաց վայր անդր: Նոքա ոչ կամէին կասել (ես կենալ) երբէք ի խոնարհանգութենէ չարեաց իւրեանց. ոչ ըզ մեզ ի տաճար անդր մերձեցուցին և ոչ զերևելի դահամունս (ընծայ, նուէր) պատարագաց մերոց ի տաճար անդր իւրեանց ընկալան. ի հպարտութիւն ամբարտաւանութեան յեցեալ՝ միայն ի մէջ

ամենայն աշգաց կամեցան կենանալ (վայրենի խոզի պէս ըլլալ) հպարտանալ ամբարտաւանել, յողն կոլ (գլուխը տրնկել) բարձրապարանոց երևել ի վերայ երախտաւորաց իւրեանց: Մեք իբրև կամեցաք ըստ նոցա անմտութեանն զմեր միտս զնատուցանել (իջեցնել, ցածցնել), մեծաւ յաղթութեամբ դարձաք անտի, և զազգատոհմն նոցա, առանց ոխս ի մտի ունելոյ վասն բազմապատիկ յանդգնութեանն և ժպրհութեան (սասիկ յանդգնութիւն) նոցա, հրամայեցաք աղեքսանդրացւոց քաղաքակիցս առնել: Նոքա հէս վասբար (աւելի գէշ) յետսամիտ (հակառակը մտածող) խորհրդովք և տնկակից (բնածին) խորամանգութեամբ զայն բարիս յանձանց մերժեցին. այլ և գարշին և անարգեն և պիղծս համարին. և զայն ևս տակաւս որ ի մեզ գթութեանցն՝ խոտեն և անարգեն, և անկեաց կեանս (խեղճ, չապրելու կեանք) շտապ տագնապաւ ի վերայ հասուցանեն: Յայսմ ամենայնէ խորհուրդ ի մտի եդաք (խորհեցանք) թէ գուցէ այնպիսի խորամանգ բարոյիւք զթիկունս հաստ առնի-

ցեն, մատնտու (մատնիչ) ի ներքուստ արտաքս առ Թշնամիս անդր գտանիցեն: Արդ հրաման տուաք. վաղվաղակի իբրև ի ձեռն առնուցուք զայդ մեր առ ձեզ հրովարտակս, զմոլեկան (կատաղի) չարագործդ կնաւ և մանկամբք հանդերձ մեծաւ Թշնամանօք, ահագին պատուհասիւք առ մեզ աքսակել: Ապա Թէ գտցի որ Թագուսցէ ոք ի նոցանէ այր մի կամ կին մի կամ տղայ մանուկ մի, յանցեալ ծերուԹենէ մինչև ի դիեցիկն (կաթուսող) ի գրկի, չարաչար տանջանօք պատուհասիւ մահու զնա տնմաւ հատցեն (ընտանիմով, ցեղով ջնջել): Եւ եԹէ ոք գտցի որ զղողեալն (պահուած) Թաքուցեալն գուշակեսցէ (խապար տալ, մատնել), ինչքն և ստացուածք գուշակելեացն լիցին, և յարքունի գանձէ նմա պարգև լիցի: Եւ ամենայն տեղի ուր երևեսցի ի նմա ի նոցանէ օք ղողեալ և Թաքուցեալ՝ աւեր, հրձիգ և անապատ լիցի, և ամենայն ազգի մարդկան յամենայն պէտս անպէտ (առանց գործածուելու) կոցցէ յաւիտեանս ժամանակաց: »

Դ. Մակար. Գլ. Գ.

Ընդ ամենայն տեղիս ուր և հասանէր հրաման հրովարտակին՝ գաւառակոյտ քաղաքաքաժողով (գաւառով եւ քաղամով) ուրախուԹիւն լինէր հեԹանոսացն, մեծաւ ցնծուԹեամբ զառագաստեալ խորամանգ նենգուԹեամբ զոխուԹիւն խորհրդոցն գաղտնեաց յայտնուԹեամբ համարձակուԹեամբ ցուցանէին: Այլ քաջացն սուգ անհնարին, և գերարտօսրալից գոչմամբ եռանդն ի վեր համբարձեալ՝ զսիրտս ճմլէր: Քանզի որ անցք փողոցաց ընդ ամենայն քաղաքս՝ որ ոչ գուժիւ, աղաղակաւ, կոծով ի վերայ նոցա չէին լըցեալ ճչելով: Այսպէս մեծաւ սաստիւ դառնուԹեամբ զազգն ընտրեալ ի քաղաքաց քաղաքաց ժողովեալ յուղարկէին ի ձեռն զօրավարաց գաւառացն, և այնչափ աղէտ տարակուսի էր ի վերայ անհնարին վշտացն, մինչև սիրտն ոխակալ (ոխ պահող) և ակն նախանձալից, վասն հաւասար գԹոյն, յայն ողորմ տեսիլ չարչարանաց մարդկանն արտասուս բամէին: Զի յանկարծակի զԹշուառուԹեան ճանապարհօքն երԹային տանէին զբազմուԹիւն ծերակոյտ ալեացն հնացելոց,

հիւանդաբայլ (հիւանդի պէս քալող) ոտիւք, տարակուսեալ տկարութեամբ ի հնութեան ժամանակի : Իսկ որ արդ ևս նորոգ ամուսնութիւնք, ի միմեանս հասեալ թերալից (կէս լցուած) ուրախութեամբ նորասէր (նոր սիրող) առագաստից, չարաչար գուժիւ ուղղոյ լինէին (նամբայ կելլէին) և ամբաժաժուկ (ամուր ծածկուած) գողաձիգ ծնգասէր (տունը նստող, դուրս չելնող) հարսունք՝ վարսս մերկացեալ, գոյժ առեալ, զիւղաթուրմ (իւղով օծուած) ցցունսն (գագաթին վրայ հիւսուած մազեր) յանգգնեալ հոլանեալ (բանալ) հող ի գլուխ գնային. փոխանակ երգոցն ուրախութեան՝ ձայնակից ընկերօք անընդել (անսովոր) աշխատութեան տառապանօք, հեբարձակ, ցտեալք (մորքը սկրթած) և կապեալք, ընդ հրապարական մինչ ի նաւացն նաւահանգիստ բռնութեամբ քարշեալք երթային. և նոցին ամուսինքն տռև ընդ անձն (չրուանով կապուած) փոխանակ երիտասարդութեան ցնծութեանն ձեռակապօք խառանաձիգ (չուանով քաշուելով) ի մռնչիւն լալոյ վասն հասեալ ժամանակին

անդէն առ ոտս իւրեանց զօրհաս (վերջին ժամը) մահուն դէմ յանդիման առ ի գլուխս նկատէին : Եւ այսպէս զամենեսին իբրև զգազանս ինչ ի վայրէ երկաթապատս ածեալ՝ ընդ խելս նաւուց զպարանոցն կապէին, և նովին շղթայիւք՝ կիսոցն զոտիցն և զձեռաց կապելոց առեալ, ընդ վերնակողմն տախտակամած նաւին բևեռէին. զի յամենայն կողմանց թմբրեալք և յիմարեալք՝ անձին ինչ հրամայել (ինքը զինքը սպանել) յերթալ նաւացն մի կարասցեն : Իբրև այնպէս զամենեսին զնոսա ի նաւ անդր ամացեալ (լեցուել) տանէին՝ և ընդ հողմոյն աջողել ըստ հրամանի թագաւորին ի տեղին հասուցանէին, հրաման ետուն արտաքոյ քաղաքին յասպարիզի անդ յընդարձակ տեղւոջ յաշխարհակոյտ (ամենուն ծողվուած) վայրի ածել ժողովել վասն խայտառակութեան ազգին. զի ամենեցուն համարձակ իցէ տեսանել որ յայսկոյս յայնկոյս շահատակէին (վազրտել, դիմել), զառաջին քինու վրէժն զամենեցուն ընդ այն հանէին : Իբրև այս ամենայն լինէր, դարձեալ լու լինէր թէ

ազգակիցքն գաղտուկ ելանեն արտասուաց կցորդ (արտասուակից) լինել. իբրև այն ազդ լինէր, ի սրտմտութիւն բարկութեան բրդէր Թագաւորն. հրաման տայր և զայնոսիկ որ ի ներքս ի քաղաքի անդ էին՝ առ հասարակ ինմին պատժի պատուհասի արժանի մահու առնել, և ընդ միով աշխարհամար (ընդհանուր) գրով զազգատոհմն ամենայն յանուանէ գրել: Եւ նոցա գիր համարոյն այսպէս յաւուրս բառասուն ձգտէր (կը տեւէր):

Առաւել մեծապէս քան զօրեն հանապազորդ՝ (ամեն օրուան սովորութենէն աւելի) Թագաւորն լի ցնծութեամբ հրաման տայր մեծի տաճարին կոչնականս նուիրել (սեղանին մարդ հրաւիրել) յամենայն մեծամեծաց. մոլորեալ մտօք ի ճշմարտութենէ՝ անօրէն պիղծ բերանովն զանշշունչ (անձայն), զանձայն, զանմբռունչ (անձայն) կուռան յարգէր գովէր, և յօրինաւոր սրբութիւնան խօսէր որ ինչ ոչ էր արժան: Եւ յետ ժամանակեալ ժամադիր ժամուն՝ եկին մատուցին աշխարհահամար դպիրքն զգիրն առաջի Թագաւորին, սկսան պաղատել, և անհնար համարեցան առնել գիր զաշխարհամար Հրէիցն. Զի բազում այն են, ասեն, որ ցան աստ անդ մնացեալ են արտաքոյ այդր գրոյ, և ի տեղիս տեղիս, յապարանս ապարանս, ի կողմանս Եգիպտացւոց անհամար կան: Իբրև զայն լսէր Թագաւորն, պատուհասակոծ առնէր (յանդիմանել, պատժել) զդպիրսն իբրև զկաշառաբեկս (ան որ կաշառք հերած է), իբրև զայն ինչ խելս մեղեալս յառնեալ (հնարք խորհած են) զի ապրեցուցանել մարթասցեն զնոսա: Նոքա հաստատէին և յայտ յանդիման ցուցանէին զքարտէզն (թուղթ) պակասեալ և զգրիչն մաշեալս: Գ. Մակ. Գլ. Գ.

Ցայնմ ժամանակի կոչէր նա զՀերմոն փղապետ մեծաւ սաստկութեամբ վառել զփիղոն ի վաղիւ անդր, գինեզէնս խընկալիցս, զայրացուցեալս կնդրկաւ, գազանացուցեալս անապակաւ (սասթիկ ըմպելիք), ի հրապարակ ածել Թուով իբրև եւԹնհարիւր: Թագաւորն զայս հրաման տայր փղապետին, և ինքն յուրախութիւն դառնայր մեծամեծ աւագանեաւ որ

առաւել ևս Թշնամութեամբ էին ընդ ազգին եբրայեցւոց քան զԹագաւորն. և այլ սպասաւորքն ելանէին կապէին ըզ տառապելոցն զոտս և զձեռս, և զայլ պահ գիշերապահ (գիշերուան պահապան) շուրջ զնոքօք զգուշութեամբ ածէին: Իսկ Հրեայքն յամենայն կողմանց զանձինս իւրեանց անզօր և առանց օգնականութեան գէշ (գազանի nru) անկեալ հեԹանոսաց համարէին. Զամենակալն Աստուած անդադար բարբառով արտասուօք կարդային անցուցանել զօրհասն որ անդէն մօտալուտ (վերահաս) զոտիւք զձեռօք պատեալ է: Իսկ յերկնաւոր ի պարգևատու յառատաձեռն Աստուծոյ ելանէր պարգև մի քնոյ զոր առաքէր ի վերայ Թագաւորին. և անդէն Թանձր և խորին և քաղցր և անոյշ քնով զօրութիւն Տեառն կապէր զԹագաւորն, և զնա յանշարժ խորհրդոց անտի խաբեալ վրիպեալ կացուցանէր: Անդ որդիքն եբրայեցւոց զժամանակեալ զմահաբեր զօրհասի ժամանակն զանցուցեալ՝ զսուրբն զերկնաւորն Աստուած օրհնէին: Իբրև ընդ մէջ ցիներ (կէս կ'ըլլար) ժամ-

տասներորդ և ապաս տաճարին (սեղանին պատրաստութիւնը) ամենայն պատրաստեալ էր և կոչնականքն յիւրաքանչիւր ի չափս յօրինեալ կային, յանկարծակի խԹեաց ոմն ազդ արար Թագաւորին մերձ յանցանել լինել ժամ ուրախութեան տաճարին: Զայն ժամ ուրախութեան ըզմտաւ ածէր Թագաւորն, և անդէն բազմեալ՝ վաղվաղակի հրամայէր զկոչնականն ի ներքս կոչել, սպաս առնել տաճարին բարձիցն պատրաստութեան. զայր այր յիւրաքանչիւր գահ հրամայէր մատուցանել: Իբրև յերկարագոյն նուագօք զբանիւք անկանէին (երկայն ատեն կը խօսէին), կոչեաց զփղապետն, ահեղ սաստկութեամբ դառնապէս պատուհասէր. Զմէ (ինչու համար), ասէ, զժամադիր (ատենը որոշուած) սաստիկ հրամանի զօրհասաւ անցեալ Հրեայքն և զայս օր կեցեալ գտանէին: Նա կայր ցուցանէր նմա զհրամանն արքունի գիշերախառն (գիշերով) կատարեալ, և նոքին կոչնականքն վկայէին բանից փըղապետին. ապա Թագաւորն զդառնութիւն զազանութեանն ցածուցանէր և

ասէ. Երթ դու. զայս օր քնոյ շնորհ կալցին (շնորհակալ ըլլան) նոքա. բայց անվրէպ զվաղուի օրն պատրաստեսջիր ի նմին գազանութեան զփիղսն: Իբրև զայն ասէր Թագաւորն, ամենեքին լի ուրախութեամբ ընդ մի բերան զհրամանն գովէին, յիւրաքանչիւր վանս (բնակարան), ի միմեանց բաժանեալք վասն առնագան ժամուն, մեկնէին. և սակայն այնչափ ոչ տային քնոյ զանձինս, որչափ զգիշերն ամենայն զմտաւ ածէին զինչ նոր նոր չարչարանս ի վերայ տառապելոցն հասուցանել մարթասցեն:

Այն ինչ հաւ խօսեցաւ, կանուխ ընդ առաւօտն գազանացուցեալ վառեալ զգազանսն ի գինի և ի խունկ՝ ածեալ պատրաստէր, և ինքն իջեալ ի մեծի սրահի անդ ճեմ առեալ շրջէր. իսկ որ ի քաղաքի անդ էին՝ դէս ակն ունէին (կը նայէին, կը սպասէին) Թշուառութեան տեսլեանն որ ընդ այգն ընդ առաւօտն ի վերայ Հրէից սպառնացեալ պահէր: Եւ Հրեայքն ժամէ ի ժամ անցեալ զօրհասաւն (մահուան ժամը անցուցեալ) ի բազում արտօսր պահոց պնդութեան,

ի ձայն ողորմ ողբոց, զձեռս յերկինս բարձեալ զամենազօրն Աստուած աղաչէին միւսանգամ այցելու լինել (նայել հոգ տանել) փրկել զնոսա յանհնարին յօրհասէն: Զև լինէր արեգական ճառագայթիցն յաշխարհ սփռել, և Թագաւորն յարուցեալ դէտ ակն ունէր մեծամեծացն. շնորհակալ լինէր փղապետին. զարմացեալ էր ընդ պատրաստութիւնն: Դարձեալ միւսանգամ անդրէն զառաջանէր (կը փոխուէր) դարձեալ զմիտսն դարձուցանէր, պատուհաս ի վերայ փղապետին կապէր (կը յանդիմանէր), հարցանէր. Զինչ իրք իցեն վասն ճեպոյն: Փղապետն զհրամանն արքունի հաստատուն ի գլուխ կատարեալ ցուցանէր, և զմեծամեծս յաւագանւոյն ի վկայութիւն տանէր (վկայ կը կոչէր): Սկսաւ խօսել Թագաւորն և ասէ. Ի սկզբանէ նախնեաց մինչև ի նախնիս զարդարութիւն և զհաւատս մեզ պահեալ է Եբրայեցւոցդ այդոցիկ. եթէ ոչ վասն դայեկատոհմ միասնուելդ (մէկտեղ կամ մէկ կնոջ կաթ ուտելու) սիրոյն էր, զքաղցր արևդ (կեանք) յաչացդ հատանէի, և զքեզ նենգաւոր չա-

բագործ , կուբ (կերակուր) արկեալ գազանացն փոխանակ անմեղացդ այդոցիկ ի միջոյ պակաս առնէի (ջնջել) : Փըղապետն այսպէս յանկարծ ժամանակին յեղեռնաւոր (աղեսալի. մահացու) պատուհասէն մազապուր եղանէր (հազիւ կազատէր): և յառաջին զուարթութենէ անտի զիջեալ՝ (իջնալ , իյնալ) տրտմագոյն երեսօք այր զարամբ (իւրաքանչիւր ոք) զինքն ի միջոյ անտի ի բաց մերժէր. և բարեկամքն իւրաքանչիւր գլուխ ի վայր արկեալ (գլուխ ծռած) զամբոխն ժողովեալ յիւրաքանչիւր պէտս հրաման տուեալ ցրուէին :

Այլ անդէն վաղվաղակի Թագաւորն հրաման տայր կոչնականացն յուրախութիւն դառնալ. կոչեաց զփղապետն դարձեալ մեծաւ պատուհասիւ, և սկսաւ խօսել ընդ նմա և ասէ . Քանիցս անգամ քեզ վասն նոցա, ով Թշուառ , պատուէր տուեալ է վառել կազմել պատրաստել զփիղսն . զոնէ արդ պատրաստեսցես . խնդրել զվրէժ յեղեռնաւոր Թշուառական ազգէն Հրէից : Իբրև զայն լսէին բազմականքն ամենայն, առաւել զարմանա-

յին ընդ յեղյեղուկ (փոփոխական) միտս Թագաւորին , և ասեն . Ցերբ է այդ, արքայ , ցերբ ի միտս քո փորձես զմեզ . այդ երիցս անգամ հրամայեալ է սատակել զազգդ ժպիրհ (անեռես) . և դարձեալ միւսանգամ զբոյին հրաման անդրէն եղծանես : Զայսմանէ ամենայնիւ վրիպակ արքայն լի եղեալ յիմարութեամբ. ի վարանս մտանէր (կը վարանէր): Դարձեալ սաստկութեամբ երդնոյր, ասէ . Առանց իրիմ յերկուանալոյ (անտարակոյս) զնոսա ի ղժոխս յուղարկեցից առաՊուր (ոտի տակ) կոխեալս անհնարին գազանացն . զօրաժողով եղէց առ հասարակ ի վերայ Հրէաստանի՝ ըզ փայտակերտն հրով դատել և զկաւակերտն ջուրբ լուանալ . և զայն պահեստ (պահուած) ի մէնջ զտաճար նոցա հրձիգ առնել : Եւ հրաման տայր զօրացն յամուր վայրի արգելեալս ունել զնոսա , շուրջ գիշերապահս եւ խուամապահս (պահապան) կացուցանել :

Իսկ փղապետն յանհնարին մոլութիւն ղղիւագին (դեւի նման) գազանն վառեալ պատրաստէր խնգեալ գիւրով

կնդրկախառն (ոգելից բաներ խմցնել) յահեղ պատրաստութիւն անթիւ գէշ արկանել յասպարիսի անդ: Դիմեալ գայր ի դուրս Թագաւորն՝ ի մտի եղեալ անգութ աչօք անողորմ սրտիւ ինքնին տեսանել զվշտագին սատակումն Թշուառական գնդին: Իբրև եկին փղօքն պատրաստելովք և զօրօքն վառելովք ի դուռն քաղաքին, ազդ լինէր Հրէիցն Թնդիւն զօրացն, փայլուն զինուն, փոշին որ ելանէր դիզանէր յամպս հասանէր. ամփոխ աղաղակին գնոքօք պատեալ զմիտսըն յապուշ դարձուցանէր. և զայս յետին կատարած համարեցան: Ցողորմ գուբ խաւնդաղաստեալ (իգուբ շարժիլ) հարք և մարք, ուստերք և դստերք, քորք և եղբարք, տոհմային (համազգի) բարեկամք սիրելիք, զմիմեանց պարանոցօք անկեալ փարեալ պատեալ համբուրէին. և կէսք զմատաղաձին (նորածին) մանկունս ի գիրկս առեալ՝ յետին զայն ծուծ (ծծելը) ստին ի բերան եղեալ տղայոցն համարէին: Եւ մինչդեռ յայն աղէտս տարակուսի և ի շտապ տագնապի կային, յիշեցին զառաջին օգնականութիւնն որ եղև յերկնից. առհասարակ միաբան ի միմեանց մեկնէին և ի տղայ մանկանցն բերանոյ զստինսն ի բաց կորզէին (քաշել հանել), և առ հասարակ անկեալ առաջի մեծութեանցն Աստուածութեանն Թաւալէին:

Գ. Մակաբ. Գլ. Է.

Եղիազարոս ոմն անուն, այր երևելի ի գնդէ քահանայիցն, յեցեալ ի ծերութիւն, զարդարեալ լուսաւորեալ ամենայն բաջութեամբ, հազիւ ինչ ծերս բանի մի որ զիւրևն էին՝ հանդարտեցուցանէր, և առ ինքն յարեալ ի սուրբն Աստուած աղօթս մատուցանէր և ասէր այսպէս. Թագաւոր մեծազօր. որ զամենայն վարես և ուղղես, դու այն Աստուածն ես որ զԲարաւոն բազմացեալ կառօք և երիվարօք հպարտացեալ բարձրացեալ մեծաբանեալ ամբարտաւան զօրօքն հանդերձ՝ ծովամացս (ծովը քափելով), ի կորուստ յուղարկեալս ընկղմեցեր: Դու որ զանթիւ զօրսն պերճացեալս պարծեցեալս Սանատրուկ արքայի Ասորեստանեայց սատակեցեր, զոր ի մի այր սուսե-

րի և ի մի տէգ նիզակաց առեալ հաւաքէր ամփոփել զերկիրն ամենայն Հրէաստանի. հպարտացաւ ևս հաստանել ծանր բարբառով, յանդուգն սաստկութեամբ, մեծաւ նախատանօք ի վերայ քաղաքին սրբոյ: Դու տէր, հարեր բեկեր կործանեցեր. յայտ յանդիմանութեամբ ցուցեր զզօրութիւն բազկի քոյ: Դու և որ յերկրին Բաբելացւոց երեք մանկունքն ինքնակամ զանձինս ի հուրն մատնեցին՝ փրկեցեր. զի և հերոյ վարսից նոցա ոչ մեղանչէր հուրն. ճարակ եռուր (կերակուր ըրիր) հրոյն զօրութեան զՄշնամին: Դու և որ ի նախանձ նենգութեան ի գուբ արկեալ զԴանիէլ ի բերան անհնարին գազանացն՝ ի լոյս ածեր (դուրս հանեցիր) անաբատ պահեալ: Դու և զհեբրն անդընդոց զոր տեսեր զի մաշէր ի պորտ ձկանն՝ անաբատ ածեալ յանդիման ընտանեաց իւրոց կացուցանէիր: Դու հայր, ամբարտաւանատեաց (հպարտներն ատող) բարեսէր, ապաւէն ամենայնի, արագ երևեաց ի վերայ ազգիս Իսրայելացւոց, զի մի ընդունայնամիտ զրախտահուրդ (ունայն բաներ մտածող) հեթանոսք պսպրծեսցին առաջի սնոտեաց իւրեանց ի վերայ մերոյ կորստեան: Անուշակ, անմահ, ողորմած Աստուած, ողորմեաց զՔա ի մեզ՝ որ այսչափ անօրէն Մշնամանօք զանկարգ զանիմաստ պատուհաս մահու յանձինս կրեալ՝ ի կենաց ի մահ զօրէն չարագործաց յուղարկիմք: Հաշեսցէ մաշեսցէ (մաշէ) զհեթանոսս զօրութիւն յաղթութեան քոյ: Անկեալ ապաղակեն աւասիկ ամենայն աղածրի (մատաղ) երամ երամ բազմութիւն տղայոց և նոցին հարք և մարք արտասուօք:

Այն ինչ լինէր Եղիազարու զաղօթսն առ Աստուած մատուցանել, և Թագաւորն գազանօքն և զօրօքն հանդերձ ի տեղի հանդիսին յասպարէս անդր մեծաւ բարկութեամբ հասանէր: Զաչս իվեր բարձին որդիքն Եբրայեցւոց. իբրև զայն տեսին, ի ձայն մեծ գոչման յերկինս զաղաղակ բարձին: Ցայն ձայն գոչման առ հասարակ լերինք և հովիտք անդրեն կրկնեալ բարբառով ընդդէմ հնչեցին (արձագանգ տային): Ցայնմ ժամանակի բարձեալն փառօք, մեծապատիւ, ամենակալ ճշմարիտն Աստուած երևեցոյց

զերեաս իւր. բաց նա զդրունս երկնից ուստի եկին իջին երկու ահեղ փառաւորեալ անելոյն հրեշտակք, և հարան ի դիմի (դէմ ելան) Ծշնամեացն. լի արարին ահիւ և դողութեամբ, և առ հասարակ զամենեսեան անշարժ կապեալ՝ պատեալ պաշարեալ պահէին: Եւ բազաւորին իսկ գլխովին (նոյն ինքն բազաւորը) սոսկացեալ դողացեալ քստմնեալ (դողալ) լինէին ոսկերք և մարմինք. սասան խռովութեան գազանութեանն և սրտմտութիւն բարկութեանն անդէն յաւդուշ միտս եղծանէին (ապշութեան դուրձաւ). և գազանքն անդէն յետս ի վերայ վառեալ զօրացն յարձակէին, և զբազումս ի նոցանէ առաձուր հարեալ անդէն առ ոտս իւրեանց սատակէին: Ի նմին տեղւոջ վաղվաղակի Ծազաւորին բարկութիւն ի գութ, յարտասուս վասն առաջին աղնդութեան յամառութեան խըստութեանն հարկանէր. զի իբրև լուաւ զգոչիւն բարբառոյն և զմտաւ ած զկորուստն բազմաց, հարաւ յարտասուս (լացաւ): Խօսել սկսաւ ընդ բարեկամսն և ասէ. Անցեք զանցեք (չափը անցու-

ցիք) ապաքէն (իրաւունք). բռնացարուք, և զիս իսկ, ի վերայ ամենայն երախտեաց, ի մտաց խորհրդոյ և ի տէրութենէ առ հասարակ մերժել կամիք. զողացարուք աւադիկ զվիտս իմ, խորհրդականքդ առաքինիք, և զինչ ոչ է օգուտ սէրութեան մերում զայն առնել տայք մենքենայիւք (խորամանկութեամբ): Լուծէք արձակեցէք զանօրէն կապանսդ. յիւրաքանչիւր տեղիս խաղաղութեամբ յուղարկեցէք. զառաջին զեղեալ լլկութիւնսն (նեղութիւն) ի գրգռութիւնս ողոքանաց (ցոյել փայփայել) դարձուցէք: Իսկ Հեբրայեցիքն վաղվաղակի յական Ծօթափել լուծեալք ի կապանաց անտի՝ զամենակալ, փրկիչ, ըզ սուրբն Աստուած իւրեանց օրհնէին, այն ինչ մազապուր ի դրաց մահուանէ չհաւատալի (անհաւատալի կերպով) զերծեալք:

Իբրև զայն դիւրութիւն դիւրեր (աս դիւրութիւնը ընելէն ետը) Հեբրայեցւոց, կոչեալ զմտից դպիրն և ասէ. Հապա (հայտէ), վաղվաղակի գինի և նաշիհ և որ զինչ պիտիցի (պէտք է) յուրախու-

թեան հանդերձ Հրէից՝ մատուցանել զևթն օր : Յայնմ ժամանակի՝ որ յառաջ մատնցոյց (մատուլ ցուցուած) նախատանօք եկեալ հասեալ ի մահ, մանաւանդ թէ մտեալ իսկ էին ընդ դրունս դժոխոց՝ փոխանակ դառն այնր օրհասին խնճոյս ուրախութեան կացուցեալ ի փրկութեան տեղւոջն, ուր սատակման և վհին (անդունդ) ակն ունէին : Բազմակաւոր բազմակաւոր (խումբ խումբ) բաշխեալ լի ուրախութեամբ յիւրաքանչիւր կողմանս բաժանէին. և փոխանակ արտասուալից ողբոցն երգս առեալ ի ձայն օրհնութեան հայրենի բարբառովն զնշանագործ (հրաշագործ) փրկիչն զԱստուած օրհնէին. զլալիւն և զհեծութիւն ի բաց մերժեցին. պար առեալ խաղաղութեան ցնծութեան նշան կանգնէին : Սոյն օրինակ և Թագաւորն վասն նոցա ի մեծի տաճարին ժամ տուեալ (ատեն որոշել) ուրախութեամբ բազմաւ զկոչնականն հրամայէր ի ներքս կոչել : Եւ որ յառաջն ի սատակումն գազանագիշ հաւակերի (գազանաներու եւ պատառող թռչնոց կերակուր ըլլալու) զժողովուրդն նուիրէին (մատնել)

խնդութեամբ՝ յոգոց ելանէին ամօթ և վնաս յանձին կալեալ. և զհրաշունչ (կրակ շնչող) բարկութիւն իւրեանց շիջուցեալ՝ ցնծութեամբ զուրախութիւն զուարթացուցանէին : Իսկ Հրեայքն, որպէս ասացաք յառաջագոյն, պարս ուրախութեան կազմեալ զեւթնօրեայ ժամանակն զուարթութեամբ ցնծութեամբ կատարէին ոչ վասն հպարտութեան և ոչ վասն որկորստութեան (որկրամոլութիւն) այլ վասն գոհութեան և փրկութեան զոր արար ընդ նոսա Աստուած :

Գ. Մակաբ. Գլ. Զ.

Հրաման ետ Թագաւորն տալ հրովարտակս ի քաղաքս քաղաքս առ զօրավար զօրավար օրինակ զայս :

«Արքայ Փիղոպատովր Պտղոմէոս առ զօրավարս և առ ամենայն իշխանս և պէտս (գլխաւոր) որ ի վերայ իրաց արքունի են՝ ողջոյն.

Դուք խրախ (ուրախ) լիջիք, զի ողջ եմք մեք : Ոմանք ի ներքին բարեկամաց աստի մերոց. ըստ իւրեանց չարաբարութեան, կանխեալ մերձենային չարախօս լինել. զրգռէին զմիտս մեր մինչև

ածին ի հաւանութիւն տալ հրաման ժողովել զամենայն Հրեայ ազգ որ ընդ մերով իշխանութեամբ. ելանել ի մի վայր, կոտորել ի նորանշան (տարորինակ) տեսիլ տանջանաց. զորս և կապեալս ևս ածին բազում լլկութեամբ և չարչարանօք իբրև զանաշխարհիկս (գերի, օտար) մանաւանդ թէ իբրև զչարագործս առանց ամենայն հարցափորձի քննութեան. բան զիւռժ եւ զդռժս (քարքարոսներէ աւելի) վայրենագոյն ևս զգածեալ (հագած) էր զիւրեամբք զգազանութիւնն: Այլ մեք, որպէս սովոր եմք, զսոսա խստագոյն պատուհասեցաք. և հրաման տուաք արձակել զդոսա (զՀրեայս), և թողաք դոցա զամենայն վնաս զոր եղին ի վերայ (անոնց վրայ դրուած յանցանքներ). և զայն ևս հրաման տուաք զամենեցուն զդոցա զոյր ինչ ուրուք և առեալ իցէ՝ յիւրաքանչիւր տէր դարձուցանել, զի մի ոք ի նոցանէ ամենևին մի զբրկեսցի:»

Ապա ոմանք ի Հրէից անտի մտեալ առ Թագաւոր անդր խնդրէին յազգէ անտի Հրէից որ զսուրբն Աստուած ինքնակամն

ուրացան- հրամայել տալ ի ձեռս նոցա, ըստ արժանի օրինացն ածել զպատուհաս ի վերայ նոցա: Դնեին եւս ի վերայ (առ ալ կ'աւելցնէին) և ասէին եթէ Մարդք որ վասն պորտոցն աղեսի (իրենց որովայնին համար) և որկորոյն չարութեան յօժարեցին անցին ըստ օրէնս (օրէնքը չպահել) նախնեացն՝ երբէք նոքա յիրս արքունի արդարանալ (հաւատարիմ ըլլալ) միամտութեամբ ոչ կարեն: Իրաւունս (արդար) համարեցաւ Թագաւորն և ետ նոցա իշխանութիւն զի ատակեսցեն զյանցաւորս օրինացն. և նոքա ձերբակալս ըմբռնեալ զնոսա ատակէին: Ապա անկան յուղի. չուեցին խաղացին գնացին ի քաղաքէ անտի. ազգի ազգի անուշութեամբ և ի գոյնագոյն (գոյնզգոյն) ծաղիկս պսակեալք՝ եկին հասին ի քաղաքն Պտղոմէացւոց որ անուանեալ կոչի վասն տեղւոյն յայտնութեան վարդաբերք. անդ եբեկացան (մընացին) աւուրս եւթն. ապա մեկնեցան ի միմեանց ողջք և անարատք, ազատեալք, խրախմիտք (ուրախ), զուարթացեալք, ապրեալք ընդ ծով և ընդ

ցամաք և ընդ գետս ի հրամանաց Տեառն: Որ յառաջ ընդ ձեռամբ Թշնամւոյն էին՝ ապա իշխանութեան փառօք և շքով (պատուով) գնային. և զիւրաքանչիւր ինչս և զստացուածս յաշխարհագրին զամենայն ժողովեցին. զի ահիւ և դողութեամբ ամենեքին որ զինչ առ ումեք կայր՝ բերէին տային ի դուրս (ետ կուտային):

Գ. Մակար. Գլ. Է.

Ընդունայն էին ամենայն մարդիկ յորս էր աստուածանգիտութիւն (զԱստուած չճանչնալ). և յերևելի բարութեանցն ոչ կարացին գիտել զայն որ էրն (իսկական գոյն), և ոչ ի գործս հայեցեալ ծանեան զճարտարապետն: Այլ կամ զհուր, կամ զհողմ, կամ զօդ երագ, կամ զաստեղաց շրջանս, կամ զջրոց բռնութիւնս, կամ ըզ լուսաւորս երկնաւորս զարբանեակս աշխարհի՝ աստուածս համարեցան: Ընդ որոց թէ ընդ գեղն զուարճացեալք զնոսա աստուածս կարծիցեն, գիտասցեն թէ որչափ ևս նոցա տէրն առաւել լաւ է. զի որ գեղեցկութեանց արարչապետն է՝ նա հաստատեաց (ստեղծեց) զնոսա: Ապա թէ ընդ զօրութիւնս և ընդ ազդեցութիւնս

(ներգործութիւն) զարմանայցեն, իմասցին ի նոցանէն (թէ) որչափ ևս որ կազմեացն զնոսա (զանոնք շինողը) առաւել զօրաւոր է: Զի ի մեծութենէ և ի գեղեցկութենէ արարածոց՝ ըստ նմին համեմատութեան և արարչագործն նոցա երևի: Բայց սակայն տակաւին և նոցա գոյ սակաւ ինչ մեղադրութիւն, զի և նոքա թերևս մոլորեալք խնդրեն զԱստուած և կամին գտանել: Ընդ գործս նորա յածեալ (պտտելով) քննեն, և հաւանին տեսլեամբն թէ բարւոք են երևելիքս: Դարձեալ և նոքա ոչ են ներելիք (դողութեան արժանի). զի թէ այնչափ կարացին գիտել զի բաւական (կարող) լինիցին նկատել զաշխարհս, զոցա տէրն զինքդ ոչ գտին վաղվաղակի: Թշուառականք (ողորմելի) են, և ի մեռեալս յոյս նոցա, որք համարեցան աստուածս զձեռագործս մարդկան, զոսկի և զարծաթ, զճարտարութեան արուեստ, և ըզ նմանութիւն (պատկեր) անասնոց, կամ զքար անպիտան զձեռագործս նախնեաց:

Որք ասաղձագործ հիւսն (փայտ բանող) զփայտ ինչ գեղեցիկ սղոցեալ

քերեաց ճարտարութեամբ զամենայն կեզև նորա, և հնարեալ վայելուչ անօթ պիտանի կազմեաց ի սպասաւորութիւն կենաց, և զտաշիղ (թալաշ) գործոյն ի պատրաստութիւն կերակրոյ ծախեալ յագեցաւ, և որ ինչ ի նոցանէ անպիտան և խոտան էր: Զփայտն խեղաթիւր (ծուռ ու մուռ) և ոստովք վարակեալ (պուտախներով լեցուն) առեալ դրօշեաց (փայտէ արձան շինել) մտադիւրութեամբ (հմտութիւն) գործոյն իւրոյ, և խելամտութեամբ (գիտութեամբ) իմաստութեան տպաւորեաց (կերպարանք մը տալ) զնա, և նմանեցոյց զնա պատկերի մարդոյ. կամ անասնոյ վատթարի ճշգրտեցոյց (ճիշդ նմանցնել) զնա: Ծեփեաց բոով (ալչիով), և կարմրացոյց սնգուրաւ (երես խելու կարմիր ներկ) զգոյն նորա, և զամենայն խնդրունդս (խորտուբորս) նորա ծեփեաց հողով, և արար նմա տուն ըստ նմին արժանի (անոր վայելուչ): Եդ զնա առ որմ (պատին առջեւը դրաւ) հաստատեալ երկաթով, և զգուշացաւ նմա զի մի կործանեսցի: Գիտէ թէ և իւրում անձինն օգնել ոչ կարէ,

քանզի է պատկեր, և կարօտ օգնականութեան: Եւ վասն ամուսնութեան և որդւոց և ստացուածոց իւրոց մատուցեալ շշնջէ (խօսի) առ անշնչին, աղաչէ և ոչ ամաչէ, Եւ վասն առողջութեան՝ զապիկարն (անկարող) կարդայ (կը կանչէ), և վասն կենաց՝ զմեռեալն աղաչէ, և վասն ի թիկունս հասանելոյ (օգնութեան)՝ տարակուսելոյն մաղթէ (խնդրուածք ընել). և վասն ճանապարհորդութեան՝ զայն որ և ոտն յոտանէ չկարէ փոխել, և ընչաւետութեան (հարստութեան) և գործոց և ձեռաց կորովութեան (յաջողակութեան, ճարտութեան)՝ յանարգասարեն ձեռօք (ան որուն ձեռքը գործ յառաջ չի կրնար բերել) զարգասաւորութիւն (արդիւնաւորութիւն, գործ) խնդրէ:

Տարաժամ (ժամանակէն դուրս, անակընկալ) սգով թախծեալ (տրտմած) հայր՝ վաղամեռիկ լինելոյ (ժամանակէն առաջ մեռնող) որդւոյ իւրոյ արար պատկեր: Արդ զայն ժամու զմեռեալ մարդն՝ այժմ իբրև զԱստուած պատուեաց, և աւանդեաց իւրոց հնազանդելոցն խոր-

հուրդս և նուէրս : Ապա ժամանակաւ ձգեալ (շարունակուելով) ամբարիշտ սովորութիւնն՝ իբրև զօրէնս պահեցաւ, և բռնաւորաց (իշխանութեան) հրամանաւ կարգեին ի պաշտօն (պաշտելու կը դրուէին) դրօշեալքն (փայտէ արձան) : Զորս յանդիման (յայտնի) պատուել ոչ կարէին մարդիկ վասն հեռի բնակելոյ՝ զբացական (հեռաւոր) տեսիլն զնոյն օրինակ (նիշդ, թլպիր) քանդակեցին (փորագրել) և դրօշեցին, զի իբրև զմօտաւոր զհեռաւորն ողոքեսցեն (աղաչելով սիրտը իջեցնել) փութով :

Դարձեալ եթէ ի նաւ ելեալ ոք՝ ընդ ամենի (անմուտանելի) ալիս կամիցի ճանապարհորդել, առ փայտն որ քան զնաւափայտն տկարագոյն է՝ աղաղակէ : Զի զայն թէպէտ և ցանկութիւն շահիցն հընարեցաւ՝ և ճարտարապետ իմաստութեամբ կազմեաց, սակայն քո, Հայր, վարէ տեսչութիւնդ (նախախնամութիւն) զի ետուր և ի ծովու ճանապարհ, և ի մէջ ալեաց շաւիղ զգուշաւոր. յայտ արարեալ թէ յամենայնի կարող ես փրկել, թէպէտ և առանց ճարտարութեան ոք ելանիցէ

ի վերայ : Բայց կամիս զի մի դատարկասցի գործ իմաստութեանն, վասն այնորիկ չնչին փայտի հաւատան մարդիկ զանձինս իւրեանց, և շրջեալ ընդ ալիսն դոյզն (տկար, չնչին) լաստիւն (սալ) ապրեցան : Քանզի և ի սկզբանէ ի կորընչել սկայիցն ամբարտաւանից՝ յոյս աշխարհի ի լաստափայտն ապաւինեալ, եթող աշխարհի զաւակ լինելոյ քո ձեռամբդ նաւապետեալ :

Մեծամեծ են դատաստանք քո և ողորժուարապատումք. վասն այնորիկ անձինք անխրատք մոլորեցան : Կարծեցին բրոնադատել զազգն սուրբ՝ անօրէնք, կապեալք խաւարի, և կաշկանդեալք երկայն գիշերոյ, արգելեալք ընդ յարկօք՝ փախստականք ի յաւիտենական տեսչութենէն անկեալ դնէին : Զի ղողեալ (պանուրցած) համարէին ընդ գաղտնեօք մեղաց, ընդ անճանաչ յիմարութեան առագաստաւ ցրուեցան, անհնարին յիմարեալք և խուճապեալք (զարհուրելով իրար անցնիլ) և խռովեալք Քանզի և ոչ որ ուներ զնուաա մոբթն (անոնց տիրող մութը)՝ աներկիւղս պահեաց. զի բոմ-

բիւնք շուրջ զնոքօք պահեալ սրարբեցուցանէին (զարհուրեցնել) և ցնորք անժպիտք (սոսկալի երեւոյթներ) խոժոռադիմացն երևէին: Եւ հրոյ և ոչ մի ինչ բռնութիւն (զորութիւն) կարաց լուսաւորել. և ոչ խարուկածին բորբոքեալ բոցք հանդարտէին (կրնային) լրջացուցանել (քիչ մը լուսաւորել) զտխուր գիշերն: Բայց միայն երևէր նոցա ինքնակաց (ինքիրմէ գոյացած) խարոյկ լի երկիւղիւ: Ի դիւթական (կախարդական) արուեստի խաբէութիւնս անկանէին, և ի խորհրդոց ամբարհաւաճութեան. և որք խոստանային զարհաւիրս և զխռովութիւնս հալածել յանձնէ ախտացելոց՝ նոքա ըզ ծաղրալից երկիւղն ախտանային: Զի թէպէտ և ոչինչ նորանշան (կարգէ դուրս) զարհուրեցուցանէր, ճճեաց անցիւ և սողնոց շչմամբ խուճապեալք և դողացեալ սատակէին:

Այսպէս նոքա զանհնարին զգիշերն յանմատուցից (անմատոյց, անմատչելի) մթից դժոխոցն հասելոց ի վերայ՝ զնոյն քուն ննջեցին:

Էր զի նշանօք ցնորիցն պակչէին, և

էր զի ոգւոցն մատնութեամբք լքանէին, զի յանկարծօրէն և յանկարծուստ մածանէր (կը պատէր) ահն ի վերայ: Եթէ հողագործ էր, և եթէ հովիւ, և եթէ անապատական աշխատութեանցն գործաւոր՝ ըմբռնեալ յանլոյծ (անլուծանելի) տագնապ (վտանգ) հասանէր, քանզի միով խաւարային շղթայիւ ամենեքեան կապեցան: Եթէ հողմ շնչէր, և եթէ ի թանձրախիտ ոստոց քաղցրաձայն հաւուց բարբառ (ձայն) հնչէր, եթէ յորդութիւն ջրոց հոսելոց բռնութեամբ, և եթէ քամբիւնի սպառնալեաց (սպառնալից ձայն) վիմաց հոլովելոց (գլտորիլ), և եթէ ընթացք անելուոյթք անասնոց կայտռելոց (սողալ), և եթէ բարբառ ահագին գազանաց գոչելոց, կամ անդրեանի յանձն բեկելոյ ի քարանձաւաց շերանց ձայնից արձագանգաց (լեռներէն եկած արձագանգին ետ դառնալը), լքոյց զնոսա զարհուրեցուցեալ: Զի ամենայն աշխարհ պայծառացեալ լուսով լուսաւորէր, և անխափան գործով կայր պնդակազմ (աշխուժութեամբ կը գբաղէր) բայց միայն ի վերայ նոցա տարածանէր ծանր գիշեր:

Զինչ շահ եղև մեզ հպարտութիւն, և զինչ մեծութիւն ամբարտաւանութեան իցէ մեզ նպաստաւոր. Անց այն ամենայն իբրև զստուէր, և իբրև զհամբաւ առն ընթացեալ. և իբրև զնաւ սահեալ ի ջուրց կուտակելոց, զորոյ, իբրև անցանիցէ, ոչ գոյ զհետան գտանել, և ոչ զշաւիղս (հետ) գնացից նորա ի մէջ ալեաց: Կամ իբրև զհաւու թռուցելոյ յօդս որոյ ոչ գըտանին նշմարանք գնացից. բաղխելով մագլաց պատառեալ զհողմն թերև և հերձեալ բռնութեամբ ընդ ողորտս մտաւնէ (թռչելով դառնալ), յածել թևոցն (թեւերը շարժելով) յառաջադէմ սլանայ (թռչելով երթալ), և յետ այնորիկ ոչ գտանի նշանակ ամբառնալոյն ի նմա: Կամ ի նետէ ձգելոյ ի նպատակ՝ կտրեալ օդն վաղվաղակի յինքն կարկատեցաւ առ ի չգիտելոյ զանցս նորա: Յետ ամբարշտի իբրև զփոշի յարուցեալ ի հողմոյ, և իբրև զսարդիոստայն և զեղեամն ի մրրկէ հալեալ մաշի, և իբրև զծուխ մաշեալ ի հողմոյ, կամ իբրև զ յիշատակ իջաւորի (իջեւան ընող համբորդ) միոյ աւուր գնացելոյ: **Եմատութիւն.**



46

5